



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

17 1859

n-20

y-y w 66



ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՎԱՐՄԱՆՑ

Փարիզ. — Տպագրութիւն Արամեան.

Paris. — Typ. arménienne de Walder, rue Bonaparte 44.

17
17
17-20
4

50

ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՄԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՄԱՆՑ



ՆԱՐԱԳՐԵԱՅ

ՅՈՂՍԷՓ Յ. ՊԱՅԵԱՆ

Կոստանդնուպօլսեցի



Printed in Turkey

Փ Ա Ր Ի Զ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

—
1950

~~9089~~

301-42




3240
39

Сейчас же не могу написать. Саша 6/13



Всего 100 рублей 40 коп. руб.
100 руб. 40 коп. руб.
2002-11
И. А. МЯСНИКОВ
И. ПЕТРОВИЧЕВ



Լաւ է պատահաւ մի խաղանուբեամբ, (Առ ա կ.)

Printed in Turkey

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ինչպէս կը տեսնես ճամբորդութեանս մէջ որ թէ հայրենիքիս եւ թէ Ներսիսայ բնակող Քրիստոնէներուն շատերուն մէջ հետաքրքրութեանս համեմատ երկայն ատեն պտըտելէս վերջը՝ ելայ գնացի պոնդուխտեցայ ծառ եւ քար, հուր եւ ջուր կամ կուռք պաշտողներուն մէջը, որպէս զի մեր եւ իրենց մէջը եղած տարբերութիւնը իմանամ.

ուր, հաւատան ինծի, ան որ Բարոյական առաքինութեան կը վերաբերի, գտայ որ մենք ըստ որում Քրիստոնեայ (սա աստուածային ազդեցութեամբ գրուած գիրքերը եւ իրեն անփոփոխելի պատուիրանաց կատարելութեան համար մեզի տուած գիւրութիւններէն ի զատ, իր յաւիտենական Աստուածութեան փառքը վաճելէ ընդ աւստիս խոստմունքը ունենալնէս վերջը) ըրած սրահասութիւններն ու, յանցանքներն ու եւ ապերախտութիւններն ու չափը չի գայ. ունաեւ համոզւեցայ որ մենք մեզ մեր ձեռքովը թէ աս եւ թէ անգիի աշխարհք

դժբազդ կուզենք կոր ընել: Վասն
զի ձգեմ տգէտ ու անուսում կռա-
պաշտներուն մէջը գտնուած յի-
շեալ առաքինութիւնով զար-
դարեալ անձինքները, գտայ
շաֆ մը (1) թիւ ունեցող կրակա-
պաշտ ազգը որ յիրաւի իրենց
մարդասիրական առաքինութիւ-
նովնին, եւ Մարդկային վար-
մանց զիտութեամբը կրնան օրի-
նակ ըլլալ նաեւ իմ ազգիս :
Գտայ ալ Պուտայի ծառայող
Պիրմայի քահանաները որոնք ի-
րենց չաստուածոց տուած խոստ-
մունքներնուն, պաշտօններնուն

(1) 10,000,000.

եւ կոչումներնուն հաւատարիմ
ծառայելովնին, մեր ճշմարիտ
Սատուծոյ սեղանիս ծառայու-
թեանը վիճակաւորեալ քահանա-
ներնէս շատերուն առջին բաց
ճակատով զիրենք իբրեւ հայելի
հոգեւորական կատարելութեան
կրնան ներկայացնել: Որոնց վը-
րոյ մասնաւորապէս մանրամու-
սըն կերպով զրած ախանատես
պատմութիւնս մտադրութեամբ
կարդացած ատենդ, ունենալու
զատուցութիւնդ ինծի մխիթա-
րութիւն, բեզի ալ յորդորանք
եւ իբր էլեքտրական ազդեցու-
թիւն մը ըլլալուն տարակոյս չու-
նիմ: Հիմա իմացայ սիրելիս

որ եթէ կուզենք բնական քա-
ղաքներնուս զիրքը լաւ մը տես-
նել, մէկ սլայծառ օր մը՝ պարտ
ենք իր ունեցած բարձր շէնքի
մը վրայ ելլել, որպէս զի իր զիր-
քը տեսնենք եւ իմանանք. չէ նէ
թէ եւ բոլոր կեանքերն իս մի եւ
նոյն ծնած քաղաքին մէջ ան-
ցուցած եղած ալ ըլլանք, ոչ իր
զիրքը կրնանք գիտնալ եւ ոչ ալ
զանի մեզմէ ուզողի մը կրնանք
համարձակիլ զբիջով մը իրեն
ցուցընելու : Աւատի ճամբորդու-
թենէս ետ դարձած ատենս, լը-
սեցի ազգիս մէջ ազգասիրու-
թեան փաթընսը մը, կամ զանի
լուսաւորելու նկատմամբ տեսակ

տեսակ զիրքերու եւ գրուած քնե-
րու բազմութիւնը՝ որոնցմէ գրե-
թէ կ'ս մէկը չիտեսայ յիշեալ քա-
րի նկատման հիմնադրութեանը
համաձայն եզոզ՝ մանաւանդ թէ
հակառակը : Ատոր համար հա-
մարձակեցայ սպարզ կերպիւ (չէ
նոյն զիրքերը եւ գրեանքը յայ-
տարարող իմաստուն , փիլիսո-
փայ աստուածաբաններուն , այլ)
ազգիս մէջը գտնուող անուսում
բայց աստուածավախ ռամիկնե-
րուն գեղջուկ օրինակով մը իմա-
ցընել , որ եթէ կուզեն կատա-
րեալ կերպիւ լուսաւորուիլ , կամ
զոնէ լուսաւորութեան ճամբուն
մտնալ , եւ զանի անխախտ եւ

անվտանգ կերպով սլահել, սէտք
են հետեւիլ ան քապիէք աահիպի
տանտէրուն որ իր վայելմանը
համար սլարտէզ մը շինել ու-
զած տտենը՝ ոչ միայն տեղւոյն
ունեցած փուշ եւ տանտասկը
այրել կամ սէտք չեղած վայրե-
նիները կտրել կուտայ, այլ եւ
արմատներնէն ալ զանոնք խլե-
լէն ետեւ ֆիւրիզմայով մը նոյն
հողը տակն ի վրայ կը դարձընէ,
եւ որպէս զի պատահմամբ հո-
վի մը ձեռօքը իյնալու վայրենի
հունտի մը բուսնելուն արգելք եւ
տնկած տունկերուն աճմանը՝
եւ սլարտէզին չապականուելուն
ասլահով ըլլայ, խնամատար


արդուն պարտիզական մըն ալ մէ-
ջը կը դնէ որ թէ կասկածուած
վայրենիներուն աճուած արգելէ,
եւ թէ պիտանիներուն զարգա-
նալուն ալ հոգ ստանի : Աւ երբոր
մէկ օտար մը կուգայ ու կուզէ իր
պարտեզին վայելմանը մասնա-
կից ըլլալ, իր առջին կը դնէ
պարտեզին մէջ վարուելուն կա-
նոնը, որուն դէմ եթէ սրահասու-
թիւն մը ընելու ըլլայ, զինքը ան-
միջապէս դուրս կընէ : Հէ, եթէ մէկ
նոր կամ առաւել զիւրութեամբ՝
պարտեզին օրէ օր զեղեցկա-
նալուն համար՝ զիտութիւն մը
ցուցուց, ոչ միայն զինքը բա-
զում մարդասիրութեամբ կընդու-

նի՛ այլ եւ զինքը իրեն անկեղծ
զրացինը կը համարէ : Այսպէս
ալ, սիրելիս, պէտք է ըլլալ սս
լուսաւորեալ եւ պայծառ օրեր-
նիս՛ մեր ազգին անապական լու-
սաւորութիւնը՝ եւ երջանկութիւ-
նը խնդրելնուս կերպը . նախ հա-
շուել զիտնալ ազգին կացութիւ-
նը, բնութիւնը, դարուս Մարդ-
կային վարմանց զիտութեան
պահանջմունքը, եւ զանազան
ազգօգուտ աւ հաստատ կանոններ
րով՝ իր բարի ձեռնարկութեանը
սահման մը քաշել, յետոյ լու-
սաւորութիւններնուս մասնակից
ըլլալ ուզողները քննել՝ որ չըլլայ
Թէ անմեղ ոչխարներուն հանդեր-

ճովը զայլեր կամ թէ յարդին
տակէն ջուր վազցընողներ եղած
ըլլան, եւ ո՛վ կամ ինչ բնութեան
տէր ըլլալնին նանաչել ու ինչ
նկատմամբ կամ դիտաւորու-
թեամբ Լուսաւորչաբամ ազգին
նոր պարտէզը մտնալ ուզելնին
իմանալ՝ թէ արդեօք պուկերնին
սխմուելէն է թէ ազատ կամօք.
կամ թէ արդեօք օրթան մնացած
ըլլալնէն է մի, չէնէ բարի բարդ-
ձանքնին է մի՞ որ թէ եւ անվը-
նաս անձինք ըլլալնին հաւա-
տալ երեւի նէ ալ՝ ազգին սի-
րոյ եւ խաղաղութեան կանոն-
ներուն չհնազանդած տտեննին,
ստանալու սլատիժնին իրենց

3240
330
յայտնելու է, ու զիրենք Տէր ընդ
ձեզով մը գո՛հ ընելէն ետեւ, միշտ
քեպսիղ մը իրենց վրայ դնելու
է, որպէս զի եթէ մէջերնէն աս
սուրբ եւ աստուածային կանոնը
խախտելու ելլող մը նախագոռ-
շակուած ատենը՝ անմիջապէս
զինքը դուրս ընէ : Ահա սիրելիս
իմ սօգէտ կարծիքս եթէ կու-
զենք նէ, որ աս սուրբ կանոնով
եւ սուրբ դիտմամբ հաստատե-
լու նոր հայուծեան պարտէզնիս
մաքուր եւ անապահան մեալէն
ետեւ՝ օրէ օր ալ պայծառանայ :

Թէ եւ իմ կողմանէս կուզե-
րսել, որ եթէ աս եկողը ուրի-
քրիստոնէ հաստատուելու զբար-



ներնէս է, իր հաւատքն ալ կը պահանջէ՝ մեր իրմէն պահանջած Աստուածային պատուիրանաց անխախտ պահպանութիւնը . ուրեմն ինչո՞ւ իրեն ընկերը ձգեց: Իրաւ է, կան եւ եղան, որ իրենց առանձին անմեղ դիտաւորութիւններուն հասնելու համար, միեւնոյն արդէն պաշտած քրիստոսի պատուիրանը անտարբեր պահելով՝ ուրիշ ժողովուրդեան թիւին մէջ անցան . բայց ո՞չ իրենց առջի եղբայրնին ատելով յետինները շողոքորթեցին՝ եւ ոչ ալ զանոնք մորոս կանչելով՝ միւսներուն կեղծաւոր հոգով պատիւի անուններ տուին . լայ

ամէնքն ալ Աստուծոյ որդիքը
ճանաչելով իրենց գործքովը սէր
եւ խաղաղութիւն բարոզելնէն
ետեւ՝ Աւետարանական արդիւն-
քով ալ փոխադրուեցան իրենց
յաւիտանականութեանը : Բայց
ես կը տեսնեմ կոր՝ վերոյիշեալ
հեղինակներուն հետեւելով՝ շատ
մը մարդիկ փեշքահ եղեր են ու
կուզեն կոր ազգը հաստատուն
սիրոյ եւ խաղաղութեան եւ
լուսաւոր գիտութեանց հակե-
ցունելու, որոնց բաղձանքնուն
Ասէն պիտի ըսէի ըստ սիր-
տէս եթէ միւս կողմանէ ալ զա-
նազան կռիւի խորխորոյ, երկայա-
նակութեան Վեզիլ գիրքերու եւ

գրուած քնե ըու քաջալերութիւն
տալու համարանուննին եւս չ'ըս-
տորագրէին : Չեզան մարդիկ
որ Պամսուին շէնքին հիման
վրայ վերստին շինուելուն քա-
րէշէնին սլահանջած հաստատ
հիմանը հաշուին գիտութիւնը չի-
գիտցողներուն զիրենք նմանցու-
նելով, ըսեն իրենց . Եզբարք
հաշուեցէք եւ լաւ մը հաշուե-
ցե՛ք յառաջ քան որոշելնիդ՝ ձգե-
ցէք սա հաւատքի կռիւը . բայց
ամենայն ուժով ալ սլաշտապանե-
ցէք ազգային եւ բարոյական
սէրը . դաստիարակեցէք զաւկը-
ներնուդ, Մարդկային վարմանց
գիտութիւնը, յորդորեցէք ազգա-

սէրգիտնականներն իս եւ խնամատար Ամիրաներն իս եւ փոխանորդ Քրիստոսի հոգեւորականներն իս՝ որ արտօրան սիրոյ եւ խաղաղութեան բարասը հիւսելու, որպէսզի զաւկներն իս կարողանան աս օրհնեալ Մարդկային ուսման փորձառութիւնը՝ ապահով սրտով բռաթիֆ ընելու ասպարէզ մը ունենալ ու նոյնպէս իրենց ծնողացը ջիւերուն մէջ եօտռնկապող հայրենաժառանգ մուծութիւնները, ոչ միայն արմատախիչ այլ եւ զանոնք իրենց զգուելի ընելու, եւ մէկզմէկ ալ հայր եւ եղբայր ճանաչելուն քաջալերող ազգութիւնատներ, յորդարանք-

ներ գրեցէք : Եւ սա եզմը արեֆօ-
շարօր հոգւով մէկզմէկէ մէկզմէ-
կու անցնողները՝ իրենց թողած
եղբայրներուն սիրտը վիրաւո-
րելնուն ազատութիւն տալէն եւ
իրենց խայտառակութիւննին ձե-
րինին հետ մէկտեղ, նաեւ օտար
լեզուներու մէջ, հրատարակելէն
վնագ եկէք, որ սա պակսութիւն-
նիդ դուք լաւ գիտէք, եւ մենք
ալ չենք կրնար ուրանալ, որ մե-
կուն հռովմէական ըլլալուն հա-
մար իրեն 1000 զուռուշ ամլա-
չէք կը կապենք, բրօթեւթան
եղողի ամբը ճեպը կը լեցընենք,
հելէ էջմիածնական եղողին ինչ
ընելնիս չենք գիտեր . որոնք

եթէ ճշմարտութիւնը ճանչնալով
ընտրած հաւատքնին ընդունե-
ցան նէ, իրենց հոգիներնուն
համար է. մեզի ինչ, որոնցմէ ես
ոմանց գրածնին եւ գործքերնին
տեսնելովս, ինչպէս դուք ալ
տեսնելու ըլլալովնիդ, հանդարտ
մտօք եւ անմեղ խղճմտան-
քով ինծի հետ գուցէ պիտի ըսէք
որ մէկ խարեբայ եղեռնագործ
մը՝ ձգած ժողովուրդեան մէջ պակ-
սեցաւ ու մէյմըն ալ դարձածին
մէջը աւելցաւ : Կարելի է սիրե-
լիս որ ժամանակուան արդէն յի-
շած լուսաւորեալ եւ փիլիսոփայ
ազգասէրներէս գտնուին ոմանք
որ իմ աս ազգային եւ Մարդ-

կային վարմանց վրայ՝ զեղջուկ
զբաժնի՝ կանոնադրութիւններս ,
կամ ընելու զգուշութիւններս՝
արհամարհեն , ինչպէս ատեն մը
Սուլթան Մահմուտին իր ժողո-
վուրդը ժանտամահի բռնութենէն
զատելու՝ ու իրենց (ըստ որում
հարկկային մտածմունք) աւելի
ապահով կեանքով ապրելնին
ուզելուն համար , քուրիկսիկս
հաստատելը արհամարողներ
եղան , որոնց սխալմունքէն եթէ
խմբներս օրինակ չեն առներ
նէ , հոգս չէ :

Վասն զի ես իմ հարքսն ճանա-
չելով այս ամէն Ֆեղիքի չեւկե-
սիկն փորձառութեամբը ազգո-

գուտ խրատաներս գրեցի, մի
միայն իմ վիճակակից և ամիկնե-
րուս, որոնք թէ եւ զո՛ր եւ խաղաղ
կեանքով կապրին կորնէ ալ, տե-
սայ որ ծարաւի հոգւով կը բող-
ճան կոր կրթութիւն մը ունենալ
որնոր իրենց զարը, ժամանակը,
կացութիւնը բնութիւննին զննե-
լով՝ իրենց գիշեր ու ցերեկընելու
ճամբորդութիւննին ուղղէ՝ բնու-
թեան իրենց խօստացած երջան-
կութիւնը: Վասն որոյ սա և ամկո-
րէն՝ բայց ազգասէր հոգւով փոք-
րիկաշխատութիւնս՝ իրենց մար-
դկային վարմանց հայ Մենթօրը
ճանաչելուն ասպաւինելովս՝ եր-
բեմն իրենց բերանը սովորութիւն

ըրամ օտար բառերով իրենց խօսելուս պատճառը այս է, որ իմ իրենց տալու իմաստիս ու ժրմիտքերն ին դիւրութեամբ թափանցէ:



Գ Ի Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՎԱՐՄԱՆՑ



ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ձկայ կարծեմ մէջերնիս մարդ մը՝
որ չուզէ իր կեանքը երջանիկ անցը-
նել աշխարքիս վրայ, բայց մենք չենք
մտածեր շր արդեօք հրն է այս բաղ-
ձանքներնուս հասնելու եղանակը, և
զանի ինչպէս պարտինք գործածել .
վասն որոյ որչափ իմ դատողութիւնս
և փորձառութիւնս ներեց, ուղեցի ազ-
դիս նուիրել այս ռամկօրէն գրուած
գրքոյկս, որպէս զի թէ իրեն լուսաւո-
րութեանը ունեցած բաղձանքիս կա-
տարելութեանը վայելելուն զիւրու-
թիւն մը ըլլայ և թէ ունայն աշխարքիս

վրայ ընելու պանդխտութիւնը ձեռ-
քէն եկածին չափ կարգով և կանոնով
անցունելով կարողանայ զանի իրրև
տատուածային պարգև մը վայելել :
Բայց ամէն բանէն առաջ պէտք է գիտ-
նալ , որ ինչպէս ծառերուն տերեւնե-
րը մէկզմէկու չեն նմանիր , նոյնպէս
մարդիկներուն բնութիւնը չեն հար-
մարիր կամ նմանիր մէկզմէկու :

Եւ որովհետև մէկզմէկու ալ կարօտ
ենք, ուրեմն պարտինք կանոն մը ու-
նենալ մէկզմէկու հետ վարուելու, որով
կարողանանք կեանքերն իսաւելի քաղ-
ցրացուցանել ոչ միայն առ աշխարհս
այլ և ապագայ աշխարհին մէջն ալ
իր օգուտը ունենալնուս (իմ կողմանէս
կըսեմ որ) ամենեւին տարակոյս չունե-
նալու ենք : Ուստի նախ և առաջ ամէն
մարդ պէտք է ճանչնայ իր արժողութիւ-
նը այսինքն գիտնալ որ ինքը անդին ա-
րարած մըն է և պէտք է իր գործողու-
թիւնովը ու լուսաւորութիւնովը լուսա-
ւորել զանոնք, որ կրթութիւն չեղած
վայրենի երկիրներու մէջ անկիրթ մնա-

ցեր են: Ասան որոյս արժողութեան համեմատ՝ նախ պէտք ենք զիրենք կատարելութեան հասցընել իրենց կենացը օգուտ տուող բարի գիտութիւններով նախ զիրենք սնուցանել, բայց ոչ առ աչս մարդկան, այլ մարդս ներքուստ համոզուած պիտի ըլլայ և արտաքուստ ալ ամէն ջանքը ի գործ պէտք է դնել, որպէս զի կարգով և կանոնով ապրի, ապա թէ ոչ ներքինը արտաքինին հետ և արտաքինը ներքինին հետ չհամաձայնած ատենը վատդարագոյն ևս կըլլայ ինչպէս ալ կը տեսնենք կոր գործքերնին քարոզութիւններնուն չի համաձայնած անձանց որ մինչև անգամ ռամիկ և գեղջուկներէն կանարգութիւն կոր որ սազանազանութեան լոյսը ազգս թերեւս չունենալովը չի կրնար յառաջանալ, ինչպէս ալ չի կրնայ պիտի յառաջանալ մինչև որ այս զանազանութիւնը չընէ: Ասան որոյ իմ խրատս այս է քեզի, իմ եղբայրս՝ եթէ միտքդ դիւր գործքի մը ձեռք զարնել, նախ լաւ

մը մտածէ իր ամէն սարադաշօքը ,
յետոյ որ քաղքին մէջ ըլլաւ , կուզես
որ հանդարտութեամբ ապրիս , իրեն
քաղաքական կանոններուն հնազանդ
եղիւր որուն թէ և տգէտ կերպով եղած
ըլլալը քաջ գիտես , մի անարգեր ,
վասն զի քու խօսքովդ զիրենք չկրթե-
լէդ վերջը , մեծ գլխացաւութիւն կու-
նենաս : Ես Բիզա եկեղեցիներուն քո-
վը նշանած խաչերուն վրայ մար-
դիկներուն պիտոյքին կատարելնուն
ներկայ եղող բօլիաներուն խօսելուս
համար մեծ նեղութիւններ քաջեցի .
Փարիզ իմ անուանս զրկուած նամակը
ընդունել կարողանալուս համար ցու-
ցուցած բասբօրթս , որ զիրենք բաւա-
կանացնելու կանոնն է , չբաւականա-
լով այն նամակ զրկողէն՝ առաջվան
ընդունած նամակս իզմէ խնդրելնուն
համար զիրենք շատ սրակապառ որ դրու-
նելուս՝ ուղեցին զիս նեղել : Աօնաօն
տունս բնակողը իր ամսչէքը քանի մը
ամիս չիտալէն վերջը , զինքը տունէն
հանելու իրաւունք չունենալս եթէ ոչ

տանը առաստաղը քակել՝ որպէս զի
անձրեւէն, արեգակէն, կամ ձիւնէն
նեղանալով պարտաւոր ըլլայ ինքն
իրենը դուրս ելլալուն՝ ըսած կանոն-
ներնուն դէմ խօսելու համար, մեծ
փող կորսնցուցի. այսպիսի ինչ և իցէ
քաղաքական կանոններու դէմ չափ-
տի խօսուի : Բազդատութեանդ վրայ
մի պարծենար, կամ զանի մի հռչա-
կեր : Նորօրդ ան պակասութիւնները,
որ չկրնար շտկել կամ խոհեմ կերպով
մը շահիլ՝ մի անարդեր : Առուտուրիդ
մէջ ձեռքէդ եկածին չափ ուրիշներուն
ալ նայէ որ շահել տաս : Խոնարհու-
թեամբ ամենուն հետ վարուիլը քեզի
բնութիւն ըրած եղիր, որնոր առանց
կեղծաւորութեան եղած պիտի ըլլայ :
Ուրիշներուն աշխատութեամբը քու
շահելուդ վրայ մի ուրախանար : Որ
չափ կարելի է ուրիշի մը խնդիրք մը
ընելու մի յաճախեր : Մասնաւորա-
պէս նայէ որ մէկուն տալու խօսքիդ
վրայ նախ լաւ մը մտածելով յետոյ
տուած խօսքիդ վրայ ամուր ըլլաս :

ճշգրտութիւնը, համարադութիւնը ու պարկեշտութիւնը պատուէ, Մի ամաչեր՝ այսօր ստուաֆ ըլլալով վաղը եսեաֆ ուրիշն ընելու. վասնզի նորէն ստուաֆ ըլլալդ կարելի է: Նթէ կամենաս որ ուրիշներէն օգնութիւն ունենաս՝ դուն ալ ջանա ուրիշի մը առանց շահի օգնելու: Մէկուն հետ ունեցած երկպառակութեանդ մէջ ուրիշ մը չիխառնես, եւ միշտ քեզ դիմացինիդ տեղը դիր ու խնայելով դանի որ իրեն քեզի ընելը կը կամենայիր: Ան բանին վրայ որ իրաւունք չունիս խօսելու՝ ձգէ որ ամէն մարդ իր պարտաւորութիւնը ընէ, իր պատասխանատուութիւնը հոգայ: Ջանա առտուրդ շիտակ, կանոնաւոր ընելու ու խղճմտանքդ պայծառ բռնելու: Ինչ որ կամենաս ընելու ըրէ, բայց նայէ որ Մարդկային վարման դէմ եղած չըլլայ կամ ժամանակուան վատ և վնասակար մտածմամբ՝ այսինքն՝ բան չկայ երիտասարդ եմ, իզմէ մեծն ալ կընէ կոր, վասն զի շատ մը մարդ ուրիշնե-

րուն (չար սովորութիւն ըրած) սովորութիւններնուն դէմ ընել շուղեցի ըսելովը շատ մնասի եկան: Աւ ամէն մարդու սիրտդ մի բանար կամ ամենուն առջին պարզամտութեամբդ մի խօսիր, մինչև անգամ պակեկոյդ ամէն գործողութիւնդ, միտքդ, կամքդ ընելու բանդ մի ըսեր, որոնք թէ և անմեղ բաներ եղած ըլլան, բայց իրեն միտքը չհասնելով, ինքը ուրիշի մը պատմելովը քեզի մնաս մը կրնայ հասնիլ: Նմանապէս ուրիշներուն վրայ ծիծաղելէն քեզ մասնաւոր կերպիւ զգուշացիր ինչպէս ալ ուրիշները վախցընելով, բարկացընելով, անհանգարտեցընելով քեզի ուրախութիւն տալէն զգուշանալդ պէտք է, և զխօցիր քու ծաղրարանութենէդ զիրենք գրօցընողներէն քեզի մնաս դալը, վասն որոյ փոխանակ այս ընելուդ ջանա օգտակար բան խօսելու և սովբեցընելու որով հաճելի ըլլալդ հաւաստի է: Մէկ ասունէն միւս ասուն լաւ կամ չար լուր տանելէն քեզ զգու-

շացիր, նմանապէս ուրիշները դատելուն վրայ, մեծ քննողութիւն և զգուշութիւն պէտք է ընել : Նոյնպէս շատախօսութենէն ու ծուլութենէն նախատուողներ շատ եղան, նաև մէկ բանը յաճախակի պատմողը ու ծուլութիւն ընողը զինքը ուրիշի մը զրգովի ու անարդեւ կուտայ : Անքնահավանութիւնը տեղօքը մի ընդունիր, և զիտցիր որ մէկուն անկրթութեամբ պատասխան տալը մարդկային վարույց դէմ է : Աաղաչեմ երկու տեսակ մեկնութիւն ունեցող գործքէն կամ խօսակցութիւնէն զգոյշ եղիր, (որուն կրսեն ամբողջամբ մտօք խօսիլ) վասըն զի շատ կանարդուիա : Մասնաւոր կերպիւ ալ զգուշացիր ուրիշի մը քեզիինչ և իցէ ծածուկ պահելուդ բրած աղաչանքը իբրև խօստովանանք պահելու, չէ եթէ զիտես որ տկար ես այս առաքինութեանմէջ մի վախնարառաջքան իրեն ըսելիքը խօսելուն տկարութիւնդ իրեն յայտնելէն քեզի անպատուութիւն մը չգար մանաւանդ թէ

կը գովուիս մէկ կերպով ճշմարտախօս
ըլլալուդ համար . նոյնպէս մէկուն
միշտ փուճ և անօգուտ հարցմունքներ
ընելովդ կրնաս իրմէն զգուիլ :

Բայց քեզիեղած իրաւամբ կամ անի-
րաւ յանդիմանութիւնը կամ հակառա-
կախօսութիւնը համբերութեամբ տա-
նելէդ շատ օգուտ կրնաս ունենալ :
Աւրախութեան համար ժողովուած ըն-
կերութեան մէջ առուտուրի խօսակ-
ցութիւն ընելը քաղաքավարութեան
դէմ ըլլալը գիտցիր : Եթէ շունիս քաջ
տեղեկութիւն կամ գիտութիւն հաւա-
տոյդ կամ իր հաւատոյն վրայ ամենե-
ւին մի խօսիր : Նոյնպէս մեծ զգու-
շութիւն պէտք է ընել ուրիշի մը իր
յանցանքին վրայ խօսած ատենդ , և
ջանայ մէկուն անհաճելի լուր մը չի
տալու . կամ ուրիշի մը դադտնի խօ-
սելուն մօտիկ ընելդ մեծ յանցանք է
քեզի : Աս ալ գիտցիր որ քու գիտցած
գիտութիւնդ կամ տեղեկութիւնդ մէկը
քեզի պատմել ուզած ատենը ես զան
գիտեմ ըսելդ մեծ անկրթութիւն է .

իրբն թէ չդիտցածի պէս լսելի քեզի
օգուտ կրնայ ըլլալ, վասն զի աս սո-
վորութիւնովի կը հակիս միշտ ուրիշ-
ներէն բան սովրելու բաղձանք ունե-
նալու: Չես մնասեր քեզմէ հասակա-
ւորին հետ տեսութիւն ընել ուզելէդ.
Թէպէտ և միշտ զգուշութիւն պար-
տիս ընել որ ո՞վ է կամ ինչ բնութեան
մարդ է, որ իրեն հետ ծանօթութիւն
կընես կոր: Եթէ մէկ քաղաքի մը կամ
ազգի մը վրայ տեղեկութիւն կուզես
ունենալ պարտիս իր վատ վար և վեր
աստիճան անձինքները և գեղեցիկ փո-
ղոցները բնակողները ճանչցած ըլլաս:
Եթէ քու ներկայութեանդ ուրիշները
քու հասկցած լեզուդ սկսան խօսիլ, քու
նոյն լեզուն հասկնալի իրենց իմացու-
նելովի մեծ հաճելի բան մը ըրած
կըլլաս: Նոյնպէս դուն ալ ջանա չի-
խօսելու մէկուն հետ այն լեզուն, որ
ուրիշ ներկայ եղողները զանի չեն
հասկընար, եթէ ոչ իրենց թոյլատու-
թեամբը. ընկերութեան մը մէջ գլու-
նուած ատենդ նայէ որ միշտ ուրիշներ-

րէն թոյլատու թիւն ունենաս խօսելու :
վասն զի դուն միշտ խօսելովդ թէ և
գիտութիւն է ալ, զըզուելի կրլլաս :
Քանուած երկրիդ կամ քաղաքիդ սո-
վորութեանը հետեւէ այսինքն այն սո-
վորութիւններուն որ հողույդ և մարմ-
նոյդ վրաս մը չեն բերեր : Բայց մօտա-
յի խենդ ըլլալէն քեզի զգուշացիր, և
զանի չափաւոր կերպով գործածելն
ալ մի նախատեր, նոյնպէս պարկեշ-
տութիւնը միշտ աջ ձեռքիդ պէս պա-
տուէ : Եթէ քեզ մէկը առաքինութեա-
նըդ համար գովելու ըլլայ փոխանակ
հպարտանալու կամ գոռոզելու, հե-
ղութիւն կամ խոնարհութիւն ցցուցած
ատենդ ևս առաւել քեզ սիրելի ըրած
կրլլաս : Զգուշացիր ուրիշի ձեռքի գըր-
եանքը կարդալու, մանաւանդ ուրիշի
մը նամակը բանալէն, վասն զի ասկեց
քեզի դալու արհամարհանաց տուգա-
նաց թողութիւնը չես կրնար դռնալ :
Որչափ ծնողք մը անպիտան եղած ըլ-
լայ, մի անարգեր զինքը, վասն զի յետ
իրեն մահուան զինքը կորսնցընելուդ

պիտի ցաւիս: Մի խոնարհեցընէր քեզ
չափէն դուքս անուում և անկիրթ
մարդու մը առջին: Նմանապէս հա-
րուատ և մեծ աստիճան ունեցողներուն
ծանօթ ըլլալդ մի բաղձար, զգուշացիր
որչափ որ բարեգէր մարդ ըլլայ ընկե-
րըդ որ ուսում կամ կրթութիւն չու-
նի բանալու իրեն քու սիրտիդ գաղտ-
նիքը. վասն զի յետոյ պիտի զղջաս,
որովհետև ուսեալ կամ կրթեալ մար-
դէ մը եկած մնասը որչափ ալ մեծ
ըլլայ յոյս կայ որ իր սխալմունքը յե-
տոյ ճանչնալովը փոխարէնը քեզի
հատուցանէ. բայց անուսումին կամ
անկիրթին անզգայ ըլլալը պէտք է
գիտնալ: Նոյնպէս գիտցիր որ այն
մարդը որ չամչնար որչափ աշխար-
քիս մէջ միտքէդ չանցած վատութիւն
կայ, կրնայ իրմէն սպասուիլ: Գուն
չափէդ վեր բարեգործութիւն ընելէդ
չես կրնար այնչափ սիրելի ըլլալ,
որչափ որ պարկեշտ, քաղաքավար և
խոհեմ ըլլալովդ: Այս իմ փորձառու-
թեամբ կարճառօտ դրուածքս ընդու-

նէ կաղաչեմ իրրե ստանալու գիտութիւններուդ հիմը ու կարգայ համբերութեամբ յապագայ մարդկային վարմանց վրայ ռամկօրէն գրուածքս, և ժամանակս անցած է, կամ ես դեղացի մարդ եմ իզմէ չի պահանջուիր սա գիտութիւնը մի ըսեր, վասն զի սովորելու սկսիլը ուշ, նոյնպէս գեղացին ալ քաղաքացի և աստիճանաւորու կրթութեան կարօտ ըլլալը անկարելի չկըրնար ըլլալ: Ոչ ոք կը նախատուի ուշ սկսելուն համար, բայց ամենեւին սովորելու սկսիլ չուզողները միշտ նախատուեցան:

Շատ լաւ ըրած կըլլաս եթէ որչափ մեծ ընտանիքէն կամ թէ պաշտօնատէր անձ մը եղած ալ ըլլաս, քեզի ամչաաս նամակ կամ լուր մը խրկողին ինչ կերպով կամ պատասխանով որ յարմար կը կարծես, զինքը դո՛հ ընես նէ, վասն զի ասով քու վրայ վատ խօսողի մը թիւը պակսեցուցած ու բարի խօսողի մըն ալ աւելցուցած կըլլաս:

Քու նախագուշակութեանդ համե-

մատ մէկու մը ըսած խօսքից նեւե-
ւանքը կատարուելով, ինքը քեզի
զանի պատմած ատենը, ես աս քեզի
արդէն չ'ըսի, ահա տեսար մի եկաւ
ելաւ իմ խօսքս և այլն, մի ըսեր, վասն
զի լռութեամբ աւելի խոհեմութեան
պատուոյն անունը կատանաս :

Նոյնպէս մէկուն քեզի պատմելու
սկսած բանին սկիզբէն յապագայպատ-
մելիքը իբր թէ մակարերելովդ ձգէ, զի
տեմ գիտեմ դուն աս ըսել կուզես ըսե-
լով չրեն պատմութեանը արդելք ըլլա-
լովըդ, ինչպէս իրեն անհաճելի ըլլալդ
քու վրայ զանի փորձելով, զգուշա-
նալէդ քաղաքաւար և կրթուած ըլլա-
լուդ իրեն պատուական նշան մը
տուած եղած կըլլաս :

Տեսար մէկը որն որ թէպէտ և շատ
բարի և բնութեան հրամաններուն
հաւատարմարար ծառայող մարդ մըն
է, բայց այս նոր աշխարհիս վրայ իր
հին մտքերուն կամակոր ըլլալով, իւր-
բատ չընդունիր, ընդունի նէ ալ միշտ
իր գիտցածը կրնէ, ու նախապաշա-

ընալ մտօք Սատուած կըսէ, Սատուծոյ
կապալինի առանց նախատեսութեան
անհոգ և անխոհեմ ծուլութեամբ կա-
պրի ու միշտ իր գործողութեամբը հա-
մողուած դալու յաջողութեանցը ինքը
կապատէ ու քեզ ալ ըսպասել կուտայ,
կաղաչեմ որ այսպիսի մը հետ ունե-
ցած ծանօթութիւնդ առանց ինչ որ է
նէ գործոցդ հաղորդակցութիւնը եղած
ըլլայ, եթէ կուզես քեզի դալու ճա-
խորդութեան առջին առած ըլլալդ :

Ս.ն մարդէն ուսկից ունիս պահանջ-
մունքը որն որ քու քաղցր վարմուն-
քիդ արժողութիւնը չգիտէր. նայէ որ
քաղցրութեամբ և խոհեմութեամբ իր-
մէն առնելիքդ առնես, սպա թէ ոչ
թէ և դառն խօսքով և կծծու բառերով
և անհաճելի կերպով առնես նէ ալ,
կուգայ Ճամանակ որ դուն կափաստաս,
վասն զի ինքը ան ատենը քու ըրած
բարեկամութիւնդ չյիշեր, այլ քու
անխոհեմ վարմունքդ երեսդ կուտայ:
Եւ ան բարեկամութիւնը կամ մարդա-
սիրութիւնը եր երախտագէտի մը կը-

նեա՛ մի ըներ անգգայ անփոյթ, անհոգ, անտարրեր հանարարգ մարդումը որպէս զի հողւոյդ մարդասիրութեան ջահը տկարանալուն պատճառ չըլլաս :

Եթէ իմ սա ազգասէր հողւով և մարդասէր մտօք թէ և (գեղջուկ լեզուով) բայց փորձառութեամբ զբաժներս չես պատուեր նէ դոնէ այն քարերուն վըրայ քեզի տրուած քաջ անձինքներուն ոսկի խրատներուն կաղաչեմ որ ան մեր հայրերէն պապերէն մնացած ամենէն ատելի ու ազգիս ազխտութեանը նշան և պատճառ եղող սովորութեամբը չխաւտասխանես, որ եթէ մէկը իր ընկերուն տուած օգտակար խրատը կամ թէ և ուրիշէ մը լսած բարի յորդորանքը իրեն պատմած ստե՛նը, կըսէ. « Պետեիևտիմ, քա-
« չայ ալըրսըն, վարըվեր, կամ
« ասոնք բոլոր ճեպս և փորս է, ես
« ասոնք դիտեմ, ուրիշի մը պատմէ,
« կայ մի նորէն մէկ չգիտցած բան
« մը ան նայինք, ասոնք հինցած մա-

« Խառնեցր են ասոնք մարդուս փորը
« չեն կշտացըններ, և այլն. վասն զի
սիրելիս այսպիսի պատասխան տը-
ւողները կրթեալ ընտանեաց և ընկե-
րութեանց մէջ աւելի վատ քան թէ
էշ ու աւանակ սեպեցուան :

Թէ և իրաւ է սիրելիս այսպիսի կըր-
թութեան դաշտը ձիավարժիլը դըժ-
ւար է ըսելից, բայց կը յուսամ որ իր
հետեւմունքը քաղցր ըլլալը չուբա-
նալովից, չես երբէք թուլանար արի-
ութեանն էօզէնկի տալու. վասն որոյ
նայէ որ ոչ միայն քեզ կրթութեամբ
զարգանացընես՝ այլ և զաւկներդ ալ
ան կիւսիէ չուտող կամ նորագիւտ քա-
նըրէն չիկործանուող Մարդկային
վարմանց կրթութեամբը հարստացած
թողուս քան թէ խարեբայ աշխարհիս
շուքի նման հարստութեան բազմու-
թեամբը :

Վասն զի կրթութիւնը զուարճու-
թեան դրախտ և կենաց ծարն է ըսե-
լուս չես հաւատար նէ կրնաս իրեն
պտղոյն քաղցրութիւնը շրթունքովից

զգալ և իր գեղեցկութիւնն ալ աչօքդ
կրնաս տեսնել, եթէ մօտիկնաս անոնց
քով, որ մարդուս իր Մարդկային վար-
մանց առիթներու մէջ ընելու զգու-
շութեան իրաւունքը կը տեսնեն և
իւր տուած պատուը կը վայելեն կոր :



ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԳ

Ուստի եթէ այս մարդկային ընկերութեան ուսումը ունիս թէ և աղքատ մարդ մըն ալ ըլլաս ոչ միայն քու պատիւը կաւելցընես, ուր որ ըլլաս կամ որ ազգի մէջ որ գտնուիս քեզ կը դռվեն կը պատուեն և դուն ալ օրհնեալ և երջանիկ խաղաղ կեանք մը կանցընես (յաւիտեանական ստանալու երջանկութիւնդ կընաս դիւրին կերպով ունենալ) : Վասն զի այս ուսումը չունեցողը ընկերութեան մը մէջ քաղցրութիւն չստանալէն վերջը սիրելի ալ չըլլար : Որչափ դիտուն և ճարտասան որ ըլլաս եթէ կրթութիւն քաղաքավարութիւն չունիս կատուիս միշտ և կը նախատուիս, անոր համար մի ապուինիր դիտութեանդ, վասն զի քեզմէ գիտունը կընայ գրանուիլ, ուրեմն բանի մը վրայ խօսած ատենդ, միշտ ինծի այս այսպէս կերեւնայ, կամ իմ միտքս այսպէս կը

կտրէ ըսելովդ, խոհեմութիւն մը ըլլած
կրկնաւ : Ասան զի աշխարհիս վրայ
ամէն մարդ պէտք է ջանալ զինքը
կրթելու, ու իր պահասութիւնները
շակելու, և այս իր բնական պարտա-
ւորութիւնն է, վասն զի դուն այս
պարտաւորութիւնը քու ընկերէդ
պահանջած ատենդ երբոր տեսար որ
չընդունեցաւ, ոչ զինքը կը յարդեա, և
ոչ ալ կը լսես. ուրեմն ջանա որ այս
ուսումը ունենաս, և դիտակըլլաս քու
անձիդ վրայ, որ ժամանակաւ կամ
մարդկային բարձրութեամբ մը չի-
զաղջանայ իր աս ուսման փորձառու-
թեանը մէջ : Միշտ ջանա որ դուն քու
գործքէդ վարձատրուիս, ու անմեղ
սիրտով գովուիս : Աւագոյն համարէ
տկար ճրագի լոյսի մը չտի առաքինի
ճանչնուի, կամ ապրիլ, քան թէ լու-
սին առաքինութեանց ըլլալ կամ դի-
տութեամբդ զիշերային փայլուն աստ-
ղերը ըլլալ ու միւս կողմանէ վարքովդ
կամ գործողութիւնովդ թէ նախատա-
նաց արժանի և թէ խղճմտանաց բեռն :

Ըսի որ եթէ ունիս կարօտութիւն մը
և կուզես օգնուիլ, ամենեւին մէկու
մը մի յայտներդ գանի, մինչև անգամ
քու սիրելի կնկանդ, եթէ ոչ մեծ
համբերութեամբ լաւ մը մտածելէդ
վերջը, մէկ քեզ ճշմարիտ օգնելու
ուզողի մը բաց սիրտդ. վասն զի աշ-
խարքիս մէջ օգնութիւն ընել ըսած
բանդ, ակամայ բան մը եղած ըլլա-
լով հազիւ կը գտնես մէկը որ առանց
օգտի քեզ օգնէ. վասն որոյ աս հաշիւը
չընելովսին շատերը իրենց համար-
մունքը կորսնցուցին. մանաւանդ մեր
ազգին մէջ ուր որ մարդկային վարմանց
ուսումը չի գայ. վասն զի այսպիսինե-
րը չեն գիտեր որ մարդս այսօր խե-
լացի է, ու վաղը կրնայ խելագար
ըլլալ կամ այսօր կառքերով կը սլաւա-
տի, վաղը ոտքի կոշիկի մը կարօտ
կրնայ ըլլալ, գուցէ այս և այսպիսի
մարդասիրական խօսքերը բերանն կը
սէ, նէ ալ բայց սիրտով չի հաւատալ-
նին իրենց գործքերէն կրնաս իմանալ:
Ուստի ինչ որ է նէ քու վայելած բազ-

դաւորութիւնդ, մի հպարտանար՝ այս
ինքն, զանի անխոհեմութեամբ մի
դորձ ածեր, վասն զի պարտիս միշտ
մտածել որ ատ բազդաւորութիւնդ
քեզի իբրև զբաւ զրուած է, նոյնպէս
բարեգործութիւն մը ըրած ատենդ
յառաջագոյն մտածէ ինչ ընելիդ, որուն
ընելիդ ու անկէց առաջ գալիքները .
վասնզի չըլլայ որ ըրած բարեգործու-
թիւնդ խողերու առջին ակնպատուա-
կան նետածի պէս ըլլաս, կամ քու
օգնութիւնդ ընդունողը քեզի ապե-
րախտ գտնուիլը միշտ աչքիդ առջին
պիտի ունենաս որ եթէ չունիս այս-
պիտի ապերախտութեան մը բաւական
համբերութիւն, կը խրատեմ քեզ որ
կամ ըրած օգնութեանդ ծածուկ քեզմէ
եղածը չմայնես ու միշտ ջանաս մարդ-
կանց աչքը պղտիկ ըլլալու, չէնէ քեզ
միշտ անհանգիստ կընեն օգնութիւն
խնդրելովսին: Եթէ մէկը յանցանք մը
ըրաւ որ աստիճանի մարդ որ ըլլայ, գա-
նի մէկէն մի նախատեր կամ մի պատ-
ժեր, աւելի քան թէ իւր յանցաւորու-

Թիւնը, վասն զի նախատինք կը ժողովեա քու վրադ, բարեգործութեան մէջ ինչ որ դժուարութիւն ունենաս, կրնաս գուցէ դիւրութեամբ աղատուիլ բայց ընտանեաց կռուի մէջ խառնուելովդ, մանաւանդ սլակելոց մէջ դիտցիր որ բոլոր կեանքդ դատողութեան մէջ ձգած կըլլաս: Վասն զի չիդայ կանոն մը որ քեզի այնչափ դուցէ մաքուր պահէ, որչափ բարեկամութեամբդ, պարկեշտութեամբդ, խղճմտանօք վարուիլդ քու ընկերոջդ հետ, նաև միտքդ մի գներ որ այս ինչ անձը աղքատ է կամ բեռնակէր մարդ է կամ ինքը օտար աշխարհ գնաց, իրմէ քեզի զնա չկըրնար դալ, կամ իրեն ըսած սուտդ, կամ ըրած անիրաւութիւնդ զրպարտութիւնդ, ոչինչ բան է, վասն զի կուգայ ժամանակ որ կը յայտնուի կամ անիկա ժամանակով մեծ մարդու աստիճանի մը գալով կամ ինչ և իցէ սպարադայով իրմէն քեզի զնա դայ. իրաւ է սիրելիս, որ մէկուն տուած խօսքդ ամուր բռնելէն շատ

դժուարութիւն կրնաս քաշել, բայց
գիտցիր որ ժամանակաւ մեծ յարգու-
թիւն կատանաս, բայց ես կը խրատեմ
որ միշտ հանդարտ մտօք և ժամանակ
առնելով խօսք տուր մէկուն, բայց
զանի կատարելուդ վրայ ալ փոյթ և
հող ունեցիր: Այս ինչ ամիրային կամ
ուրիշ մէկուն կամ քու սիրելւոյդ ըրած
պակասութիւնը քեզի վկայութեամբ
կամ ազայցուցով ըսելնին, իրեն մի
ըսեր, վասն զի ըսողները որչափ ալ
քու բարեկամդ ըլլան առիթը պահան-
ջած ատենը քու առջիդ զանի քեզը
ըսած ըլլալնին կուրանան, որոնց առ
խարթախ սովորութիւնին ժամանա-
կուան լուսաւորութեան կուտան կտր,
նաև մէկուն վրայ ինչ և իցէ իրաւ ը-
սած բանդ իրեն կամ ուրիշին մի ըսեր,
վասն զի ժամանակաւ գլխացաւու-
թիւն կուզայ քեզի, և եթէ պարտքը
պահանջէ իրեն զանի ըսելդ, նայէ
որ խոհեմութեամբ և քաղցրութեամբ
ըսած ըլլաս: Եւ եթէ իմացար որ գի-
մացինդ չիճանաչեր պարզամտու-

Թեամբ և ճշմարիտ խօսողի մը յար-
դութիւնը, իրեն հետ բաց և պարզ
խօսքերով ընտանեկցութիւն մի ըներ,
այլ միշտ հսկող, խօսքը պահող պար-
կեշտ ու աշխատող եզիր և ունեցիր
նախանձ սեպհական սիրոյդ վրայ :
Պահէ քու գիրերդ, քու բանալիքներդ
նմանապէս ուրիշներու քեզի յանձնած
բաները աւելի մեծ զգուշութեամբ
քան թէ քու ստացուածքդ, վասն զի
քու ստացուածքդ կորսնցընելէդ այն-
չափ ցաւ չես ունենար, որչափ
ուրիշին եղածը կորսնցուցած ատենդ,
կամորոշակի ժամանակուան համարքե
զի տրուած ինչ և իցէ բանը ջանայ որ
ժամանակին ետ տաս : Քեզի ծառա-
յողները իբրև գերի մի գործածեր այլ
մտածէ իրենց վիճակին խեղճութիւնը
անոնք ալ քեզի պէս մարդ են ու զիրենք
ուրացած ըլլալով քեզի ու քու կամայդ
պիտի ծառայեն, դուն անգթութեամբ
իրենց հետ վարուելով, անխղճատան-
քութեան մայրը սեպուած կըլլաս
Նւ իրենց հաւատարմութիւնը իրենց

վարձքովը վճարած քեզ մի կարծեր,
այլ ևս առաւել պատուէ գիրենք, որ
պէս զի պատճառ ըլլաւ իրենց նոյն
առաքինութեան մէջ յառաջանալ-
նուն: Եթէ սխալմամբ կամ գիտու-
թեամբ և անդիտութեամբ յանցանք մը
ըրիր՝ քեզ մի ջատագովեր, այլ ճանչ-
ցիր զանի ու մէյ մըն ալ շքնելոյ
խօսաացիր. ցըցուր որ կը գղջաս
բրածիդ վրայ, և եթէ քեզի դէմ
սխալողին կը ներես, բու սխալմանդ
ալ ներում կը դանես. ուրիշի մը
դժբաղդութեանը կարեկից ըլլալդ
կամ զինքը մխիթարելոյ քեզի անպա-
տուութիւն մը եղած չսեպես: Նոյն-
պէս զիտցիր ինչպէս շատերը կան որ
ուրիշին կամաց կամ ուշ գալելուն,
շատ կամ քիչ քնանալուն, ուտելուն,
խմելուն կամ ձեռքը ոտքը շարժելով
խօսելուն պարտքով ասորելնուն վրայ
և այլն կը դատեն, կրթութեան գէ մ
է. նմանապէս ընկերութեան մէջ մէ-
կուն աչքով, շրթունքով ձեռքով կամ
նշանով մը կամ ականջէն վար խօսիլը

անկրթութիւն է: Հաւատո՞ւ ինծի պալ-
կեշտ, և քաղաքավար կեանք վարած
ատենդ, եթէ դլուխդ փորձանք մը
դալու ըլլայ, աս պատուական վարքիդ
համար շուտով օգնութեան լոյս մը
կունենաս, և թէ սիրտիդ բացողիդ դի-
րութիւն մը կուտայ առանց երկայն
բարակ խօսակցութեան քեզի օգնե-
լու: Որ աստիճանի մարդ որ ևս քեզ
միշտ մի և նոյն վարքիդ մէջ հաստատ
բռնէ. մի լինիր փոփոխամիտ (ինչ-
պէս տաճկին առակը կըսէ քիմին ա-
ռապասընա պիներսէ օնուն տավու-
լունը չալար,) կամ այսօր իրեն հետ
ցուրտ կը վարուիս, վաղը ալ աւելի
մարդահաճոյ վարք մը իրեն կը ցուցը-
նես կամ այսօր քաղաքավար վաղը
անկիրթ կերպով, այսօր ուրախ կեր-
պով վաղն ալ տխուր, այսօր լիրբ
վաղը համր, այս փոփոխելի վարքը
ունեցողը, մարդկային ընկերութենէն
միշտ կը դատուի, և համարմունքը
միշտ կը կորսնցընէ. և անոնք որ իրենց
կեանքը չափազանց յուսոյ վրայ կը

հաստատեն և չեն հողար խոհեմու-
թեամբ ջանքով աշխատելու, ինք-
զինքնին կը խարեն և խտալացուց ա-
ռակին դատողութեամբը իրենց կեան-
քը կատարեն: Ով որ միայն յուսալով
կապրի քաքանելով ալ մեռանի:

Շատ լաւ կընես, եթէ քեզի կերա-
կուրի հրաւիրողներուն չիհաճախեսնէ
վասն զի ժամանակաւ երեսդ տալեր-
նին կրնայ պատահիլ. այլ պատուէ
քու ճակատիդ քրտինքովը ունեցած
սոխ և հացդ կամ սիրելիկնկանդ մօր-
կանդ եւիսած կորկտար, քան հրաւի-
րողներուն պարարտ սեղանը, մանա-
ւանդ ամիրայի մը սեղանէն կերակուր
ուտելու կամ իրեն հետ համարձակ
խօսել ու ընկերութիւն ընելու զգոյշ
եղիր: Մասնաւոր կերպիւ կաղաչեմ
որ ինչ նեղութիւն քաշելու որ ըլլաս
քաշէ, բայց քահանայի մը հետ թըշ-
նամի մի ըլլար վասն զի ահա կործա-
նուելուդ սկիզբը. ես չկրցայ իրենց
կիրքը յաղթել. բայց պատուէ գիրենք
խնդրէ իրենց ծառայութիւն այն առիթ-

նեներու մէջ որ պէտք ես իրենց հետ
ըլլալ: Որ աստիճանի մարդ որ ըլլայ
անմիջապէս աջ ձեռքդ իբրև բարե-
կամ իրեն մի տար, կամ իրեն ըսպէ-
ական քաղցր տեսութենէն վերջը դին-
քը մի գովեր: Մի բանար սիրող իրեն
մէկէն ի մէկ մինչև շատ մը զինքը
չփորձես, վասն զի տկար ըլլալովնիս
ու դիմացիննիս ալ խորամանկ, կրնայ
մեր սրտին ծածուկը մեղմէ գողանալ
բայց այս ըսելով սրտերնիս շատ գոց
պահելն ալ ուրիշին կասկած կուտայ,
ըսի որ ընկերութեան մը մէջ պակա-
տութիւն ընողին վրայ ծաղրաբանու-
թիւն մի ըներ. բայց մեկուն ըրած
սխալմունքին վրայ ալ ամենեւին չի-
պիտի ծիծաղուի, մանաւանդ անոնց
վրայ որ պակասութեամբ մը ծը-
նած են: Եւ չիկարծես որ ընկերու-
թեան մը մէջ ծնծաղելու համար ըրած
պատմութիւններդ կամ հնարած խօ-
սակցութիւններդ քեզի պատիւ մը նէ,
մէկուն ստամոքսի տկարութենէն
յանկարծուտ հոտ մը դուրս տալը իմա-

նալի իրեն իմացընելովից անկիրթներուն թիւին մէջ կը համարուիս, ով որ ըլլայ թէ եւ քու վարձաւոր ծառայեղամ ըլլայ, օտարի մը առջին զինքը մի չեխեր մի յանդիմաներ. վասն զի օգուտ մը չես շահիր, մանաւանդ թէ գուցէ վնաս : Առդեսս որ սիրելի մարդահաճոյ լինիս, միշտ արթուն, պարզ քաջասիրտ և ցաւակից, նոյնպէս ճակատդ բաց եղիր, վասն զի այսպէս վարք ունեցողը ամենուն հաճելի է : Արչափ հմուտ ու բարի անձ որ ըլլաս, զգուշացիր ծաղրարանութիւն ընելէն վասն զի այս քեզի նախատանաց և անպատուութեան անուն կը բերէ, թէ և միտքդ բոլորովին բարի է նէ ալ թէ և կան որ այսպիսի ուրախութիւններ կընեն, բայց իրենք նախ միտք կը դնեն ինչպիսի ընկերութեան մէջ են, և ով կայ բոլորովին, վասն զի կրնայ ըլլալ մէջերնին մարդիկներ որ իրենց միտքը չհասկընալով ըրած ծաղրարանութիւնը չար հետեւողութիւն մը բերէ կամ քու պատմած բանիդ

չի հաւատացողին դուն սա պատմածս
պատահած ատենը քու խելքդ զերեւս
ան ատենը բանահաս չէր ըսելովդ ,
կրնաս զինքը վշտացընել . վասն որոյ
եթէ իրաւ է ըսածդ, թող որ ինքը երթայ
տեղեկանայ , կամ թէ չի հաւատալով
քեզի , եթէ քեզ նախատեց , ինքը
յետոյ ամչնայ , վասն զի մարդս որ
չամի առաքինի ալ ըլլայ միշտ կը սիրէ
շողոքորթութիւնը : Զգուշացիր ընկե-
րութիւն ըրած մարդիկներուդ հետ
որչամի մտերմութիւն ալ ունենաս ,
իրենց հետ ըրած դրօտանքդ միշտ
իրենց խարճովը չընես . կամ եթէ
պարտաւորուիս ալ ընելու , հոգա
իրենց ուրիշ կերպով մը փոխարէնը
ընելու , սպա թէ ոչ եթէ անհոգ կենաս
յետոյ քեզի շատ դանկ կը նստի : Մէ-
կուն պատմութիւն մը ըրած ատենդ ,
զգուշացիր իր հետեւութենէ , որ ներ-
կայ եղողներէն մէկուն չիղպչի կամ
պատմած բանդ կամ տեղեկութիւնդ
ստոյգ է նէ ալ , այսպէս լսեր եմ ըսե-
լովդ , եթէ օր մը պատմութեանդ մէջ

սխալմունք մը եղած ըլլալը իմացուի
քեզի մնաս մը չգար վասնդի կանպատ-
մութիւններ որ դուն հնարած ալ գուցէ
ըլլաս ու յետոյ այնպէս զան իկա քեզի
կը պատմեն որ դուն ևս հաւտալու
կըլլաս: Զդու շացիր մէկուն վրայ վատ
բան մը լսելովդ անմիջապէս հաւ-
տալու, վասն զի նախ զանազան նա-
խանձ թշնամութիւններ կան աշխար-
քիս վրայ. երկրորդ արդար մըն ալ
կրնայ օրը եօթն անգամ սխալիլ, և
շատ քիչ բան կայ աշխարքիս վրայ
որ երկու մեկնութիւն չունենայ, ինչ-
պէս երբեմն կը պատահի որ դուն ալ
բան մը կըսես, կամ կընես որ ըստ
ինքեան միտքդ բարի էր, բայց գացին
պատմեցին չար մտօք: Աստն որոյ
խօսակցութեանդ ստե՛նը միշտ նայէ
որ պարզ բառերով հստակ խօսիս,
ինչու համար է որ պարզ և հմուտ
մարդիկ կը սիրուին, վասն զի պարզ
մտօք եղած բառերով կը խօսին, և
ցած ձայնով հեղութեամբ խօսած ա-
տենդ քեզ լսողներուն հաճելի կրնաս

ընել քեզի: Պատուեցար ընկերութեան մը մէջ ուր խօսքի տէր ամիրայ մը քահանայ մը ուսուցիչ մը կայ. թէ և բան չխփխփոցող են կամ նոյն ըսած բաներնին ծուռ է ու ան ըսած կամ ըրած բաներնէն քեզի վնաս պիտի դայ, ջանա, աղաչէ հեղութեամբ մէյ մըն ալ նորէն երկայնամտութեամբ քննուելուն եթէ հմտութեամբ չես կըրնարնէ զիրենք համողել կամ քաղցր եղանակաւ մը իրենց խորհուրդին վրտանդաւորութիւնը ցուցընել կամ կըտորելու վճիռնին վաղուան ճըգելունին սլատճառել: Մի յանդգնիր մէկէն իրենց սխալմունքը յանդգնութեամբ իրենց երեսը ըսելու, ապա թէ ոչ թշնամութիւն կընեն քեզի և սլատիւդ ալ կը կորսնցընես, որով եթէ պիտանի անձ մըն ես նէ ալ ազգին կամ ընկերութեան, զատուելովդ իրենցմէ ազատաց որբերուն և ազգային կամ ընկերութեան առաջացմանը արդելք եղած կըլլաս որ քու քաջ դատաստանովդ կամ հողարարձութեամբդ խնամ

կը տանէիր կոր իրենց վրայ: Եւ որ-
չափ քաջ և արդար վարմունք ունե-
ցած ըլլաս, միանձամբ օրինակ բե-
րիր քեզ ուրիշներուն. վասն զի կան
տկարներ որ կարծեն թէ քեզ գովել
կուզես կոր, թէպէտ և խոհեմ կերպիւ
զիրենք օրինակ բերողնորը ես չեմ
սպարասեր, վասն զի դիցուք թէ անձ-
նական գովութենէն մը յառաջ եկած
ըլլայ ըսածը որ ինքը ամէնքը եղբայր
կը ճանաչէ կամ ինքը Աստուծոյ և
եկեղեցոյ սրտուիրաններուն կա-
տարմանը կը ջանայ ցրցունելով իր
դորձքերը ինչո՞ւ դիմացինը չըբողձար
ընելու, վասն զի կան բաներ որ շատ
մարդկանց համար չէ, այլ հարուրակ
մարդկային բնութեան համար է կամ
չէնէ տարբեր կերպիւ նոյն բանը
միւսն ալ կրնայ ընել, կամ թէ ինչո՞ւ
չըսեմ ես որ, այս գիղի մէջ գտնուող
որսորդներէն ամենէն քաջը ես եմ,
երբոր դիմացինս գանի կը վկայէ:
Եւ մէկը խենդ եղած պիտի ըլլայ որ
ունեցած կարողութիւնը իրմէն գիտ-

ցած ըլլայ և ոչ թէ աստուծմէ, բայց
եթէ ըսելու ըլլամ այնչափ հաղար
բնակիչ քաղքիս մէջ իդմէ աւելի լաւ
իմ գիտցածս գիտցող մը չիկայ, այն
ատեն կը սխալիմ, վասն զի թէ ամե-
նուն հետ ծանօթութիւնն ըրած չեմ,
և թէ գիրենք չեմ վարձաց, կամ իրենց
հետ քննութեան չեմ ելած: Արաւ է որ
աշխարքիս վրայ դժուար բան է իրա-
ւունք ունենալը, մանաւանդ անմեղ
ըլլալով անիրաւ գաստատանաւ վճի-
ռը կորուսիլը որ աս ցաւիդ մխիթարու-
թիւն մը չես կրնար գտնել, եթէ ոչ
զանի յանկարծակի քեզի եկած դըժ-
բաղդութիւն մը համարած ըլլաս, ու
համբերութեամբ լուս կենաս, ու միտ-
քէդ զանի նետես քեզ մխիթարելու
կերպով խօսողներուն աղաչես որ
զանի քեզի չյիշեն, այն ատեն աւելի
կը շահիս քան թէ իրաւունքդ խնդրե-
լու հետեւած ատենդ, մանաւանդ եթէ
ինկար վերոյիշեալ անձանց ձեռքը
կորուստիդ բոսը քու ձեռքովդ բորած
կըլլաս: Մտածէ մէյմը ան ծառային

կամ ան իր տունէն վեր եղող բարե-
բոյս սրաշտօնագիր երխտասարգին
անտանելի ցան որ իր տիրոջը որդ-
ւոյն կտարած հօրկանը թանկագին
գաւաթը իր երկիրին սաշեանը կամ
դերգասնին հոգացողութեանը աշխա-
տող պարկեշտ երխտասարգին վրայ կը
նետէ, որն որ չկըրնար ամենեւին
զինքը արդարացընել: Շատ (զոնէ)
ինծի անկարելի երեւցած բաներուն
փորձատութեամբ յաղթիչը գտնուե-
ցայ, բայց այս ցաւուն յաղթութիւնը
ինծի անկարելի եղաւ մոռնալը. կը
հաւատամ յղութիւնէն ազատելու ցա-
ւը շատ մեծ ըլլալուն, բայց մտածէ
ծնանելէն ըստէ մը վերջը իր երկանը
նիրոյ համբուրով պըլլուելուն կերպը:
Առդեմ աշխարքս թէստորոնի մը նը-
մանցընելով և ամէն պատահմունքը
մարդուս համար է ըսելով ինծի պա-
տահածը մոռնալ, բայց չկըրնալս, դու-
ցէ ազգային լուսաւորութիւնը ուզող
Ամիրաներէն, և Ֆրիստոսի երամակին
վրայ հովիւ եղողներէն եղած ըլլալուն

համար է որ ինծի այսչափ դժուար կե-
րեւնայ կոր: Ջանսն չի ծանօթացրնե-
լու քու բարեկամիդ այն անձը, որ նոր
իրեն ծանօթ չէ. վասն զի դուն իրեն
հետ թշնամի եղած ատենդ, բարեկա-
միդ սիրտը քու վրայ սղտորելու կը-
ջանայ: Ստոյդ է որ անոր չի հարցը-
նէր չի ալ սովորի, բայց դուն միտք
դիր ով է որ դուն իրեն կը խօսիս կոր.
չըլլայ որ իրեն ձանձրութիւն տուած
ըլլաս. կամ ըսածդ իրեն բնութեան
դէմ եղած ըլլալով քու վրայ գայթաղ-
դի: Աթէ պատահեցաւ որ քեզ չկըր-
ցար բռնելու բարկացարնայէ որ վատ
բառերով խօսքերով եղածը չբռնկ-
ցրնես, կամ գիմացինիդ սիրտը չկոտ-
րես չվիրաւորես, վասն զի աս վերքը
գիրութեամբ չես կրնար առողջացը-
նել, վասն որոյ միշտ ծակ մը թողու
որ ատենով նորէն իրեն հետ բարե-
կամութիւնդ կարողանաս դռնալ:
Նայնպէս ընկերութեան հաճելի բան
չէ ժողովուած ընկերութեան նկատմա-
նէն դուրս բանի մը վրայ խօսիլ, վա-

սըն դի եթէ դրօսանքի համար ժող-
վուած են կամ ձեռնարկութեան մը,
իրենց շքօթելու պատճառ կըլլաս:

Ալ խրատեմ քեզ որ չըլլայ թէ հա-
ւատքի կամ եղեղեցական այն սովո-
րութեանց վրայ դատողութիւն ընես,
որ մենք չենք կրնար մատուցիս ցու-
ցընել, կամ չենք կրնար վիայել վա-
սըն դի ասոր վրայ եղած տրտրիւն,
կրկնին վերջը չի դար, ու շատ վատու-
թիւններ պատճառեց, և կը պատճա-
ռէ կոր, և սխալի ալ պատճառէ: Հա-
մողուած հաւատքդ պահէ ու ծառայէ
իրեն հաւատարմութեամբ, և զանի
ատելուդ կամ վտխոխելուդ համար
քեզ խրատողները մի անարգեր, այլ
աս պակասութիւննին իրենց համագու-
թեանը տուր, ըսելով քեզի խօսողին,
իմ գործքս կը խնդրես իզմէ չէնէ իմ
հաւատքս: Նայնպէս դիտցիր որ շատ
դժուարը կուգայ ընկերոյդ, իրեն դըլ-
խէն ատենօք անցածը կամ իրեն
պատահած դժբաղդութիւնը իրեն
պատմելու ըլլաս: Եթէ մէկուն ան-

կարգութիւնը շտկելու համար հեռու-
ւանցեղանակաւ մը անանունով կը օրի-
նակ բերելով զինքը չես կրնար զգուշա-
ցնելն է հանդուգն կերպով, բառաւ-
բառ իրեն սակասութիւնն իրեն երեսը
մի բանը, (թէ եայնպիսի մը եղած ըլլայ
զիմացինդ, որ միշտ իրեն բերանն եզ-
պէք ըրած է որ, եթէ իմ բարեկամս ես
իմ երեսս ըսէ իմ սակասութիւնս) ին-
չու որ մարդկանց հետ ընկերութիւն
ընելու դրամագլուխը խոհեմութիւնն
է: Աս խօսքը իրաւ է քեզի կըսէ, բայց
յետոյ իր սակասութիւնն իրեն ըսե-
լովդ դժուարը դալով քեզի թշնամի
չըլլարն է ալ՝ քու առջի յարգութիւնդ
կը կորսնցունես իր առջին: Դուն՝
չարը բարիէն զատելու լոյս ունենա-
լովդ խառն խօսքով դրուած զիրքերը
բարի մտօք կրնաս կարդալ, բայց ես
կը խրատեմ քեզ, որ զանոնք կարդալդ
ամենուն մի իմացընէր, վասն զի կան
որ ազէտ ըլլալովնին քու վրայ կը
դայթակզին, սպառկե՛րազարդ Տելե-
մաք զիրքն իմ եղբայրս կարդալուն

համար իրեն ուխտադրութեան ատենը
զինքը միաբանութեան մէջ ընդունիլ
շուշուղներ եղան :

Մեծ անկրթութիւն է մէկուն քեզի
խօսած ատենը դուն անզին ուրիշի մը
խօսելու պարապիս, կամ աս ուրիշի մը
պատմէ ես գիտեմ ըսելովդ, կամ իր խօ-
սելու եղանակը, կամ խօսած խօսքը պի-
տանի չըլլալովը միւս կեցողին հաս-
կըցուցած ատենդ, կը ցուցընես որ
անկիրթ, տգէտ մարդ մըն ես : Ինչ-
պէս որ մեծ յանցանք է մէկուն գրե-
լուն վրայ նայիլը կամ զանի կարգալը
նոյնպէս ալ այն բանն որ քու ձեռօքդ
չէ դրուած զանի խառնելը մեծ ան-
կրթութիւն է : Մեծ խոհեմութիւն է և
մեծ ալ շահ կրնաս ունենալ եթէ մէ-
կուն հետ ունեցած վէճիդ կամ հակա-
ճառութեանդ մէջ քու վերջին ըսելու
կամ տալու խորհուրդդ, միտքդ մէկէն
շուտով իրեն ըսելու տեղ ամէն յոյսդ
կըտրելէդ վերջն ըսելու ըլլաս :



ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԳ.

Մի հազվիր կարողութենէդ վեր կամ վար, այլ միշտ մաքուր և պարկեշտ հազվելու ջանան, այս ըսելովս պէտք է թանկագին ըլլալը թէ և հասարակ կտաւէն բայց մաքուր ըլլայ, վասն զի մաքրութիւնը մարդուս մեծ յարգութիւն է: Բաւական է որ չափազանց մօտայի չհետեւիս. կամ մեծ մօրկանդ, հօրկանդ, մայրապետի ֆերանէն, կամ քարքիւնի (անուանած) խարքախնալ չհազնիր:

Ուրիշներէն փոխ առնելով զգետ հազնելու բաղձանքէն քեզ հեռացուր, վասն զի թէ քու ունայնասիրութիւնդ կը ցուցընես, և թէ իմացվելով ուրիշի զգետ ըլլալը, ծիծաղելի կըլլաս: Մի կարծեր որ քեզի անպատուութիւն մըն է պարտքով շրք չունենալը, կամ փոխ առած հազուստ

հազնիւր չընդունիլդ, մանաւանդ թէ
նր տղէտն որ ըլլայ քեզ կը գովէ՝
բայց պարտքով եղած չսեպուիր, եթէ
որոշակի ժամանակ քու պարտքդ վը-
ճարող մարդ ևս՝ չէ, ունայնատէր ըլ-
լալովդ քեզիպետներէն եթէ կուզես
գովուիլ նէ, գիացիր որ պատիւ մը
չէ քեզի: Այս ամի դարներ անոնք որ
կարգ կանոն չունին, վասն զի ամէնքը
մէկէն չեն կրնար կրթութիւնունենալ,
դուցէ զիւրենք կրթող չունէին, կամ
կրթեալներուն մէջ չգտնուեցան:
Ենչպէս դուցէ դուն ալ նոր սկսար կըր-
թութիւն ունենալու, որ ատենօք
անկիրթ էիր, կամ ան որ աւելի նա-
խատելին է, կրթութիւն ունենալովդ
նով գիտէ ինչ ուղտեր կը կլլես կոր,
բայց կրթութիւն չունողը կրթելու աշ-
խատելու համար գովելի ըլլալդ գիա-
ցիր: Ընկերութեան մը մէջ մէկուն
ուտելու, խմելու կամ ինչ և իցէ վա-
յելմունքի ստիպելը շատ անհաճելի է՝
վասն զի գտնուեցայ Պըթավիայ մէկ
հրատիրեալ սեղանի մը՝ ուր ներկայ

եղող անձանց ստիպմամբն ուտելէս
նեղուելով նոյն պատուական ընտա-
նեաց առողջութեանը համար դաւաթ
մը գինի խմելու շփոթելով լսեցի յե-
տոյ խմկրասեղած դատողութիւնները.
և յետոյ Յինան նոյն կերպ հրաւիրող-
ներու ստիպմանէն յաղթուելով, ու
զիս երկրորդ անգամուան դատողու-
թեւէն ազատելու համար այնչափ
խմեցի որ Նոյ նահապետին նմա-
նելով ստամոքսի այլայլութիւն
ստացայ :

Շատ մեծ զգուշութիւն ըրէ, և յա-
տուկալ մտածողութիւն մէկուն յանձ-
նարարութեան նամակ մը տալու, կամ
զինքը մէկուն հետ ծանօթացընելու,
վասն զի յանձնարարած մարդդ լաւ
չիճանչնալովդ դուն կրնաս մնասի
մը դալ: Բայց աս ըսելով ալ զինքը
քու օգնութեանդ չզրկելու համար,
որովհետեւ զինքը լաւ ճանաչեցիր,
կամ կըճանաչեստոր համար այս կեր-
պով կրնաս իրեն օգնել. այսինքն ես
այս մարդս մինչև այս ժամանակս լաւ

և բարի կը ճանաչեմ, և այս ինչ առա-
քինութեան տէր է և այլն, որ յետոյ
եթէ դժբաղդութեան մը հանդիպիքեզ
չնախատեն: Ամենեւին տէրութեանց
դորձքին մի խառնուիր, վասն զի փո-
շիբի քայի վերաբերեալ խրատը քեզ-
մէ չեն հարցըներ. և քու խառնուիրդ
յորդորողներն ալ քաղցրութեամբ մը
պատասխանէ իրենց կամացը զիջա-
նիլ շուղելդ: Այսպէս ալ ազգէդ բաժ-
նուողներուն ընկերութեանը հետ տե-
սութիւն ընելու զգուշութիւն պէտք
ես ընել, շատերն այս վերջին երկու
խրատիս դէմ ըլլալովնին մեծ մեծ
փորձութեանց պատահելէն վերջը
տարաբախտ կեանք ունեցան: Ինչ
ըրէ ըրէ ընկերիդ անունը մի կոտ-
րեր, կամ իր անունը տալով իր պա-
կասութիւնն ուրիշի մի պատմեր, վա-
սըն զի ասկէց իրեն և քեզի յառաջ
գալու փնասներուն չափը չըլլալէն
վերջը հողոյդ ալ փնաս է: Մէկուն
հետ թղթակցած կամ գիրով խօսած
ատենդ մեծ զգուշութիւն ըրէ գրա-

ծիղ, վասն զի գրով ըսածդ դատաստանի կուգայ, և միշտ գրէ իրեն այն բանն, որն որ իր երեսը կրնաս ըսել եթէ հարկը պահանջէ: Արդէն գիտցած բանդ է որ մարդուն խօսքին չը պիտի հաւատաս այլ գործքին: Երկու հակառակողներուն վէճերը կտրելու կամ քու կարծիքդ իրենց ըսելու առթի մը, եթէ քեզ ստիպեն նախ իրենցմէ քեզ վստահացրնելու ձեռագիր առ, որ քու խօսքիդ երկու կողմն ալ պիտի մտիկ ընեն և ընդունին: Ըսենք որ թէ և աչօքդ ընկերուդ սխալմունքը տեսար, որն որ իրմէն չէիր յուսար, մի դատեր զինքը մէկէն ի մէկ, վասն զի կրնայ ըլլալ որ անմեղ է: Ինծի օր մը պատմեցին որ այս ինչ պարոնն որ դուն բարեպաշտ կը կարծես եկեհիշեհիք այս ինչ տունէն ելլալը տեսանք ես զարմացայ նէ ալ, օր մը առանձին զինքը գտայ, ու նոյն ինծի ըսուած օրը ինտոր անցուցած ըլլալը հանդարտութեամբ հարցուցած ատենս, տեսայ որ դանդատ կընէր վերևսիկ

Ժողովել չկրնալուն համար, մանաւանդ
եւեւի շէնիս կնկան մը տուած ապրան-
քին փողը չկրնալ առնելուն: Աւ երբոր
կերթայ փողն ուզելու կը վախնայ,
որ զինքը ճանչցող մը տեսնելով չըլ-
լայ թէ դայթակղի, եթէ գիտնայ մէ-
կը որ յանձն կառնէ նոյն փողն ըն-
դունելու կէս փաստով կուզէ ազատիլ:

Փոխանակ ուրիշի վրայ ունեցած
հետաքրքրութիւնդ վայելելու համար
ժամանակդ կորսնցընելու, տես թէ
արդեօք քու վարքդ վարդապետու-
թեանդ համաձայն է մի, և միայն
անունդ լսած ու անձամբ քեզ չճա-
նացողի մը քեզ հարցնէր: Տես ինչ
կրտէ քեզմէն կամ ինչ համարմունք
ունի քու վրայդ, եթէ լաւ է, գոհ եղիլը
Աստուծոյ շնորհքին նայէ որ ևս ա-
ռաւել նոյն վարքին մէջ յարատեւես.
չէ, եթէ վատ է՝ ջանայ որ վարքդ շըտ-
կես: Այսին զի ինչ օգուտ է քեզի ու-
րիշներուն բարի վարք սորվեցընելդ
եթէ դուն չունիս համաձայնութիւն
խղճմտանքիդ հետ, կամ հանդարտու-

թիւն սրտիդ, և եթէ կուզես որ ուրիշ-
ները քեզ սիրեն. նախ դուն պիտի սի-
րես քեզ: Եթէ մէկ դժուարութեան
մէջ իյնաս, քաջալերէ քեզ, ու մի ձը-
ղեր քեզ յուսահատութեան մէջ, վա-
սըն զի յոյսդ չկտրած ատենդ մէկէ մը
դժուարութիւնդ փարատելու լոյս
կրնաս գտնալ: Ըսենք թէ հարուստ էիր
աղքատութեան մէջ ինկար, մտածէ
որ ամէն մարդ հարուստ չկրնար ըլլալ
և որչափ քեզմէ հարուստներ կային
որ քեզմէ աղքատ եղան, և քեզմէ
աղքատներուն վրայ նայած ատենդ
միտիթարութիւն կրնաս գտնալ: Գլու-
խըդ ինչ փորձանք որ դայ, թէ աշ-
խարհային դիպուածով մը, և թէ թըշ-
նամեաց ձեռօքը մի արտմիր, վասն
զի կորսնցուցածդ եթէ հարատութիւնդ
է, մտածէ որ մարդս է որ կը շահի
փողը. ուրեմն քանի որ ողջ ես կրնաս
դուցէ նորէն հարատանալ: Ատեն մը
երեք տեսակ կերակուրով առամոքսդ
կը յարգեցունէիր, հիմա հազիւ մէկով
կրնաս կոր սպրիլ. կամ թէ անիրա-

ւութեամբ պատիւդ կամ աստիճանդ
կորսնցուցիր, մտածէ ինչ ըսինք, աշ-
խարքս քեւտրօ մըն է. այսպիսի բա-
ներ եղած է քեզմէ առաջ եկողներուն
և քեզմէ վերջն եկողներուն գլխէն
ալ պիտի անցնի: Ընչպէս ըսի վերը.
այս ամէնն ոչինչ է, միայն անիրա-
ւութեամբ եկած զբարատութիւնը
մոռնալը դժուար է նէ ալ, ատոր ալ
հիմա դեղ մը գտայ, այսինքն Սենե-
կան աչքիս առջին բերելով ու իբրև
փիլիսոփայ մտածմամբ ապրիլ, և ու-
նայն կարդալ աշխարքիս վրայ, դուն
ալ այս ճամբան բռնելով չյուսահա-
տած ատենդ, նախ միտքդ յատակ
կըլլայ ու յետոյ անպատճառ լոյս մը
կը ծնանի մտքիդ մէջ որով կրնաս ու-
նեցած դժուարութիւնդ զիւրացընել:
Բայց յուսահատութեամբդ բարի վար-
քիդ մէջ զազջանալու ըլլաս, ունեցած
բարի համբաւդ անունդ ալ կամ ինչ և
իցէ բազդիդ հետ կորսնցունելէդ ետև,
բոլորովին խեղճ և դժուար եղողնե-
րէն շատ մը կարծեմ տեսած ես: Շատ

մարդիկներ տեսար, և ես ալ կը տեսնեմ կոր, որոնք միմիայն լաւ և առաքինի անունով մեծ մեծ գործքերու, պաշտօններու, առուտուրի մէջ են որոնցմէ քանիմըները մեռած ատեննին տեսանք որ իրենց վարած կեանքերնուն դրամադուխտը միայն իրենց անուննին է եղեր: Ենչպէս տարի գրլխէ տարի գլուխ քու գործողութեանդ հաշիւը կրնես, նոյնպէս ժամանակէ ժամանակ քննութիւն մը ըրէ, անցուցած կենացդ վրայ, տես ինչ բարութիւն ըրիր կամ որ վատ սովորութիւններդ ձգեցիր, ու եթէ կատարեալ եղանակաւ առաքինութիւն մը կտեսնես վրադ քեզ իբրև պարտատէր սեպելով ևս առաւել զանի ծաղկեցընելու ջանս: Եւ եթէ մէկուն բարութիւն մը ըրիր միւսին պատմելով մի հըպարտանար. վասն զի թէ լսողին ականջին թթու կուգայ, և թէ որուն որ այդ ըրիր, լըսելովը, քեզի թշիւամիջըլլարնէ ալ, քու յարգութիւնդ կորսնցունելու պատճառ կըլլայ:

Զգուշացիր որուն զաւակն ես հարցունողին, փոխանակ աղքատ հօրկանրդ անունը տալու, այս ինչ աւարափր իմ աղգակհանս է կամ իմ արևունաս քաշայիև իտւշունմիև է կամ տաշիս է քմեքմիպաշիիև եազրմիև է :

Ասան զինախ քեզ ծիծաղելի ըրամ չես ըլլար երկրորդ ալ ոչ աղքատութիւնդ քեզի անպատուութիւն է եւ ոչ ալ ասոնք քեզի պատիւ են եթէ ոչ քու բարի վարքդ :

Մասնաւորապէս զգուշացիր ընկերիդ հաւատքին յարարերութեանն ու իրեն քեզի անհաւատալի և անօգուտ երեւցած արարողութեանցը համար (կամ չնամ յիշելու չատելդ) զինքը բարոյական առաքինի աչօք չխնայելու, ինչու որ այս չընելու նախ իրաւունք չունիս, երկրորդ ալ պարտքդ է իրեն զաւակից և ներողամիտ ըլլալու : Աստըն զի տեսայ որ սա առողջ մտօք եղողիմը չընդունած և նախապաշարմամբդ ատամ մարդասէր ընկերդ քու վրայ զըցուցած տեսարանական

սէրը վայելած ատենդ յիշեալ մարդ-
կութեան նախատինք տղէտ համոզ-
մունքդ բոլորովին մէկդի ձգած զինքը
կը պատուէիր և կը սիրէիր : Չգէ ու-
րեմն անանկ է նէ մարդս մանաւանդ
ազգս դժբաղդ ընող սա բնութեան
հակառակ վարմունքդ : Բայց նոյն
ատելութեան չափովը ջանաս մինչև
կէս օր եկեղեցիներու մէջ երեճկը-
տալով կամ բազկատարած աղօթքով
զաւկըները տունն երեսի վրայ ձգած
կամ օրական ապրուստը հողալու ան-
փոյթ եղողը լուսաւորելու : Աստուած
ըսելով և Աստուծոյ ողորմութեանն
սպաւինելով թափառական պտրտո-
ղին միտքն աշխատելու հակեցըներու
Աստուծոյ խնամքին զինքը բոլորովին
յանձնելով անխոհեմ ձեռնարկու-
թեանց ձեռք զարնողին ձեռքն ետ
քաշելու : Աստուած իմ կորուստս չու-
ղեր ըսելով, առջևն իրեն իյնալու
վտանգէն զինքը շղդուշացողին, ևս-
խայե՛ն ետ քաշելու, վերջին սպաշ-
խարութեամբ աւազակին հետ ար-

բայութեան հրաւիրուած ըլլալու վրատահելով, մեղաց մէջ ասպրողին, սխալած ըլլալն իրեն իմացունելու: Իր համոզուած հաւատքին ճշմարտութեանը պինդ ու հաստատ կենալով ուրիշէ մը եղողին ատելութեան կոյր աչքին լոյս տալու, խղճմտանքը հանդարտ պահելու համար տկարութիւնը չնեքած պահք և ծով պահողին խահմութեամբ յորդորելով և իր առողջութեանն ալ դահիճ ըլլալը ցուցնելու: Բնութեան մեզի տուած սուրբ պատուիրանին անհոգ և անհաւատարիմ ըլլալով, երկու ձեռքով դրկած հաւատքին բոլոր սրտով ու հոգւով և մարմնով կուրակերպ ինքը զինքը խաբելը իմացունելու:

Կամ անիկա որ եկեղեցի կը շինէ կամ զանի կը հարստացնէ կամ Պայպըլին տարածութեանը պօշ փող կուտայ ու ցաւազար որբեւարիի մը պամպույէ առատաձայ մը կամ չառոչը մը հոգալու անհոգ և անփոյթ կըլլայ:

Իր հաւատոյն պայծառութեանը հա-

մար ընկերութիւններ կը հաստատէ,
և հրապարակներն ու փողոցները գրան
մը էշիկը գլխին բարձ ընելով գիշե-
րըն անցունող յուսահատ աղքատին
աչք կը դոցէ : Աստուածային տօնա-
խմբութեանց խարձիկ առաջինն ան-
ւանելուն համար նախապատրաստ
կըլլայ ու ձախորդութեանց մէջ ինկած
ընկերն՝ ես իմիններս պէտք եմ հոգալ
ջատագովութեամբ անմխիթար զին-
քը կը ձգէ : Քրիստոսի փոխանորդ է
ըսելով իր առատաձեռնութիւնն օր-
սալու եկող քահանան ամենայն յար-
գանօք ընդունելէն վերջն ողորմու-
թեան անուան տակ պահուած մտքով
առատաձեռնութեամբ զանի կը հա-
րըստացընէ, ու իր դուռը ջարդ ճըշ-
մարիտ աղքատ քրիստոնէին իր աչ-
խակաւ անգամ մտնալը կարգիլէ :


Բարեկամ ժամարարին քապախը
տալու փողը նախընթաց օրը սարա-
ֆէն ջիշերը մէկիկ մէկիկ կեօզլիւկով
կը զատէ, բայց աղքատինն եկած ատե-
նըն ընկերոջը հետ խօսելու կը պարա-

պի : Իբր տէրունական տօնին պահ-
պանութիւնը յարդելու համար ամե-
նայն աւելորդ սովորութեամբ և պեր-
ճութեամբ կը պատրաստուի, ու ճամ-
բորդութեանս մէջ յիշած խուշուճնի-
ին տալու պարագը չտալով, նոյն
տօնը խեղճին ողբով և կարօտու-
թեամբ անցընելուն պատճառ կըլլայ :
Աստուածային որոշման հետ բազդ և
ճակատադիր և այլն անտարբեր կը
հաւատար, ու իրեն օգնութեանը դի-
մող դժբազդ ընկերէն ազատելուն հա-
մար, զանի իրեն ունեցած ցուլանը-
ման հաւատքին հետեւելուն տուած
խրատովը դո՛հ ըրած կը կարծէ : Պատ-
կերին առջին պօշուէննա մօմ կը վա-
ռէ, մութի ատեն դաւաթ մը՝ կապային
տակէն շտեննուելու զգուշութեամբ
հանելով երկու լումայով իրմէն ձէթ
զնող աղքատէն կը դողնայ . ու այս դո-
ղութենէն կամ ֆայիզի ֆայիզէն հա-
շուովը յափշտակած ֆերահարէն չէ
նէ ալ, անօրէն կերպով հաւաքած փո-
ղովն Երուսաղէմ կերթայ մեղքերն

ապաշխարելու համար, գոնէ առանց
նոյն մեղքերը վերատին իրեն գործել
տուող գործիքները կտարելու և այլն:
Ո՞ր մէկն ըսեմ:

Բայց մնացած աչօքդ տեսածներդ
քու դատողութեանդ ձգելէս վերջն,
իրեն արժողութիւնն աշխարհականէն
դատող Աստուծոյ տանը մէջ քահա-
նայական սարսառորտութեան սպաշ-
տօնին թէ հաւատարիս և թէ համա-
րար ըլլալով իրեն եզրօրը հետ թըշ-
նամութեան, կիրամոլութեան անար-
դութեան գործքերով և անուններո-
վը վարուելովը տուած գայթակղու-
թեամբն աշխարհականինը դերազան-
ցելուն՝ Աստուծոյ ուրիշ ստեղծած մար-
դերուն պէս ինքն ալ մարդ ըլլա-
լուն ջատագովութեամբը վերոյիշեալ
ներուն հետ ընկերանալով՝ Աստու-
ծոյ արքայութիւնը վայելելնուն հա-
տացողներուն մի գաղբիր ըսելու ու
զիրենք ապացոյց նշաններով համո-
ղելու որ սխալ են և դալած ճամբանին
ալ չըրնագ նոյնպէս հաւատքնին ալ

չիւրիւք թեմելի վրայ բռնած կեցած
ըլլալնուն համար (եթէ կը հաւատան
աւետարանին) պիտի վլլչի վրանին ու
կործանէ զիրենք . վասն զի Քրիստոս
ճամբուն վրայի աւագակներէն վիրա-
ւորեալ ճամբորդը հոգացող Սամարա-
ցին գովելով ըսաւ մեզի . « Ձեր գործը
ձեզ պիտի արդարացընէ » ու իր ար-
դար դատաստանին օրը մեզի ըսելու
առջի խօսքն այս է « Արովհետեւ մերկ
էի հագվըցուցիք զիս , ծարաւ էի խըմ-
ցուցիք » և այլն :



— 16 —

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԳ.

Ասն արխնտո , բարկացող , անկիրթ , ծոյլ , ոխաակեր և նախանձող և այլն մարդիկներ , ատնցմէ ետքաշւիլը լաւ է . բայց եթէ քու առաքինութիւնդ հիմնական է , նայէ որ այնպիսիները շահիս , որ այն ատենը քու քաջութիւնդ ցուցըցած կըլլաս : Չէ նէ վանքէ ետեկող կենսատեաց մը կամհեղ աղօթասէր անձ մը , յիշեալ դիտութեանցաշակերտըլլալդ քաջութիւն մը չէ , և այս մտութեանց , վատութեանց մէջ լողացողները շահելու համար , նախ համբերութիւն յետոյ խոհեմութիւն պէտք է ունենալ : Նմանապէս եթէ մէկը քեզի բարկութեամբ կը խօսի դուն որչափ կարելի է հանդարտ կերպով իրեն հետ խօսէ . կամ եթէ ծոյլ է , իրեն բաղձանացը համեմատ իրաշխատանքով իրեն շահ մը ցուցուր :

Եթէ ռխասէր է կամ փառասէր, ա-
կանջը լեցուր խոհեմութեամբ, մար-
դիկներուն իրենց վրայ ունեցած
ատելումը և բարի օրինակով եղած
խրատն այսպիսիներուն մեծ դեղ է :
Նոյնպէս անոնք որ փոքր ինչ թեթև
պարզ խօսելէն կը դժուարին կամ ոչ-
ինչ խօսքէ մը կը սրդողին, ասոնց
հմուտ և խոհեմ շողոքորթութիւնը մեծ
դեղ է . այնպէս որ եթէ իրենք ուրիշ
մէկ վատ բնութիւն մը չունին, փոքր
ժամանակուան մէջ ինքիրեննին ի-
րենց սխալմունքնին կը տեսնեն : Աւ
անոնք որ պինտ գլուխ ունին, փո-
խանակ ասոնց կամայր դէմ խօսելու
հեղութիւնը միշտ յաղթող է : Այն որ
կռուասէր են ու ամէն բանն իրենք
լաւ գիտեն, ահա ասոնց դէմ բոլորո-
վին ցուրտ և հանդարտ կենալը, կամ
գուցէ ըսածդ այդպէս է ըսելը կամ եր-
բեմն ալ ըրածդ լաւ կերպով շինուած
կերելի ըսելով շողոքորթելու ըլլաւ
կրնաս ժամանակաւ գիրենք շահիլ :
Աւ եթէ ըրածը վատ եղաւ, մի տար

երեսին, որ չարագոյն չըլլայ, կամ պարտիս հեռուանց իբր թէ առանց իրեն ըրածը վատ ըլլալը գիտնալուդ, մէկն այսպէս բան մը շիներ է, ու չէ յաջողեր, առ պակասութեամբ շինելուն համար և այլն ըսելով այսպիսի կերպով ասոնցմէ շատերը շահւեցան, ճամբայ եկան: Մանաւանդ անոնք որ բնութեամբ բոպէական բարկութիւն մը ունին, ասոնց գէ՛մ ամենեւին չպիտի խօսուի, այլ յետոյ որ իրենք իրենցմէ կը զիջանին, այն ատենը բարի և քաղցր խօսքերով կրնաս դիւրութեամբ գիրենք շահիլ ըսելով իրենց որ կրնայ ըլլալ օր մը ինքն ուրիշ մէկ անկիրթի մը պատահելով իրեն մեծ գժբաղդութիւն մը գայ:

Կան արծաթասէր անձինքներ, որոնց մտլութիւնն ուրիշ կերպով չէս կրնար յաղթել, եթէ ոչ իրենց սիրտէն բուրցընելով առած կամ գործածած փողէն իրենց մէկ պատիւ մը կամ շահ մը ցուցընես որով ատե-

նօք կամաց կամաց կրնան այս մոլութենէս շազ գալ : Թէպէտ և մոլութիւն ունեցողը կուրութեամբ իր կեանքը կանցընէ . բայց վնյ, և մեծ վնյ անոր որ գինովութեան մոլութեանը մէջ ինկած է, ահա քեզի կուրուսեալ մարդ մը, և այս մոլութենէն առաջ եկած վատութեանց չափը չը կայ, ահա իր արքայութիւնն իսկպէս իր ձեռօքը շինած անձ մըն ալ, որն որ եթէ կը շահի այսպիսի կորուսեալ մը : Բայց այն անձինքներն որ մեծ մեծ կը ջարդեն, կը խօսին կամ չարաճճիկ կեղծաւորութեամբ կապրին, ձգէ զիրենք, վասն զի ասոնց կանթեղը յառաջ քան զկէս զիշեր կը մարի, կըսէ տաճկին առակն, ու յետոյ իրենք իրենցմէ կիմանան ըրած սխալմունքնին :

Բայց ամենէն աւելի քեզի դժուար եկողն ան ապերախաներն են, որ քու բարերարութիւնդ կը վայելեն ու իրենցմէ յետոյ կերպով մ'ալ դուցէ վնաս կը քաշես : Հոս մասնաւոր աղա-

չանք մը ունիմ քեզի ընելու, որ յա-
ռաջ քան զիրենք նախատելու, մտիր
սրտիդ մէջ ու քննէ արդեօք ըրած բա-
րեգործութեանդ մէջ ինչ կերպիւ որ
ըլլայ, կոյ մի մէկ ներկայ կամ ապա-
գայ սպասած, յուսացած, կարծիք ըրած
շահ մը, ինչ որ ըլլայ նկատմանմը հաս-
նիլդ: Ես աս բանիս ետեւէ եղայ, և քըն-
նեցի որ հատարակօրէն աս ապերախ-
տութիւնն այս յիշած կերպով կամ օգ-
նութիւն կարծած ըրած բարեգործու-
թիւնդ ըստ բաւականին կամ իրենց
վիրացը տեսակին համեմատ դեզ մը
չըլլալով, կամ կէս ճամբէն ետ դառ-
նալէդ կամ զինքը լաւ մը չճանչնա-
լով ընելէդ յառաջ կուգայ կոր: Մանա-
ւանդ իրեն ըրած օգնութիւնդ ինքը
դերեւս չվայելած, դուն սկսար
կենդանի լրագիր ըլլալ իրեն ըրած
մարդասիրութեան, որ իրեն տկանջը
հասնելով իհարկէ իրեն դժուար կու-
գայ, որն որ թէ և բնութեամբ երախ-
տագէտ մարդ էր ալ նէ, ապերախտ
ընելու սլատճառ կըլլաս քու անխոհե-

մութեամբդ : Յանօթ անձին մէկն օր մը
դիս աւելի քան թէ հասարակօրէն ու-
րախութեամբ իմ իրեն տեսութեանը
երթալս ընդունելուն ինծի զարմանք
մը եկաւ նէ ալ քանի մը բառէն վերջն
աղաջեց որ իրեն շնորհք մը ըրած կըլ-
լամ եթէ այս ինչ անձը գտնամ, որն
որ դինքն այսչափ փողով տօրակտր-
միչ ըրեր էր . որուն իմ օգնութիւ-
նըս բարեգործութիւնս և մարդասի-
րութիւնս կատարելուս համար ըրի,
ըսաւ և ոչ անձնական օգտիս :

Ես այս քաւտը լաւ կը ճանաչեմ որ
իրենցմէ առանց եւրերեւսի օգնու-
թիւն ընողներն այնչափ սակաւ են որ
աշխարհականէ մը լսեցի որ իրեն եղած
օգնութեանը մէջ օգնողը սպասում չէ
ունեցած ուստի աս բարերարին բեր-
նէն քանի մը բառէն ետե իմացայ, որ
իրմէն փոխ առնողն իրմէն կրկնապա-
տիկ արժողութեամբ ոսկի անունով
պախըրը գրաւ գրեր է, և թէ խօս-
տացեր է իրեն փողն ետ վճարած
ատենն իրեն աւելօք շահ մը տալ :

Ուրիշ մէկ աշխարհականն ալ այս կերպիւ որ երիտասարդի մը օգնած էր, որուն ըրած ապերախտութեանը վրայ դանդատած ատենն խմացայ որ կուզէ եղեր իր օգնութիւնըն ընդունողին ընտանիքին մէջն իր բարեգործութիւնը լսուի . որպէս զի իրենն այս ինչ աղջկան հետ պսակելու ճամբայ մը բացուի :

Այսպէս և այսպիսի հեռուէ հեռու սքեքօրարօր բարերարներն իս շատ մը ունինք ազգերնուս մէջ : Բայց զիցուք թէ դուն անմեղ կերպիւ աջովդ տըւածդ ձախդ չիմանալով օգնութիւն մը ըրիր, և իրենն ապերախտութիւնն ականջովդ լսեցիր, ինչպէս ուրիշներըն ալ կը լսեն, ի վերայ այսր ամենայնի քեզի աւելի պատիւ մըն է, քան թէ իր քեզի երախտագէտ ըլլալը, վասն զի չես կրնար ըսել որ մէկուն բարերարութիւն ըրած ատենդ իրմէն փոխարէնը պէտք ևս ունենալ, վասն զի ան ատենն առուտուր եղած կըլլայ, չէ թէ բարեգործութիւն : Որ-

չափները կան որ իրենց ըրած օգնութիւնն ըստ արժանոյն չըլլալովնին օգնուող անձիքները բոլորովին կործանելնուն սրտնառեալ եղան: Ազգերնուս մէջ օգնելու ճամբան չգիտցողներէն շատերը ունինք, վասն որոյ շատ բարիք ըրած կըլլան, անոնք որ այս առաքինութիւնը գործածելու եղանակը չգիտցած ատեննին, կամ ամենեւին ձեռք չդարնեն այսպիսի արարողութեան մը, և կամ թէ նոյն առաքինութեան հողինակի մը ձեռօքն ընելու ըլլան: Ասան զի ինչ օգուտ է իմ ծառի մը զարդանալուն համար իրեն ջուր տալ ուզելս, եթէ չեմ գիտեր ջրելու եղանակը կամ չեմ հասկընար իր ծարաւութեան չափը: Բարեգործութիւն մը կըսեն կոր, բարեգործութեան արարողութեամբ պարձենցող մը կայ. բայց կարծեմ շատ քիչ բարեգործութիւններ կան որ աւետարանի ուսմամբ աւետարանին տիրոջը Քրիստոսի տուած եղած ըլլայ: Ազգիս մէջ կան շատ մը հիւան-

զանոցի ածուխ խրկողներ, որբերուն
զգեատ շինողներ, աղքատներուն իւղ
ու բրինձ խրկողներ, որոնց մէկ օրի-
նակը դրեցի ճամբորդութեանս մէջ,
որ ըրամ բարեգործութիւններէն
շատը խոշորւմնիին օգնելու կերպո-
վը, կամ հաստովն է:

Զգեմ այս ողորմութիւն անունով
ունեցած պարժանքնին վագ դան,
աղքատները յախշտակելնին, որոնց
մէկն, ես քու փողդ չուտեմ պիտի,
եւ՛ դնա՛ եւրոպ ու եկուր, կուտամ
ըստ, ու տարաւ իմ փողս յախտենա-
կանութեան, ու մեռնելուն լացող մա-
րող զաւկրներն, որոնց ձգած փողը կը-
վայելէն կոր, չեն ըսեր որ հօրերնուս
ձգած անչտի հարստութենէն, ձգած
փոշետեսակ պարտքը վճարենք: Մէկն
ալ տուած ծառերդ չորցաւ ըսելով
իմ փողս չտրվաւ, բայց աղքատա-
նոց ածուխ խրկեց, ողորմութիւն տը-
վաւ և այլն. Փարիզ եկաւ 18, 000 ֆը-
րանք եկամուտով տուն առաւ: Ես չյի-
շեմ այս բարերարներուն ուրիշ անօրէ-

նութեամբ յափշտակութեամբ ըրած ողորմութիւննին , այլ դուն քննէ իրենց բաշային համիրենց մուգարաներուն զործակալին ձեռօքն ըրած աղքատաց յափշտակութիւննին : Աամ անոնք որ մեծամտութեամբ ամբարտաւանութեամբ ըրած օգնութիւններովնն ողորմած և մարդասէր կուզեն սեպուիլ , ասոնց վարքն օրինակով մը պատմեմ : Մարդուն մէկը պիտի պըտակուի , բայց հազնելու կապայ մը չունէր , վասն որոյ դնաց բարեկամի մը իրեն կապայ մը փոխ առնելու . բարեկամն անմիջապէս կուտայ իր կապաներէն մէկն ու փեսայէն ալ կը հրաւիրուի հարսանիքը , ուր կերած խմած ատեննին փեսան որ զգուշութիւն կընէր կապարին թեր վեր վերցընելով , կերակուրէն ուտելու , բարեկամը կսկսի ըսելու . « Մնչ այսչափ կապային վրայզգուշութիւն կընեսիր ինչ կայ եղեր , մեծ արժողութիւն ունեցող բան չէ եւա' , քանի մը հատ ես ունիմ , անհոգ եղիր » , և այլն : Սյն

պէս որ փեսան կը բարկանայ ու կը հանէ ետ կուտայ կապան, հոն եղողներէն մէկն խմանալով փեսին կարօտութիւնը կելլայ կուտայ իրեն ուրիշ ծիրանի կապա մը ու կը դատէ առջինին ըրած տմարդութիւնը: Աուգան միւս հարսնեւորներն ու կերթան ի միասին հարս առնելու: Ճամբան որ անձրեկէն ցեխոտած էր, խեղճը սպաւերը քախտարերտեկերը բռնելով ու ոտքի մատերուն վրայ կոխելով, քրտինքի մէջ կերթար որպէս զի կապային վրայ ազա մը չըլլայ, հեռուանց անչափ բազմութեան մէջ կապային տէրը կը սօռար որ «Նթէ զիս կը սիրես անհող սիրտով կաղաչեմ որ դալեա եմաչրե կիպի կապա գործածես»: Ան ատենը փեսան կոկոխի զինքը դատելըսելով որ «Գուն արհամարհեցիր առջի կապան առողն, որնոր զիս խայտառակեց չորս հողոյ մէջ, հիմայ դուն ոչ միայն այսչափ բազմութեան առջին այլ և պատուհաններէն մեզ տեսնողներն ալ խմայան որ հա-

դած կապաս քու ողորմութիւնդ է » :

Այսպիսի և ասոր նման օգնութիւն
ընտղներ կապասեն որ գովուին իբրև
բարերար և մարդասէր՝ երախտազի-
տութիւն տեսնեն : Մէկէն ի մէկ մի
դատեր անոնք որ պատշաճով կամ
ամփոփմամբ մտօք կը խօսին , վասն
զի կան անոնցմէ որ պարզամտու-
թեամբ իրենց խօսելու սովորութիւն
մը եղած ըլլայ . բայց անոնք որ թէ և
այս կերպով խօսելով միտքերնին
խօսքերնուն համեմատ չէ , իմացիր
որ քու բարեկամդ ալ չեն և խարե-
բայ մարդիկ են : Չօր օրինակ եթէ
բեսս իրեն . այս ինչ բանը կաղաչեմ
որ ինծի տաս , չունիմ կըսէ , իրաւ է
վասն զի այս բսելով , կամ կիմանայ
իր ծոցը չունենալը կամ քեզի համար
չունիմ բսել կուզէ , որ դուն կիմա-
նաս թէ ամենեւին չունի . կամ ունե-
ցածս անցած շաբաթ մէկուն տուի
կըսէ ստոյգ է . բայց տալէն վերջը
մինչև քու զանի իրմէն խնդրած օրդ
կրկնասպատիկն ունեցաւ : Այսպիսի

խօսակցութիւններն աւելի ժամանակ-
ւան լուսաւորութեամբը լուսաւորեալ
անձինքներուն մէջ կամ հողեւորակա-
նաց մէջ կը տեսնես, քան թէ պարզա-
միտ աշխարհականաց մէջ : Քայց ան
մարդիկներն որոնք ինքիքեապէս կա-
նուանենք, ասոնք կորսուած մարդիկ-
ներեն, ասանց ետեւէն իյնալով զիրենք
ճամբայ բերելն այնչափ դժուար է որ
զիրենք Սատուծայ ողորմութեանը
յանձնելէն ուրիշ գեղ մը չօգներ .
վասն զի բոլոր ստացուածքդ զիրենք
շահելու համար ծախես, թերեւս տա-
րակուսելի բան է կրթուելնին : Ստոյգ
է որ վատ մարդիկներէն զգուշանալու
է, և իրենց ընկերութենէն իշրեթունա-
ւոր օձէ մը փախչելու է, որպէս զի
ոչ միայն վատ անտն չտոացուի, այլ
և վատութեան կամ վատ սովորու-
թեան մէջ իյնալով, թէ և չես իրենց
պէս վատ ըլլար նէ ալ, բայց ժամա-
նակաւ իրենց չարութեանը կրնաս հա-
կիլ, մանաւանդ վատ առիթներու
մէջ գտնուելու ըլլաս . վասն զի տաճ .

կին առակը լաւ կըսէ, իւզգիւճ իւզգիւճ
մէ պարարար քարարըր, մարդը
կը ճանչնուի իր ընկերութիւնն ըլլած
ընկերներէն :

Շատ մարդ կայ որ կըսէ թէ ինքը
սուտ չխօսիր, ինչպէս դուն և ես ալ
կըսենք: Բայց ան որ փորձառութեան
առիթը չունեցաւ ու կը սեպէ զինքը
ստութիւնն չընդունող, սուտ է. վասն
զի առիթը կը փորձէ մարդն, ինչպէս
ալ հուրն ոսկին: Ասան որոյ առիթի
զօրութեանը վրայ գրելու գեղջուկ
պատմութեանս միտ դիր, ու տեսինչ
տարբերութիւն կայ վանքի մը, ու չար-
շիխ մը մէջ ապրելէն: Արսեն որ սուրբ
Անտօն անապատացին օր մը դաւա-
ղանին կրթնած կ'երթար քաղաք, վան-
քին մէջ եղող աշակերտներուն ալցե-
լութեանը. քաղքին դուռէն չմտած
կը տեսնէ սատանայ մը որ բերդին դը-
րան վրան նստած կախած երկու ոտ-
քըն երերցընելով ժամանակ կանցը-
նէր, բան մը չխօսեցաւ, զնաց վանք,
ուր տեսաւ որ բոլոր օդը սատանայով

լեցուն է, զարմացաւ այս պատահման
վրայ, ու ետ դառնալուն յանդգնե-
ցաւ սատանային հարցնել պատճառը,
որն որ կը պատասխանէ այսպէս: Մենք
քաղքի մէջ եղողներէն չենք վախնար
որոնք ամէն բոլոր մեղանչելու փոր-
ձութիւնը, առիթը ունին, բայց բա-
նը չորս պատի մէջ սպրտղներն են .
վասն որոյ հոն շատ սատանաներու
օգնութիւնը պէտք է :

Վասն որոյ սիրելի ընթերցողս
ունայ երբեմն պօղ պօղ խօսելնին ան-
չափ յարգութիւն չունի, ինչու որ չը-
ղիտեր, չճանաչեր ատ բանը . վասն
զի փոյճառութեան մը չէ ինկամ, չէ
փորձած զինքը, չէ դանուած սուտ
բան մը խօսելու առթի մը մէջ և չէ
պարտաւորուած :



ՓԼՈՒԽ ԶԻՆՓԵՐՈՐԳ.

Նա ա երեւելի բան եղած կըլլար
 եթէ աշխարհիս վրայ ծածուկ բան
 եղած չըլլար. վասն զի ամէն բան
 յայտնի ըլլալով այսօր այս ամէն դը-
 ժուարութիւնները չէին ըլլար. բայց
 հիմակուան թոյլ բերաններէն ալ
 շատ զգուշունալու է : Որովհետեւ
 ըսինք որ մարդս պէտքէ քօն քրիւստի-
 քէն պատուէ, վասն որայ այս զգուշու-
 թիւնն ընող մարդը՝ իր դործքին ալ մո-
 ռացող մէկը չպիտի գործածէ, որոնց
 ձեռօքը իրեն յաջողութեանը ար-
 գելքիրնայ գալ : Վան նաև զիրենք մարդ
 կային ընկերութեան զգուիլ տուող
 մարդիկներ, որոնց բնութիւննին ես
 չէքիս կանուանեմ. որոնք թէ և վատ
 մարդիկներ չեն բայց միշտ կուտարար
 բուճումուճ բաներու վրայ կը տրտը-
 ռացողեն, ինչ որ իրենց ընես յաճելի
 չէ, զոր օրինակ, ինչ ու ձախ կողմէս ան-

ցար կըսէ, ինչու անկողնոյն վրայ
կտակա դրիր կըսէ, ինչու երեսս նա-
յեցար կըսէ, և այլն: Սյապիսիները
համբերութեամբ ձգելու է, մինչև
իրենք իրենցմէ հոգնին, կամ եթէ
կարելի ըլլայ այսպիսի մէկն՝ իրմէն
աւելի ջեքիև բնութիւն ունեցողի քով
պէտք է դնել, ուր մինչև իրեն սխալ-
մունքը գուցէ տեսնէ:

Բայց անոնք որ առանց ետին առ-
ջին մտածելու պարզ մտօք կը խօսին
ասոնք մեղադրելու չէ վասն զի միտ-
քերնին չարութիւն չկայ, որոնք
պարզամտաց հետ մեծնալնուն համար
այս իրենց անմեղ սովորութիւննին է:
Բայց ի վերայ այսր ամենայնի ասոնց
առջին ամէն բան չպիտի խօսուի
կամ կատարուի վասն զի այսպիսիները
մանկտիներուն կը նմանին: Սյն բա-
րեւիրտները որոնք ուսում չունին,
այնչափ պատուելի չեն որչափ ու-
սում ունեցող բարեւիրտ մը, որուն
տարբերութիւնը դուն ալ գիտես.
վասն որոյ աս անուսումներէն շատ

մեծ առաքինազարդ բարեգործութիւն
մը չեա կրնար սպասել :

Մինախատեր զանոնք որ տեսակ տե-
սակ քափրի չներունին, և զանոնք վա-
յելելնին իրենց մխիթարութիւն կը
սեպեն, գորօրինակ, մէկը ձխա-
վարծութեան, միւսը նուազարանաց,
մէկն որսորդութեան, մէկն ալ ներկա-
րարութեան և այլն: Որոնք այսպիսի բա-
ներու վրայ խօսած ատեննին մեծ զի-
տութեամբ և տեղեկութեամբ կը խօ-
սին, որ ամենեւին տեղեկութիւն ալ
գուցէ չունին. բան չկայ, իրենք որ
լաւ անձինքներ են ձգէ՛ զիրենք որ այս
անմեղ հպարտութեամբ խարեն: Բայց
մեծ զբօսանք է մէկ արթուն կամ քա-
ջասիրտ կամ հմուտ մարդու մը հետ տե-
սութիւն ընելը որ, մարդուս ուրախու-
թիւն, արթնութիւն կուտայ, մանա-
ւանդ այսպիսիները իրենց գործքով
զլուխ հանած քաջութիւննին անմեղ
սիրտով պատմելու ըլլան :

Սյն մարդիկներն որ բարի են, ու
չեն գիտեր կամ չեն ուզեր գիտնալ

ուսման, գիտութեան, կարգի, կանոնի, առաքինութեան, հաւատարութեան, արդարութեան, կրօնքի, հաւատքի արժէքը, այսպիսիները ձգելու է որ փողոցներու բազմութիւն սեպւին, վասն զի այս աշխարքս մեծ է կրնան ասոնք ալ պատասպարիլ: Եւ անբարի մարդիկները որունեցած հաւատքներնուն ջերմեռանդ ու հաւատարիմ են (անգիտութեամբ) առանց բրածնին գիտնալու, ձգէ զիրենք, որ այնպէս մընան իրենց հաւատքներնուն ծառայութեանը մէջ: Ասան զի այսպիսիները դժուար է լուսաւորելը, և եթէ քիչ մը աւելի իրենց խօսիս յամարմունքդ կը կորսնցունես, և եթէ վրանին ինկար լուսաւորելու, իրենց կենացը պղտորութեանը պատճառ կրնաս ըլլար: Զգէ ուրեմն որ այնպէս թող հաւատայ վասն զի քու իրաւունքդ իրմէն, իր բարոյական գործը խնդրել է և ոչ իր հաւատքը, բաւական է որ մարդասէր և ազգասէր է և իր Սատուածը կը ճանաչէ:

Եթէ կը տեսնես մէկ ծերունի մը, որն որ որչափ տղէտալ ըլլայ, մի նախատեր դինքը, վասն զի դուն որ ամենադիտուն ես՝ ան հասակին եկած ատենդ կրնաս նաև խելագար ըլլալ, կամ թէ քեզ ան ատենը ծաղրարանելու կամ նախատելու ըլլան, փորձէ ըսածս հիմակուան զգացմունքէդ, որ արդեօք ան ատենը պիտի հաճիս մի:

Հիմակուան երիտասարդներն ուսումը լուսաւորութեան գործիքները, փողոցները գտնալով, ինչպէս ատեն մը երկինքէն իջած մանանան, իրենց ծիծաղելի կուգայ կոր ծերունիի մը անհանձար գտնուիլը: Բայց չեն դիտեր սա լուսաւորեալներէն շատերը որ իրենք իրենց ունեցած կեանքերնուն խեղճութեանը պատճառ ըլլալնէն վերջն իրենց հոգիներնունալ դահիճ կըլլան կոր, որոնց համար լաւ կըսէ առաքեալը որ իրենց ուսումը կը նմանի ծնծղային տուած ձայնին:

Վասն ոմանք ալ որ այս լուսաւորեալ դարուն ծնանելով ուր գիտութիւնը

լուսաւորութիւնը գետ մը եղեր կը վազէ կոր . իրենց չար մտօքը դանի ի չարութեան կը գործածեն կոր: Ասոնք ատեն մը կուգայ որ յիշածներս կը տեսնեն ասոր համար իրենք իրենց վրայ ոչ միայն ծիծաղին այլ և մոխիր գլուխնին ցանած վայ կարդան իրենց վրայ ու նախանձին այն անմեղ, սարդամիտ ծերունիին որ հանդարտ և զոհ կեանքը վայելէին վերջը, բարի խղճմտանքով ալ հողին պիտի Սատուծոյ յանձնէ: Ջանա՛ ուրեմն սիրելիս ծերունի մը հետ ընկերակցութիւն ընելու, պատուէ զինքը և մի անարդեր, և իր հանդարտ մտօք գեղջուկ օրինակով տուած խրատը մտադրութեամբ լսէ, վասն զի գլխէն տաք և սաղ անցողին խօսքերն անարդելը կըթուծեան դէմ է: Մի ճգեր զինքը երեսի վրայ, եթէ չես ուղեր որ ատենօք դուն ալ մարդկային ընկերութենէն հեռու գանուելով երեսի վրայ մնացած ըլլաս:

Մտածէ մէյմը ինչ խեղճութիւն է

անոր որ ատենօք ծառերը տակն ի վեր կընէր, այսօր և ոչ իր դօտին կըրնայ կապել, ան որ բազուկին դօրութիւնովը բազմութիւն մը երկու կը պատուէր, այսօր ոտքի տակ դացեր է: Գայ պիտի սիրելի ընթերցողս օր մը որ դուն գուցէ անկէց տկար և խեղճ պիտի ըլլաս. վասն զի ան մաքուր ցորենի հացով մեծցաւ, կերաւ և խմեց որչափ ախորժակը կը խնդրեր: Բայց դուն զինքդ քեզի պէս տկար ունայն խելքունեցողներուն հաշնեցունելուդ համար, փափկութեամբ քեզ մեծցընելով յառաջ քան նախատած ձերունիին հասակը գալդ, իրմէն տկար ու երեսի վրայ ընկած պիտի մնաս:

Սա մինչև հոս ըսած կանոններու գէմ ըրած պակասութիւններս հիմա տեսնելովս քեզի յիշելուս պատճառը այս է որպէսզի ներկայ ունեցած սիրտիս ցաւը գոնէ դուն չունենաս, և թէ աս կանոններու համեմատ կեանք մը վարելով, վայելես այս գեղեցիկ պարտէզը որուն մէջ քեզ Սասուած դրաւ:

Ես ալ քեզի պէս ատեն մը արտամ ես
գիտեմ ինչ կրնեմ կըսէի, բայց սխա-
լած ըլլալս արեանս հանդարտութեան
ատենը կը տեսնեմ կոր : Չկայ չար-
չարանք մը գուցէ որ չընդունիմ եթէ
անցեալ դժբաղդ անցուցած ժամա-
նակներս կամ ետ տրուին, կամ աստ-
ղայկեանքիս օրերը յաւելնալուն մէկը
դիս ստուգելու ըլլայ նէ :

Վասն որոյ որպէս զի կեանքդ մարդ-
կային կանոնին դիտութեամբը վայե-
լես, մարդկանց հետ վարուելու ուսու-
մը բուճ բանի տեղ դնելուդ սխալ-
մունքն իմանաս, տես որ այս պիտանի
դիտութիւնը մեր ազգը չունենալովը
իրեն այսօրուան վիճակին խեղճու-
թեանը եղած պատճառներէն մէկն ալ
այս է : Բայց մէկ հմուտ մարդ մը վերոյ
յիշեալ պակասութիւնները ունենցող-
ները կրթելը, ու ասոնց հետը վարուիլը
մեծ խոհեմութեան կարօտ ըլլալը չու-
րանար, վասն զի ասոնք մարդկային
բնութեան օրինակ են մասնաւորա-
պէս դեռահաս զաւկներնիս : Որոնք

պաղի պողի կուտէն բուսած տուն-
կի մը կը նմանին որ եթէ ձգես իրենց
հաւային մեծնալու, կը տեսնես որ
անպատու կըլլան թէ և տալերով տե-
րեներով զարդարեալ են : Բայց եթէ
քաջ պարտիզականի մը խնամքին տա-
կը մեծնան ու իրեն գիտութեան փոր-
ձառութիւնը վայելելու ըլլան ան
ատենը կը տեսնես որ իրենց համեզ
պտուղովը դուն առանց հացի մնացած
օրդ ալ իրենց օգնութիւնը կրնաս
վայելել :

Ասան որոյ մեծ զգուշութեամբ,
խոհեմութեամբ, հոգացողութեամբ և
իմաստութեամբ իրենց հետ վարուե-
լու կարօտ ենք : Նախ և առաջ մեծ
խոհեմութիւն կը սեպեմ մանկանց
բարկութեան օրինակ չտալը, կամ
զիրենք սանձելը որ լսած բաներնին
չխօսին, այս որ ըրիր, յետոյ նախ սով-
րեցուր իրենց առաքինութեան արժէ-
քը, բարի սիրտ, հաւատարմութիւն,
խոհեմութիւն, ու մաքրութեան մէջ
զիրենք սնուցանելդ հարկաւոր է նոյն-

պէս սեպհական սէր, և ազգասիրութիւնը իրենց սիրտը տնկելու է: Բայց երբոր միաքղ դրիր դաւկիդ կրթութիւն ապա ամենայն նեղութիւն պէտք ես յանձն առնել որն որ փոքր ժամանակ կը տեւէ, ու երբոր մէյմը սկսաւ իրեն սկարութեանը համեմատ յիշեալ խոհեմ վարմունքով զիր բարի կարգին մէջ մտնել: Յանձնէ զինքն ընդ պաշտպանութեամբ այնպիսոյ մը, որն որ հայելի է մարդկային պիտանի վարուցորպէս զի այսպիսի է մը սովրի հաւատոյն և ուրիշ իր կենացը պիտանի եղած ուսումները, և ասոր առջին միշտ ճշմարտութեան, արդարութեան և քաջասիրութեան ոգւով պէտք է վարուիլ չէ թէ սուամուտ մասաշնեղով կամ մայրապետաց ազէտ ջերմեռանդութեամբը, կամ սրբոց գերեզմանին վրայ հաւկիթներ դնելով քաշագնեղուն ելլալ պտըտիլը պատմելով, դիրահաւատին ահանջն այսպիսի ապականիչ խօսակցութիւններով լեցընել:

Ար ցաւիմ դրելու ան անխոհեմ հօր-

կանք իր անմեղ որդին գիրկը առած
այլազիև մօրկանը գգրէ տղաս, գրգ-
րէ ստիպելը, կամ մօրկանը Յիսուս
պապան ծնած ատենը երկու կով հօ
հօ կընէին որ ձմեռուան ցուրտին
սաստկութենէն մանուկ Յիսուսը տաք-
նար, և այլն, պատմելը փոխանակ
ճշմարիտ, և ստոյգ բուն եղած, իրաւ
պատմութիւնը պատմելու կամ իրենց
պողտի տեղեկութիւններ տալու :
Սմէնան մեր շատ մը հողեւորակա-
նները, ամէնան ալ նաև իրենց զաւ-
կներուն դահիճ եղող անբան անա-
սուն ծնողքները որ իրենք գոժ բազդ են,
կուզեն իրենց զաւկներն ալ, աս գոր-
ծիքներուն բերնէն լուսաւորութեան
գիրքերը ջուրի պէս թափուած խամա-
նակը, իրենց պէս անկիրթ մեծցընել :

Նմանապէս պէտք են ծնողք ի ըս-
կզբանէ զաւկներնին չշողոքօրթե-
լու, կամքերնին չկատարելու ջանալ.
և աս պէտք է քաղցրութեամբ եղած
ըլլայ, չէ թէ բռնութեամբ : Երաւ է
որ ծնողք զաւկնին կը սիրեն, բայց

ասորստուգութիւնն անատենը կը կատարուի երրորդ իրենց ապագայ կեանքերնին բարի ըլլալնուն կը ջանան նէ, և եթէ հոգ կունենան նէ իրենց վրայ զանոնք կրթելու: Սպա թէ ոչ յետոյ, ոչ միայն ծնողք պիտի ցաւքաշեն, այլ և զաւկներնին ալ ցաւերու մէջ ապրելէն վերջը ուրիշներուն ալ չար օրինակ պիտի ըլլան: Չոր օրինակ. ինչ ցաւ է անոր, որ գրել կարգալ չէ սորված, որոնք տեսինչ անարգանք կը կարգան իրենց ծնողաց գերեզմանին վրայ, կամ ինչ և իցէ ունեցած պակասութիւննին տղայ ժամանակնին չշտկելնուն համար: Ինչ հայհոյանք կը լսուի կոր բերներնէն իրենց ծնողացը հողոյն, ասոր համար մասնաւոր կերպիւ արդելուած է ծնողաց, իրենց զաւկներնուն չափէ դուրս ներողամիտ ըլլալը. օրինակ առնեն շեղի քահանայէն:

Նոյնպէս օտարի մը առջին զաւկներնին ըստ պատահման ըրած յանցանքներնուն աչք չդոցեն, իրենց

կողմը չբռնեն, բայց խիստ պատժով
սօրչտալով բարկանալ ու զանոնք ծե-
ծելով ալ չպատժեն, այլ խոհեմու-
թեամբ զիրենք խրատեն: Աւ եթէ ահա
աս յանցանքիդ վրայ չես զղջար, ու
չես առաջադրեր մէյմըն ալ չընելու,
այսին չներկայեղող պարոնը ուրիշան-
գամ քեզ չպիտի սիրէ, ահա ըրած առա-
ջադրութեանդ այս ինչ պարզեր առ:

Մի ծիծաղիր սիրելի սողաասէրս այս
գեղջուկ շարադրութեամբ գեղջուկ
բաղձանացս պատմութեանը վրայ.
որն որ խեղճ ազգիս անկրթութենէն:
ու երեսի վրայ մնացած որբ զաւկընե-
րուն, ու շատ մը ծնողաց իր որդւոցը
ապագայ վարելու կեանքերնուն վը-
րայ ընելու պարտաւորութիւններ-
նուն մէջ դաղջացած, և հոգեւորա-
կանաց Քրիստոսի արեամբը գնուած
երամակը կրթելու ջանքերնուն որդը
սրտերնին մէջ սատկած ըլլալը տես-
նալովս այսպիսի գրութեան մը ձեռք
զարկի, որ ոմանք թերևս խնտան նէ
ալ յոյս ունիմ, որ շատերն ալ օգտին:

Չուզեցի ոմանց այս մասին վրայ
ըրած սուտ և անհիմն ջատագովու-
թիւննին զրել, իբր եթէ չունին ըստ
արժանոյն վարժապետ, կամ դպրա-
տուն, կամ զաւակս թերեւս երախայ է,
կամ փող չունիմ: Ոմանք ալ քաջ կը
տեսնեն կոր ձրի եղած դպրատան տը-
ղոց վրայ եղած դաղջ հոգարարձու-
թիւնը որով զաւակնին իրենց ան վը-
տանդաւոր ժամանակնին, այս մեր
վերոյիշեալ արգելած կիրքերը սիր-
տերնին արմատ ձրգելով, դժբաղ-
դութիւն դժբաղդութեան վրայ կու-
գայ կոր լուսաւորչեւրամ ազգիս:

Կան ալ որ իրենց զաւակնին դպրա-
տունը աղօթք կը սովորիկամ քթին տա-
կէն երգել մը, այլ տունը հայհոյանք.
եթէ աղջիկ է, դպրատունը կարգալ,
տունը սիրահարութեան պատմութիւն-
ներ, կամ յաւտըղ քաշել. և այլն.
որ մէկն ըսեմ սա ողորմելի վիճակին,
որ մէկը պատմեմ: Մէկուն ծնողքը
յառաջ քան որդւոյն հայերէն սովրե-
ցունելու, օտար լեզու կամ պարխա-

դայլը բխանօն կըստվրեցնէ : Մէկալիւնը
աշափքաւեկայիւ մէջ եղած կատարե-
լութեանը հոգ կը տանի, կամ իր
ազձիկը բանսիօն կը խրկէ ըսելով
թէ ազգերնուս մէջ լաւ կրթարան ,
դպրատուն չունինք . բանը առ չէ ,
այլ որովհետեւ ինքը ազգասիրութեան
հաշակը չունի կուզէ իրեն ջատագո-
ւորութիւն մը ընել : Մանաւանդ անի որ
դանուած երկիրը իրմէ ուրիշ հայ չկայ ,
կամ եղածն ալ իրեն կը նմանի , ահա
թողելուէ զինքը որ թաղէ իրեն մե-
ռելը : Այսպիսիները բոլորովին հայու-
թեան նախատինք մարդիկ են , բայց
երանի անոր որ կը շահի զիրենք :

Ասոր համար էր որ ատենօք աշ-
խատեցայ , փող խարճեցի Ամսդետա-
մայ եկեղեցին ազգին ձեռօքը ստանա-
լու , ուզեցի իր եկամուտին համեմատ
քանի մը տղաք առնել , ու ճշմարիտ
Քրիստոսի փոխանորդի մը հետ ընկե-
րանալով , ազգին դէմ գոցուած եկե-
ղեցինիս իրեն հարկաւոր եղած ուս-
մամբը ծաղկեցրնել . ու ազգիս լու-

սաւորութեան ալ նոր ընծիւղ մը ըլ-
լայ: Բայց ճամբորդութեան մէջ կար-
դա լուսաւորեալ Ս.միրաները կամ
ազգիս մէջ փիլիսոփայ, աստուածա-
բան, տիրջումար անունով զինքը հայ
անուանողին մէկը... կամ խարճած
փողոց եւ կուտամ ըսող պատրիարքը
ինչ կը պատասխանեն:

Որոնց ազգասիրութիւնը միայն ա-
նունով ըլլալուն համար, ու ըրածնին
իրենք ալ չգիտնալին, չէ՞ մի որ
ձեռք կը բռնեն ժամանակուան խա-
բերայ շարչարան անձինքներուն,
որոց պատկած անկողիննին գայթակ-
ղութիւն է ազգին և խոչնդոտ, իր
առաջացմանը: Որոնց ազգիս տուած
րեզիւտըրներ, գայթակղութիւնը գո-
նէ կոյր աչքերովնին չտեսնէին, չեն
ըսեր որ, ամէն բանը որ կը փայլի
չկրնար ոսկի ըլլալ, եթէ ոչ նախ բոլոր
մանայ:

Ահա այս է դուն ոսկի դար իմ սըր-
տիս ցաւը դոր չունինք ան ճշմարիտ
լոյսը որով քու արժէքդ ճանաչենք և

սովրինք և վայելենք մեր կեանքը ,
ու յապագայ եկողներուն ալ լուսաւո-
րութիւններնուս գործքը ու մարդուս
վայելելու քաղցր կեանքեն ուսումը
իրենց ձգելով , օրհնեն մեզ և վայե-
լեն իրենց կեանքն ալ :

Սյլ պիտի ձգենք մեր ներկայ թըշ-
ւառութեան ու դայթակղիչ ձերքովնիս
զրամ դայթակղութեան դիրքերնիս :
Որով մեր հանդչամ գերեզմաններ-
նուս մէջ մեզ հանդարտ չձգելէն վեր-
ջը , մենք մեզմէ առաջ եկող յանցա-
ւորներուն վրայ կարգացամ նախա-
տինքը, իրենք մեր վրայ պիտի կարդան
Որ ես դուցէ մեր հարերը կրնամ ջատա
գովել որ իրենք մեր վայելած երջանիկ
դարուն զրելու , կարգալու , սովրելու
տուած դիւրութիւնները չունենալով-
նին , բաւական իրենց մեծ պատիւն է
որ պահեցին անչափ նեղութեանց մէջ
գոնէ իրենց ազգութիւննին : Մենք որ
ամէն ազատութիւն ունենալէն վերջը
լաւ հասկցանք , սկիւրը երբեք ուշ չըլ-
լալը , վատ սկիզբն ալ վատ վախճան

ունենալը, կամ յառաջ քան ձեռնարկութեան մը ձեռք զարնելու, զանիլում մը քննելու, ու իր հետեւողութիւնը հաշուելու ըլլալը, ու ծառի մը տեսքէն իր տալու սլոտըը ճանչնալու կամ երկրորդ անգամ չասլաւինելու անոր, որ մէյ մը խաբեց. ու թերևս ազգօգուտ բան մը չըրինք.

Տեսայ սիրելիս և թերևս ալ կան շատ մը ազէտ ծնողք, որ իրենց զաւկընէրէն ան աստիճան ծնողական յարգութեան պատիւ կը պահանջեն որ խեղճերը գերիէ տարբեր չըլլալէն ետեւախտութենէն ալ թմրած են մտօք տանը մէջ մուկի մը պէս կը պտըտին, և աս վարքով մեծնալովսին և կամ իրենց ծնողած մահէն ետեւ, բոլորովին լիրբ կըլլան, և կամ բոլոր կեանքերնին վախկոտ սերսեմուքեամբ կանցնի:

Չեն գիտեր այսպիսի տղէտ ծնողքները, որ ստիպումը ու պարտաւորութիւնը կը մեռցնէ որդւոյն բաղձանքը չեն գիտեր որ անոյչ խօսքն վայրենացած յիմար մը կը մեղմացընէ, և

կաւելցնեմ ես ասոր թէ մինչև անգամ
կրնաս օձմը շողոքորթութեամբ երեսդ
լղելու հակեցունել: Փոխանակ դա-
կընեւրնուն զիրենք ազատարար ծնո-
ղական կամաց յանձնելու սովրեցունե-
լնուն ահարկու վարմունքով կը վախ-
ցընեն դանոնք:

Տես ինչ տարբերութիւն է դակի մը
սրղողելով իր հօրկանը առջին բերա-
նը բանալու չիհամարձակիր ու անոր՝
որ հօրկանը ձայնը լսելուն պէս
կարօտութեամբ իրեն վաղելով, իրեն
նոյն օրուան սովրած համարը, սկսած
նոր դասը, վարպետէն լսած աճեքիմը
քանի մը օրէն սկսելու տսումը, իր
ընկերը այս ինչ պակասութիւնը
ընելուն համար ընդունած պատիժը,
ինքը քիչ մըն ալ մեծնալէն վերջը
վարպետ ելլալովը հօրկանը լաւ ճար-
տարապետութեամբ տուն մը շինել
ուղելը կամ վաճառականութիւն ընե-
լով հարատանալը, կամ այս ինչ վար-
դապետին պէս լաւ քարոզիչ ըլլալու
պատրաստութիւնը, և այլն. կը պատմէ:

Եւ այնպիսի սուրբ սիրով և պարկեշտ վարքով կը պլլուի հօրկանը վիզը որ հօրկանը ունեցած դժբաղդութիւնը մոռցընել տալով զանի ուրախութեան կը փոխադրէ : Արուն հայրը որդւոյն աս բնական բաղձանքին հեռեւտղութեանը համեմատ պէտք եղած տրտրտուէկ գործիքները առնելով , որ ըսենք թէ ճարտարասպետութիւն է ուզածը , կսկսի որդւոյն հետ մէկ տեղ կատուին տուն շինել , և այլն : Արով աս կերպով որդւոյն սիրտի փափաքը օրէ օր կը վառի , ու իր մատաղ հասակէն սկսեալ նոյն արհեստին հակեցած կըլլայ :

Բայց միւսին հայրը « պէ քօթեկ օղորէ ինչ կը վախնաս կոր իզմէ վարչասայ խաչք մը ըրեր ես այսօր » նառկիդէս բեր ըսելով չվախցնէր նէ ալ անխոհեմ վարմունքէն իր ան սիրուն զաւակը հօրկանը դուռը զարնելուն պէս , վախէն ձեռքի եղած բանը գետինը ձգած կտորելուն համար հօրկանը քեքսէին տակ կը ճղմուի , ու

անօթի բորը անկողին պատկերու կը պատժուի, և այլն :

Չէ եթէ Սմիրայի զաւակ է, մէջերնին հայր և որդւոյ անուն չկայ այլ Սղան ու Գրիգորը : Սղան իր որդին կը կանչէ ահարկու, և հրամայական ձայնով մը, որն որ իրեն կը ներկայանայ կապան վերէն ի վար նախ կոծ կելավ, յետոյ հօրը առջին երկու ձեռքով բարև բռնելով կապասէ հրամանին որ սևտիրք նստի ծունկի վրայ ուր և ոչ կը համարձակի հօրկանը երեսը նայելու : Հայրը տիրապետական եղանակաւ քանի մը բան հարցունելէն վերջը, քեզ սանկ կընեմ, նանկ կընեմ, կծու խօսքերով կը ձգէ կերթայ :

Որդին իրիկունը լսելուն պէս իր հօրկանը դալը, Սղան եկաւ ըսելով հարեմ կը փախչի, և այլն որոնց խեղճ վիճակներու պատմութիւնը գրելու ձեռքս առաջ չերթար սիրելիս : Յետոյ կը պատահի որ օր մը թէրտէրը, կամ հայր Սնտօնը, իրենց տունը եկած կըլլայ : Որոնց դալը ընտան-

եայ կարգադրութեան վրայ հոգա-
բարձութիւննին կատարելու համար
չբլլալը ասկից կրնաս իմանալ որ տը-
գէտանխոհեմ հօրկանը իր որդւոյն վրայ
ըրած գանգատը լսելուն պէս մէկ
ձեռքը ուսիսիկ խառնիւր բռնած
կրտէ. Սատուած պերսնիկ տայ հի-
մակուան տղոցը, երէկ անիծած որ-
դիս շամտակը գետինը ձգելով երեց-
կինին քիւրքը երեր էր, ու ան ալ
վախնալով քեփիկէ կեմէ մը իջեր է,
բայց բռնեցի զինքը կապեցի փար-
մախըրխիկ այնպէս ձեծեցի, որ հե-
մէն հոգին պիտի առնէի :

Եւ թէ շողոքորթող Հայր Անտօնն
է եկողը, եփկնիս՛ շխնսիսի կվրսրար
կազկայ տղակօրար, պուկարը կհանլի
կիւնսիւղի ուսայա վերնլի, չեփ
չուպուղըն յուշսիկի կիր փեմիջերիկ
փի աղնասըն պասպայր սիյնկեմէ կ տըն-
դունը. ու պատառաքողով կը մտնայ
բուռը երած քեփալ ձուկին կողերը :

Հիմա դուն իմ սիրելի կարգացող
ու ես ականառեսս շողբանք մի այս

պիսի հայրերուն իրենց զաւելըներուն
իրենք դահիճ ըլլալնուն վրայ: Ասոնց-
մէ մէկը վերոյ պատմած հայրական
սուրբ սիրովը չուպուխը վառած որդ-
ւոյն հետ կատուին տուն շինելէն ըզ-
գացած անմեկնելի գուարթութեան
ւտենը, ներս կը մտնայ, որուն բա-
րեկիրդ հայրը կը ներկայացնէ իր գա-
ւակը: Արնոր գուարթ և ճակատը բաց
կերպով զինքը բարեւելէն վերջը,
հօրկանը քաջալերութեամբը կը պատ-
մէ իրեն սովրած գիտութիւնները, ու
ապագայ բարի մտացը նկատումները:
Գիրք մը կը բանայ ուր իր նախեացը
քաջութիւնը այնպիսի արի և յստակ
արտասանութեամբ կը կարգայ, որ
շատուրիշ փայլում մընալ կաւելցընէ:
Աւ հօրկանը օղնութեամբը շինած
տնակը այն կերպով կը ցուցընէ, ու
կը մեկնէ, որ կարծես թէ Օհաննէս
կամ Կարապետ խալֆա Ամիրա մըն
ալ ինքն է, կամ այնպիսի ճիշդ հա-
շիւներով կաւարտէ տան մը շնուիլը
կարծես թէ յիշեալ ճարտարապետաց

զրագիրը Ամենախոհեմ Յազըճեան Պօ-
ղոս Աղային աշակերտն է : Այս առթիւ
մէջ խոհեմ հայրը որդին չխմանալու
այլարանական բառով մը կը յոր-
դորէ, եկող միւսաճիրը որ խոստանայ
զաւկին եթէ իր ուրիշ մէկ գալուն
ճարտարապետութեան ուսմանը, և
բարի վարքին մէջ, առաջ երթալը
տեսնելու ըլլայ նէ, իրեն սնտուկ մը
ճարտարապետական գեղեցիկ գործիք-
ներ սլտի սպարդէ : Արն որ այսպէս
և ասոր նման փորձառութիւնով վար-
մունքով տղուն հետ վարուելովը եթէ
Աստուած կեանք տայ իր ներկայու-
թեանը ժամանակը չէ նէ ալ, իր մահ-
ւընէ վերջը զաւկին բարի և արի
վարքովը, թէ ազգին օգուտ և թէ հօր-
կանը սատիւ կըլլայ, ըսելուս կը տա-
րակուսիս մի :

Ձեռ ուղեր հոս յիշելու քախըմ մը
Հնդկաստան ու Ռուսաստան ոմանց
երիտասարդաց ինչ կայ տղերով ըս-
տացած զաւկըներնին ճանչնալ չու-
ղելով երեսի վրայ դիրինք ձգելնին

որոնց ականջը գոնէ հայու զաւակի ըլ-
լալնին չհասցունելնուն հարցուցած
ատենըս ըսին կամչնան, բայց չեն
ամչցած զիրենք ստանալու :

Քանի քանի ընտանիք զխտեմ ու ծը-
նողք կը ճանաչեմ, որոնք մեծ ան-
հանգստութեան մէջ են, կամ իրենց
ականջներովը կըլսեն կոր զաւերներ-
նուն իրենց վրայ կարգացած վայը
կամ նախատանաց անունները, որ
իրենց ուսում կամ կրթութիւն չեն
սովորեցուցած :

Կան ալ որդիք այս օրուան օրս, որ
իրենց ծնողացը չեն հաւնիր, վասն զի
իրենք քանի մը բան սորվելով իրենց
ծնողացը անուսում կամ անկրթու-
թենէն զանոնք չեն պատուեր որդիա-
կան պարտաւորութեամբ: Մանտանդ
ան կռուարար զինեմով անմխարան
ծնողաց դժբաղդ զաւերներն, որոնք
չափահաս ըլլալով իրենց ծնողքը մէ-
կըղմէկու հետ կռուած, կամ հայհոյած
ատեննին, իրենք տանը քօշէն մէ-
կըղմէկու պըլլուելով քոյր և եղբայր

անմխիթաբե լի սրտի ցաւերնէն դառն
արատաւք կը թափեն :

Մէկը կը բաթտուի հօրկանը ոտքը,
որ ներէ մօրկանը, միւսը կը վազէ
մօրկանը ծոցը, որ գորովագութ մայրը
պաշտպանէ հօրկանը կատաղութե-
նէն : Հայրը որ իր կատաղած անա-
նանման կիրքը ուղածին սէս կընծջմէ
վայելելուն արգելքը տեսնելով քեք-
մե մը կը զարնէ սեղանին, ու կը բե-
րէ զանի տակն ու վրայ, որուն բար-
կութեամբ տունէն դուրս ելլալը կինը
տեսնելով ցաւագին սիրտէն, Աստուած
տայ որ մէյ մըն ալ ներս չմտնաս
անէ ծքը կը կարգայ ու մայրական ցա-
ւով կիյնայ զաւկուն վրայ, ու սեղա-
նէն թափուածներովը կըսկսի դժբաղդ
զաւկըները կերակրելու :

Ո՛հ, այս ամէն պատմած դժբաղդու-
թիւններուս պատճառն ուրիշ բան չէ,
եթէ ոչ անկրթութիւնը, անուսում-
նութիւնը, ուրեմն ձգէ սիրելիս կամ
դուն չարագրդիւ լուսաւորութեամբ
անդդայ ազգայինդ : Մանաւանդ դուն

անիմատ դատարկարան հողեւորականդ՝ հաւատոյ կռիւը, ու հողան, փոյթ տան, սովրեցունելու նախ այն բանը որամենապիտանին է քու տարարադտ աղղիդ, որուն համար ալ կոչուեցար և վիճակաւորուեցար: Աէ թէշահիդ համար մէկ հարուստ ընտանիքին զաւակը միւսին ծանուցանելով իրեն հետ պրտակուելնուն միջնորդութիւնն ընել որպէս զի քեզի աւուրչէք մը ելլայ, ծուխ մը աւելի ունենաս:

Կան ալ ծնողքներ որ կարծեն թէ բաւական է որ զաւակնին կրթութիւն սովրեցան, անկէց վերջը չեն կրնար վատ ըլլալ, վասն որոյ իրենց տեսութիւն ըրած ընկերներուն կամ իրենց տունը մտնողներուն ինչ բնութեան տէր ըլլալնին, կամ դրացիներուն ո՛վ ըլլալուն, ամենեւին փոյթ կամ զգուշութիւն չեն ըներ որոնց հետ աւտու իրիկուն կը տեսնուին կոր: Արդեօք զաւակնին իրենցմէ չարութիւն մի կը սովրին կոր չէ նէ բարի խրատ մի, որով շատերը իրենց ուսումը ու կըր

Թութիւնը մոռնալով ետ դարձան
իրենց առջի չար վարքերնուն :

Պատճառը վասն զի անխոհեմ ծնող-
քնին ոչ իրենց վարքը կրթեալ զաւելը-
ներուն առջին փոխեցին, ոչ ալ մը-
տածեցին որ օգուտ չընար կրթութիւ-
նը, եթէ իրենց զաւակնին դայթակ-
ղիչ առիթներէն ու չար ընկերներէն
չեն զգուշանար նէ :

Ճամբորդութեանս մէջ յիշած եմ
աղատութեան վրայ, բայց հոս նորէն
առիթ մը առջիս տեսնելով իմ մտած-
մունքս այս է, որ աղատութիւն ըսած
բաներնին չափ և կանոն պիտի ունե-
նայ, ինչպէս պատմելու օրինակէս
կրնաս տեսնել : Թէ և ուր կամ որ քա-
ղաքի մէջ ես նէ բաւական տեսար,
ժամանակուան աղատութեանը տը-
ւած փեսաները :

Օր մը հարցուցի անդղիացի քահա-
նայի մը որուն հետ շատ անգամ կը
խօսէի իրենց անխոհեմ անդոտջ աղա-
տութեանցը և իրենց հեռուող ազգե-
րը աշխարքս ասպականելնուն վրայ :

Ինչ խղճմտանք ըսի որ տէրութիւնը կը
թողու որ, աստուածալախ ընտանեաց
տանը առջին գայթակղիչ անձինքնե-
րը համարձակ բնակին մանաւանդ
Հնդկաստան. կամ պակիլ ուզողէ մը
վկայութիւն չառներ կամ կերպով մը
քահանան զինքը չվստահեր պակ-
վելուն անսրակ ըլլալը գիտնալու
համար, որ երբեմն եօթը կանայք առ-
նելէն վերջը, մէկ օրվան մէջ երեք
չորս անգամ զատ զատ եկեղեցի-
ներ պակուողներ կը տեսնենք
կոր:

Պատասխանեց մեր երկիրը ազատ
տեղ է, և մենք տէրութեան չենք կըր-
նար հրամայել: Ըսի տէրութեան ըսե-
լով կիմանաս թագուհիդ որ եկեղեց-
ւոյդ գլուխն է, ուրեմն ինքը աս ազա-
տութիւնը տուեր է, որ չարութիւն-
ները շատնան: Պատասխանեց. բայց
իմանալուն պէս այսպիսի յանցաւոր
մը կը պատժէ: Ըսի, որ կը պատժէ.
մէկէն աւելի պակուողը, պակուեցաւ
գնաց, գողութիւն չէ որ գողցած բանը

ևս տայ : Տես , հաշուէ ասկից յառաջ
եկամ վատութիւնները :

Բայց ըստ , միւսին չենք կրնար
բան մը ըսել , թող դրացին իրեն չը-
նայի , կամ ելլէ ուրիշ տեղ երթայ : Ասի
երթալու տեղը նոյն սպասութիւնը
կայ մի : Գրացինին չնայի : Ուրեմն
սպտո քաշէ տանը առջին . . . բայց
եկուր քեզի ըսեմ , բանը ինչ է , տէրու-
թիւնը առ անօրէններուն տունը շի-
նամ է , դուք ալ անոնց տանը սան-
դուխն էք :

Ահա ձեր դաղջութիւնը և անփոյ-
թութիւնն է որ օրէ օր ձեր պատիւը
կը պակսի կոր , որ ժողովուրդի կամ
հաւատացեալի քահանայքը որ ըլլաք
աս դաղջ մը շնունքնիդ ձեր սուրբ վի-
ճակներնուդ բարի նկատումը շահիփո-
խադրել չէ մի , որ միամին Քրիստոսը
սպտոտա սպտոտա կը սպտոտուի կոր ,
մանաւանդ ազատ քաղաքներու մէջ :

Աւետարանական ենք կըսէք , բայց
ինչո՞վ աւետարանական ըլլալնիդ կը
ցուցնէք , եթէ ոչ ձեր եկեղեցիէն

դուրս եղողներուն վրայ ունեցած
ատելութիւններովն իդ ուրիշ ազգերու
մէջ ձգած երկպառակութիւններովն իդ
և այլն: Մենք ամէնքնիս Սատուծոյ
դաւալն ենք կըսէք ինչպէս մենք
ամէն հաւատացեալքս ալ կըսենք ու
կը հաւատանք. բայց մէջերնէս մէկը
Լօնտօն, Պօսթօն կամ ուր որ ձեր հա-
ւատքը կը տիրէ, գացած ատենը չենք
ազօթեր կամ եկեղեցին չենք յորդո-
րեր ժողովուրդը, որ միաբերան ա-
զօթքի կենան որ այս ինչ պարօնը
բրօթէստան երկիր սոքը կոխեց, Սա-
տուած զինքը պահէ որ չհեռուի իրենց
հաւատոյն: Ըսաւ մեզմէ ո՞վ կընէ այս
յիմարութիւնը: Ըսի ինչու 1859 մարտ
ամսոյն Պըլէտօրթ բնակող Բեյ
լսելուն պէս ձեր Բրիտն օֆ Վեյլիս
Հռովմ սոք կոխելը իր ժողովուրդին
հեռ մէկտեղ ազօթել որոշեց որ մին-
չն Բրիտնին Հռովմէն ելլելը: Ազօ-
թենք միաբերան որ չըլլայ թէ Բրիտն-
նիս Հռովմէական ըլլայ ասկից աւելի
կեղծաւորութիւն աւետարանը երես-

նիդ մասքի տեղ գործածելով զանի
քարողել կըլլայ մի :

Սե ինչ ծիծաղելի կերպով հաւատքի
մը հաւատալ է, որ Քրիստոս մը քանի
մը օր Հոովմ կենալով պիտի թուլնայ
իր հաւատքէն, իսկապէս բրինձ ալ
եղած ըլլայ, ժամանակ կուզէ մնա-
ցած ջուրին մէջը թուլնալու :

Գիրք մը հանեցիք Հոովմայի դէմ
ու կըհռչակէք կոր թէ աղաչելով և
յորդորելով հաւատացեալներն առ-
նեն ու կարդան (որ ատելութիւն,
խռիւրդ, երկպառակութիւն, եղբայ-
րատեցութիւն ըլլայ մէջերնիս,) փո-
խանակ գործքովնիդ քարողելու ան
սուրբ և պանծալի անունով պարծեն-
ցած սուրբ աւետարանին սիրոյ և խա-
ղաղութեան քարողութիւնը : Ստոնք
բոլոր աղատութիւնէն ու կիրքէն ա-
ռաջ եկած բաներ չեն մի, ինչպէս
մեր մէջն ալ պատահեցաւ այսպիսի
ատելութիւն ցանողներէն մէկ քանի-
ները : Սա այսպիսի քարողութեանց
մէջ աւետարանի մեկնութիւն, աւե-

տարանի հետեւից չտեսնելէս վերջը՝
և ոչ աւետարանի նմանութեանը
բան մը կը տեսնեմ կոր. թողունք գայ-
թիակողութիւնները, մեղքերը և անօրէ-
նութիւնները: Այլ հաւատացելոց քա-
հանայք ուր ըլլաք, աւետարանին որ
կողմը այս հիմնական ձեր գործքով և
խօսքով քարոզութիւնն իզ գրուած է:
Ասղաշեմ թարգմանել տուր ճամբոր-
դութիւնս որ շատ բաներ ունիս որ ինք-
ձառութեամբ կը պատմեմ պիտի լսես:
Վնչու միւս բրինձը մահմետական
տէրութեանց երկիրները գացած ատե-
նը իրեն համար առջինին սլէս չաղօ-
թեցիք: Ասկից կերպնայ որ դուք մահմե-
տականութեան աւելի կը յարարերիք
քան հոսմէ տկանութեան: Սենք աս
չենք ըսեր, ըսաւ, բայց Հռոմայ գահը
մեր վրայ լառ չխօսիր: Ըսի գիտեմ,
բայց ազ ձեր ըրածնիդ ալ չըներ. ա-
մէն մարդ ի հարկէ իր հաւատքը կը
դովէ, բայց վնջ անոր որ եթէ հաւատ-
քովը միայն Սատուծոյ արքայութիւնը
կը յուսոյ ժողովնի: Լեւոն

Յղբօրնուս մորոս ըսելնուս համար
ի գեհեան հրոյն պարտական պիտի ըլ-
լանք նէ, աս մեր մէկգմէկու տուած
նախատական անուններուն և չար
բաղձանքներնուս և խոր աչքով նայ-
ելնուս, դժոխքը քիչ ըլլալուն չեմ
յուսար որ տարակուսիս: Նթէ դուն ին-
ծի հետ քաղաքավարութեամբ, կար-
գով, կանոնով վարուիս, ես ալ քեզի
հետ մի և նոյն կերպով կը վարուիմ.
չէ ես անկիրթ ըլլալովս քու քաղցր
վարմանցդ դէմ անկիրթութեամբ խօ-
սելու ալ ըլլալու ըլլամ, լսողները
դիս կը նախատեն, և ոչ քեզ. թողունք
որ գեղջուկ մըն ալ ըլլայ լսողը՝ քեզ
ևս առաւել գովելը բնական է, ինչպէս
ալ ինչու ինծի ըսաւին, ըսիրին վեր-
ջի գալն ալ հաւանական է:

Աս մասին վրայ խօսիլը կերկննայ.
բայց ես աս կըսեմ որ աղատութիւնը
պէտք է չափ մը ունենայ: Ան հայրը
որ իր օրդւոցը վայելած աղատութե-
նէն աւելին կուտայ, իր տանը եր-
ջանկութիւնը կը կորանցունէ. ան թա-

գաւորը որ իր ժողովուրդեանը կա-
յութենէն աւելի ազատութիւն կու-
տայ, իր խաղաղութիւնը կորոնցնելէն
ետե նաև իր դահն ալ կորսնցունողը
եղաւ : Ինչո՞ւ վասն զի միաքերնին
դրածնին, յառաջ քան կատարելը
լաւ մը չհաշուեցին, ասոր համար չէ՞
մի որ կըսէ « երկու անգամ չափէ մէկ
անգամ ձեռէ » . ամէն բանին, ամէն
ձեռնարկութեան ժամանակը կայ :
Քայց ես իմ ազգիս վրայ կը ցաւիմ,
որ ձեռքերնին եղած հին տուներուն
կարգն անցան, պատճառ եղողին ու
պատճառ եղողներուն Սատուած նե-
րէ և դարձ տայ, և մեզի ալ ազգասի-
րութեան հոգի տայ որ գիտնանք բըռ-
նած ճամբանիս : Ձէ նէ աս ազատու-
թիւնով, և անքննողութեամբ որ կեր-
թանք կոր, եթէ ետ չդառնանք, դա-
ցինք օխիսայիս տակը :

Հաղիւ դաշտի մը վրայ երկու գե-
ղացիի խուշիպե կը տեսնէք, հոն եկե-
ղեցի մը կը հաստատէք . յուտալով որ
պիտի բազմանան, որ յիրաւի ինչպէս

ալ կը տեսնենք կոր քանի մը տարիի մէջ բաւական բազմութիւն կըլլան կոր, մանաւանդ առ մեր օրերը: Ուստի ինչ կարգ կանոն հոն ձեր սկզբան կը դնեք, նոյն կանոնին եկողը կը հնազանդի, և նոյն կանոնին մէջ ապրելով նոյն կանոնին պահպանութիւնովն ալ կը մեռնի: Ուրեմն ասկէց կերենայ որ մարդը ձեռնարկութեան մը ձեռք զարնել ուզած ատենը, պէտք է յառաջագոյն լաւ մը մտածէ, զանի կատարելէն վերջը իր դալու հետեւանքները: Այնպիսի կարգ և կանոն դնելու է որ չարիք չհետևի, և եթէ պատահամար վատութիւն մըն ալ դալու ըլլայ նէ, կարելի ըլլայ առջին առնելով: Բանը սկիզբն է, ու առաջ տանողն ալ արիութիւնն ու խոհեմութիւնն է, ինչպէս դուն ալ կը վըկայես:



ԳԼՈՒԽ ՎԵՅՆԵՐՈՐԴ

Ձեմ գիտեր ինչ բանի տեղ դրեր են հիմակուան մարդիկ պսակուիլը, որ եթէ իրենց միայն մարմնական վայելման համար է նէ, ինչ պէտք է զիրենք այս ծանր պարտաւորութեան տակ ձգել, կրնան ուրիշ կատարած չար կիրքերուն մոլութեամբն ըրած ջատագովութեանը քով աս ալ դնել ու ապրիլ ինչպէս կամենան, առանց որդւոյ խնամ ունենալու: Չգենք Սատուծմէ վախնալնին կամ մարդկանէ ամչնալնին, գոնէ իրենց կեանքը վայելմամբ և խաղաղութեամբ, և զաւակնին իրենց ուրախութիւն ըլլանուն համար, մէկզմէկու օգնելով, իրենց պատահած դժբաղդութիւնը թեթեցընելու համար, սիրով և խաղաղութեամբ պէտք են ապրիլ:

Իրաւ է որ կնոջմէ կը պահանջուի քաղցրութիւն, վարուց զգուշութիւն,

համբերութիւն և հեղութիւն լայնաց
այս պահանջմունքներն իր այրք
դերազանց կերպով ունեցած պիտի
ըլլայ, որ իր տանը կատալարու-
թիւնն արթնութեամբ ու հմուտ եղա-
նակաւ պահելով իրեն գեղգիւրէնք չը
լրբացնէ :

Միշտ այր և կին միաբան հաւանա-
թեամբ և խորհրդակցութեամբ առնեք
նուն և զաւելներնուն խնամքը պէտք
են հողալ, մանաւանդ հարուստներ-
նիս. որ գրեթէ մէջերնին շատ սա-
կաւ է սիրով և ծնողական պարտաւո-
րութեամբ ապրողները : Եւ կրնայի
այս վիճակին վրայ երկայն գրեթէ բայց
ճամբորդութեանս մէջ առ անբաժա-
նելի կապակցութեան ուսումը գրած
ըլլալովս չուզեցի հոս նորէն կրկնել,
և դերեա ազգիս մեծ մասն իր սուրբ
պսակին յարգութեանը մէջ ըլլալով
իրենց այս քանի մը բառը գրելէս
վերջն ասով կըլմնցունեմ : Որ բարո-
րում հայ ենք և անոնք որ իրենցայ
իրենց կեանքերնին անցունել կուզեն,

մեր բուն հայու սրատուական կանոններուն, ժամանակուան անմեղ պիտանի սովորութիւններէն պէտք եղածն ալ հաղորդակցելով շուքերեա և աստուածասպաշտ կերպիւ, ինչպէս սովորութիւննիս էր պսակուին:

Լուսաւորեալ եւրոպացւոց ամուսնական վիճակին խեղճութեանը վրայ մի ըստ միոջէ զրելն անկարելի ըլլալուն համար, միտ դիր համառօտիւ յիշածներս, որ ասոնք երկար տարիներ տուանցնական տեսութեամբ, քննողութեամբ մէկզմէկ ճանաչելով պրտակուելէն վերջը, էրիկը կը կատկածի իր կինէն, կինը էրկանէն: Էրիկը կը բանայ կնոջը եկած նամակները, իրեն ուր երթալը կը հարցունէ, ուսկից գալը կուզէ իմանալ, իր տօջապները կորոնէ, իրեն տուած քանի մը փողին ճիշտ հաշիւը կը խնդրէ, կամ իրմէն ուղած փողին ինչո՞ւ համար գործածելը կուզէ իմանալ: Մինչև անգամ եղաւ որ եթէ խոստովանող հաւատքէն էին, յանդգնեցաւ քահանայէն կնկանը

եղած խտատովանանքն իմանալ ու
զել . և այլն :

Տես , երկայն ժամանակ մէկզմէկ
ճանչնալու ըրած տեսութիւններնէն
վերջը շատ չանցնիր կը լսես որ կամ
զատուեր են , կամ մէկզմէկ մեռուցեր
են կամ մէկզմէկու ոտքը թեր կտա-
րեր են կամ գլուխը պատուեր են :

Այսպիսի եւրոպական լուսաւորեալ
սիրահարութեամբ , քննողութեամբ ,
ճանաչողութեամբ , փոքր ատեն իմ
զինքը ճանչցած հարուստիս մէկը ,
Կալիութայ պսակուեցան ու հարսնի-
քին մէջ պար խաղացած ատեննին
կոյր փեսան չիմացած , հարսին ծա-
ծուկ բուն սիրահէ ի սիրտ սիրով
պսակեալ սիրականը՝ հարսանիքին
տանը մօտ կառք մը կը կեցունէ ու
հարսը բոպէական պիտանի պատճա-
ռաւ մը փեսէն զատուելով կիջնայ
վար , կը հեծնայ կառքը , ու պլլուելով
իր սիրականին հետ կը թռչի կերթայ ,
ու կը ձգէ իր պսակեալը , որ բան չունի
նէ սպասէ իր ետ դալուն :

Ահա մարդու չափազանց ազատութեան և սլրասկելոց անհիմն ձեռնարկութեան և փորձառութեան պատուը: Չեն քններ, թէ արդեօք հերաշ-սիւտ ծծանձ է մի կամ սեպհական սէր ունեցող մըն է, առաքինութիւն ունի մի, կամ աստուածավանխ է մի: Մանաւանդ այրը որ թէ և առաքինի եղած ալ ըլլայ, եթէ միտքը զրած է որ ինքը այր է ինչ ուղէ կրնայ ընել, վնայ իրեն, վնայ ալ այս մտօք այս կերպով վարուող պսակուողներուն, որ դժոխքն ին ձեռքովն ին կը շինեն:

Բայց որովհետեւ մարդկանց ընկերութեան վրայ խօսեցայ, հիմա եթէ կանանց վրայ չխօսիմ՝ կնատեաց չպիտի սեպուիմ նէ ալ, դուցէ կարծեն զիս իրենց թշնամի: Վասն զի ամէն արարած ունի իր դովութեան, կամ նախատանաց արժանի իրաունքները, մանաւանդ թէ կանայք որ մխիթարութիւն են այն մարդուն, որն որ իրենց հետ սուրբ և անմեղ մտօք և վարմունքով կը վարուի:

Ես իրենց հետ շատ մեծ ընտանեկցութիւն թէպէտ և չըրի, բայց անոնք որ պատահեցան ինծի եւրոպայ քանի մը տեղ, կրնամ ըսել որ Եւսարիսին հետ կեանք վարող երկրորդ Տելեմաք մը զիս կը համարէի: Այնպէս որ նոյն պատմութիւնը սուտ չսեպուիլը իմ վայելած կեանքովս կուզէի հաստատել, որոնց անարատ շրթունքներովը անուշիկ խօսակցութիւննին, ընկերակցելնին ճամբորդութեանս յոգնութիւնը ինծի մոռցընելէն ետեւ, երբեմըն ալ յառաջիկայ ընելու ճամբորդութեանս մխիթարութիւն կըլլային և զանազան վիրացս ալ մեկնէմ:

Ի՛նչ պարտէզներու մէջ ձեռք ձեռքի տուած կը պըտըտէինք. ի՛նչ գիւղերու մօտ ծառի մը տակ գլուխնիս մէկզմէկու վիզը կըթնամ մէկզմէկ կը մխիթարէինք: Առջևնիս լեռան մը բարձրութենէն ինկող ջուրեր, քովերնիս գոյնզգոյն ծաղիկներ, բոլորտիքնիս գառնուկներուն հեցած, որոնք արեգական ընթացքին ընկերակցութեանը

հետևելով իրենց մօրկանցը հետ
երգելնուն քաղցրութիւնը վայելած
առիթիւ մաքուր հոգեկիր, մաքրուհի
ընկերիս, երգած երգերուն, կամ
պատմած պատմութեան եղանակը,
կարծես թէ պատմութիւնը հոգի առած
կենդանի առջևս կը պտըտէր: Խօսած
խօսքին իմաստութիւնը, խաւար մտա-
ցըս լոյս կուտար, խօրարած բառե-
րունգօրութունը սիրտս կը թափանցէր:

Քանուկայ անոնց հետ որ իրենց
դեղջուկ խուշիպեհն ելած կանանչ
իքեք-չիմեհի մը վրայ անփոյթ
կերպով շրջադայելով, սիրուն ձեռ-
քերով, սիրուն ծաղկանց փունջե-
րը կապած, ջերմեռանդ երգերով զի-
րենք ջերմեռանդութեան շարժող խա-
չելութիւնը կը զարգարէին: Ուր մէ-
ջերնէն մէկը՝ որուն սրտին անմեղու-
թեանը երեսս զարկած ու իրեն բար-
բը, վարբը, համեստութիւնը, բունջ
մը եղած ու իր կոպիտ լարը դրկած,
աղաւնակերպ մատուընկերովը իրեն
մինակ մնալու վրայ յօրինած ոտանա-

ւորը երգելէն, բոլորաթիքնիս եղած
լեռներուն պատասխանը զիս կարեկ-
ցութեան կը շարժեր: Որոնցմէ մէ-
կուն ալ անմեղութիւնը ու բարոյա-
կան զգացմունքը այնպէս թափան-
ցած է ըզէզիս մէջ, որ իրեն մահ-
կանացու ստեղծուելուն և ստեղծուե-
լուս վրայ, հոս էր որ աւանդ կարողացի:

Վասն զի թէ և իրեն նայվածքին սե-
րեկիքեկ հանդարտ և անարատ խղճ-
մըտանքի մը հայելի ըլլալուն համոզ-
ւած էի նէ ալ, դէմքին սիւսպիւմէ քս-
րքեսիօնը զիս կը շփոթէր թէ արդ-
եօք զինքը իբրեւ կին մը պատուեմ,
չէ նէ իբրեւ սրբունի մի պաշ-
տեմ: Մանաւանդ անոր, որուն վար-
քին և շարժմունքին քաղցրութիւնը
զիս կը սնուցանէր, որուն իբրեւ լեցուն
լուսին ճերմկութեան ու դեղջուկ
պարզութեամբ առաւօտեան դէմ տու-
նէն ելած համաձայն իր քօնէիւն
երիտասարդութեանը, դէպ ի պարտէզ
քալելուն կերպը ու իր վրայ տես-
նուած գարնան գեփիքի նման շնորքը

եթէ դուն տեսնէիր, արչափ ալ ան-
խելք կնատեաց մը ըլլայիր, զինքը
արշալոյս սիրոյ պիտի սեպէիր: Որն
որ ես այսօրուան սուրբ պատկիս ան-
վայելուչ և օտարիալ գայթակղութիւն
չըլլալը եթէ զիտնայի, զիշերային
լուսնոյատուն նաւակի մը մէջ Յիւրիկի
լճին վրայ իր սուրբ և անմեղ ընկե-
րութիւնը կուզէի վայելել: Որպէս զի
զինքը վստահացընեմոր Էօղէֆինան,
ան անուն ցանկալի և քաղցրութիւն
խմանալի Էօղէֆինան էր որ իր քաղցր
հեկեկող ձայնին աղղեցութեամբը փա-
րատեց իմ խորին յուսահատութիւնս,
ու տպաւորեց սրտիս, որ աշխարքիս
ամէն վայելումը ունայն է, բայց
միայն Աստուած և իր յաւիտենակա-
նութիւնը իբաւ է: Ոչ անպարկեշտ
վարմունք կար մէջերնիս, ոչ ալ ան-
պիտան խօսակցութիւններ, այլ աչ-
քերնուս մէկզմէկու պըլպըլալը կը
վկայեր որ մէկզմէկ կը սիրենք, նոյն-
պէս սրտերնուս թըրթըրալը կիմա-
ցունէր որ սէրերնիս սուրբ է և անմեղ:

Ի վրայ այսր ամենայնի արդեօք սիրելիս, այս անգին և անմոռանալի վայելմունքս՝ դեղեցկութենէս էր մի չէ նէ հարատութիւնէս. ոչ երբեք, որոնց երկուքն ալ չունէի, այլ իրենց վարքերնուն համեմատ իրենց հետ վարուելուս, և իրենց անմեղ և առաքինի վարմանցը յարգութիւնը ճանչնալուս և զիրենք ի սուրբ սէր սիրելուս ըրած փորձառութիւններնուն գոհութիւնը կը պարտաւորէր զիրենք սիրող մը պատուելու:

Աւստի չունինքնէ ալ վկայութիւն մը հրաման մը կամ արդելք մը, եթէ չեմ սխալիրնէ, սա մարդուս կեանք տուող և պեօկրեկները պարարտացընող այս անուշիկ առիթէ մը ետ կենալու: Բայց ի վերայ այսր ամենայնի ես չեմ ուզեր որ իմ զաւակս գտնուի այս քաղցըր զգացմանց մէջ, մանաւանդ թէ կուզեմ, եթէ իրեն հետ ապրեցայ, բոլորովին զինքը զրկել, ու զզուիլ փորձառութենէ: Այսան զի որչափ քաղցր է կամ որչափ իրեն քաղցրու-

Թիւնն անպատմելի է նէ ալ, նոյնչափ
ալ պատրաստարձ շրջակ թնդանօթի
պէս վտանգաւոր և օձի պէս թունա-
ւոր է :

Արդեօք ևս ասկէց աւելի ինծի քաղ-
ցըր զգացմունք տուող առիթներու
մէջ չգտնուեցնայ մի. ձգեմ ազգասէր
ճամբորդութեանս տուած ազգային
առիթները կամ անապատի մէջ
ուրքս ձեռքս կապող առապներուն
ձեռքէն: ազատուիլս : Ան Երուսաղէմը
տեսած ատենս, լերան զլուխը միայ-
նակ մնացած կամ Սէլօն լերանց մէջ
կորսը վեւի վ երկրականաց մէջ եր-
կու օր մնալէս ազատուելս . Ձինի
աւազակներէն կողոպտը վեւէս վերջը
անմնաս ազատուիլս, իմ մեղքերս նե-
րուելուն համար խաչ ելլող Քրիստո-
սին մտածմունքս ու իր գերեզմանին
վրայ թափած արտասունքիս տուած
մխիթարութիւնը, քանի մը անգամ
անցաւ գերազանցեց վերոյիշեալ ու-
նայնութեանց սիրոյն զգացմունքը :
Իրաւ է որ Աստուծոյ շնորհօքը,

և սեպհանուն սիրոյս արիւթեամբը ,
 վերոյիշեալ անձանց քաղցր ընկերու-
 թիւննին կրկայելէի . բայց ես գիտեմ
 (մէյ մըն ալ ան գիտէ որ ազատ կե-
 նօք այսպիսի սուիթներու մէջ դանը-
 շած է , ու չուզեր իրեն խղճմտայնքը
 անհանդարտ ընել) , ինչ անստատեւի
 ցտեղը քաղցրս : Սյնպէս զի կրկնեմ
 անկիւներուն վրայ իմ ստամբեղակ մար-
 միւնով թշնամիսնելն , քաղցրտաւե-
 լով կամ գոմեքուն սրտայ քաղիկ վաղ-
 վրա տեղով սրտով ուելող ըլլալու ան-
 թիա չէր երեւնար : Եւ մտայ , ինչ
 Սանց ճեղքով արմաշնք ու նեցած
 անունը պէտք է գիտնալ , որ սիրե-
 լիս թէ քոչսալի ալ քան իրուն խոհեմ
 կրթեալ եղած ալ : Ըզան , զվարեղի
 ունին իրենց սեպհանեանեան ընամբան
 տիրութիւն մը : Վառնորայ մեծ ան-
 կրթութիւնն կը ներառանց մէջ դանկոյ
 տղեղութիւնը անարմատիան , սխալա-
 նութիւնը անարարը արմեւնը , զի իրով
 իրենց նուորայնագիրութիւննին ինչ-
 քոչած վրդ ընէ իմ ստամբեղակ մար-

Ձեն զխտեր մի քանի քանի տղեղ
կանայք իրենց ուրիշ զատ մէկ առա-
քինութիւնովն մի և նոյն իրենց
դէմ եղող կամ իրենց չհաւնող երի-
տաւ արդները յաղթեցին ու իրենց հետ
մի՛ և ցմահ ի սուրբ սէր ապրեցան :

Նոյնպէս կը տեսնես որ անխոհեմ
մէկը՝ կելլայ իրենց ունեցած զանա-
զան պակասութիւնին իրենց երեսը
կուտայ, իբր թէ ըսել կուզէ, ինչո՞ւ
ինծի պէս կատարեալ չես, որ ինքը
գուցէ ոչ մայրենի լեզուն գիտէ խօ-
սիլ, կամ և ոչ առաքինութիւն մը
ունի: Աամ չէ նէ բոլորովին բանին
միւս կողմը անցնելով ան աստիճան
զիրենք կը գովէ կը շողօքորթէ, որ
յիրաւի կը հոտի: Աամ իրենցմէ զա-
նազան թէութիւններ կը պահանջէ,
ու եթէ իրենցմէ մէկը իրմէն նոյն
թէութեան հաւատարմութիւնը պա-
հանջելու ըլլայ, ևս այր եմ, (կարծես
թէ իրեն հետ խօսողէն աւելի բան
մըն է) ես ինչ ուղեմ կընեմ կըսէ,
որ այս պատասխանին ո՞վ որ ըլլայ կը

ծիծաղի : Չգիտեր որ կանանց ամե-
նահաճելի թուողը ան մարդն է, ոչ
ինչ որ ըլլայ պարագայի մը հաւատար-
մութեամբը իրենց սիրտը կը թափան-
ցէ, ու զիրենք կը վստահեցունէ : Երկ-
րորդ համեստութիւն, պարկեշտու-
թիւն և կարեկցութիւն և իրենց վրայ
զգացում ունողին և զիրենք անկեղծ
սիրով սիրողին և պաշտպանողին
կրնամ ըսել որ զիրենք գերի կընեն :

Որչափ որ էրիկ մարդկանց մաքրու-
թիւնը կը սիրեն, այնչափ ալ արտաքոյ
կարգի սխառոյ հագուստը կատեն,
թէ և փոքրինչ հագուստի սխալմունքն
ալ կը դիտեն : Շատ դժուարնին կու-
զայ, եթէ իրենց մէկուն բարեկամա-
կան խօսք տուող մը, նոյն ատենուան
մէջ ուրիշի մըն ալ տալն իմանան :

Նմանապէս իրենց հետ ընկերու-
թիւն ըրած ատենը, օտար կնկան
մէկուն առաքինութիւնը, կամ ինչ և
իցէ զատ ունեցած բանի մը մասին
վրայ խօսիլը իրենց շատ դժուարը
կուզայ : Նոյնպէս իսկապէս իրենց ու-

նեցած մէկ լաւ սովորութիւննին, կամ
առաքինութիւննին գովելովդ, իրենց
շատ հաճելի կրնաս ըլլալ :

Եւ որչափ հեղ ու համեստ և քաղցր
բառերով իրենց հետ կը խօսիս, նոյն-
չափ զիրենք քեզի կը հակեցընես,
կամ իրենց մէկ քու գիացած պակա-
սութիւննին որ իրենց կասկածելի է
քու իմացած ըլլալդ, եթէ ցուցունես
քեզ որ չես իմացած զանի, շատ պա-
տիւ կուհենաս իրենց առջին : Եւ եթէ
հ'ոռուանց լսեն որ իրենց մէկ լաւու-
թիւննին խօսեր ես, կսպասեն քու
ճամբադ, որ անձամբ քեզի շնորհա-
կալ ըլլան :

Առախտանան ու կը ցատկընարկեն
առջիդ եթէ միամիտ կարովդ ճշտ
զիրենք որ քեզ վարձելու համար չարած
անմեղ ու անզուտ լարերնուն նպա-
տակին հասնին, իբր թէ դուն անե-
նելին լար չունիս որ քու արթուն կե-
նարովդ եթէ քեզ մտքուր և անմեղ
դանարնէն վերջը եթէ մէկէն ի մէկ
դարձանալով իրենց գիտես : Սհա քու

իրենց մէջ քու վրադ ունեցած համար-
մունքներնուն կենդանի պատկեր մը
պտըտելից: Տեսեր եմ եթէ սիրելիս չը
զայթակղիս ըսածիս, այսպիսոյն վրայ
ունեցած սուրբ սէրէն երխտասարդին
կուրծքին վրայ ինկած մարողը, կամ
երանի ան թևերուն որ սուրբ կապօք
ամպրասէ պիտի քեզ ըսողները:

Եթէ անունդ քանի մը պարոնաց
մանաւանդ իրենց հասակակից պա-
կեալ խաթունաց ձեռօքը բարի և
պարկեշտ ելած է, ու մայր ունիս,
երանի իրեն: Ուր երթայ մատով զին-
քը կը ցուցնեն որ, այսպիսի զաւկի մը
տէր է: Թէ և լսեն որ բանը միայն
քեզմով կը լիննայ, ի վերայ այսր ա-
մենայնի կը ջանան որ եղանակաւ մը
ճանչնուին մօրկանդ, որպէս զի իրեն
քովը զիրենք ապահովցնեն, ցուցնե-
լով իրեն, իրենց առաքինի համեստ
վարքերնին: Որն որ եթէ ըստ բաւա-
կանին չէ նէ ալ, ասդիէն անդիէն
փոխ կառնեն իրեններնուն կաւելցը-
նեն, կը յաճախեն մօրկանդ կամ աղ-

դակահաններուդ դացած եկեղեցին , ուր
իրենց տեղ տալով , կամ ուրիշ առի-
թով մը իրեն հաճելի երեւնալու ծա-
ռայութիւն մը ընել : Բաղանիքին մէջ ,
իրենց խառնաշէն ջուր , պատխա-
նէն քուրջի տալով կամ խաշիկին
մօրկանդ խաշիկին ծայրը քսելով
խելքէդ , միաքէդ չանցած գիւտերը ,
եղանակները կը հնարեն որպէս զի
ժանօթանան իրեն :

Վասն զի քաջ գիտեն որ կան և կը
դտնուին քախըմ մը պառաւ կնիկներ
որոնք եթէ ընդդէմ են խեղճ երիտա-
սարդին բաղձանաց, ըորն որ թէ և ժա-
մանակը եկած ատենը ծնողաց հաւա-
նութիւնը խնդրելով հակեցած աղջիկը
առնելու է : Ի վերայ այսր ամենայնի
իրենց հարսնութենէն ի վեր մնացած
հին ջեռիքներնին փառատելը չբա-
ւեր նէ , փոխ կառնեն այնչափ մըն
ալ , որ աղջկան կամ երիտասարդին
բախտաւորելնուն արդէլք մը հնարեն :
Աս ալ չյաջողեցաւ նէ կը մուրան
իրենց պէսներէն ջեռիկ կամ խրատ ,

ու կը խարձեն, կը յողնին, կը վազ-
վըղեն մինչև որ տաք ապուրին մէջ
սրաղ ջուր լեցունեն, վասն զի ուր
սատանան չկըցաւ երթալ, զրկեց
ատոնցմէ մէկը :

Վասն որոյ եթէ դուն աս առաքինի
սխառաներուն ձեռօքը ինչ և իցէ սը-
խալմամբ մը զիրենք (աղջկունք) խա-
բեցիր ու մէկէն իրենցմէ հեռացար,
քեզ աչքովն գետինը կը զարնեն,
ու կարագի պէս ալ կը ճզմեն, մինչև
որ իրենք պսակուին, որ դուցէ այն ա-
տենը սիրտերնուն սխը մտունան : Մի
կարծեր թէ ատոնք կին գտնուելով
մէկ բանիբուն մարդու մը հանճարեզ
և իմաստալի խօսակցութեանը չեն
հաւնիր, մանաւանդ թէ քեզմէ աւելի
կը զուարճանան, լսելով պտուղ քա-
ղելու սխառութիւնները, կամ անց-
քեր : Բայց զգուշացիր իրենց հասակին
վրայ ճշմարիտ բուն կարծիքդ ըսելու
եթէ չես ուղերնէ ունեցած հասակներ-
նուն կէս թիւովը զիրենք շողոքորթել :

Սյս հասակի մասը զիրենք գերող

մասն ըլլալուն համար՝ լաւ է որ ամե-
նեինն այս մասը իրենց չյիշես : Ձեռ
դիտեր ինչ ցաւ է իրենց երբ զլիսի մա-
զերնին ճերմկել սկսելու ըլլայ , այն
պէս որ եթէ մէկը զիրենք ապահովցը-
նէ որ եթէ զիրենք խաշելու ըլլայ ,
դա խնին առաջվան պէս պիտի սե-
նայ , կրնամ ըսել թէ իրենցմէ յանդդ-
նողներ կը գտնուին պատմած փորձա-
ռութիւնս յանձն առնելու :

Ասոնց հետաքրքրութիւննին : յազե-
ցունելը իրաւ դժուար բան է , մինչև
անգամ երկինքը հարսանիք կայ ըստ-
զին կը հարցունեն սանդուխն ուսկից
ըլլալը : Բայց եթէ կուգես իրենց աւելի
մտերիմ բարեկամ ըլլալ և հաճելի
մարդ սեպուիլ , իրենց մէկ գաղտնի
մնալու բան մը ըսէ :

Եթէ իրենց հետ մէկ անվնաս կը-
ռիւ մը ունեցար , նայէ որ իրենց իրա-
ւունք տաս , որով զիրենք մեծ երջա-
նիկ զգացման մէջ կը գտնան , և
գուն ալ կրակը ջուրով մարած կըլլաս :
Բայց վնայ ան մարդուն որ ասոնց վը-

ըէժխնդրութեանը պատահեցաւ . կը
խրատեամ զինքը որ ինչ կընէ ընէ,
կարճ կապէ, ինչ որ ըլլայ, թէ և փոքր
ինչ մնաս, նեղութիւն քաշելու ալ ըլ-
լայ. չէնէ քաղաքը ձգել և բախչելէն ու-
րիշ բան մը չօգներ իրեն: (Յսաս դըժ-
բաղդութեան Լօնտօն պատահելով
երանեցի այն մարդը որ սատանային
վրէժխնդրութեան պատահեր է: Վա-
սըն զի երբ տեսաւ որ ինծի բան մը
չկրնայ պիտի ընել, զինքը Պըրէքֆրա-
յերս Պըրիչէն Թէմս նետելէն պա-
տահմամբ աղատեցի:) Եթէ քանի
մը իրեն բարեկամ կանայք կամ վերո-
յիշեալ պառաներէն մէկը ձեռք առ-
նես, գուցէ ան ատենը իրեն կիրքին
վերջն առնել կարող ըլլաս:

Վարժեմ ասոնց բնական եղած
պիտի ըլլայ, որ տկար սնութիւն ու-
նեցող ըլլալովն, այսպիսի կատա-
ղի կիրք ունենան, քան թէ էրիկ մար-
դիկ: Վասն որոյ եթէ ես առաջանամ
ասոնց կամ իրենց աս կատաղութիւն-
ներնուն վրայօք խօսելու, ոչ վերջը

կուգայ և ոչ ալ իմ աշխատանքս կը վճարէ . որոնց վրայ Սողոմոնին աւուած խրատներուն ես կաւելցունեմ որ ժանտամահէն ազատիլ է , այսպիսի նատրէ մը անվնաս բաժնուիլը :

Բայց օրհնեալ ըլլան ու աստուածային օրհնութեամբ օրհնուին , և պաշտպանուին այն խաթունայքը որ իրենց բարի վարքովնին գուցէ կը ծածկեն վերոյիշեալ կատաղի նատրնէրուն իրենց արանց տուած ցաւը , և թէ ոմանց երիտասարդաց իգական սեռին վրայ ունեցած կասկածնէն զիրենք կազատեն , որոնք իրենց արանցը իստք և պարծանք են ու մշտնջենատոր ուրախութիւն :

Նոյնպէս երանի ան մայրերուն որոնց աստուածագգեաց շնորհալի խաթուն աղջկանցը վարքովը կը քաջալերեն թերևս երիտասարնները , որ հայր Աբրահամայ օրհնութիւնը ժառանգելու վիճակին ձեռք զարնեն : Ապա թէ ոչ պըսակուիլը շատ դժուար ձեռնարկութիւն մըն է , մանաւանդ անոր որ

Քրիստոսի սէրը իրեն ամուսնութեան վրայ բղխիլը կուղէ: Այնչափ մեծ հոգնութեամբ փորձած՝ ու զգուշութեամբ զատած, հաւնած, ճանչցած աղջիկիս հետ պսակելու ատենս, քահանան որ ոտք ելաւ ու ձեռքս ուղեց հարսիս աալու, յանկարծակի վախէ մը այնպէս պաշարվեցայ, որ պատճառ մը բռնեցի հոն ներկայ եղողներուն առջին ու քանի մը ժամ խորհուրդին կատարուիլը ետ ձգել տուի: Աւ նորէն թէութիւններ կապելով ահա սա կապակցութիւննիս հետագայ կեանքերնուս կանգնումն ու գլորումն է, ըսելով, նորէն ձեռքս ձեռքին տուի ու սուրբ կապով կապուեցայ, և կը յուսամ ու կը բաղձամ որ նաև բոլոր թշնամիներս այսպէս ապրին, ինչպէս ես կապրիմ իրեն հետ:

Ի վերայ այսր ամենայնի կաղաչեմ զիրենք, որ իրենց վրայ այս քանի մը բառով վատ խօսելուս ներեն. վասն զի միտքս բոլոր կանայք վատ կամ իրենց բոլորովին նախատելի ըլ-

լալնին ըսել չէ . այլ որովհետև
իրենք ալ գիտեն որ կը գտնուին իրենց
մէջն այսպիսիները: Ասան որոյ էրիկ
մարդիկ այս գիտնալով եթէ այսպիսի
կիրքի նշան ցցունողի մը պատահին՝
կը խրատեմ որ անմիջապէս օձէ մը
փախչելու պէս փախչին իրենցմէ, ա-
պա թէ ոչ բոլոր կեանքերնին շան մը
հետ ջուարի մէջ ապրելու կըլլան:
Բայց փորձառութեամբ ես կը վկայեմ
ու անկեղծ սիրտովս ալ կը գրեմ, որ
ապրին ու կենան այն բարի խաթուն
կանայք և աղջկունք . գիտեմ իրենց
գութ-սիրտերնին, վայելած եմ իրենց
փափուկ զգացմունքնին, ուրախա-
ցած եմ իրենց շուտով հասկըցողու-
թիւնովսին: Տեսած եմ իրենց քաղցր
օգնութիւննին, փորձած եմ իրենց
մարդու տիրութիւնը փաբատող ըլ-
լալնին, ունեցած եմ իրենց հեզ ու
սիրուն եղանակ մխիթարութիւննին.
օրհնած եմ իրենց ամենայն ժամ մե-
զի խնամ տանելնին, ու ծառայելու
պատրաստութիւննին: Չեմ ուրանար

իրենցմով ընկերութեան մը ուրախալի
ըլլալը, յայտնի է ամենուն իրենց
մականիթ սէրը որն որ իրենց էութեանը հետ ստեղծուած է, ահա ես
յետինս այս ամէնը կը ճանաչեմ ու
ձեռօքս ալ կատարագրեմ:

Բայց ես ասանց հետ տեսնուելու եղա-
նակին վրայօքն որ դրեցի, ան կող-
մի ազգայիններնու է, որոնց սովոր-
ութիւնն է իրենց հետ համարձակ կեր-
պով տեսութիւն ընել: Բայց մահմե-
տական տէրութեանց ասկէ զոպները
կը խրատեմ որ ճամբորդութեանս մէջ
զրամ կերպէս չզատուին. վասնզի դեռ
ազգիա կայութիւնը ուր որ ըլլայ ազատ
տեսութեան յարգը չզիտել: Եւ այս
կանոններով նաեւ զսակուելէն յետոյ
իրենց ընկերութեան տութեանն մէջ
զանոնք դարձած ել սէտք ըլլալը գիտ-
նարով, կը խրատեմ որ յարգես յոսա-
ւորեալ աստուածավախ հայ ընտա-
նիքի մը կանոնը և սովորութիւնը որ
փառք է Աստուծոյ և մարդկան, և սրա-
տիւ ձեռողաց ու պարծանք Ազգիս:

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ.

Գանձ հիմա բարեկամութեան վրայ
խօսելու, որն դր եթէ պարտաւորութիւնք
նէ ընկերնիս պատուելու, ուրեմն նախ
զանի պէտք ենք պատուել, որն որ
մեր մանկութեան ատենէն մեզի հետ
բարեկամութեան կապը կապած է :

Բայց ասոր ևս ապաւինութիւն չը-
կայ, վասն զի ժամանակէ հետէ բը-
նութիւննիս ալ փոխուելով ու զանա-
զան պարագաներէն ու փորձառու-
թիւններէն կտկտիւնք կոր մէկզմէկու
ուրիշ աչօք նայիլ, որովհետեւ չունինք
այն լոյսը, որ բարեկամութեան ար-
ժէքը ճանաչենք :

Փոքր ինչ պատճառէն կը մոռնանք
կոր մէջերնիս եղած ան պատուական
կապը, ու տեսակ տեսակ բուճ ջատա-
գովութիւններով կուղենք մեզ ար-
դարացունել : Զենք ըսեր որ ինչ նիւ-

Թական օգուտ որ ըլլայ, որովհետև մեզ մէկզմէկու պազ կը ցըցունէ կոր, զանի խլենք մէկզի նետենք: Ասան զի նիւթական օգուտին տեղը կուզայ, բայց բարեկամնիս կորսնցունելով դուցէ մէյ մըն ալ չենք կրնար զանի ստանալ, որ աս պակասութիւնը մեր մարդկային տկարութեանց մէկն է:

Յմ մանկութեանս ատենը կը լսէի բարեկամութեանց պտուղները կամ հաւատարիմ կապերը, բայց հիմա գըրեթէ վերջացաւ պատճառները, վասըն զի շահասիրութիւնը եկաւ տիրեց աշխարքիս վրայ, ու թերևս թող ըսեն, որ աշխարքս լուսաւորուեցաւ: Ասենք թէ իրաւ է աս ըսածնին, բայց գիտով կամ հնարագիտութեամբ, չարածիճիկութեամբ՝ և ոչ թէ որդիական, ծնողական, եղբայրական, ազգականութեան, երախտագիտութեան կամ բարոյական լուսաւորութեամբ:

Ոչ ապաւինութիւն կայ և ոչ ալ վրատահութիւն մէկզմէկու, այլ միայն իրենց շահը այնպէս զանազան խեղ-

ճութիւններուն մէջ նեղութիւններուն տակը կը ճզմուի կոր, ու կը տեսնես որ փոխանակ աշխարհս վատացաւ ըսելու՝ լուսաւորուեցաւ կըսեն : Չեմ նախատեր այնչափ տէրութիւն, կարողութիւն, հարատուութիւն, վաճառականութիւնն ալլն ունեցող ազգերուն ըսելը որչափ ի՞մ տարաբաղտ, անմիարան, անուսումն ազգս որ իր կազութիւնովը կուզէ վերոյիշեալներուն քիչ/րաւեր մտնել :

Բայց զիտցիր, ու բոլորով սրտիւ ալ հաւատան, որ հաւատարիմ բարեկամութեան քաղցրութիւնը, մխիթարութիւն է երկու կողմանց, որ այս անարատ սուրբ բարեկամութեան քեզի տուած մխիթարութիւնը գերազանցողը մի միայն խղճմասնաց հանգրտութիւնը կրնայ ըլլալ և ոչ այլ ինչ որն որ հոգնած կեանքի, և անհանգիստ գլխի բարձն է, որն որ ուրիշ բանէ մը չես կրնար գտնալ :

Եւ այս բարեկամութեան մխիթարութիւնը այնպիսիէ մը կրնաս գրա-

նալ, որն որ կրթեալ է, կամ իր բնութեանը տուած է զխոնալ, որ աշխարքիս ամենայն վայելմունքն ունայն է :

Նմանապէս զխոցիր ստոյդ, որ ինչ որ է նէ մէջերնիդ եղած շահը որ թէ և ամենատուճ թեթև բան մը է, և բարեկամութիւննիդ ալ այնչափ հին եղած ըլլայ, շահը միշտ զանի կարտէ : Քանի որ շահասիրութեան փորձառութիւնը կայ մէջերնիդ, որն որ առիթէ առիթ աճելով ամենէն վերջը, ձեզ ոչ միայն մէկզմէկու կը պաղեցընէ կամ օտար կերեցընէ, այլ և թշնամութեան ալ առիթ կուտայ :

Ո՞ գիտէ աս պակասութիւններն ունեցողներէն քանիները տեսեր ես ու փորձեր ես. ուրեմն անոնք որ կըրթութիւն չունին, ու աշխարքիս ունայնութեանը կը հետևին, որչափ որ բարի և սիրուն մարդիկ ալ ըլլան՝ մի հաւատար իրենց բարեկամութեանը, և մի յուսար իրենց անարատ բարեկամ մնալնուն քեզի հետ. որովհետև չկրնար, զիտեմ, փորձած եմ զիրենք :

Բայց ի վերայ այսր ամենայնի, եթէ աշխարքիս ունայնութիւնը գիտնալով ինքզինքն ատողի մը բարեկամութիւնը տեսար նէ, բունէ զանի ու երբէք մի ձգէր զինքը, եղիւր իրեն բարեկամ ու բաց իրեն քու սիրտդ, ու խնդրէ իրմէն, որ ինքն ալ բաց սիրտով քեզի պատասխան տայ:

Մի լսեր իրեն վրայ վատ խօսողները, որ զինքը լաւ չեն ճանաչեր. վաստն զի շատերը կան որ կըսեն, « Առամ ձգէ զինքը՝ ինչ այսչափ կը սիրես, կը պաշտես զինքը, տեսնենք քեզի օգուտ ունի մի, կամ մինչև հիմա ինչ ըրաւ քեզի: » Տես նիւթական օգուտն անմիջապէս առջիդ կը դնեն: Ստոնց աս քեզի ըսածներուն մի տրամիր, վասն զի ահա բարեկամութիւնդ իրեն հետ աւելի պինտ պահելու փորձառութիւնները, որով քեզ կընաս փորձել:

Վազ մի գար իրմէն եթէ զինքը սիրեցիր. վասն զի գուցէ իր կողմանէ քեզ փորձելու համար քեզի առիթներ կու-

տայկոր զինքը ձգելու . մի յոյսդ կտրելը
կաղաչեմ, այլ յառաջացիր ևս առա-
ւել տնւր եօզէնկիդ քաջասրտութեա-
նըդ, մի վախնար . վասն զի այսպիսի
դանձ մը ստանալու պէտք ևս քիչ մըն
ալ դժուարութիւն քաշել :

Բայց այս բարեկամութեան հաւա-
տարմութիւնդ չըլլայ որ ցուցընես
իրեն քու այսօրվան աղքատ դտնուած
վիճակիդ մէջ, այլ և երբոր կը հա-
րըստանաս, ու ինքը կաղքատանայ,
դուն պաշտօնատէր կըլլաս, ինքը իր
պաշտօնէն կիյնայ, այն ատենն ալ
պէտք է ցուցընես : Վասն զի աս տար-
բերութիւնը եթէ ըրիր, ցուցըցիր որ
քեզ իրեն հաւատարիմ ընողը շահասի-
րութիւնն էր, չէ թէ քու սուրբ և
անկեղծ առաքինութիւնդ :

Եթէ դուն զինքը իրեն առաքինու-
թեանը համար քեզի բարեկամ ըն-
տրեցիր, ուրեմն իրեն օրուան հացը
ճակատին քրտինքովն ուտել ուղելուն
համար հասարակ աշխատութեամբ իր
աւուրչէքը դտնալուն, զինքը մի ար-

համարներ . վասն զի թերեւս մի և նոյն առաքինութեան տէրն է :

Իրեն հետ բարեկամութիւնդ կըտրելու քեզ յորդորողներուն հարցնւր, արդեօք բարեկամիդ մօտա չհաղնիլը կամ հասարակ աշխատութեամբ դաւկըներն առանց պարտքի համեատութեամբ իր ժամանակուան կարողութեանը համեատ հողալուն համար իրեն ունեցած առաքինութիւնը կադտոտի մի, տես ինչ կըսեն : Եթէ առաքինութեանը արատ մը չեկած ըլլալը կը պատասխանեն նէ, բարեկամդ է, հազուրցնւր զինքը, որ նմանի քեզի, ու օգնէ իրեն, որովհետև գուցէ քիչ ժամանակէն վերջը դուն ալ նոյն վիճակին պիտի գաս :

Մի նախատեր զինքը, որովհետև դուն ալ իրեն պէս եղած ատենդ, եթէ քեզ երեսէն ձգեր ու քեզի չօգներ նէ՛ կամ քեզ իրեն չմօտեցընելու ըլլար նէ, զինքը պիտի դատէ իր : Ուրեմն քանի որ այսպիսի պակասութեան մը մէջ չըդտնուեցաւ, հպարտացիր, կամ լաւ ես

ըսեմ, դիր քու ապահովութիւնդ Աստուծոմէ վերջը աւելի իրեն՝ քան թէ քարաշէն եկամուտիդ : Ասան զի այն կրնայ փճանալ կամ ձեռքէդ ելլել՝ եթէ քու ներկայութեանդ ատենը չէնէ ալ, դուցէ զանի ժառանգողներուն ատենը . որ ասկէց մեծ հոյակապ բերդի նման քանի մը եկամուտներ ունեցողներուն զաւկըները այսօր մուրանալնին դուն ալ գիտես :

Բայց ճշմարիտ բարեկամութեան յարգութիւնը գործքով պատուելով՝ թէ և մէկդմէկէ մահուամբ զատուելու ալ ըլլաք, ձեր որդւոցը այս պատուական զիտութիւնը սովբեցուցած ըլլալովնիդ, ահա երկու կողմանց զաւկըներուն որդիէ որդի բարեկամութեան պտուղը վայելելնուն երջանկութիւնը : Որ ոչ հեռաւորութիւն, ոչ տառապանք, ոչ անցքեր և ոչ մահը կրնայ մոռցընել : Ասան զի տեսայ, եղան մարդիկ որ երկուքէն մէկը մեռնելով միւսին հոգւոյն ողորմութիւն կընէր զաւկըներուն ,

Թառներուն կօզնէր , ընտանեացը
խնամ կը տանէր , որ այսպիսի բա-
րեկամութիւնը ժամանակուան լու-
սաւորեալներէն թէ և երեւակայու-
թիւն կը սեպուի կոր : Բայց մի
վախնար կան և կը դտնուին , եթէ
դարոյս սա ապականիչ լուսաւորու-
թիւնն ունեցողներուն մէջ չէ նէ , ա-
նուսում սեպուած բարոյականը պաշ-
տող ռամիկներու մէջ անտարակոյս :

Ուստի իմ գիտցած բարեկամութիւնս
այսպէս է և այսպէս ալ կարծեմ պէտք
է բարեկամ մը յարդելն , որուն
սիրտդ սրտին անկեղծութեանը բաց
ըլլալով պէտք չես աղաչանաց բազ-
մութեամբ անհանգիստ ընել զինքը .
վասն զի ինքը դիտէ կամ իմացաւ ինչ և
իցէ կարօտութիւնդ , եթէ կարելի ըլ-
լայ պիտի օգնէ քեզի :

Յս դանի բարեկամ չեմ սեպեր ,
որուն ևս իմ գլխի տէրտս պատմեցի ,
ու ինքը որ կարող է ինծի օգնել ու չու-
ղեց նէ օգնել , որ զիս իրեն պէս սիրե-
լուն խօսքով վատահացուցած էր :

Բայց այս ըսելովս կրնայ ըլլալ որ անկարելի ըլլայ երբեմն, իրեն քեզի ան միջոցին օգնելը, ցըցունելով իրեն ճշմարիտ պատճառները, ան ստենը դուն ալ եթէ դժուարիս, ու ետ քաշւիս իրմէն կամ սրդողիս, ահա առիթ անհաւատարմութեանդ նշանը: Ասան զի կան որ ինչ որ բարեկամէ կը խընդրեն առջին ու ետին չմտածելով կուզեն որ իրենց խնդիրը կատարուի. աս չկրնար ըլլալ: Բաւական է որ սրտակից բարեկամ մը ունիս, որն որ եթէ ինքը չկրնար նէ ալ օգնել, քեզի լոյս մը կրնայ ցուցունել, կամ ուրիշ ատեն կրնայ քեզի օգնութեան հասնիլ: Ի՞նչ մխիթարութիւն է քեզի, որ երբ բանի մը ձեռք կուզես զարնել, որնոր եթէ դժբախտ վախճան ունեցած ալ ըլլալու ըլլայ, զանի բարեկամիդ խորհրդակցելովը ըրած ըլլալուդ համար, քեզի մեծ ցաւ մը չտալէն ետե, նորէն ինչ կերպով որ ըլլայ իր կարեկցութիւնը քու վրայ կրնաս ստանալ:

Նոյնպէս բարեկամութեան կապին

մէջնէ, քեզ որչափ կարելի է նէ պատ-
րաստ պահել, իրեն ինչ և իցէ կա-
րօտութեանը օգնութիւնդ, պաշտպա-
նութիւնդ ի գործ դնելու: Օգնել իրեն
գործքով մը որ խղճմտանքդ քեզ կը
դրդէ կը վկայէ կարող ըլլալդ:

Չանան բարեկամիդ անունը պա-
հել, ու իր ունեցած առաքինութիւն-
ներուն վրայ եկած արատներուն դէմ
պատերազմիլ, ու իր ունեցած փորձու-
թեանցը զիմանալու, համբերելու
զինքը քաջալերել. ու մանաւանդ զա-
նի որ իր ազգային մէկէ մը իրեն զը-
լուխը փորձանքի հանդիպեցաւ, վասն
զի աս ցաւը օտարէ մը եկածէն աւելի
է: Մի խնայէր քեզի, բոլոր Չանքդ
խարճէ զինքը մխիթարէ, զոհէ քեզ
մինչև որ զինքը աղատես. որով ոչ
միայն կը պսակուիս այս աշխարքիս
մէջ, այլ և անդիի աշխարքն ալ:

Բայց միայն հիմա խօսք մը կը լսեմ
կոր յիշեալ լուսաւորեալներուն բե-
րանը, որ բարեկամութեան դէմ եղած
վարձքը, թշնամութիւն է: Ըսենք որ

այդպէս կըլլայ կոր . բայց ինչպէս արդէն ըսի, նախ դուն որ քու սիրտդ լաւ կը ճանաչես, մտիւր կազաչեմ առանձին սիրտդ ամենաճշտակ տեղ մը, ու քննէ աս թըշնամութիւն յառաջ բերող բարեկամութիւնդ՝ որ դուն իրեն բարեկամութիւն ըրիր կը սեպես արդեօք, անկից մէկ ինչ և իցէ օգուտ շահ մը կըսպասէիր մի, այսօրուան կամ վաղուան, ներկայ կամ ապառնի ժամանակիդ . կամ զինքը լաւ փորձեցիր մի արդեօք, աս եղանակաւ ընելովդ իրեն օգնութիւն մի պիտի ըլլայ, չէ նէ մնաս և այլն :

Ս.նմիջապէս կը տեսնես, կը գտնաս որ սխալեր ես կամ քու անկրթութենէդ, կամ բարեգործութեան եղանակը չգիտնալէդ, կամ ետին առջին չմտածելով չըքտըղընայ մէկ ժամուդ պատահելով յանկարծուտ եղած օգնութիւն մըն էր որ իրեն ըրիր . և ոչ թէ մասնաւոր կերպիւ, մի միայն իրեն օգնելու համար :

Ուստի այս կերպով եղած բարեկա-

մութենէն, ուրիշ բան չես կրնար ըս-
պասել, ինչպէս տատասկի հունաէն
տատասկ. ինչպէս ալ կըսեն որ զի-
նիին ընկերակցութեամբը եղամ խոր-
հրդածութենէն միշտ յաջողմունք չըս-
տացուիր. վասն զի կըլլայ որ շփո-
թամ մտօք եղամ ըլլայ: Եւ որ հասա-
րակօրէն միշտ կը պատահի, իրեն ը-
բամ ոչ ինչ օգնութեամբդ կենդանի
լրագիր կըլլայ կամ ուրիշներուն ըլ-
լալ կը պատճառէ, որ աս բանը
ամէն օգնութիւն ընդունողին կա-
մայը հակառակ է: Գուն եղիր հի-
մա իրեն տեղը տեսնենք ինչ կընէիր,
կամ եթէ քու գլուխդ չէ եկամ նէ,
հարցուր անոնց որ յառաջ քան խըն-
դրած շնորքնին վայելելնուն, բանը
բոլոր դրացիներուն բերանը կը սը-
տըտի:

Եւ որ ամենաանպիտանն է՝ քեզի
կը խօստանայայտ ինչ բաշային, ամի-
րային կամ սր և իցէ անձին խօսելու
քեզի համար. որ թերևս ինքն ալ չգի-
տեր որ խօսելու անձն արդեօք պիտի

կատարէ թէ չէ: Ինքը կսկսի մէկուն մէկալին պօռալ որ իշտէ բանը սրբաւ գրի, կամ առաւ աղային՝ փաշային ըսելու պէս կը լիննայ բանը, և այլն: Որ թէ և աղան կամ փաշան խօսքին վրայ հաստատ կեցող մարդ մըն ալ եղած ըլլայ, կընայ պատահիլ, որ ինքն ալ կարող չըլլայ ընել: Տես հիմա վախճաննինչ եղաւ. ոչ ինչ. և թէ ոչ խեղճին լեզուի վրայ պտըտելը:

Իմ ազգիս մէջ այսպիսի բարերարներուն թիւը համբելու ժամանակ չունենալովս, քեզի կը ձգեմ որ դուն համբես:

Ան է բարեկամը, սիրելիս, որ ձեռքը կը դնէ իր կուրծքին ու կը քննէ թէ արդեօք կարո՞ղ է բարեկամին կարօտութեանը հասնիլ, իրեն կամ օտարին ձեռօքը. ու երբոր խելքը կտրեց, խղճմտանքը իրեն վկայութիւն տուաւ ձեռքը կուտայ բարեկամին ու կապահովէ զինքը. կամ իրեն ընելու բարեկամութեան կերպին մեկնութիւնը կուտայ, որով եթէ խեղճը գոհ եղաւ, կըս-

կըսի իրեն ընելիքը կարգի մը դնելու :

Ես բարեկամ տեսեր եմ, որ իրեն միտքը դրածին պէս ըրած բանը չյաջողելով, նորէն ուրիշ կերպով մը խեղճին օգնելն իրեն պարծանք սեպեց : Ահ նէ առանց մտածողութեան խօսք տալ՝ ու յետոյ դժբաղդ կամ անյաջող եղած ատենը, ետ քաշուիլն ու կըրկնապատիկ ցաւով խեղճը երեսի վրայ ձգել, ու յետոյ զինքը արդարացունելն ու խեղճն ալ նախատելը՝ ճշմարիտ բարեկամի գործ չէ : Եւ ոչ ամենողորմելին է, այսօր, վաղը կամ մէկալ շաբաթ կընեմ ըսելով խեղճը տարակուսութեան մէջ ձգել, և վերջը, էյ ինչ ընեմ, իմ միտքս բարի էր, ամա չեղաւ ըսելը բարեկամութիւն չէ :

Որ այսպիսիները եթէ չեն ամչնար զիրենք բարեկամ անուանելու, գոնէ այս վարձունքներովն ին բարեկամութեան անունը չաղտոտեն : Ամա անոնք որ կըսեն. առաւ օվ պիտի այս երկայն մտածողութիւնն ընէ, եղաւ եղաւ, չեղաւ նէ ինծի ինչ, կամ Էս

մի եղայ ապականած աշխարքիս մէջ
կրթութեամբ գիտութեամբ ապրելու
մարդը . ես ինզինքս հոգամ : Անյ
իրենց, մեծ վնյ մըն ալ իրենց որդւոցը :

Մտածէ սիրելիս, եթէ բարեկամու-
թիւնն ըսած կանոնովս ըլլայ, ոչ մի-
այն այսօրուան օրս եղած խեղճու-
թիւնները, աղքատութիւնները, յու-
սահատութիւնները կը թեթեման, այլ
և կեանքի ալ օգուտ ունի, ըսելուս մէ-
կէն ի մէկ մի ըսեր հոս, որ բարեկա-
մութիւն ընելով մահը չենք կրնար
արգիլել . կամ ան ռամկաց բերանը
պարտող խօսքը թէ, իր ճակատագիրը
այսպէս մեռնիլ էր . այլ միտ դէր
ըսելիքս :

Ըստ որում մարդկային մտածմունք,
եթէ մէկ փափկութեամբ մեծցած տա-
քըն ու պաղը գլխէն չանցած հարուստ
մը, որն որ իր թշնամւոյն լարը իյնա-
լով, բոլոր ստացուածքը մէկէն կոր-
սընցունէ . կամ կրթութիւն կամ աշ-
խարքիս ունայնութեան գիտութիւ-
նը ունեցած չըլլալով յուսահատե-

լով , ինչ պիտի ընեմ ասկէց վեր-
ջը , մութանալու կամչնամ , փող չու-
նիմ նորէն գործքի մը սկսելու , բա-
րեկամ չունիմ թևերէս բռնող , պիղ-
ղիկ չունիմ արհեստի , որով հացս
գանամ , կամ գերդաստանս հողամ ,
տարիքիս տկարութիւնը հեծած է վը-
րաս , և այլն մտածմունքներով մեռնող-
ներ չլլար մի : Ամ գծբաղդեալ
երիտասարդի մը առանց բարեկամի
զինքը տեսնելով հայրենիքը ձգած ,
անծանօթ երկիրներու մէջ տարա-
բաղդ պտըտելով օդին , եղանակին ,
ծովին վտանգէն մեռնելը չկրնար
ըլլար մի : Տես բարոյական օգնու-
թեան կարօտութենէ յուսահատելով
զիրենք գետ նկատողներուն , մեայը-
նողներուն , թունաւորողներուն , կա-
խողներուն պատճառը՝ մոռալ քարո-
զող կեղծաւոր գէմքով ոմանց ան-
գլխացւոց մէյմը հարցնը պատճառը
տեսնենք ինչ կըսեն . չէ նէ կը հաւ-
տաս մի ըսածիս ու կը համոզուիս մի
ինծի հետ ըսելու որ , եթէ բարեկամ

մը ունենար, ու իր ձեռքէն ըստ կարողութեանը բռնէր, խեղճը չէր մեռնէր, և ոչ ալ իր դերդաստանին դուռը կը դոցուէր:

Ափսոս որ բաղձանքիս ուսումը միայն դիրտով կրնամ ներկայացնել. բայց սրչափ կուզէի տեսնել ճշմարիտ բարեկամներու ձեռք ձեռքի տուած ազգիս մէջ պարտելովսին առջկնէն ու ետեւնէն դացած բարեկամութեան առաքինի գործքերնէն ստացուած ուրախութեան թանօրուման մը կադմել ու քու ողջ աչքերուդ ալ ցըցունել: Որ դուցէ՛ դուն ալ ան ատենը բաղձանք ունենայիր ամէն ջանքդ ի գործ դնելու, որպէս զի իրենց մէջը համարձակ դուն ալ կարողանաս սլարտիլ: Ինչպէս Փարիզի պատկերը տեսած ստենդ ամենայն ջանքով կը ջանաս փող ժողովել, կամ ծոցի աահարդ ծախել ու երթալ Փարիզ տեսնել, որպէս զի դանի տեսնողներու կարգն անցնելով, դուն ալ կարողանաս սլարծենալ: Որչափներ կան որ փոխանակ սը-

խալմամբ ոտքը խայճմիշ եղողին ձեռքը բռնելու, նորէն թեքմէ մըն ալ կը զարնեն, որ աւելի խորունկ իյնայ: Աամ անոնք որ զիրենք առաքինի կը կարծեն, կարօտելոյն կըսեն, Սղբար այսչափ Ակնցի, Էնկիւրցի կան մէկ ըլլան թող քեզի օգնութիւն մը ընեն: Աամ, ինչ բնենք անի մերթեմէն չէ, մեր երկիրէն չէ, մեր հաւատքէն չէ ըսելով ետ կը քաշուին, իբր թէ խեղճը աս զանազանութիւնը ունենալովը իրենց պէս մարդ չէ, կամ իրենց եղբայրը չէ:

Բայց երբոր իրենց օգտակար մարդ մըն է, կը նայիս որ այս խօսակցութիւններուն մէկը չկայ, չլսուիր, չըյիշեր մանաւանդ թէ, Զահե՛ր, մեր պարտքն է որ մէկըմէկու օգնենք, ո՞վ կըլլաս եղիբ, բաւական է որ մեզի պէս մարդ ես, այսօր քեզի է նէ վաղն ալ մեզի է:

Բայց ես քեզի կըսեմ, սիրելի դըժբաղդս, եթէ դուն թէև կարողութիւն չունիս նէ ալ՝ հիմա մէկուն, օգնութեան

հասնելու, բայց որովհետև սիրտիդ մէջ տնխարաղձանք մէկու մը օգնելու, կամ դո՛նէ իրեն համար երկու քայլ երթալու կամ դուռաթ մը ջուր տալու. գիտցիր որ կը դո՛նաս բարեկամ, թէ և չէ՛նէ պատուածիս պէս կատարեալ մը այսօր դո՛նէ ասոր նմանը՝ և վազն ալ մէկ յիշաւի կատարեալ մը: Ասոր համար մի յուսահատիր, վասն զի յուսահատութեամբ ամենեւին բան մը չենք կրնար ստանալ:

Իրաւ է որ բարեկամդ իբրև բժիշկ կամ վատտարան պետք ես պատուել, որուն կարողանաս ուրիշի մը ըսելու դժուարած հիւանդութիւնդ, կամ պակասութեամբ մը ըրած յանցանքդ իրեն ըսելու. որպէս զի ան ալ կարողանայ քեզի օգնել, կամ ճամբայ մը ցուցնել. թէպէտև այսպիսի սրտաբայ բարեկամ մը կամ վտանգալի դադտնիքը խոստովանելու յարգութիւնը գիտցող անձ մը ձեռք ձգելը, շատ դժուար է:

Որովհետև աշխարքիս մէջը շատ բաներ կրնայ պատահիլ, որ խեղճեր-

նէս դուրսէ կամ չենք յուսար որ բարեկամն իս փոփոխամիտ կամ պարագայով մը փոխված ըլլայ: Չոր օրինակ՝ այսօր հրէայ է վաղը Քրիստոնեայ կըլլայ, այսօր էջմիածնական է վաղը հռովմէական կըլլայ, կամ ՉՅ տարի հռովմէականութիւնը կը քարոզէր, ու իրեն քեզ սիրելը՝ իր Աստուածորդի վարպետին հրամանն ըլլալը կը պռուար, յետոյ պարեախը կը դարձնէ, ու քեզի դէմ կըլլայ և քու վրադ իր միտքին եկած զրելու վատ անուանելը չբաւեր նէ ալ՝ զրքատուններուն օգնութեամբը սուտ ու մուտ Յաւելուածով քեզի մասս բերելու կարծիքներուն կաշախատի. կամ այսօր փրօթէսթանդ է, վաղը հռովմէականութիւնը ընդունելով քեզ չկըրնար տեսնել: Հայրենիքը կը ձգէ, հայրենիքէն եղածը կ'ատէ, իր ծնած քաղաքէն կը հրաժարի, նոյն քաղաքացին կը նախատէ, մեռած ըլլալուդ սուտ լուրը իրաւի տեղ հաւտալով ձեր բարեկամութեան նախանձողներուն մէկուն սուտ զըր-

պարտութիւն մը կը խօսի, կամ իբր թէ դուն ինքնին իրենց վրայ ըսածի պէս իրեն հնարած վատ խօսքերը կը պատմէ ըսելով. Տեսէք դուք զինքը այսպէս կը կարծէիք ամնա ես գիտեմ ատոր կտորած ճեմիզները, ասմանըն աչքընտան սու եիւրիւտեկն իտի, հասկըցած կեղծաւորդ չէր, կայլն կատուդուղութեամբ խօսելու կըլլայ:

Եւ եթէ յետոյ իմանայ քու ողջ ըլլալըդ, կամ իրեն խօսած թշնամութիւնը լսելդ, ես առաւել թշնամի կըլլայ քեզի, որ դուն անմեղ ես, ոչ մեռար, ոչ ալ իրեն կամ միւսներուն վրայ վատ բան մը խօսեցար կամ ինքիւր հաշիդ մարդ մըն էիր: Բայց մեծ գովութեան արժանի ես, եթէ այս ամէնը լսած ատենըդ, բան չկայ. ես չեմ հաւատար, կամ ան որ ըսեր է նէ ալ այս ամէնը՝ ո՞վ գիտէ ինչ մտօք ըսած պիտի ըլլայ. ես զինքը դերես սիրեմ ու կը գովեմ ըսելդ, եթէ ականջը եկաւ, ահա բարեկամութեանդ պարծանքը:

Որչափ ալ կատարեալ բարեկամ մը ստացած ես նէ ալ՝ միշտ քեզ այնպէս բռնէ, որ եթէ վաղը զինքը կորսընցընէս նէ ինչ ընելու կըլլայիր կամ իբր թէ առանց իրեն կրնաս ապրիլ, որն որ թէ և քեզի ամենայն սիրով ծառայելու պատրաստ է : Նայէ՛ որ որչափ կարելի է դուն ինքիրմէդ քու կարողութեանդ չափ օգնելու ջանաս, որն որ խմանալով քու աս արիութիւնդ դուն քու համարմունքդ իր քովը աւելցուցած կըլլաս : Եւ որչափ ալ ոչ ինչ կարօտութեան բան մըն ալ եղած ըլլայ, քեզի ալ միտթարութիւն մըն է որ ինքիրենդ բանը գլուխ հանեցիր առանց բարեկամիդ օգնութեանը :

Աս ալ քեզի պէտքեմյիշել, որ երբոր դո՛հ ես բարեկամիդ քեզի դէմ ցուցըցած բարեկամութեան պատրաստութենէն, զգուշացիր իրեն ծանօթներուն հետ չծանօթանալու, կամ պարզ տեսութեամբ իրենց հետ տեսութիւն ընելու : Վասն զի մէջերնիդ ահա սև կատուին անցնելու համբան՝ վա-

սըն զի կրնայ ըլլալ որ բարեկամիդ իրենց հետ ըրած տեսութիւնը բոլորովին տարբեր է :

Չես գիտեր մի՞ կայ մարդ՝ որ աւելի կը պատուէ իր աղքատ բարեկամը, քան թէ իր հարուստ ազգականը . մասըն զի ինքը հիւանդացած ատենը՝ առջինը գիշերային ժամանակ բժըշկի կը վաղէ, երկրորդը ամէնքնիս ալ պիտի մեռնինք ըսելով ճայնը կը կարէ : Աամ առջինը գոնէ անվստահ երպով եղած որք զաւկըններուն պաշտպանութիւնը, մխիթարութիւնը կը հողայ, երկրորդը թող աղքատանոց երթան, ինչ ընենք ըսելով՝ չորս զաւկով որբեւայրին մխիթարուած ըլլալ կը կարծէ :

Աամ չկրնար ըլլալ մի՞, որ բարեկամը քու կարօտութեանդ հասնելու ժամանակ չունենալը քեզի ըսել չուզելով և քեզ ալ կարօտութենէդ ազատելու համար դնաց իրենց սուտ մը ըսաւ, որ քու խելքդ չհասնիր, ու օգնեց քեզի . ուստի կարելի է որ քու

պարզմտութենէ դ իր բարեկամները
քեզմէ դանի իմանալուցն, մէջերնին
մէկ խառնակութիւն մը պատճառի,
կամ ծուռ իմանալ մը ծնանի:

Գուն թէ և լսեցիր աս առիթով որ
իրը թէ իրեն համար աղաչելով քեզի
օգներ է, աս դուն ամենեկին զիտցած
մի ըլլար, կամ իրը թէ զինքը դավելու
համար, ատ բանը յնձի համար էր՝ մի
ըսեր իրենց, մանաւանդ թէ տեսար իր
հաւատարմութիւնը, ջանա՛ որ այս-
պիսի բարեկամ մը չկորսնցունես:

Մի ընկեր ամենեկին կաղաչեմ, զա-
նազանութիւն հաւատոյ կամ աղգի,
զաւառի. բաւական է որ քու իրեն
ըրած հաւատարիմ բարեկամութեանդ
համեմատ, ինքն ալ հաւատարիմ է
քեզի, յստակ է քեզի հետ ինչ որ է
նէ գործողութիւնը, ոչ նենգութիւն
կայ սիրտը, ոչ մեղք կայ բերանը և
իրեն խելքը միտքը մտածմունքը կը
տեսնես պայծառ, ինչպէս քու երեսդ
հայելիի մը մէջ:

Ուրախ եղի՛ր այսպիսի բարեկամ ու-

նենալուդ վրայ, ու պինդ բռնէ քինքը
և մի լսեր ան մարդիկներուն յուսա-
հատութիւնը որ մէկին միւսին խօս-
քին հաւատալով, ոչ կը ջանան բարե-
կամ մը ստանալու, ոչ ալ կը հաւատան
անոր գանուելուն. վասն զի իրենք
չունին մեր պատմած բարեկամու-
թեան քաղցրութեան ճաշակը, ու
կապրին կեղիշի կիւզեղ:

Վասն նաև ոմանք որ ամէն մարդու
սիրտերնին կը բանան կամ անոնք
որ չեն հոգար, ու անօխյթ կապրին.
եւս պատիւ կը համարիմ անձիս այս
երկու տեսակէն ալ հեռու ըլլալու,
վասն զի ասոնք մարդուս գլուխը փոյ-
ճանք կրնան բերել: Քայց եթէ վե-
րոյիշեալ պատուական բարեկամիդ
ու՛քու մէջդ կռիւ մը պատահեցաւ,
ամենեւին մէկզմէկու սիրտ կոտորելու
բան մը բերնէդ հանել զգուշացիր:
Վասն զի բարեկամաց մէջ ծնած երկ-
պառակութիւնը ուրախութիւն է թըշ-
նամեաց:

Ատոր համար այսպիսի առիթի մէջ

հանդարտութիւնը, համբերութիւնը,
կամայ և ակամայ դորձածելու է, ու
եղած վէճը վաղուան ճղելու է, որ
նորէն քննէք. դուցէ կարելի է որ
սխալմունք մը եղած ըլլայ մէջերնիդ
որ աս բանը շատ յաճախակի կը սլա-
տահի: Ասան զի քանի որ մարդս մարդ-
կային տկարութիւնը ունի՝ կատարեալ
մարդ մը չկրնար ըլլար աշխարհի մէջ,
ամէն մարդ ունի մէյմէկ տկարութիւն
ինչպէս ալ տկար ծնած է: Եւ որչափ
ալ արի ըլլաս կամ գիտուն՝ չես կրնար
յողթել աշխարքիս, եթէ ոչ համբեր-
ութեամբ: ուրիշ համբայ չունինք:



ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԳ.

Արտվհետև տեսեր եմ չիզմեին մէջ պահած կտրած ընդհանրութիւնները որքանի մը անդամ փոխելով հարատուութիւն ժողովող ակնյայտներուն կամ չարչի ուշադրութիւնէն, կամ այլազորութիւնէն սղու կամ աարաֆ եղող պարտններուն իրենց ծառաներուն հետ ունեցած վարմունքներնուն սխալմունքը : Ատոր համար հոս ուզեցի ծառայ գործածելու եղանակին վրայ դրելու, որն որ մարդկային ընկերութիւնն ալ կը պահանջէ զանի գիտնալը :

Գիտեա սիրելիս, որ աշխարհիս վրայ մարդկանց մեծ մասը պղտիկ մասին ծառայող է, և ան անձը որ ուրիշի մը կը ծառայէ, իրեն արդէն խոնարհութիւն մըն է, որ պիտի թողու իր անդին ազատութիւնը ու ծառայէ քեզի : Որ եթէ աս ազատութիւնը կորսնցընելը կամ քու կամքդ կատարուիլը

ինչ դժուար բան ըլլալը չես գիտեր նէ՛
դիւրին է անձամբ փորձելը. բայց եթէ
գիտես նէ ինչ ըլլալը, կամ ինչ ցաւ
զգալդ, ուրեմն ծառայիդ հետ պէտք
ես հօր և մօր պէս վարուիլ . որով
քեզի աւելի հաւատարիմ ծառայե-
լուն իրեն սուիթ կուտաս : Ասան
զի երբոր ծառադ իրեն օրական
ունեցած պարտաւորութիւնը կատա-
րեց, լինցուց, տնւր իրեն թոյլտու-
թիւն որ հոգնութիւն առնէ. և այս
բանս իրենց շատ հաճելի բան է, ինչ-
պէս դուն ալ աս ըսածս քու անձիդ
վրայ կրնաս փորձել :

Նոյնպէս երբոր զիրենք յանդիմա-
նելու ըլլաս, միայնակ յանդիմանելդ
մեծ օգուտ է իրենց, չէթէ ուրիշի մը
առջին, որ շատ վնաս կրնաս բերել
քեզի : Ստոյգ է հասարակօրէն տան
ծառայ մը՝ իր տիրոջը իր վրայ ունե-
ցած խնամքը, համարմունքը ճանչ-
նալու լոյս չունի . վասն որոյ ասոնց
տպերախտութիւնը բանի տեղ չպիտի
դրուի, բաւական է որ իրենց պարտա-

ւորութիւննին հաւատարմութեամբ կը
կատարեն : Ասոնց աչքը կշտացընե-
լը դժուար բան է . որչափ կուտաս
այնչափ ալ կուզեն . և մէյմը որ սկը-
սարսխալմամբ տալու, որպէս զի իրենց
հաւատարիմ ծառայութեանը փորձա-
ռութիւն մը եղած ըլլայ, յետոյ քեզ
իրբն պարտաւոր կընեն միշտ հետզհե-
տէ տալու :

Բայց միւս կողմանէ ալ շատ անգամ
մենք ենք իրենց վատութիւնը աւել-
ցընելու պատճառ , վասն զի կամ
մենք ծառայով մեծցած չըլլալովնիս,
ծառայ գործածելու եղանակը չենք
գիտեր . կամ երբոր ծառայ գործածե-
լու կարողութեան կուգանք, զիրենք
մեզի ծախուած գերի կը սեպենք, ու
մեզ ալ մէյմէկ արեւելքի ինքնակալ
կամ գեմեկտար կը սեպենք : Ար մոռ-
նանք չաշխարհներնուս տակը վրան
դարձունելով օրերնիս անցունելնիս .
կամ քիւրքիւն մէկ փեշք անկողին,
միւսը ծածկոց ընելով քնանալնիս .
մուկը կերած ձմերուկը ջուրով լուս-

լով անօթութիւննիս յողեցընելնիս :
Որ եթէ սիրելիս, աս ըսածներս անհա-
ւատալի կուղայ նէ քեզի, հարցուր
չաքմաքնիներուն ևօխուշիև իրմէն
անցնող արապի ձիերով հարուստնե-
րուն վրայ՝ զիտնալ ուղած տեղեկու-
թիւնդ, որն որ գուցէ աւելի մանրա-
մասն կը պատմեն քան, թէ ես ակա-
նատեսս :

Տեսեր եմ կեսարեացիներէն՝ որ Նւս-
կիւտար հասնելէն ևտե, ծախած խո-
նարհ անասունին փողովը քանի ատեն
ուշաք սարափութիւն ընելէն վեր-
ջը, մաշիկի սարափութեանը զինքը
արժանի կը տեսնէր. կամ Աանէն ե-
կողը որ քանի մը ընկերներուն երաշ-
խաւորութեամբը ևափուռնը ամսա-
կան վճարելով կսկսափ մը մէջ մտած
ատենը՝ կուղէր իշիք պաշի ըլլալ, որ-
պէս զի հրամայելու առիթ ունենայ :

Եթէ անմիտ Գաղատացի է, Պօլիս
բերած չեմեւեր յաջողութեամբ ծա-
խելով, մուքաւթայի առուտուրի ձեռք
զարնելու կսկսի : Եւ եթէ պօլսեցի է,

վերոյիշեալները իբրև իր թոյլտու-
թիւնէն ապրող անձինքներ կը սեպէ,
մանաւանդ ան որ Պէյօղլուի բնակիչ-
ներէն է, զինքը լուսաւորող մէկ պըղ-
տիկ արեգակ կը կարծէ, որ լոյս կուտայ
միւսներուն: Ար այս վերջին երկու յի-
շածներէս կան ալ որ ի ձեռն ամուս-
նութեան, կամ սլարոնի մը ձեռօք որ
զարքիսակն մտան, ահա զիրենք
պղտիկ լերանց ստեղծողներ սեպող-
ները. կամ եթէ ծնողացը իրենց ճը-
գած օճախը վայելողներ են, կուղեն
որ աշխարհատարած արեգակը իրենց
վրայ միայն ծագէ, կամ իրենց թոյլ-
տուութեամբը ուրիշներուն վրայ ծնու-
նի, որպէս զի ճանչցուին, որ իրենք
միւսներէն աւելի են:

Գանք հիմա ասոնց խաթունաց վար-
քը, որ բոլորովին կը նմանին իրենց ար-
անցը-կը սլատահի որ օր մը բաղանի-
քին ուտուակ ֆիշօմեկայ տուտուկ
մտիկ չընելով, նախ եակաֆի մը կըն-
կան մէկ հասիկ լոյս աղջկանը մաղը կը
հիւսէ կամ յիշեալ տուտուկ լուացուած

խորոնայիև քով ուրիշ աղքատ խաթու
նի մը գաւակը լալուն դժուարելովը ,
խեղճին դուրս ելլալ հրամայելուն չը-
հնազանդելուն համար կամ համարմնի
քատրնիև սխալմամբը իրեն խորո-
նան միւս աղքատ խաթունին տուած
ըլլալով՝ աղքատին հետ կուրտելէն
Ֆիլոմէնայ տուտուն այլայլելով կը
հարցընէ , կիմանայ որ աղքատ խա-
թունին էրկանը զարափխաւնան դոր-
ժաւոր կամ իրեն վրէժը առնելու կա-
րողութիւն ունեցած վիճակի մը մէջէ :
Տուն կուգայ կտպասէ իր էրկանը գա-
լուն , բայց չկարծես հոս տմուանու-
թեան սէրէն պարտաւորեալ , այլ չը-
կրնար համբերել իր կիրքին բորբոքե-
լէն , որն որ եթէ պատահամբ մը ուշ
եկած ըլլայ , կ'ըսէ . ուր մնացիր : Ար
մարդը զարմանալով կը պատասխա-
նէ . Ե՛նչ է սիրելիս : Արուն կսկսի պատ-
մել բաղնիքը պատահածը ու կը սով-
րեցունէ աղքատին հախեև գալու
եղանակը , ու երկրորդ առաջուն ալ
նորէն կը պարտաւորէ իր էրկը ըսե-

լով, Սա հախեկն պիտի դաս, սրպէս զի
թող իմանան իրենց հատար :

Բ՞նչ յանցանք ունի հիմա սիրելիս,
խեղճ գործաւորը պատժուելու, երկու
կին բաղանիքը կռիւ կընեն նէ. որ ես
նաև իր խոստովանահօր ձեռօքը զին-
քը յանդիմանել ուղող տուտուռն յան-
դիմանողը տեսեր եմ: Բայց ես հոս
քեզի սա լուսաւորեալ կուռքերուն
մէկուն պատժութիւնը պատմեմ որոնք
թերևս կապրին կոր, որոնցմէ մէկը
Փարիզ ալ եկաւ, ու իր պատկերն ալ
ձրի կը տրուի կոր. ասոր գեղեցկու-
թեան վարօտ խաթունը քաշտեղեկ
փափուկ շիշքէի մը վրայ ի հարկէ իր-
բև չաստուածուհի, որ բարձին կըթը-
նած չուպուխը երկնցընելով անաս-
ուն զովութիւնը կը վայելէր, զիմացը
Մարթա անունով գեղեցկութեան օ-
րինակ և պարկեշտութեան հայելի
եսնափի մը խաթուն, կերպով մը ծի-
ծաղած կը գտնուի: Չաստուածուհին
իր վրայ առնելով իր էրկանը ձեռօքը
անմիջապէս խօրու գեւանեաւիին

լուր կը խորկէ ու սիրուն խաթունին
քաշտեղէն նստիլը կարգիլէ: Աւումանք
դերեաին ծի կըսեն որ աղգիս մէջը կա-
րող և ապաւինելու արի, բանը գլուխ
հանող մարդ մը չկայ, ասոնք ինչ են...
որ լաւ կըսէ ասոնց վրայ տաճկին առա-
կը. համամարտակ քառք օրակ... .

Հիմա եկնք սիրելիս պահանջէ, ա-
սոնցմէ կառավարութիւն ազախնեայց
կամ ծառայից, մանաւանդ իրենց յոր-
դորող ըլլանին ի հողեորս և ի մարմ-
նաւորս: Ասէնք որ իրենց ծառայքը
կրթութիւն չունին, բայց իրենք որ
գիրենք կրթութիւններու օրինակ կը
սեպեն, ուր է կրթութիւններնին,
Ատոր համար ծառայ գործածելը ար-
հեստ մը ըլլալը իմանալէս ուղեցի
վաքր ի շատէ գրել: Գիտցիր որ ծա-
ռայի մը սովորութիւնն է մէկ տունէն
միւս տուն լուր տանելը, յաւելցընէ-
լով վրան նաև քանի մըն ալ սուտ
ու մուտ խօսքեր. վասն որոյ ասոնց-
մէ պէտք է զգոյշ կենալ, ինչպէս մէկ
կրախայէ մը, ասոնց մէջը հաւատա-

րիւմ և արժանի ապաւինութեան ան-
ձինքներ կան, բայց կերակուրի, շե-
քերի, խախտի, ինչպէս ալ Անգ-
ղիայի մէջ ըմպելիքի գողութիւնը ի-
րենց յանցանք չեն սեպեր: Ատոր հա-
մար, փոխանակ այսպիսի քափրիչ
գողութեան վրայ խօսելու, խոհեմու-
թիւն կը համարիւմ առանց իրենց երե-
սը դալու, այս փորձութիւնները իրենց
պաշտպանութենէն կերպով մը առ-
նելը:

Թէպէտ և Աստուծմէ պատուիրուած
ենք իրենց վարձքը ժամանակին հա-
տուցանելու, որ այս զգուշութիւնն
ընող տանտէրը իրենց առջին մեծ
համարմունք ունենալէն ետե, զինքը
սիրցընելուն ալ առիթ է: Եւ ասոր հա-
կառակն ընող տանտէրը՝ իր պատիւը
կորսնցունելէն ետե իրենց անհաճելի
վարմունք ունենալուն պատճառ կըլ-
լայ, մանաւանդ այն տանտէրները
որոնք մեծ մեծ խարձեր կընեն, ու
ամիսներով իրենց վարձքը չեն տար,
այնպէս որ կամաց կամաց ծառաները

կակախին լրբանալ, դէմ խօսիլ, քարաստուր՝ կերթամ, և այլն ըսելը ՅԼ ասանկով գող ըլլալնուն պատճառ կրլլան. և մեծ յիմարութիւն է ասոնց հետ եթէ հեղութեամբ և խոնարհութեամբ վարվի չօղներնէ, կախով բարկութեամբ վարուիլը: Ասան որոյ, որովհետե կարօտ ևս ասոնք տունդ պահելու, միշտ մխարդ պէտք ևս ունենալ, որ ասոնք քու անհանդատութեանդ համար ասանրդ մէջ տուր ևս:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԳ.

Եթէ մարդկանց հետ ընկերութիւն
ընելու գիտութիւնը պիտանի է, ու-
րեմն պիտանի ալ է սովրելու մեր դը-
րացիներուն հետ վարուելու կերպը
գիտնալ, ու գիրենք ճանաչել. որուն
համար փուճ տեղը չէ ըսուած տաճ-
կին առակը, է՛վ աշմա քօմշու ալ:
Ինչպէս արդէն յիշեցի, իրենց վատու-
թիւնովը քու գերդաստանիդ աւելի
դժբաղդութեան պատճառ կըլլան,
քան թէ իրենց լառութիւնովը քեզի
օգուտ մը կըլլան. ու իմ հոս առ մասին
վրայ դրելուս նպատակը անոնց համար
է, որոնք իրենց զաւկընները կը պահեն
կղզուշանան իրենց թեւերուն տակը
ու կը հողան իրենց ծնողական գութով
իրենց վրայ խնամ տանելու. որով
իրենց բարերոյս, և առաքինի վար-
քերուն քաղցրութիւնովն ալ կըմայլին:

Աւրեմն ասոնք քու այսպիսի անդին վայելմանդ արդեւք չըլլալնուն համար, արթուն կ'աց, և տես թէ քու դրացիներդ ո՞վ են, որ քու գաւկըներդ իրենց հետ տեսութիւն կընեն կոր : Ասան զի եթէ ըսես որ փոխանակ այս զգուշութիւնը ընելուս, բոլորովին զիրենք կարգիլեմ դրացիներուն հետ տեսութիւն ընելու, կը սխալիսինչու որ պատուական դրացի մը ընկերութեանը կարօտ ես, ինչպէս ալ ասոնք քեզի, և մենք ամէնքնիս ալ կարօտ ենք մէկգմէկու օգնելու :

Եւ այս դրացնական բարեկամութեան առաքինութիւնը Աւրեւելքի մէջ մանաւանդ ազգիս մէջ շատ մեծ սեպւած է, որուն քաղցրութիւնը եւրոպացիք չզիտնալուփնին ազգերնէս իրենց հետևող ընտանիքներէն այս բարոյական արարողութիւնը և այս պիտանիքնողութիւնը վերցած ըլլալը կը պատմեն կոր, (Պօլիսէն եկողները), որ աս ես իրենց մեծ նախաափնք մը կը սեպեմ : Եւ զիտնան որ անոնք որ իրենց

դրացիներուն սով ըլլալուն փոյթ չը-
րին՝ յետոյ իրենց զաւկըներնուն սով-
րած՝ օրինակ առած վատութիւնները
տեսած ատեննին՝ խմացան իրենց ը-
րած սխալմունքը :

Աստ ըսենք որ պէտք եղաւ հեռու
տեղ մը կամ օտար աշխարք երթալդ .
որոնք թէ և կը ձգես քու կամ իրենց
ազգականներուն հողաբարձութեանը .
բայց այսպիսի առիթներու մէջ, կան
եզ մը առիթներ որ մինչև ազգական-
ներդ խմանան և օգնութեան հասնին,
բանը բանէն կանցնի, որ նաև դուն
քու տանդ մէջ եղած ատենդ անձնա-
կան կամ ընտանեացդ այնպիսի բա-
ներ կը պատահի, որ և ոչ հայրդ կամ
կինդ կանչելու ժամանակ կունենաս,
այլ միայն՝ ոտքդ դարնելով կամ պօ-
ռալովդ վրայի կամ վարի խաբ բնա-
կող դրացինդ կը հասնի քեզի :

Ահա տես դրացինիդ անգին օգնու-
թեան ժամանակը, որ դուն քաջ գիտես
քանիցս քեզի արդեօք պատահած ըլլա-
լը որ մայրդ կամ հայրդ, եղբայրդ քեզի

տեսութեան եկեր են, ու քու գլխէդ
անցած փորձանքէն զրացինիդ օգնու-
թեամբը անշնաս աղատութլոյդ պատ-
մութիւնը քեզմէ կը լսեն կոր: Աւ կամ
անոնք քու տունէդ հազիւ որ դացած
էին, այս ինչ փորձանքը պատահեցաւ
քեզի որ եթէ զրացինդ չըլլար, չը
վազեր քեզի, կամ իր որդին քեզի հա-
մար բժշկին չխրկեր, կամ զապիրիւ
կամ ինչ և իցէ օգնութիւն չսօռար,
ահա դժբաղդ պիտի ըլլայիր .

Աւրեմն մի ըսեր Պայեւանք կերկըն-
ցընէ կոր բանը, վասն զի փորձով կը
գրեմ. որն որ քեզի ալ օտար կամ
անկարելի անցքեր կամ հաղուադիւտ
պատահմունքներ չերեւնալու է:

Բայց պիտի ըսես որ փէք աղէկ ամ-
մա զրացիներնու երթալով, խարձ
ընելու պարտաւորութիւն կունենանք,
վասն զի խարձի կարօտ տեսութիւն
մըն է:

Բարի զրացի մը քեզի կուգայ, քու
տեսութեանդ համար, և ոչ խմելու:
Քու քաղցը ընտանեկցութիւնդ վայե-

լելու, չէ թէ քու քախիտը կամ հեղ-
վա սեօհպերիտը: Քու դերդաստանիդ
առաքինի վարօքը իրենինը քաջալե-
րելու, կամ իրեն ձեռքը ազգասէր հոգ-
ւով ճամբորդութեան և մարդկային
ընկերութեան նոր գիրքեր և այլն
ինկամ ըլլալով, որն որ իրիկուրնէ
իրիկուն կարդալովն իրենց ազգա-
սիրութիւնը ու իրենց մարդկային վար-
մունքներնուն կերպը կը սովորին կոր
կուզեն որ քեզի ալ սլատմեն, ու քու
բարեկիրթ զաւկըներէդ մէկին զա-
նոնք կարդալ տալու նկատմամբ եկած
են: Ասան որոյ ան քախըմ մը ու-
տելու, խմելու հագուստնին ցուցնե-
լու, կամ քու ինչ ընելդ ինտոր սպ-
րելդ իմանալու քախիտընի անպար-
կեշտ բամբասող զրացինէրը, որոնք
չեն նայիր իրենց հառաւմով, հեղարով
տարապով կեղիշի կիւզել ապրելնէն
եան, կուզեն ալ ձմեռտան գիշերին
երկայնութիւնը ստառածաւախ զրա-
ցին հրագովը անցունել. ասոնցմէ
հեռացիր: Ասմ անոնք որոնք քեզ

կամ եղբայրդ, զաւակդ տկար դըտ-
նելով, իրենց երկրորդ օրական աւուր-
չէքնին քրեֆերանս կամ դաշխուէն
հանելու համար քեզի կուգան, որոնք
եթէ իրենց լրրութեամբը քու աս-
տուածավախ զաւկըներդ թունաւորե-
լու չեն գար նէ :

Հռացիւր ասոնցմէ սիրելիս, հեռա-
ցիւր, և եթէ կարելի է նէ զիրենք
տեսնող պատուհաններդ ալ գոցէ
իրենց դէմ, կամ թէ միենոյն սանդու-
խէն ելնելու իջնալու կարօտ ես նէ,
իրենց միայն Աստուծոյ բարեւը տա-
լով առանց թշնամութեան հողի ունե-
նալու անցիւր զիրենք :

Բայց այն դրացիները որ հեռու են
յիշեալ վատութիւններէն, նայէ որ
օգնես իրենց, և պատուես զիրենք .
վասն զի աշխարքիս մէջ միտքէդ
չանցած պահանջմունքները կրնան
գալ զլուխդ, ուր քու աղգականէդ
աւելի ասոնք կրնան օգնել քեզի : Եւ
քաջ գիտցիւր որ ասոնցմէ տեսած մար-
դասիրութիւնդ դուն ինքիւրմէդ եղածի

պէս կը համարիս, կամ իբրև երկինքը
բնառած օգնութիւնդ երկրիս վրայդը-
սած քեզ կը սեպես :





Ըսի վերը որ ասերախոտութեան ձայնը լսելը ինչ բնութեան մարդ որ ըլլայ իրեն ծանր կուգայ . նոյնպէս անհաճելի զգացմունք կունենայ աշխատաւոր վաքսկեա մը՝ եթէ տեսնայ իր աշկերտին ասերախոտութիւնը . վասնորոյ ես հոս քեզի քանի մը բառ խօսիմ աս մասին վրայօք որնոր եթէ մտադրութեամբ կարդաս օգուտ կրնաս քաղել : Ստոյգ է որ երախտագիտութիւնը մարդէային առաքինութենէն մէկն է , ատոր համար ո՛վ որ քեզի բարեկամութիւն մը ըրաւ պարտական ես իրեն շնորհակալութիւն ցուցունելու , ինչ գործքով որ կրնաս իրեն ծառայել : Մանաւանդ ան որ աւելի հաճելին է , քեզի ըրած օգնութիւնը վայելելով զիմացընեա իրեն քու երախտագէտ ըլլալդ : Որպէս զի ինքն ալ իբրեւ իրեն պարարտ երկրի վրայ

ցանած սերման տըված հարիւրա-
պատիկ առատութիւնը տեսնելով, թէ
ուրախանայ և թէ քաջալերի ուրիշի
մ'ալ իր մարդասիրութիւնը ցուցու-
նելու, որուն այս քաղցր զգացմանց
ևս յետինս ալ մասնակից ըլլալիուզէի:

Բայց դուն ալ որչափ առատածեւ-
նութեամբ ստբարերարութիւնը իրեն
ըրիր նէ, նոյնչափ ալ քու մարդասի-
րութիւնդ ընդունողէ և ոչ փոշետեսակ
շնորհակալութիւն մը պիտի սպասեա-
որն որ (եթէ անմեղ սրտով ազխաու-
թենէ չէ նէ, շատերն ալ կան որ կը
քաշվին չեն համարձակիր անձամբ
զալքեզի ու իրենց շնորհակալութիւնը
բերնօք ընել կամ գրով իմացնել:)

Վասն զի եթէ ցուցուցիր իրենն սոսպա-
հանջմունքդ, զիտցիր որ կրնայ մինչև
անդամ արտասալու, ու մէյմ'ալ ուրի-
շի մը բարիք մը չընելու երդման քեզ
հասցընել: Վասնորոյ ըրէ բարեգոր-
ծութիւն մը միայն մարդասիրութեանդ
առաքինութիւնը կատարելու համար,
ու իր շահովը կամ քու ըրածէդ ըզ-

դացած ուրախութեամբդ ուրախանալու համար, և ոչ այլ ինչ հաշուելու թէ արդեօք ըրած օգնութիւնդ ընդունողին յարդի անցաւ թէ չէ: Ասոր համար ևս այս առաքինութեան գործադրութիւնը շատ վտանգաւոր բան սեպած եմ, բայց չեմ գիտեր դուն ասոր ինչ կըսես: Նոյնպէս եթէ ըսելու ըլլամ որ մէկուն կրթութիւն տալը ուրիշ ամենաերևելի բարեգործութիւններէն գերազանց չէ նէ ալ անոնցմէ վար ալ չըսեալիք:

Իրաւ է որ ծովի կամ ցամաքի վրայ մահուան ուրիշ վտանգներու մէջ եղող մը ազատելէն ուրիշ մեծ բարեգործութիւն չկրնար ըլլալ, բայց ևս մարդու մը կրթութիւն տալըդ, ասոր հետ համաձայն սեպելովս չեմ յուսար որ զիս նախատող գանձովիս: Վասն զի քեզ կրթութիւն տըվողն ևս զինքը քեզի կեանք տըվող կը սեպեմ. ինչու որ երբոր մէկը կրթութիւն և խոհեմութիւն չունի, իրեն կեանքը վտանգէն պահպանելու գիտութիւն ալ չունի:

Եթէ առանց խաղաղութեան չկրնար
ըլլալ, ուրեմն ուսումնս և կրթութիւնը
խաղաղ կեանքի հիմն է : Ասոր համար
կրնանք ըսել որ բնութիւնը չսլիտի
ուրանայ, իրեն կրթութիւն տալեր-
նիս ամենապիտոյ բան ըլլալը : Աւ-
րեմն անոնք որ ուսուցիչ, վարժապետ,
վարդապետ են, պետք են իրենց աշ-
կերաներնին ամեն զգուշութիւնով
պիտանի անձնական և քաղաքական
հոգեւոր և բարոյական զխտութիւնե-
րով սնուցանել. վասն զի սիրտերնուս
մէջ պահելու առաքինութեանց առ-
ջի տեղը բարոյականն է : Եւ որպէս զի
իրենց առած ուսմանը զխտութեամբ
զազափար մը ունենան, իրենց վար-
քերնուն, իրենց գործքերնուն, իրենց
խօսքերնուն և զբաժնեւրնուն աշկերա-
նեւրուն առջին զիրենք իբրև հայլի
կէցընելու են : Եւ ասանկ տղոց ծը-
նողքն ալ տեսնելով իրենց զաւկը-
նեւրնուն լուսաւորութիւն, կրթութիւն,
լե-
ցունելու են իրենց որդոցը ականջը
որ իրենց վարժապետնին յարդեն և

պատուեն , որ իրենց տուած կրթութիւնովը օրական հացերնին և կեանքերնին կը վայելեն կոր , կամ պիտի զանի գտնան նոյն ուսման ձեռօքը :

Ասան զի ամենադժուար արհեստներէն դժուար է կրթութիւն տալը , որուն համար ինչ որ վճարենք ուսուցչի մը քիչ է . այս կըսեմ որն որ եթէ իրաւի ուսուցիչ է , կիմանամ զանի . և ոչ թէ զանի որ միայն ահարկու ձայնով կամ գառաղանը շարտաշիւ վրայ զարնելով , բնակդ դիրքդ ինչո՞ւ չես կարգար ըսելով պօռապողները : Ասմ իրեն ապրուստը գտնալու համար , թէ և դիտուն է ալ նէ , մանկանց ապրուստմբութիւն , միւս դպրատուն եղողները կամ հաւատքէ եղողները խոր աչօք նայիլ կը սովբեցընէ և այլն : Չմտածէր որ ներկայ կամ ժամանակաւ զինքը իրեն ազգէն նախատուելուն կրնայ պատճառ ըլլալ :

Ասմ կան ալ որ իրենց աշակերտները ամենատղէտ կերպիւ սովբեցընելէն ետե , նաև աշակերտին ականջը

Հարանց վարքին ու Հրաշիցին կամ սուրբ Վիչենցիօսին պատմութեամբը կը լեցընեն . այս բոլորն ալ թէ կրընեղ ըլլան թէ չեղմէ սօխախիւ, զաւկընէրնիս ասպականող ըլլալնուն համար, կուզէի երկու ձեռօքս իրենց երկու ականջնին ձախ ու աջ որորելով լաւ մը քաշել, մինչև որ հասնի իրենց պակասութիւննին դոցելու երկայնութեան :

Հատտան ինծի սիրելիս, ես կըզրեմ ես զիսեմ իմ սրտիս ցաւը, յիշելով շատ մը աս Սատուծոյ շնորհացը կարօտ վարժապետներուն խեղճութիւնը որոնց հրամանին տակ երկայն ժամանակ դողալով անօգուտ ապրեցանք: Եւ մինչև այս օրերս ալ ասոնցմէ կան թերևս ազգիս մէջ, և ազգս ալ չտեսներ կար, չմտածեր կոր որ աս նոր օրերնիս, նոր տեսակ դժբաղդութեամբ դժբաղդ կըլլան զաւկընէրնիս:

Զունիմ մի իրաւունք հոս ազգիս ըրած սխալմունքը յիշելու կամ արեգական մի նայիր որ աչքդ չկուրնայ

կեղծ մտօք զիրենք յորդորողներուն
տղիտութիւնը որ միմիայն իրենց զը-
րըրտախը դարցընելու համար է :
Փոխանակ չըրտըղընա ասդին ան-
դին մէյմէկ ձիւմնագիտւմնէր հաստա-
տելու ազգը զրգուելու հանդգնելնուն՝
նախ ազգին կարողութեանը կացու-
թեանը համեմատ իր թէին տակը
լաւ , հաստատ , խոհեմ կանոնով թէ
և փոքրիկ դպրատուններու մէջ (որոնք
պակասէն ազգիս մէջ.) անոնք ծաղ-
կեցընեն , որ զոնէ բանը առաքինի
ազգասէր և ոչ անձնասէր կամ կեղ-
ծաւոր այլ գիտուն վարժապետները
մտնալու մընայ : Արոնց ձեռօքը ամսէ
ամիս զաւկըններնուս ուսման և կրթու-
թեան ասրբերութիւնը աչքոյնիս
տեսնալովնիս և ակտնջօք ալ լսելով-
նիս ուրախանանք և թէ ընկերնիս ալ
յորդորենք որ իր զաւակը կրթել տայ :

Եւ մասնաւոր միմիայն վարժապե-
տութեան համար տղայք կրթելու է
ու իրկելու է զիրենք իրենց լուսա-
ւորութեանը կարօտ մնացած տարա-

բազմ խումբերուն դժբազմ զաւակընե-
րը ուսուցանելու, բայց համարողու-
թեանս մէջ յիշած կանոնիս համեմատ,
որնոր տղէտի մըն ալ գիտցած բանն է:

Ինչ է աս, գլուխը քաշողը մեծ մեծ
դպրատուն բանալու կը համարձակի.
չեմ նախատեր այնչափ անոնք որ
աղգային բազմութիւն մը եղած տեղը
աղգին փողը առնելով թէ և իր
ֆրրրոտախին համար դպրատուն կը
բանայ: Որչափ զանոնք որ առանց
սխալութեան ծնողքներէն հե-
ռու ծանր ծախքի տակ, ինչ է լեզու
պիտի սովորի դիտութիւն պիտի սովորին
և այլն. ուրեմն Հայաստանի մէջ
կամ մէկ խօսքով ըսեմ. Բարիցէ հե-
ռու եղած դպրատունները ծովը նե-
տենք.....

Չըսեմ մի վախ, չկարգում մի սյր
աղգիս վրայ որ տղէտ սեպուած ասե-
նիս բարի վարքը և առաքինի դործ-
քը մեզ սխալութի կը հասցընէր, ու հի-
մայ մեզ լուսառորեալ սեպելով միայն
խօսողները կը սխալուենք և ոչ գոր-

ծողները, որոնք մեզ աւելի կը համոզեն քան թէ վերջինները :

Խենդը կամ գիտունը մեզի մնաս չտար, եթէ ոչ կէս խենդ կամ կէս գիտուն եղողը. վասն զի կատարեալ խենդը կը կապեա ու գիտունն ալ կը վայելեա, բայց խօսքը դորձքին, վարդապետութիւնը իր հաւատալուն յարմար չեղողը մեզ և մեր զաւկըները մնասելէն ետե ազգերնուս ալ նախատինք կը բերէ : Չկայ մարդ ազգին մէջ որ հարցընէ թէ վարժապետութեան վկայութիւնը ունի մի, այսինքն վարք և գիտութիւն . կամ սովրեցուցածը ինքը կը հաւատայ մի, կամ վարքին համաձայն է մի : Երեն սովրեցընելէն կամ կրթելէն տղայք խաղաղասէր անձինքներ կըլլան կօր, չէ նէ կըռւարար, վէճ կարող փիլիսոփա մի կըլլան կօր, վասն զի սովրեցընելը կը սրահանջէ փորձառութիւնը :

Եւ մենք պէտք ենք զխոնալ որ թէ և կարգով կանոնով դպրատուններ կամ վարժապետներ ունենալու ըլ-

լանք ներկայ մեր օրերը իրենց ուսմանը կամ կրթութեան վայելմունքը (դրեթէ) չենք կրնար տեսնել նէ ալ, մեզմէ ետքը եկողները անպատճառ վայելելու ըլլալնուն համար պէտք ենք այնպէս յօրինել և կարգադրել որ ազգերնիս քանի երթայ ծաղկի . չէ թէ ևս առաւել ապականի , և մեր գերեզմանն ալ զաւկըններնիս չհայհոյեն :

Տես աս պայրախ բացողնորէն կամ իրր թէ ազգս լուսաւորել ուղողներէն մէկը կելլայ ազգիս երեսի վրայ մընացած խումբերը լուսաւորելու համար կերթայ մի , չէ . վասն զի հոս ունեցած վայելումը , հոն չունենայ պիտի , ուրեմն կերենայ որ կամ անոնք իրեն ազգը չճանաչեր , կամ զանոնք ազգասէր հողուով չսիրեր . ուրեմն իրաւ է որ կըսեն . Սչքէն հեռու եղողը սիրտէն ալ հեռու է :

Զուրի մօտ եղող երկիրը , սիրելիս , ամէն մարդ կրնայ պարտիզական ըլլալ . պատկը Զուրէն հեռու տեղ մը

ստուգ հասցունողին չէ մի . կամ
առամ անոնք շատ կոպիտ կամ ար-
դէտ անշան մարդիկներ են , ո՞վ պի-
տի իրենց հոգնի , մինչև որ զիրենք
քիչ մը կանոնի բերեմ ես ալ պիտի
մեռնիմ . ըսողին ես առաւել պատիւ
չէ մի զինքը իր ազգին համար զո՞ն
ընելը : Աամ կը կարծէ թէ ան կոպիտ
տգէտներէն կամ անկիրթներէն ժա-
մանակաւ ազգին պարծանք անձինք-
ներ չկրնար ըլլար , չէնէ մի ասոնցմէ
մէկը ըստ պատահման վարժապետի
մը ձեռք իյնալով իրմէն քաջ կատա-
րեալ ուսեալ հայ մը չեղան :

Գուն ինչ կը կարծես կոր քեզ տես-
նենք ուր է ազգասէր հոգւոյդ ազգիս
պայծառութեանը ուղամ բաղձանքիդ
ասպարոյցը . բայց ես դոցեմ խօսակցու-
թեանս աս կողմը , վասն զի հոտդ կել-
լէ : Ես աչօքս տեսայ քու կոպիտ ու ան-
կիրթ սեպածներէդ որ քու գոնուած
էրկիրդ միայն լուսաւորութեան անու-
նով եղած շարժումը հեռուանց լսե-
լովնին , մէկը կուզէր սոսակուիլ որ

դուցէ գիտութիւն սովորեցընելու գաւաակ մը կունենայ: Միւսը հօրմէն մընայցած նետիճքը կսկսէր մաքրելու որ եթէ հայոց թագաւորութեանը համար պատերազմիլը հարկաւոր ըլլալու ըլլայ նէ՛ պատրաստ գանուի: Միւս մէկը ալ տուն տեղ պատրաստելու կը խորհրդակցէր որ լուսաւորեալ երկրէդ իրենց խրկելու ուսուցչիդ ասղօգուտ ձեռնարկութեանը նախապատրաստութիւն ըլլայ:

Ասոնք քու տղէտ և կոսլիտ սեպած ասղգայիններդ են որոնց սրտին մէջ ևս աւելի ասղգասիրութիւն գտայ քան թէ Յաւելուածին կամ Վերադարձին սրտին մէջ: Աս գիմացկուն պարզամիտներուն մէկուն գրացինին իր որդւոյդ հետ արեգական ճակատը ըրած ընկչպէրուքեամբք երկրին սաշեանէն պահանջողը և ասոհ սարաֆիս ամպարը լեցունելէն ետև աւելցուցած քանի մը դուրսըտիլը շարատուն եղող երկիրը կրթուելով նոյն որդւոյն այսօրվան հօրկանը եղած

մխիթարութենէն եղբայրնէրուն որդ-
ւոցը գրել, կարգալ, հաշուել, աշխար-
հագրութեան պատմութիւնովը բոլոր
աշխարք աչքերնուն առջին բերելուն
անհափ չէին գուցէ ուրախանար: Ար-
չափ կանոնաւոր ձայնաւորութեամբ
եկեղեցիին մէջ հրեշտակային երգե-
րով իրենց սիրտը նոր հայութեան
սէր մը պատճառելնուն համար, (ա-
ռանձ լուսաւորեալ Առընելին նոր
հայութեան զգուելի նուագարանացը
օգնութիւնը ունենալու): Արոնց աչ-
քերէն թափուած արտասունքներուն
մէյմէկ կաթիլը, աչքերնուն ջուրը
չորցած ոմանց աղգայիններուս աչքը
եթէ թափուելու ըլլար, իրենց կուրու-
թիւննին լուսաւորութեան փոխադրե-
լու պատճառ եղած ըլլար:

Բայց դուն ճշմարիտ աղգասէրս ջա-
ննս գիտնալու լաւ բանիրուն վար-
ժապեամբ, ու տնւր քու զաւակդ իրենն.
որ կրթէ իրեն պէս, ու մի խառնուիք
իրեն կրթութիւն սովրեցընելու ճամ-
բուն, վասն զի դուն կրթութիւն չու-

հենալուովդ, կամ սովրած չըլալովդ
կրթութիւն սովրեցունողին ճամբան
չես գիտեր :





Լսէ՛ հոս աս քանի մը խօսքս՝ դուն որ նեղութենէդ պարտաւորեալ ուրիշէ մը ինչ և իցէ փոխ առիր կամ առիր, դիտցիր որ աս գործողութեան ճամբան քեզ ընկերութեան մէջ պատուի կամ նախատանայ կրնայ հասցընել. ասոր համար կուզեմ որ նախ քաղաքավար ու մարդասէր ըլլաս : Մի կարծեր, որ իրեն ստակփոխ տալով զվինքը քեզի դերի առիր, կամ ինքը քեզմէ վար սեպելու իրաւունք ունեցար. վասըն զի աս իրեն բաւական խնայահոթիւն է, որ իրեն նեղութեան մէջ դանուիլը քեզի խմայուց : Տեսնեմ եթէ դուն իրեն տեղը ըլլայիր արդեօք կհամարձակէիր մի այսպիսի յանդրդնութեան մը, թէ և քեզ քաջալերէիր նէ ալ, ո՞ դիտէ ինչ ցաւ կզգայիր, չէ նէ շահով իրեն տուած փողիդ գումարին մէկ քառորդը, մէկէն ի մէկ

քեզի հարկաւոր ըլլալով իրմէն խընդ-
րել համարձակելու չյանդդնիլդ չը
սրատահեցնու մի : Բայց դուն ալ թէ
և մամոնայով փողը իրմէն առիր , ի
վերայ այսր ամենայնի պէտք ետ Յա-
մանակին իրեն փողը հատուցանել .
որով ոչ միայն քու պարտաւորութիւ-
նըդ կատարած կըլլաս , այլ և երկրորդ
անդամուան նորէն համարձակու-
թեամբ իրեն ներկայանալու վտա-
հութիւն կունենաս , նոյնպէս սրա-
ճառ ալ կըլլաս իրեն այսպիսի բարե-
գործութեան մէջ յարատեւելուն :

Այս լրտելովս մի կարծեր քեզեճի-
ներուն կամ ծանր մամոնայով ապրող-
ներուն վրայօք հոս կը խօսիմ , որոնց
պատմութեամբը չուզեցի գիրքս արա-
տել : Այլ Սատուծոյ շնորհացը զիրենք
ձգելով , ես կսկսիմ մարդկային վար-
մանց մէջ գտնուած զանազան առիթ-
ներուն վրայ մասնաւոր եղանակաւ
խօսելու , որոնց առաջինը թշնամեաց
հետ վարուելու կերպին վրայ խօսելը
յարաբերելով , իմ խրատս այս է :

Որ եթէ կը ջանաս գործողութեանդ մէջ վիճակիդ համեմատ պարկեշտ, նախատես, մարդասէր, հեղ և ուղիղ առանց կըրինճի, և առանց ուրիշին բերնի հայլին նախանձելու կերպով վարուիլ, ան ատենը թշնամի չես ունենար. և թէ ունենաս նէ ալ դուն աս պատճառ բնութեան տէր ըլլալովդ, եղած թշնամութիւնը իբրև աշխարհիս դժբաղդութիւնը պէտք ես սեպել: Որն որ եթէ խոհեմութեամբ չկրցար յաղթել, ձգէ՛ զինքը Սատուծոյ նախախնամութեանը. վասն զի բարկութեամբ կամ մէկէն առանց լաւ և հանդարտ մտածողութեան եղած ձեռնարկութեան մը վախճանը առելի վնասակար եղաւ, քան թէ բուն իսկ դժբաղդութիւն սեպուած պատահմունքը:

Իրաւ է որ համբերութիւնը լեղի է, բայց իր պտուղը շատ քաղցր է. չենք կրնար ըսել որ աշխարհիս վրայամէն մարդու սիրելի կրնանք ըլլալ, բայց աս՝ մեր կարողութեանը մէջ է, որ

զմեզ այնպէս պահէնք որ յարդուինք
եթէ տակերպով չէնէ ուրիշ կերպով մը :

Թշնամութեան տեղի չտալու ճամ-
բան հասարակօրէն ամէն խօսուածը
չլսելու ամէն տեսնուածը չտեսնելն
է . տես դուն ալ երբեմն երբեմն , խօ-
սած բաներուդ վրայ կը զարմանաս
կոր . ինտնր եղաւ որ այնպիսի բան
մը խօսեցար . կամ կը ցաւիս կոր որ
ինչո՞ւ դանի ըսիր , որ կրնայիր դանի
չխօսիլ . ուրեմն մի բարկանար քու
վրայ խօսողներուն : Ասան զի եթէ
առաքինի մարդ ըլլաս կը դանան բան
մը քեզի նախատինք ըլլալու , եթէ
լուս կենաս քեզ խօսել կուտան , եթէ
բողոքովին իրենցմէ հեռանալու ալ
ըլլաս , ես առաւել իրենց առիթ կու-
տաս , որ քու վրայ ա՛նփոյթ մտօք ,
և քանի մը բան ալ աւելցընելով ու-
ղածնին խօսին , մինչև անդամ քու
նորէն իրենց ետ երթալդ գուցէ ալ
կը պատճառեն :

Ասան որոյ ամենէն աւելի գործա-
ծելու գեղը , իրենց տկարութեանը

տալ ու չխօսիլ ստո ամէն բանը որ
կուղէիր խօսիլ իրենց վրայ, այլ համ-
բերութեամբ, ու բոլորովին ցուրտ,
անտարբեր, հանդարտ կենալ:

Եւ ըսինք թէ մէկուն հետ թշնամի
եղար, որն որ կը խօսի քու վրայ, եթէ
անհամբերութեամբդ զանի բորբո-
քեցընես, գիտցիր որ մէկուն տեղ շու-
տով մը տասն կըլլան: Ասան գիճըշ-
մարիտ խօսող մը որչափ ալ պօռայ,
իրեն ցաւակից եղող ընկեր մը շատ
դժուարութեամբ դանուեցաւ. և ճա-
խորդութեանդ ատենը քեզ չճանչցող
և դուն զիրենք չճանչցած թշնամիներ
ստանալու վտանգէն քեզ պաշտպա-
նած կըլլաս եթէ համբերես նէ:

Եթէ քնացած թշնամութեան ցաւը
համբերութեամբդ չարթնցընես նէ,
վերքերուդ վրայ իբրև մեհրեմ քսող
կը սեպուիս: Ստոր համար սաքը կօր-
դակիև երկայնութենէն դուրս չհա-
նելով շախաւորութեամբ ասլորդը,
գրեթէ վստահացուցած կըլլայ իր
կեանքը խաղաղութեամբ անցունելու:

Եւ լաւ գիտցիր որ հիմակուան ժամանակս շատ և շատ քիչերը կան, որ իրենց ընկերներուն լաւութիւնը տեսնել կուզեն, մանաւանդ մեր ազգին մէջ, որ բոլորովին հեռացած են աս առաքինութենէն:

Այլ կուզեն որ վատ համբաւ ունենայ, տունը քանդուի, դայ ինծի մեղայ ըսէ կամ ինքը քանդուելով ևս օտրաւն ելլամ, կարծեմ ասոնք իզմէ լաւ օրինակներով և աչօքդ կը տեսնես կոր, և իրենց պատմութիւնն ալ կը կարդաս կոր. ուրեմն ասոր լաւը հանդարտ եղանակաւ դուն ասորէ, ու թող իրենք այնչափ խօսին մինչև որ հոգնին:

Վասն զի ինչո՞ւ ան ասի ինծի ըստ ան ալ ինչո՞ւ այս ինծի ըստին վերջը չգալը ժամանակուան խաղաղասէր անունով կրկնող կառավարներուն անօրէնութիւնը, անխոհեմութիւնը, նաև գեղջուկ գեղացիները իմացան, բայց դեռ ևս ոմանք իբրև ուսեալ անձինքները սլիտի իմանան. (Բայց ևս

մէկ կողմանէ ակամայ կամօք իրենց
աս վարմունքներուն վրայ ուրախ
կըլլայի, եթէ չափազանց չըլլալէն
ետե խոհեմութեամբ ճշմարտութիւնը
խնայուցած ըլլային :

Վասն զի կուզեմ որ իմ ազգս իմա-
նայ ուր ամէն վայլած բանը ոսկի չէ,
նախ թող դնէ զանի բովի մէջ որ-
պէս զի իմանայ ինչ ըլլալը : Ոչ ինչ
արժողութեամբ եղած ոսկին չես խառ-
ներ կորքու ոսկիիդ մէջը մինչև մե-
նեկեկովդ չփորձես նէ . ուրեմն ինտոր
կը խառնես զիւրքը առանց փորձելու
անմեղներուն մէջ, որոնց ստանալու
վնասը ծանր է և յաւիտենական :

Բայց զիցուք թէ հացդ ձեռքէդ առին
կամ առնել ուղեցին . ինչպէս ըսեր
եմ ձեռքէդ եկած խոհեմութիւնը գոր-
ծածելէդ ետե, յուսն առ Աստուած,
վասն զի չար մարդու հետ զլուխ ել-
լալը դժուար է, մանաւանդ առ դարը
որ իրենց ծառայութեանը համար ե-
կած է :

Այս ստորդ է, որ թշնամութիւնը ըստ

մեծի մասին կատեղծուի հոն, կը բնա-
նակի անոր վրայ, որ անկիրթ է լեզ-
ւովը, անկիրթ ալ է իր դործողութեամ-
բը, կամ չար է բնութեամբ, և չունի
բարի անձի մը յարդութիւնը, կամ
իրեն բերանը թոյլ է, և առանց մը-
տածելու խօսող է, չմտածելը որ ըսա-
ծը կրնայ այս ինչ անձին ականջը
քանի մը խօսք ալ աւելցընելով հաս-
նիլ, որով կը պատճառէ իրեն թշնա-
մի ըլլալը:

Ձեռ տեսներ կոր որ երկու հոգի
ի ներքուստ թշնամի են բայց մէկըլը-
մէկ տեսած ատեննին չեն գիտեր
ինչ կերպ քաղցր բառերով խօսին
կամ հրաւերմունքներ ընեն: Բայց
ասոնցմէ անոնք որ չզգուշացան զի-
րենք և անիրոյթ կեցած կեղծաւոր վար-
քերնէն ետ չկենալովն ու իրենց ա-
պաւինամ ամենահաւատարիմ ընկեր-
նուն իրենց ներքին դադանիքը յայտ-
նելովն որ մինչև անգամ մէկըմէկ
եզբայրական սիրով սիրելու եզբայր-
ներնուն ետէն մորտ կանչելով չա-

բութիւններ զբող աստուածաբան և քարոզիչ աւետարանին Քրիստոսի սեպուած անձինքները այսօր մէջտեղ ելաւ իրենց Նսկարիովասայի Յուդային ընկերը ըլլալնին: Աւրեմն ասկից կերենայ որ, լեզուն թէ և փոքր ինչ անդամ մը բայց ունի կարողութիւն մեծ թշնամութիւնները արդիւլէլու ինչպէս խոհեմութեամբ ալ դալու չարիքը սանձելու:

Չոր օրինակ լսեցիր բան մը քու վրայ, որ թէ անհաճելի, և թէ իրաւի բարկանալու բան է ու չես կրնար կոր քեզ բռնել, բայց դուն լսածդ լաւ մը մասածէ քննէ հանդարտութեամբ, վասն զի քեզի աս բանը ըսողը թէ և քու ճշմարիտ բարեկամդ է, և առաքինի անձ մը է, բայց կարելի է որ այնպէս կամ անչափ վատութեամբ ըսուած չըլլայ, ինչպէս դուն խմայար, կամ կը կարծես կոր կամ թէ և ըսած է ալ ինքն ալ անմիջապէս կրնայ զղջալ կամ զղջացած ըլլալ: Ասան որոյ ինչպէս դուն ալ դիտես, այսպիսի սլա-

տահմունքներ շատ մը ըլլալուն համար, առանց մէկէն ի մէկ բռնկելու՝ խոհեմութեամբ վարուելով շատ թըշնամութիւններ խափանուեցան : Տես իսկապէս եղած թշնամութիւնը, համբերութեամբ պէտք եղած զգուշութիւնները չգործածելու համար քաշած նեղութիւններս ստիպեցին զի՞ որ փորձառութեամբ քեզի գրեմ աս մասին վրայօքը :

Ձեզմը մի որ այս զգուշութիւնները չընելնուն համար փուճ տեղը մէկըզմէկու թշնամի եղան. այրը կնկանէն, որդին հօրմէն, եղբայրը եղբայրէն և այլն դատուեցան : Բայց՛ես չեմ այնչափ դարմանար մէկը միւսին հետ ինչ և իցէ պարագայիւք թշնամի ըլլալնուն, որչափ երրորդ անձին. որ աս երկուքին թշնամութեանը մէջ կը մտնայ, իբր թէ հաշտեցընէ պիտի զիրենք և չգիտեր ճամբան. որ ինքն ալ թշնամի ըլլալէն կամ զիրենք ևս առաւել մէկըզմէկու թշնամի ընելէն ուրիշ բան չշահիր : Կամ հետա-

քրքրութեան հոգևով կը մտնայ մէջեր-
նին՝ որպէս զի իմանայ իրենց ինչ ըլ-
լալը . և պատահած է որ այս երորդը
պատճառ եղած է անոնց յաւիտեան
անհաշտ մնալնուն : Կամ ինքը մէ-
ջերնին մտնալով քիչ չափ մը խաբարիչ
ընելը տեսեր ենք : Սյուշափ աս մա-
սին վրայ խօսելովս բաւականանա-
լէզ վերջը , պիտանի կը համարիմ հի-
ւանդաց վրայ համառօտիւ քանի մը
խօսք անցնելու :

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ.

Թէպէտև բնութիւնը մեզ կը սովորեցընէ, որ հիւանդաց վրայ հոգ տանինք. բայց մասնաւոր իմ այս բանիս վրայ զրելուս պատճառն այն է, որ այս մարդասէր ծառայութիւնը գիտութիւնը ընելով, կարողանան անկից նաև մեծ պտուղ ստանալ, և հիւանդն ալ առաքինի կերպով մխիթարել:

Նախ և առաջ ամենուս դիտցած բանն է, որ մարդս այս ամէն քաշած աշխարհային վիշտերուն վրայ հիւանդութեան ցաւը, վիշտն ալ պիտի քաշէ. և որ աւելին է՝ երբեմն ալ չենք կրնար իրեն օգնել, թէպէտ մեր ամենէն սիրելի պսակեալնիս ալ ըլլայ. և երբեմն ալ մինչև անգամ քովը երթալու համարձակութիւն չենք ունենար, և մեզի ալ եղած արգելքը՝ խոհեմութիւն կը սեպենք, որպէս

զի մեզի ալ անճնական մէկ վնաս մը չգայ :

Ինչպէս պիտի կարդաս ճամբորդութեանս մէջ, իմ եղբօրս տեսութիւնը ինծի արդիւութիւնը, աս վտանգը չունէր նէ ալ՝ բարի կրօնաւորութեան վատ կանոնէն էր, որ աս բարբարոս զըրկումը մեծ ցաւ մը կուտայ մարդուս :

Ուստի երբեմն տեսութիւնը չարդիւուած հիւանդի մը հիւանդութիւնը որչափ ալ անբժշկելի եղած ալ ըլլալու ըլլայ՝ եթէ երթաս իրեն ու բառ մը խօսելու ըլլաս, թէ՛ իրեն մխիթարութիւն եղած կըլլայ և թէ՛ քեզի, որ զինքը մէյմըն ալ տեսնելու արժանացար : Բայց երբեմն կը սլատահի որ մասնաւորապէս իր հիւանդութեանը տեսակէն ամէն զինքը տեսնելուց Ժամանակի քեզ չեն թողուր, ասոր սրդողելու չէ : Կամ թէ ինքը հրամայեց որ իրեն չերևնաս որ դուն լաւ մարդ ես և իրեն բարեկամը և ինքն ալ քեզի թշնամութիւն մը չունի : Որովհետեւ վարմունքդ կամ ինչ և իցէ

կերպող կամ զինքը տեսնելու պատճառը իրեն հիւանդութեան ատենուան համար չէ . ատոր համար չպիտի դրժւարող գայ, կամ յետոյ իրեն հետ ունեցած բարեկամութիւնդ չպիտի կտրես:

Ուստի երբոր հիւանդի մը տեսութեան կերթաս, մի խօսիր իրեն հետ ան բաներուն վրայ որ կը խօսուին ողջ և առողջ մարդու մը առջին . վասըն զի ինքը հիւանդ ըլլալով՝ իրեն գրգռում մը տուած կըլլաս, ու սրտին ալ անհանդարտութիւն մը: Նոյնպէս ուտելու խմելու վրայ ամենեին ոչ խօսէ իրեն և ոչ ալ զինքը յորդորէ, ու մի ըսեր թէ ինչ գիտէ բժիշկը, ես ալ այս հիւանդութիւնը ունէի, բայց այս բանը կերայ, ու խմեցի: Սա ըսելով գիտեմ սիրտդ բարի է, բայց իրեն հիւանդութեանը ծանրութեանը պատճառ կրնաս ըլլալ, ինչպէս եղողներէն շատ մը տեսար, լսեցիր:

Պատմեցին ինծի Քերմանիայ օրինակ առնելու մասալ մը, որ կօշկակարին մէկը տեսողի մը հիւանդութե-

նէն շատ նեղութիւն քաշելէն ետե,
բժշկին իրեն տուած դեղերը գործա-
ծելէն հոգնած ըլլալով, օր մը իր կըն-
կանը առջի օրվան խոզի միտով եփած
թթուած շողգամը՝ ամենայն ախոր-
ժակով՝ իրեն կնկանը տունը չեղած ա-
տենը՝ եկող անօթի բարեկամին խոր-
հրդակցութեամբը ուտելէն վերջը՝
կազատի հիւանդութենէն: Իր բժիշ-
կը եկած ատենը զարմանալով նորա-
դիւտ դեղին զօրութեանը, կը նշա-
նակէ զանի իր օրական տեսրակին
մէջ: Ժամանակէ մը ետե Սպանիոյ
թագաւորին աղջիկը նոյն ջերմ հի-
ւանդութենէն քաշած նեղութեանը
օգուտ մը չգտնալով, կը հրատարա-
կեն լրագիրով զինքը բժշկողին ստա-
նալու սպարդեր:

Այս բժիշկը վաղելով կը ներկայա-
նայ իրեն խոստանալով որ՝ եթէ զին-
քը լսէ և ընդունի իրեն խրատը, երկ-
րորդ օրը կազատի իր հիւանդութե-
նէն: Եւ ասանկ հիւանդը կօշկարին
կերած կերակուրը ուտելն ու մեռ-

նելը մէկ ըլլալը բժիշկը տեսնելուն պէս, նոյն կօշկակարին առողջանալը յիշատակած թերթին տակը կը դրէ. Լաւ է աս կերակուրը ջերմ հիւանդութեան, բայց կօշկակարներու համար և ոչ թէ քրքրեճճէսի մը :

Քեղջուկ օրինակէս աս իմացիր որ, մի պարտաւորեր հիւանդ մը որ քու կամ ուրիշի մը առողջացած դեղը դորձածէ . վասն զի կըլլայ որ արիւնը արիւնին չհամաձայնելով, մնաս մը դայ իրեն : Նոյնպէս ալ մի տար իրեն բժիշկներու փոփոխութեան խրատը :

Քու պարտքդ է զինքը մխիթարել, ու իրեն պէտք եղած բանը որ քու կարողութիւնդ կը բաւէ՝ իրեն ընելէն ուրիշ վտանգաւոր բաներու խառնըւիլդ անխոհեմութիւն ըլլալը իմանալովդ, հոս ուրիշ հիւանդութեան մը վրայ պիտի խօսիմ, ու կուզեմ որ լաւ մը միտք դնես :

Կան մարդիկ որ խելքով հիւանդ են. ասոնց հետ փոխանակ թեթևամտութեամբ իրենց վրայ ծիծաղելու, միշտ

զիրենք յորդորելու է, ու այնպէս իրենց հետ վարուելու է իբր թէ խելքի սակսութիւն մը չունին: Բայց այս ըսելովս չէ թէ միշտ իրենց իրաւունք տալդ ըսել կուզեմ, կամ ըրած կամ ընելու բաներնին թողուլ որ կատարեն. այլ քաջ ու խոհեմ մտածմունքով ու վարմունքով իրենց գանգառնին հանգարտ սրտով լսել, ու իրենց մթութիւն ու թմրութիւն տուած պարագայները ուրախութեամբ կամ ազատ կերպով իրենց հետ պտըտելով զբօսնըլով վարատել տալու է: Եւ երբէք իրենց կամքը մէկէն չընելու է, կամ զիրենք անկէց մէկէն հրաժարելու չէ, երբէք չսլիտի իրենց կարծեացը դէմ խօսուի կամ մէկէն սխալ ըլլալը ըսուի, այլ չափով վարուելու է իրենց հետ:

Նոյնպէս և ոչ ալ երկինքին վրայ իրենց հետ պտըտելու է. և թէ իրենցմէ մէկուն մտքին մէջ ունեցած տրկարութիւնը մէկէն ի մէկ խլելու ջանաս, ևս առաւել կը վատնայ: Այլ

եթէ անգամ մը իրեն իրաւունք տասնէ, հինգ անգամ ալ զանազան կերպ խօսուածքով, խոհեմութեամբ¹, քաղցրութեամբ զանի լսելով իր մըտքէն հանել տալու ջանալու ես:

Վասնզի զիտեմ անցինքներ որոնք այսպիսի տկարութիւն ամենեւին չունէին, բայց իրենց միտքը դրած նկատմունքներուն հասնելու համար բըռնած ճամբանին միւսներուն յայտնի չլլալով, իրենց անկլթութեամբը և անխոհեմ վարքերնովն ասոնք իրաւցունէ խենդ ըրին:

Ուստի այս կամ միւսը որ թէ և հողւոյ տկարութենէն կուգայ, բայց Տիշտ քաջալերութեամբ, մխիթարութեամբ յոյսը իրենց սիրտը թափանցելու կերպով իրենց հետ վարուելու է: Չէ թէ առաւ ան խենդ է ըսելով, զինքը անարդեւ, կամ արհեստին, շահին արդեւք ըլլալ, մանաւանդ թէ աւելի հողաբարձութեամբ իրեն շահեցունելու է, որ կարողանայ քիչ մը աւելի գոհութեամբ օրական հացը ուտել:

Կամ ասոնցմէ մէկը որ օտարական
ըլլալով կուդայ քեզի ու անմեղ և ան-
վնաս եղանակաւ դուռդ կը չաշէ, մի
գոցեր դուռդ մէկէն ի մէկ իրեն երե-
սին : Եթէ կամեցար քիչ շատ տալու,
նայէ որ բարի սրտով և քաջցր եղա-
նակաւ իրեն հետ վարուիս . վասն զի
ըսին որ, հեղ խօսքը յիմար մը կրնայ
իր տկարութենէն առողջացնել :

Շատ ատեն շատ ստիժներու մէջ
մէկ խոհեմ քաղցր խօսք մը իրենց սիր-
տը թափանցելով աւելի կօղնէ, քան
թէ առատաձեռնութեամբ իրենց և .
դած պարզ և մը : Ձեռ կրնար ըսել որ
այս վիճակին մէջ վաղը դուն ալ իյ-
նալդ չկրնար ըլլալ . ատոր համար եր-
բէք իրեն հետ խօսած ատենդ, մի
երկար քննութեան մտներ իրեն հետ,
թէ արդեօք այս պակասութեան պատ-
ճառը ինք է մի՞ չէ նէ ուրիշ մը իրեն
պատճառ եղած է . վասն զի աշխար-
քիս վրայ շատ քիչ մարդիկ կան որ
իրենց եկած ճախորդութեան պատ-
ճառը իրենք չեն :

Բայց եթէ չես ուզեր այսպիսի մը
օգնել, գոնէ ծառայիդ ձեռօքը կամ
անձամբ զինքը մի անարդեր, ան-
կրթութեամբ զինքը մի վաճառեր, մի
յանդիմաներ, այլ քաղցր կերպիւ զին-
քը եղածին չափ, (եթէ ոչ ուզածին
չափ) գոհ ընելով մխիթարէ. քանզի
որչափ և աղքատ ալ ըլլաս, իրմէն
աղքատ չես կրնար քեզ սեպել: Վա-
սըն զի գոնէ խելքդ գլուխդ է, որով
մէկուն հետ խելօք կրնաս խօսիլ, ու
մեկնել իրեն հանդարտութեամբ քու
վիշտդ: Եւ քեզի հետ տասը հոգի տես-
նուիլ ուզեն նէ ալ, տեսնենք մէջեր-
նէն մէկը իրեն հետ խօսելը կուզէ մի.
խեղճը ոչ աս ունի, ոչ ան. ուրեմն
եթէ չես կրնար զինքը խեղճութենէն
ազատել, գոնէ իրեն հետ մարդասէր
վարմունքով վարուէ:

ԳԼՈՒԽ ԵՐԵՒՏԱՍԱՆԵՐՈՐԴ.

Թէ և ունիմ կարճառօտիւ զանազան
գտնուելու առիթներուդ մէջ ընելու
զգուշութիւններուդ վրայ խօսելու
բաներ, բայց առաջի պիտանին սեպե-
ցի ան աղղիս մէջ յաճախակի պատա-
հած ազգակործան սովորութիւնը, որ
կը նային մէկզմէկ գետինը զարնել:
Ի՞նչ կանցնի արդեօք ձեռքդ, ս'վ գուն
ողորմելի արարածդ, զարնելով գե-
տինը ան կեդանի ծառ եղբայրդ, որն
որ քիչ շատ՝ օր տեսած. է որով ըն-
տանեացը գետնայատակ ՚ըլլալուն
պատճառ եղար, որուն ձեռքը կամ
պատճառովը ս'վ գիտէ, ինչ բարիք-
ներ պիտի վայելէին անոնք, որ իրեն
թևերուն տակը պատասպարուած էին :

Կիրքդ կատարեցիր, այնպէս չէ մի,
ան չար կամքդ եկաւ տեղը գտաւ, էյ
ինչ հասաւ ձեռքդ, մտածէ մէյ մը

ձեռք հասուցած նկատումդ ձեռքդ մը-
նալուն ապահով ես մի: Ձեռ գիտեր
մի որ պիտի ձգես, երթաս, ինչպէս
ձգեց եղբայրդ, և հայրդ. հոն ուր մի-
այն յաւիտեանականութիւնը կը տիրէ
և ոչ այլ ինչ: Ի՞նչ է այս կուրութիւնը
որով հոգիդ և մարմինդ վտանդի մէջ
կը ձգես կոր. մտածէ՛ ինչ էիր և ինչ
եղար, ինչ ալ պիտի ըլլաս:

Եթէ մեծատուն ես պիտի թողուս,
եթէ աղքատ ես, պիտի թողուս աշ-
խարքդ, սաքու վրադ իշխող աշխար-
քըդ՝, որուն քեզիս տակ գերի ես
եղեր:

Արթնցիր ուրեմն ու ինքնիրենիդ
եկուր, հեռացուր քեզմէ սա կիրքա-
շահ վարմունքով քախշմ մը անխղճ.
մըտանք գործքերով հարատացած՝ լոյս
հոգիներնուն աչքը կուրացընողնե-
րուն ունայն յորդորանքը: Ու հարե-
ւանցի մտօք զոնէ անգամ մը աչքէդ
անցուր ճամբորդութեանս մէջ՝ ըրած
պատմութիւններս որ չեն ոմանց փորը
կուշտ, անկողինը պատրաստ, զդեռ:

տը կունակը Ամերիգայի աթոռէն զին-
քը օրօրել տալով պօղ պօղ խօսողներ-
րուն պէս: Կամ հայելիի նման ծովին
հանդարտութեանը ատենը զիրենք
նաւուղիդ ընողներուն պէս չեմ խօսիր
որ ատոր համար քեզի ալ չաղղեր ի-
րենց ըսածը: Նոյնպէս ոչ աստիճանի
հասնելու բաղձանք ունիմ, և ոչ ալ
ունեցած աստիճանս ձեռքէս առնուե-
լուն վախ մը ունիմ. որով այսպիսի-
ներուն թշնամութիւնը կամ վրէժ-
խընդրութիւնը ունենամ: Տայց ես կը-
սեմ որ թէ և երկինքը ելլելու ըլլա-
նէ ալ քու առ վարքովդ՝ ունեցած նա-
խատինքդ ալ քեզի հետ մէկտեղ կել-
լէ. վասն զի աջ երեսդ ապտակ զար-
նողին ձախը ցուցնելու աստուածային
հրամանին դէմ կընես կոր, և ընելու
կը վախնաս կոր:

Աղքատ ծնայ, աղքատ մեծցայ, աղ-
քատ ալ պիտի մեռնիմ. արդէն գրած
եմ, որ խաւտիֆէ շիշքեկերու մէջ
չեմ օրօրուած, ոչ ալ դայեակներուն
զիրկը մեծցած, ոչ գիտուն եմ, և ոչ

ազգիին մէջ մարդ սեպուելու անձ մըն
եմ և ոչ ալ կսպասեմ կամ կը խնդրեմ
ազգիա մէջ սրա մը անցնելու : Այլ
գոհութեամբ ապրող աստուածավախ
իր քրտամբը օրական հացը վայելող
հանափի մը դաւակ ըլլալովս, կը ճա-
նաչեմ իմ հատորս, և հոգեւոյս հօր-
կանս օրական գտած հացին կերպովը
ապրած ատենս, կերած աշխարքիս
քէքմէն զգաստացեալ սկսայ զինքը
քննել, ու իմացայ որ ունայն է : Ա-
տոր համար քեզի կը զրեմ, թէ քանի
որ այս վառքի և պատուի հասնելու
ետեմէն ես, չես կրնար իմանալ աղքա-
տաց վիճակը, մանաւանդ ան որ մու-
րանալու կամչնայ . ատոր կարօտու-
թեանը արեւանը կաթիլները ներ-
քուստ սրտին վրայ թափուելունցաւը
չես կրնար զգալ : Նոյնպէս գիշերուան
անկողինին մէջ ստամոքսին տկարու-
թենէն զակին տալու բաւական կաթ
չունեցողին, կամ իրեն տանը քիչրան
տալու համար ունեցածն ալ ծախած,
տարակոյս հոգւոյն արտասուօքը ան-

կողինը թրջողին ցաւը չես կրնար
իմանալ :

Կամ որն որ բարեկենդան կուգայ
պատճառով մը կը խարէ զաւկըները.
կազանդ կուգայ, յոյսով մը կը յորդո-
րէ զաւկըները. զատիկ կուգայ քանի
մը կարմիր հակիթով կը մխիթարէ
որգիքը. որոնց անմեղութեամբ ունե-
ցած գոհութենէն զրգուեալ, ունեցած
ուրախութիւններուն վրայ ծածուկ
կերպիւ առ Աստուած հառաչելով այր
և կին երեսնէն վար թափուած ջերմ
արտասուքնին կուղէի, որ տեսանելի
և զգալի ըլլար: Անոր որ փոխանակ
հոգնած էսնաճիճ զաւկըներուն հայ-
պահասարչութեան բոյն Կուրնելը
պաշտպանելուն տեղ (վերոյիշեալ վի-
ճակի մէջ եղողներուն կամ մօտիկցող-
ներուն չկրնար արգելք մը հնարել
ալ նէ) գոնէ զալու ըլլալուները ար-
գիլելու ճամբայ մը գտնար:

Ասոր համար պէտք էր Առաստուրջայ
դահին լուսատուութեանը արգելք
եղողներուն օգնութեանցը ղինքը կա-

րող ցուցընելուն գործածելու էր զանոնք, աշակերտելու էր զանոնք, որ Աստուծոյ տուած երգումսին չուրանալէն, կամ մանկըտին չգայթակղելէն վերջը, իր սուրբ պարտաւորութեանը լոյս և ազգին պայծառութեան ալ հաւատարիմ անձինք են: Որպէս զի ժամանակաւ « ես չեմ դուրս ելլար այս իմ մաշիքեանէս է » ին կռիւը չըլլար, և ոչ ալ ինձի սեպհականուած վիճակին « կրկրը » նորոգվեր ազգին մէջ:

Ան և դուն ինչ աստիճանի անձն որ ես նէ՛ դիր գտակո մէկդի ու մտածէ որ ասոնք ալ քու ժողովուրդդ, կամ եղբարքդ են, ասոնք ալ ծնան և պիտի մեռնին քեզի պէս. դուն իրենց վիճակին մէջ ըլլայիր նէ, ինչ կուզէիր որ ընէին քեզի: Որ ասոնք նոյն բաղձանքիդ քառորդին փշրանքներն վայելելու գոհ են, որոնց թիւը օրէ օր կը շատնան կոր, և պիտի շատնայ, քանի որ դուն, և քեզիպէսները իրենց օգնութեանը դուռերը իրենց դէմ գո-

ցեր են, որ ասոնք ոչ փող կուզեն, և ոչ ալ եկամուտ, այլ որդւոցը ուսում և իրենց աշխատելուինն օրական հացերնին գանալու արհեստներ:

Եթէ Աստուած չընէ, քանի մը նոր ելած փիլիսոփաներուն խօսքերնուն, վարքերնուն հաւատարմովդ չես հաւատար նէ յաւիտենականութեան վայելմունքին, դոնէ այսպիսի աստուածավախ ընտանեաց օրական հացերնին գանելնուն օգնելովդ, ստանալու սրտի ուրախութիւնդ չես կրնար ուրանար ուրեմն . . . :

Ահա մեռաւ քու թշնամի սարսփ հարուստ բարեկամդ, ահա թաղեցին իրեն ծառայած և հպատակ եղած թագաւորդ, նոյն հարուստ պատանքովդուն ալ պիտի թաղուիս, ինչ կը խօսին կոր կամ կը խօսիս կոր նէ իրենց ետեէն, նոյնը պիտի խօսին. ալ քեզմէ պատէ հիմայ որը կուզես որ խօսին:

Քաջ գիտես թէ ան որ փող չունի, վախկոտ կըլլայ բանի մը ձեռք զարնելու՝ մանաւանդ եթէ սարսփի ալ տէր

է նէ կամ պարտքէ վախցող է . կը վախնայ քեզի դալու, որ դուն զինքը վախտող հարուստ քահանայ և աշխարհականներէն չես, (բայց տանդ մէջը ունեցածներուդ վարմունքէն դիտութեամբդ կամ անդիտութեամբդ) կամ մինչև որ քեզ հաւատարմացունէ իր ունեցած վիճակին ցաւը, բանը բանէն կանցնի : Մանաւանդ երբոր մէկ մեծ յուսով ապաւինած անձի մը կերթայ, ու անօգուտ կելլէ . ատոր համար ինչ ըրէ ըրէ, եթէ չես կրնար նէ ալ իրեն օգնել՝ այսպիսիներէն մէկը գետինը մի՛ զարներ որ իր եղովը կը խորովի կոր :

Եթէ քու վատքդ և պատիւդ քեզ արժանի չեն տեսներ այսպիսոյ մը հետ տեսութիւն ընելու, կամ որովհետև կան այնպիսիներէն որ քեզ անհանդարտ կընեն . զատէ՛ վերինները ասկից ու իրեն չդիտնալովը և ձախ ձեռքդ ալ չիմանալովը աջ ձեռքովդ իրեն օգնէ . մի՛ վախնար, չսկիտի կորսուի քու արդիւնքդ, եթէ կը հաւատաս

որ Որդին Աստուած մեզի համար մարմին առաւ և այս մարդասիրութեանդ փոխարէնը պիտի հատուցանէ քեզի :

Եթէ այս խօստմունքս պառաւի խօսքի տեղ ալ սեպող ես նէ, ինչ կըլլայ եթէ աղքատի մը օգնես նէ, ո՞վ կը նախատէ քեզ, եթէ մէկուն ալ պատմես նէ ըրած օգնութիւնդ, կամ ո՞վ քեզ կը խրատէ իրեն չօգնելդ, եթէ ոչ այնպիսին որ յիշեցի Աալկուդայի պատմութեանս մէջ :

Բժիշկ մը հիւանդի մը իր անցաւոր ցաւը բժշկելովը այսչափ կը գովուի կոր, ու ինքն ալ կուրախանայ կոր նէ, ուրեմն դուն այսպիսւոյն վիրացը ցաւերուն առողջարար մեհլէ՛մ մը եղած ատենդ՝ արդեօք ինտո՞ր պիտի գովւիս իրմէն ու իր Արարչէն, և ինչ անոյշ սրտի զգացմունք պիտի ունենաս :

Վիտես որ կան շատ տեսակ ցաւ ունեցողներ, որոնց և ոչ ամենաքաջ բժիշկ մը կրնայ նէ ալ օգնել, մարդասէր ազգասիրի մը կարեկցութեամբ զիրենք մխիթարելէն մեծ օգնութիւն,

յոյս, մխիթարանք, ձեռնարկութեան մը լոյս ստացած կըլլան : Նմանապէս կան շատ ծանրութիւններ . որոնք թեթեցունելուն ուրիշ ճար մը չկայ, եթէ ոչ ճշմարիտ բարեկամի մը կամ մարդասիրի մը իրեն տուած օգտակար քաջ խորհուրդը ու ցուցըցած կարեկցութիւնը : Եղան սիրելիս, ձախորդութենէն տկարացողներ, որոնք յիշած մարդասիրի մը ձեռօքը Սամսոնին պէս զօրանալով՝ շօշափածնին բրցուցին :

Կան ալ որ իրենց դժբաղդութեան ատենը բարկացող, նեղացող կըլլան, որով իրենց ընտանիքը շատ նեղութիւն կը քաշեն. ասոնց աս սխալմունքը իրենց անկրթութեանը տալու է : Կամ ոմանք ալ որ կորանցուցին իրենց ապրուստը կամ ինչ և իցէ շահը, չունենալովն իրենց հետ խոհեմութեամբ վարուելու ծանօթ մը կամ գիրենք մխիթարելու բարեկամ մը, ինկան իրենց ցաւը փարատող կարծած գինետուններուն աթոռներուն վրայ՝ ժամանակնին, օրերնին, փողերնին,

առողջութիւննին , պատիւնին , բաղ-
դերնին կորսնցունողներուն ընկերա-
կցութեանը մէջ :

Ահա այն է երկնային պատկով պը-
սակուելու մարդ , որ կը շահի այս-
պիսի մը :

Հոս մասնաւորապէս կը յիշեմ ձեզ
պաշտօններնէդ , կամ վիճակներնէդ
թշնամութեամբ մանաւանդ ազգային
թշնամութեամբ ինկող ազգայիննե-
րըս , կուզեմ զատ կերպիւ կարեկից ըլ-
լալ ցաւերնուդ . վասն զի դուք մասնա-
ւոր կարեկցութեան մը արժանի էք ,
որ ձեր բաղդաւոր ժամանակնիդ՝ իր-
բև հայելի աւետարանական առաքի-
նութեանց՝ ողորմած և մարդասէր կը
սեպուէիք . հիմա անուններնիդ չյիշ-
ւելէն վերջը , անոնք որ իրիկու առ-
տու ետենէդ , առջկենէդ փողոցները
կսպասէին , որպէս զի զանոնք տես-
նալովդ՝ թէ հրաւիրուին պարարտ
սեղաններդ և թէ իրենց ձեր բարև
տալովը տեսնողներէն պատիւ ունե-
նան : Ասմանոնք որ քու առջիդ ծուն -

կի վրայ նստած՝ որ և ոչ չորսպորիսնիև
շխտակ երկնցունելու կը յանդգնէին,
հիմա քեզ հեռուանց տեսնելուն պէս
խանութ մը կը մտնան կոր, որպէս զի
զիրենք չտեսնես, որոնց հազած կօ-
նուկը՝ քու ստակովդ է, ու մատանին
քու պարզեղ է: Աամ կը տեսնես զանի
որ ժեար իջեցուցած ու կապան վե-
րէն ի վար կոճկած, քեզի ինչ խոնար-
հութեամբ ներկայանալուն կերպը որ
չէր գիտեր, հիմա իքի տիրեմ պիր
չեյիրտեք հազուած, քովէդ կանցնի-
ան կերպով, ան հողով և չարմով,
որ իբր թէ քեզ և ոչ կը ճանաչէ: Չը-
գեմ ան էշու մը հեծնալու քեզմէ վաղ-
ցողներուն այսօր քերչամեյի կերպով
քեզի բարև տուող ու հեծած ձիին վո-
րը խթան զարնելով քովէդ անցող-
ներուն յանդգնութիւնը:

Գուն ասոնք տեսնալովդ գիտեմ որ
սրտիդ մէջ քեզ ուտող որդ մը կստա-
նաս, այնպէս որ կուզես անոնցմէ մէ-
կուն եախայեև բռնել ու ըսել, « Սա
ա՛վուճովս քեզի տուած ոսկիներս ալ

մի չես յիշեր, կամ սա ձեռքովս տուած
խայճեներէս ալ մի չես ամէնար, ո-
րոնցմէ է քու այսօրուան ձիիդ այ-
րուատը և քու ինծի ըրած չալլումդ: »

Դուն իրեն սա կը բաղձաս ու կըսես
թերևս առանց իրեն միտքէն անցածը
գիտնալու . որուն ըսածը եթէ իմա-
նաս որ կըսէ. « Շնչխըն, ինչո՞ւ տուիր,
թող ան փառքը, ահկեամը չընէիր,
ե՛ս ինչ գիտցար, քարչը քարչը և եմե-
նիև անը անը քուսմասը փար, ասոր
աշխարք կըսեն . ինչո՞ւ մենք քեզ շո-
ղոքորթեցինք, ամէն իրաւ կամ անի-
րաւ ըսածիդ, պէյի եֆեևտիմ ըսինք.
քու փողդ առնելու համար: Եթէ քիչ
մը խելք ունենայիր՝ կրնայիր տեսնել
որ քեզ չէինք խրատեր որբանոց կամ
դպրատուն, կամ եսևաֆիև և իր աղ-
քատ դաւկըներուն հարստանալնուն,
լուսաւորուելնուն ձեռնարկութիւն,
կամ ընկերութիւն մը հաստատելու,
այլ մեզ և մեր շահը կը բնտուէինք: »
Ան ատենը բոլորովին քեզ մտնած
լով կուզես ակուաներդ կճռտալով ի .

րենց կոկորդը խուշպագի պէս ծամել :

Աս միջոցիս մէջ աշխարհքը, ան պատուած ու զինքը սիրած աշխարհք, որ քեզ իր թէքմէյովը աս հալը ճգեց տեսնալով ողորմելի վիճակիդ աղէտալի տեսարանը, ու իրենց ալ անանուն ապերախտութիւնը, որով քու կէս չորցած վէրքերուդ կեղևները կուզեն փրցնել, կըսկսի ինքը զղջալ ու ցաւելու, քեզ աս աստիճան գետինը զարնելուն համար . բայց ինչ ընէ, իրեն գործքը այս է, իրմէն ուրիշ բան չսպասուիր :

Ստոր համար կսկսի զինքը ջատագովել, ըսելով . « Ենչո՞ւ չտեսար քեզմէ առաջ, քեզմէ հարուստ և պատուաւոր, և բազդաւոր ըրած մարդերս, որոնցմէ մէկ քանիններուն գոնէ հոյակապ, ոսկեզոծ գերեզմաններուն քարերն ալ մի չտեսար. չէս կարգար կոր, որոնց վրայ գրել առին որ . Ունայնութիւն ունայնութեանց ամենայն ինչ ընդունայն է . ու միայն յաւիտենականութիւնը ու Սատուած է

ստոյգ : Եւտոր որ չես տարակուսիր սիրելիս, որ հողէ ենք ստեղծուած ու նորէն հող ալ պիտի դառնանք, նոյնպէս ալ մեր գործքերնիս մէկտեղ տանելնու ալ չեմ յուսար որ տարակուսիս : Զէ եթէ չես հաւատար աս ըսածիս, աշխատէ գիշերոյ ցորեկին խառնելով, ու մի հոգար վիճակիդ վախճանը կամ մի ջանար ալ աս պատուական ճամբորդութիւնդ դո՛հութեամբ և բարոյական կեանքին քաղցրը զգացմամբը ընելու կամ իրենք զի ներկայացուցած դմայլելու տեսարաններէն մէյմէկ առաքինութիւն քաղելու : Այլ կիրքերուդ զեկը ձեռքդ՝ խելքիդ վիչած հովին ունայնութեան առազաստդ տ՛ուր քեզ ախրերըյիև նայինք քեզ ս՛ւր կը տանի՛ կամ ապրէ՛ քե՛ֆիք համեմատ տեսնենք ս՛ւր կեւէ՛ ճամբադ :

Գիտեմ որ դայ պիտի ժամանակ, ուր ինձի պէս պիտի ցաւիս, բայց ես ահա իմ կողմանէս յառաջուց քեզ կը խրատեմ, որ եթէ հանդիպեցար աս

ունայն աշխարքիս քեքմէիս եկողի մը, որուն ներքին ցաւը երեսը զարկեր է, յորդորէ զինքը, տնւր ձեռքդ ձեռքին գոնէ լոկ զինքը մխիթարիչ խրատով մը, որպէս զի բոլորովին չըմոլորի: Ասան զի ան ալ քեզի պէս սխալող մարդ է որ ատենօք իր չափովը կը վայելեր իր վիճակը, իր բաղդը ու քու սա վայելած աշխարհքդ, որ հիմա եղանակաւ մը ինկաւ ու իմացաւ իր սխալմունքը:

Քու պարտաւորութիւնդ է իրեն քու մարդասիրութիւնդ ցուցընել, ինչ կերպով որ կարող ես զինքը մխիթարելու: Ինչու որ այսպիսի վիճակի մէջ եզողները աւելի վտանգաւոր են, քան թէ անոնք որոնց հիւանդութիւննին առողջացընելու երկրիդ բոլոր բժիշկները ձեռքերնին քաշած ըլլան: Ասան զի ատենք տաճկին առակին, Քեօմիւրէ նաև վերիսի Արասն տար ըսելէն մխիթարութիւն գտնելնուն՝ փորձառու Սուլթան Մէճիտը կրնայ վկայել. բայց առջինները իրենց

Թշնամին աշխարհքը՝ որուն իրենց միտքէն չանցած փորձառութիւնները միշտ իրենց հետ մէկ տեղ ունենալէն վերջը, ունին նաև փորձիչ սատանային ինքնագիւտ փորձութիւնները, որն որ և ոչ իմաստունք կամ ճգնաւորք կրցան յաղթել, ուր մնաց տարակուսեալ եսևաճ մը:

Գուցէ հոս դուն ըսես որ ես ահա եկայ աշխարհքին քեքմէին, բայց համբերեցի ու երկրորդ անգամ նորէն ինքզինքս դտայ: Ար հաւատամ աս ըսածիդ, բայց տեսնենք աս դժբաղդը ունի մի քու ունեցած համբերութիւնըդ: Աամ ըսենք թէ դուն առանց ուրիշի օգնութեանը երկրորդ անգամ մեշտան ելար, բայց ամէն մարդ աս բաղդը չկրնար ունենալ: Ատոր համար դուն եթէ բարոյական առաքինութիւն ունիս, պարտական ես իրեն օգնելու, այնպիսի եղանակաւ մը որ քեզի վնաս մը չգայ. որ գուցէ Աստուած չընէ երկրորդ անգամ իյնալու ըլլաս, նոյն առաջուան բաղդը

չունենալովդ՝ ինքն ալ առ քու իրեն
տուած պատասխանդ դառնայ քեզի
չտայ :

Քայց դուն դժբաղդ ընթերցողդ ,
մի յուսահատիր որ խաբերայ աշխարհ-
քը և վերոյիշեալ անկիրթ ու ապե-
րախտները քու վրադ կը ծիծաղին կոր-
վասն զի ասանկով կրնաս քիչ մըն ալ
ունեցած թէ և թմրած խելքդ ալ կոր-
սընցունել , ու ան ատենը բոլորովին
խեղճ կըլլաս և տաճկին առակին հա-
մեմատ գիտցիր որ մարդս դժբաղ-
դութեան մէջ աւելի կը կրթուի քան
թէ յաջողութեան մէջ . ինչու որ դժ-
բաղդութեան խրատը կամայ և ակա-
մայ կը թափանցի իր սիրտը :

Քրկէ ուրեմն կատարեալ սիրով հա-
ւատքով և յոյսով քեզի մխիթարու-
թիւն տուող Քրիստոսի սուրբ աւետա-
րանը , անցնէր աչքէ հանդարտ սըր-
տով իր տուած մխիթարութիւնը ու քա-
ջալերէ քեզ ըսելով : Չեղան մի ինձմէ
գիտուն մարդիկ ինձմէ դժբաղդ , չե-
կան մի ինձմէ հարուստներ՝ որ անօ-

րէն կերպիւ պատժուեցան և ըզգիշ մահով ալ Պապը Աղիեիև առջին ղեշերևիև բուվեցան : Եթէ ասոնք անցան, դացին, և մոռցուեցան նաև իրենց հարադատ եղբօրնէն, ուրեմն ես ալ պիտի երթամ և մոռցուիմ :

Ուստի դոնէ ասոնց օրինակէն ես սիրտ առնելով, մտածեմ եղանակ մը, որով հոգիս դոնէ յուսահատութեամբ չկորսնցընելով օրական հացս դոնալու ջանամ: Եւ անոնք որ իմ սեղանիս պարարտութեանը, կամ իրենց էերերեսօիև համար ինծի բարեկամ էին, թող ետ մնան, դուցէ Աստուած տեսնելով իմ խոնարհութիւնս և բարի վարքս, դուցէ նորէն իրեն ուրիշ յաջողութիւն տուողներուն կարգը զիս կը դնէ. և եթէ իր սուրբ յաւիտենականութիւնը ժառանգելս աս վիճակով որոշած է նէ, իր կամքը օրհնեալ ըլլայ, բաւական է որ ես իմ աշխատելու ջանքս ձեռքէս չձգեմ :

Ահա սիրելիս, ես որ այս խրատը մը խիթարութիւնը, արիութիւնը կը դրեմ

կոր քեզի, չեմ անոնցմէ որ շարաթնե-
րով դրեանց մէջ թաղված գլուխներ-
նէն ոչ տաք անցեր է ոչ ալ սլալ,
որոնց կերակուրը առջևնին բերող
կամ անկողիննին թոթվողը օր մը
սլակակելու ըլլայ չեն զիտեր զիրենք
հողալու կերպը :

Որոնցմէ ոմանք իրենց անունը ժողո-
ղովրդեան մէջ ծանօթացընելու
համար կամ ոմանք ալ իրենց եկամուտ
մը հողալու համար միտքերնին եկա-
ծը պօշ պօշ կը գրեն ու կը ջարթեն
կամ չըլլար նէ դուն մեր ըսածին
միտ դիւր, և ոչ մեր վարքին կըսեն :

Որոնցմէ ոմանց հետ հինգ տարի
ապրեցայ, և դուն ալ արդէն իրենցմէ
շատերը կը տեսնես կոր նոյն յիշեալ
կեանքով լայն աշխարհիս վրայ վար
վեր սլալտըտելնին, և աղնիւ փողը կո-
ղոպտելնին :

Բայց ահա ևս ալ քեզի պէս ատեն
մը անհող մտօք և անձնապաշտ կեան-
քով ապրելուս սխալմունքները որ այ-
սօր ինծի կերեան կոր, բայց ո՞ր . հոն

որ կը տեսնես կոր բոլորովին հեռու իմ կարծանմանս պատճառ, կիրքերնին վայելող դժբաղդութեանս վրայ ուրախ եղողներէն կապրիմ, լերան մը տակ քաշված, անձնական աշխատութեամբ խաղաղութեան տուած պատառը՝ որ կուտեմ աւելի համով է քան թէ ատեն մը սրտադողով կերած քուշանեիս համեղ կերակուրները :

Սա տեսած լեռան կռթնած գեղջուկ տնակս աւելի կը յարգեմ քան թէ գեղեցկաշէն հոյակապ Զրադանը: Բայց ի վերայ այսր ամենայնի բաղդաւորութեանս ունայնութեանը հետեւած ատենս, ոտքս սլացողի մը ցաւուն անզգայ ըլլալէս, դժբաղդութեան մը ինկողին դատողութիւններ ընելով երեսս դարձընելէս, օգնութիւնս խնդրողներուն ընդդիմութեան պատճառներ հնարելէս այսօրվան զգացած սրտիս անբժշկելի ցաւը և անմխիթարելի ափսոսանքը կը յուսամ որ ինձի պատիժ և քեզի ալ իրատ կըլլայ :

ԳԼՈՒԽ ԶՈՐԵՒՏԱՍԱՆԵՐՈՐԴ.

Կան, սիրելիս, աշխարհքիս վրայ
շատ զանազան դիպուածներ և ա-
ռիթներ, ուր մարդկային ընկերու-
թեան կանոններուն դիտութիւնը մար-
դըս կրնան վտանգէն ազատել. որոնց
միայն քանի մը պիտանիները հոս նը-
շանակելովս, միւսներէն ալ կրնայ
դիւրութեամբ զգուշացուիլ:

Աւստի կը պատահի որ հանդարտ
նստած տեղդ կը տեսնես գոդ մը տա-
նըդ մէջ մտեր է. այս անօրէնին դէմ
հանդարտ սրտով վարմունքէդ մեծ
օգուտ կրնաս ունենալ:

Վասն զի գոդ ըսածնին որչափ ալ
արիւնահեղ եղած ըլլայ, միշտ վախ-
կոտ է. ուստի հանգիստ սրտով ինչ
բանով զինքը վախցընել կուզես նէ՝
աւելի կրնաս դիւրութեամբ նկատմա-
նըդ հասնիլ. քան թէ արտորալով
կամ բարկութեամբ և առանց մտա-

ծողութեան ընկելովդ, որն որ քաջ
գողի մը փախչելուն պատճառ է:

Պատահած է որ հմուտ մարդիկ թո-
ղեր են գողը՝ որ պատաղի գողանալու,
և իրենք տեղւոյն զապիրը կամ դրա-
ցիները ժողովելով զայն բռնած են:

Նմանապէս կրակի ձախորդութեան
մէջ, նախ պէտք ես ընտանիքդ ա-
զատելու՝ զիրենք տեղաւորելու տե-
ղը հանդարտ մտօք որոշել, քան թէ
առանց մտածողութեան մերձակայ
կրակին վտանդէն նախ քու ստաց-
ւածքդ ազատելը հոգալ: Առանցի կա-
րելի է որ առանց մտածողութեան
վարուելովդ, ինչպէս շատ անգամ ալ
կը պատահի, որ հոգի մը կորսնցու-
նելէն ետև ստացուածքէն ալ կորսըն-
ցուցած է. որ այսպիսի դժբաղդու-
թեան մէջ աչքիդ ստացուածքդ չե-
րենար, կամ անձնական վնասէդ քեզ
չզգուշացնելէդ ինչ և իցէ թանկա-
ղին կապուածքդ ազատելէն այնպիսի
վնասի մը եկած կըլլաս, որ զանի քու
առողջութեանս մխտակէդ վերջը, ա-

նաջուան առողջութիւնդ ալ չես կըրնար մէյ մըն ալ ունենալ, և թէ արդէլք ալ կըրնայ ըլլալ ապագայ ասլրուատիդ :

Սովորաբար այս վերջին սխալմունքը Պօլիա կընեն. չեն ըսեր որ տանը դուռերը, կամ դաւկին որբանը, տօշապիւն խանատր կամ մեծ մօրը քանտրրը և այլն, իրեն սէս աղատողներուն անկանոն քալուածքէն իրեն անձին մնաս մը կըրնայ հասնիլ :

Եւ ըսենք թէ այս տտրրտուէլ բաները աղատեց. կերթայ ասոնց վրայ կը նստի, ու հոն նոր դրացի եղողներուն հետ քիթօ ջուպուիս քաշելով ու քանի մը ըսիսի ալ խմելով կսկի դուշակել կրակին մինչև ուր երթալը կամ մարելուն կերպը սրը ըլլալը մեկնելու : Եթէ այս առիթները բնառող դողերուն բան մը չգողցուց, կը տեսնես երկրորդ օրը մեծ ծախքով ու անչափ մըն ալ նեղութիւնով, կամ կտարուելով զանոնք տեղաւորելովը աւելի մնաս ունեցաւ քան թէ շահ :

Սյուռ ամենայնիւ քանի անգամ որ
կրակի դժբաղդութիւնը պատահի ,
գարձեալ մի և նոյն կերպը կը գոր-
ծածէ :

Ճամբորդութեան մը մէջ շատ դժ-
ւար և անտանելի ցաւեր յառաջ եկած
ըլլալուն համար, ես աս կըսեմ քեզի
որ ուրիշի մը հետ ընկերութեամբ
ճամբորդութիւն ըրած ատենդ, կամ
քեզ բոլորովին պիտի ուրանաս (եթէ
իրեն հետ ընելու ճամբորդութիւնդ
կուզես լինցունել) կամ չէ նէ իրեն սո-
վորութեանը, բնութեանը քիչ շատ
պէտք ես քեզ միացընելու, և անու-
շութեամբ մը երբեմն իմ խաբերս հա-
մար ըսելով, քու չուզած իրեն ընե-
լու բանը արդիւնէլ տալ, մանաւանդ
արբեցութիւնը. կամ երբեմն ալ աչք
դոցելով չտեսնելու, չխմանալու տալ:

Բայց իմ կարծիքս ան է որ չընել
ամենևին ճամբորդութիւն անոր հետ,
որուն բնութիւնը չես գիտեր. վասն
զի այս զգուշութիւնը չընելով անմեղ
մտօք մեծ վորձանքներու եկողներէն

մէկն ալ ես ըլլալս, կիմանաս ըրած
ճամբորդութեանս պատմութենէն :

Ձգեմ արասներուն ոտքս ձեռքս
կապելով ընկերս իմ առջիս ջարթել-
նին, կամ ընկերիս անկրթութենէն
ուրիշի մը հետ կուտելով ճամբորդու-
թենէս ետ մնալս, կամ Հունկարիացիի
մը հետ Պօլիսէն մինչև Թրիեստ ըրած
ճամբորդութեանս մէջ՝ իրեն հետ
միշտ տեսութիւն ընելուս համար Թը-
րիէստէն Վեննա երթալս արդիւնել-
նին: Անքօնա Հունկարիացիի մը հետ
բարեկամանալուս համար, տաճկի
քասթօրքով դուցէ Հունկարիացի ըլ-
լալուս կասկածելնուն, զիս նոյն քա-
ղաքը բոլոր օրը բանտարկելնին :
Նոյնպէս Նախօլիէն Զիւլիթա Վեքեա
նոյն կերպով իբրև ապստամբ Նտա-
լացի մը զիս կարծելով նոյն նաւով
ետ երթալս պարտաւորելնին, բայց
Րակունէն Սմերաբուրա դացած ա-
տենս քաշած ընկերութեան ցաւս և
վտանգս այս ամէնն ալ դերացանցեց:
Նոյնպէս ս'վ որ ընելու ճամբորդու-

Թեան ծախքին նեքեա է, թէ զինքը վտանդի մէջ կը ձգէ, և թէ ճամբորդութիւնը կուշացընէ, և ճամբորդութենէն համ մըն ալ չառներ:

Բայց Եւրոպայ ճամբորդութիւնը նեկ ուզած ատենդ, մասնաւոր կը խըրատեմ, որ սա մեր քանի մը ֆրանկացած դաղջ ազգային զեմգեկներուն խօսքին հաւտալով՝ եւրոպացիք քաղաքավար մարդիկ են ըսելնուն ալանջ մի դներ: Ասան զի վերան Երեւէքէն որ ելար՝ շէն Երեւմուաքոսքդ զրած ատենդ, աչքիդ երեցած նոր տեսարաններուն ապշելով՝ ըսած ըզգուշութիւններէս եթէ թուլնալու ըլլաս, քեզ կողոպտելնէն վերջը՝ կօշիկդ առջիդ դներու համար ալ նակ փող կուզեն: Ասանորոյ միտքդ պիտի դնես, որ աչքդ դոցած բունած մարդդ գող է, այսինքն կը նայի որ կերպով մը քեզմէ փող, շահ մը ստանայ:

Ստոր համար եթէ հոգնած ըլլալով ուզեցիր անմիջապէս քեզ յորդորող սանդղակի ծառաներուն ցուցըցած

սրանդոսկը գնալ, հոն գիշեր մը կեցիր՝
բայց երկրորդ առաւօտը հարցնւր վը-
ճարելու սարաքդ նոյնպէս քեզի պէտք
ըլլալու բաներուն գինը. ու եթէ միտք
ունիս նոյն քաղաքը երկայն օրեր կե-
նալու, հարցնւր քաղքին մէջ քու կա-
րողութեանդ յարմար սրանդոսկ մը, ու
իմացիր իր ծախքը՝ ու եթէ զանի քու
բնակածէդ յարմար գտնես՝ փոխադ-
րէ քեզ հոն. և հոն ալ միշտ օրական
հաշիւդ վճարէ: Եւ եթէ ամեն օր չվճա-
րեցիր, ու առաւօտուն կանուխ ճամ-
բայ ելլալու ես, առջի իրիկուրէն քու
սարաքդ վճարէ. ապա թէ ոչ, հետե-
ւեալ առաւօտուն քեզի ձայն կուտան
ճամբայ ելլելուդ քանի մը րոպէ մնա-
ցած, ուր կը տեսնես որ տալու բուն
հաշիւներնին՝ գիշերն ուրիշ թանկու-
թիւն մը ծներ է: Եւ որպէս զի քեզի
տուած կերակուրը և խարճը հասկը-
նաս, նախ փոքր ինչ ուղածէդ բերել
տնւր, եթէ հաւնեցար՝ շարունակէ յի-
շեալ կերպով:

Չէ եթէ չես ընդունիր առ փորձա-

ութեամբ քեզի ձրի տուած խրատս ,
դիտցիր որ քեզի պատմող ազգային
տիրաւերէն գովուած երոպացոց
մէջ գտնուած խարեքայութեան շիշին
վրայ քեզ ասոնք նրզրր նրզրր կայ-
րեն, ինչպէս այրեցին պատկերազարդ
ամիրան : Մի ամըչնար , այս ինչ բա-
նը կուզեմ որ ինծի հոգաք , բայց նախ
քանիով լրմըննալը կուզեմ իմանալ՝
ըսելու , կամ ինչ և իցէ առնել ուզած
բանիդ դնոյն վրայ խոհեմութեամբ
խօսելու :

Ինչպէս ըսի , երոպացիք լուսաւո-
րեալ , կրթեալ մարդիկ են ըսելով , նե-
պի-տեղիք մէքսսսեւտի մը խրատին
եթէ հեռելիս , իրենին պէս՝ փուշ միւ-
սիւ ըսելով՝ քու նեպդ ալ կը ծակ-
ծրկեն :

Նւ որչափ կարելի է , ճամբորդու-
թեան մէջ միշտ նայէ որ մէկտեղ առ-
նես միմիայն քեզի ամենահարկաւոր
բաները : Մի լսեր մօրդ կամ կնոջդ
բարեմտութեամբ , Մ.՛ն տղաս , աս ալ
պէտք կըլլայ քեզի . կամ . Ձէ իմ սի-

րոյս համար կուզեմ որ աս ալ առնես
մէկտեղ, ինչ կըլլայ կտոր մը աւելի
ըլլայ նէ, ըսելնուն : Այլ ան բաները,
որ դացած տեղդ պակաս չեն, մի
առներ :

Աը խրատեմ նաև արբեցութեան
անսովոր եղող մը, որ եթէ իր ճամ-
բորդութեանը մէջ արբեցող մարդոց
հետ ընկերացած գտնուեցաւ, նայի
որ միշտ զինքը արթուն պահէ. վասն
զի տեսեր եմ մեծ ձախորդութեան պա-
տահողները : Բայց եթէ կարելի չեղաւ
իրենց հրաւերէն հրաժարիլը, նախ ար-
ված դաւաթ մը ըմպելիքին համը նա-
յելու ձևով փորձէ, ու յետոյ նոյն դա-
ւաթով գոհ ըլլալն խմացընէ, եթէ վը-
տանդի մը չպատահիլ կուզէ նէ : Նայի
որ իրենց խօսակցութեանցը դէմ չխօ-
սի. և եթէ ֆնասակար բան մը խօսե-
ցան, կարելի է ըսելով անցնի : Թէպէտ
և ստոյգ է որ զինով ընկերի մը խօ-
սած խօսքերը իրաւունքի չգար, բայց
իրեն դէմ խօսելովը՝ իր զլուխը փոր-
ձանքի մը կրնայ բերել :

ԳԼՈՒԽ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԳ.

Թէպէտ և քանի մը տեղ ծնողք ինչ-պէս իրենց որդիքը պահելու պարտաւորութիւններնուն վրայ խօսեցայ նէ ալ, մինչև հոս դանազան վարմունքներու վրայ խօսելուիս, միտքս եկաւ քանի մը բան նորէն ծնողքներուն իրենց որդւոցը հետ վարուելնուն վրայօք խօսելու :

Գիտելի է ամենուն, որ մանկունք ի բնութենէ զխրադարձ են ի բարիս և ի չարիս. վասնորոյ՝ որպէս զի մեր անհոգութենէն յետ ժամանակաց մեծ աշխատանքի և ախտոսանաց մէջ մեզ չտեսներք, պէտք ենք քանի որ զխրին է մեզի՝ իրենց մանկութեան հասակէն սկսիլ զիրենք կրթել, և չլարնայենք իրենց վրայ խնամ տանելու :

Աւտի նախ և առաջ ինչ որ իրենց կեանքերնին երջանկացընելու զիտութիւններ, գործողութիւններ կան

նէ՛ իրենց սորվեցընելու ենք, ու օրինակով և ապացոյցով ալ դանոնք լաւ մը միտքերնին տպաւորելու ենք: Վասըն զի, թէ ունեցած երախայութեան ժամանակին զիւրութեան ձեռօքը, և թէ միշտ մեզի հետ ըլլալովնին, իրենց նոյն զիտութեամբ և կանոնով մեծնալնուն պատճառ եղած կըլլանք:

Եւ յետոյ ան զիտութիւնները, որ միմիայն ուսմամբ և հաւատով պիտի սորվին՝ կրնան զիւրութեամբ ալ սորվիլ, խմանալ և համոզվիլ: Ու ասանկ ինքիբեհնին տեսնելով իրենց ու անկիրթ և անուսումներուն մէջ եղած տարբերութիւնը, կամ իրենց տրուած պատիւը և յարգութիւնը, ևս առաւել կաշխատին զիտութեանց մէջ յառաջանալ, և ազգիս մէջ իրենք կենդանի մաղնիտ մը ըլլալով՝ կրնան ուրիշի մըն ալ ուսման և կրթութեան հակելուն պատճառ ըլլալ:

Աս միջոցիս մէջ ծնողք չմտնան իրենցանկեղծ քաղաքավարութիւն սորվեցընելու, որն որ խոնարհութեան

նշան և սիրուելնուն ալ փորձութիւն է : Եւ վարժապետք ալ տեսնելով ասոնց կանոնաւոր ուսման պատաղելնին , չըլլայ որ զիրենք ևս առաւել սորվելու ստիպեն կամ զանոնք բեռնաւորեն : Նոյնպէս չըլլայ որ իրենց դիպամբը պատահած քաւիրիչէ մը ձեռքերնին եղած ուսման մէջ ըրած սրակասութիւններնին յանդիմանելով կամ սլատթելով՝ զիրենք ի բարկութիւն շարժեն . որպէս զի իրենց անքաղցր զգացմանցը մէջ ցեց մը չգոյանայ . վասն զի քաղցրութիւնը և խոհեմութիւնը զիրենք քաջալերող է :

Մանկունք ի բնութենէ միտում ունին պարսպ ժամանակնին զանազան առանց մտածողութեան կամ կասկի պէս տեսած բաներնին իրենք ալ ընելու , թէ և աս գործողութեանց աչք գոցելու չէ նէ ալ , անխոհեմութեամբ ալ իրենց հետ վարուելու չէ . մանաւանդ ըրած յանցանքներնուն համար զիրենք ձեծելով սլատթելը բոլորովին իմ կողմանէս կարգիլեմ :

Ար տեսնուին նաև վրանին դանա-
դան մոլութեանց հետեիլը հայլն, որ
աս բաները թէ և իրենց վնասակար
են, բայց սրչափ որ իրենց աս դիւրա-
հակ ժամանակնին քաղցրութիւնով,
խոհեմութիւնով և արթնութիւնով նա-
խադուշակուած մոլութիւններէն զի-
րենք կրնանք ազատել նէ, այնչափ
ալ դժուար է, իրենց վրայ անփոյթ
ըլլալով՝ հասակնին առած ատեննին
անխոհեմ վարմունքով նոյն մոլու-
թեանց հաստըցած արմատները սիր-
տերնէն խլելը :

Նոյնպէս միշտ զիրենք իրենց դա-
մացը ձգող, այսինքն. առամ չօճուիս
է ըսելով անհոգ եղող թոյլ ծնողքնե-
րէն շատերը ողբացին : Ատոր համե-
մատ ալ իրենց կամքը չընելու համար
անխոհեմ և բարկացող ծնողքները ի-
րենց անկիրթ վարմունքովնին որդու-
ցը դժբաղդութեանցը պատճառ կըր-
նան ըլլալ, ատոր համար բանի մը
երկու կողմը չանցնելու է :

Մանաւանդ դաւակ մեծցընելու մէջ

որ միշտ ժամանակը, առիթը, պարագաները զխոնալով իրենց զաւակնին սիրելու կամ պատժելու են, մինչև որ դան հասնին ու իրենց մանկութեան կամուրջը անցնին, ու յետոյալ նորէն ուրիշ խոհեմ վարմունքով իրենց հետ վարվելու են, մանաւանդ աս փորձութեան դարուս մէջ: Աս ալ զատ զխոնալու բան է որ ամէն տղաք ի սկզբանէ խելացի կամ շուտով ուսում սովորող չեն, թէ և տարիքնին ուսում սորվելու չափահաս է նէ ալ, որովհետև բաւականութիւննին դեռ չէ բացուած, վասն որոյ այսպիսիներուն վարժապետը իմինիս պէս անխոհեմ չսլիտի ըլլայ: Ասան զի տասն և մէկ տարեկան էի և դեռ չէի ճանաչեր ժամացոյցը, ու ինքը բնութեանս վախկոտութեանը հաշիւը չընելէն, այնպէս վիզս սխմելով զիս կը յանդիմանէր շուտով չսորվելուս համար, որ բոլոր սորվելու բաղձանքս ժամանակ մը կորսնցուցի, և քանի զինքը կը տեսնէի՝ ևս առաւել կը շփոթէի:

Աւատի տղայք քանի որ տարիքնին
կառնեն, նոյնչափ ալ մարդկային սը-
խալմանց, տկարութեանց ծանօթ ըլ-
լալովնին, իրենց դալու վատութիւնը
արդիւելու համար, զիրենք խոհեմ կեր-
պով սորվեցընելու և յորդորելու է,
զանազան մարդկային սխալմամբ ինք-
զինքնին դժբաղդ ընողներուն օրի-
նակներովը. ու յետոյ, եթէ սխալ-
մունք մըն ալ որ ըրին, պէտք է քաղ-
ցրութեամբ քննել, հարցախորճ ընել
նայիլ թէ արդեօք ըրածնին ըսածնին
համոզմամբ է, չէ նէ քարքիսէ մըն է:

Շատ օգտակար բան է ամէն ըրած-
նին կարգով, ու կանոնով և արթնու-
թեամբ ընելնուն զիրրնք վարժեցընե-
լը, նոյնպէս զիրենք զգացման կարեկ-
ցութեան վարժել. զոր օրինակ եթէ
հայրը մէկ որդին ձեռեց, մայրն ալ
միւս կողմանէ յորդորելու է կղբայրը,
որ երթայ իր կղբայրը մխիթարէ կամ
հօրկանը առջին կղբօրը համար երաշ-
խաւոր ըլլայ մէյ մըն ալ ան յանցան-
քը չընելուն:

Նոյնպէս ծնողք, և վարժապետք պէտք են դիտնալ. որ աստնց առջին ինչ որ ընեն, ըսեն կամ ինչպէս որ վարվին, աստնք ալ նոյնը պիտի ընեն. վասն որոյ պէտք են մեծ զգուշութիւն ընել:

Եթէ դուն տանդ մէջ որդւոյդ հետ ամէն անկրթութեամբ կը վարուիս, վարժապետին դպրատան մէջ իրեն այսպիսի անկրթութեան վրայ բրած արդէլքը, խրատը իրեն օգուտ չընէր:

Նոյնպէս զիրենք պէտք է վարժեցընել ծնողական օրինակով երբեմն կամայը դէմ եղածին համբերելով, երբեմն ալ նոյն բողոքանքէն զիրենք պատճառով մը հրաժարել. որպէս զի իրենց կամքը չկատարուին, իբր թէ կամ հիմա ատեն չունիս, բայց կը խոստանաս ուրիշ անգամ մը տնտեսաւ իր ուղածը կատարելու:

Նոյնպէս՝ որպէս զի ինքը միշտ արթուն մեծնայ, իրեն հետ պէտք ես արթնութեամբ ալ վարուիլ. չէ թէ խարախօսենալօղիև, Նասրատիև ևօ.

նայիև, կամ, աղանձ՝ ատոր համար ուղ-
տին խառնարնթոր մասը իրեն մեծու-
թեանը համեմատ չէ ըսին, վասն զի
երբոր Ս.դամը անասուններուն տա-
լու աս բաժինը տոսլրակի մը մէջ դը-
նելով ուղեց իրենց բաժնել, կանչեց
իր առջին անասունները. բայց ուղ-
տը վստահանալով իրեն մեծութեան
համեմատ ստանալու բաժինին՝ կա-
մաց կամաց իր կերածը որոճելով ե-
կաւ հասաւ՝ բայց ամենէն վերջը. ուր
երբոր տեսաւ Ս.դամին ձեռքը աս
պղտիկ գործիքը իրեն բաժին տալը՝
սրդողելով ետ դարցած որ կերթար,
Ս.դամ բարկանալով ոտք ելաւ քիւ
մը ըրաւ հեռուանց նետեց ուղտին, որ
ատոր համար ալ գնաց ուղտին մար-
մինին դուրսի դին փակաւ: Աամ ուրիշ
զանազան սուտ կամ տխուր կամ ահար-
կու երեւակայութեամբ, պիւ պիւ
ընելով, կամ իշտե սաքաղը հերթիժ
կերթոր, կամ քաւակիև մէջը գող
կայ քսելով զաւակին իրենց կը նման-
ցընեն: Աամ առաւօտուն կամ ժամա-

կոչին ձեռօքը քաղցր քունէն արթըն-
ցած ծնողացը որ կը պլլուի, իրենք
ուրախանալնուն կամ հեղութեամբ
նորէն քնացընելնուն, կամ առաւօ-
տեան աղօթքը իր սուրբ և անմեղ
թօթով բերնէն լսելնուն տեղ, կէ՛ղ
ժամկոչ պապա կէ՛ղ ա՛ղ Անտօնը,
կամ եթէ խելօք չկենաս պիտի բէն-
նիրէն բանամ քեզ իրեն տամ պիտի,
որ եկեր է քեզ բնատելու և այլն ան-
պիտան և փաստակար վարքովնին ան-
մեղը կծիկ կը դարձընեն :

Չմոռնան ծնողք ուսանող զաւիը-
ներնուն իրենց ուսմանը ժրաջանու-
թեան ինչ և իցէ պիտանի գործողու-
թիւնին համար, գովութիւնով և սրար-
դևով իրենց հետ վարուելու, ուսկից
մեծ օգուտ և շուտով յառաջ կրնան
գալ :

Ան բարի կամ չար հետևողութիւն
ունեցած բանը՝ որ իրեն պիտի արդի-
լեռ կամ զինքը պիտի քաջալերես,
պէտք ես նայիլ որ բռնութեամբ չըլ-
լայ, այլ իրեն կամօքը զանի իրեն

բնութիւնն ընել տալու ես. ապա թէ ոչ՝ դիւրութեամբ կատարելու չհաճու- լէն ետե՛ ուրիշ առիթի մը մէջ զանի քու բնութեանդ դէմ կընէ : Ասան զի ան որ մեզի արդիւուած է՝ միշտ մե- զի քաղցր է . այս սլատճառաւ բնու- թեամբ իրեն սովբեցընելու կամ ար- զիլելու տեղ՝ իրեն կամքը շօշափելով եղած ատենը մեծ օգուտ կը շահուի : Եւ ասանկ հանդարտ սրտով ինք ալ տեսնելով տարբերութիւնը , իշր թէ իրեն դատողութեամբը ինքը քա- ջութիւն մը ըրած սեպելով՝ պինդ կը կենայ ըրածին մէջ , որ թէ և քու խոհեմութեամբդ իրեն զանի ընել արիր :

Այս կերպով կրթելէդ վերջը՝ վար- ձեցուր զինքը իրեն մեծնալու տ- տենը աս պէտք եղած զխտելիքն ալ , որ արթուն ըլլայ իրեն դիւրին երեցած առիթներէն հետեւած վտանգներուն մէջ զինքը չձգելու , այսինքն դիւրին է հարցընելը քան սլատասխանելը . դիւրին է խնդրելը քան թէ տալը .

դիւրին է կանչելը քան թէ դալը և
այլն : Յետոյ ինչ արհեստի որ սլիախ
դինքը տաս, անոր համեմատ բաղ-
ձանքի ալ պէտք ես իր միտքը պառկե-
ցընել :

Մանուկ մը կրթելու դժուարութիւ-
նը իր առջի ժամանակներուն մէջն է,
ուր իր ինքնահաւանութիւնը ու կա-
մապաշտութիւնը դեռ իրեն վրան
ունի : Բայց մի վախնար, մի անյոյս
ըլլար, այլ փոքր ժամանակէն ետե,
քու իրեն հետ ունեցած վարմունքէդ
կը մոռնայ, կը ձգէ աս սխալմունքնե-
րը : Օրինակի համար ձգէ դինքը ան-
կիրթներուն մէջ, ու դուն ալ հեռը-
ւանց մուխի փայտդ վառած դիտէ
դինքը, ու ահանջ դիր իրենց հետ
ըրած խօսակցութեանը : Ուր կը լսես
որ նախ կըսէ իր ընկերներուն որ, իմ
հայրս ինծի չթողուր այս քու ըրածդ
ընելու. երկրորդ՝ հօրմէս հրաման
չառած չեմ կրնար ընել. երրորդ՝ կու-
պայ քու քովդ դանդառ կընէ իրենց
անկրթութեանը վրայ. յետոյ անսնք

չեն զխտեր կոր այս ինչ բանը, կամ Վ. իջէնը Մարտիրոսէն աւելի խելօք է, կըսէ: Եւ դուն ուրեմն անոր հետ խաղան ըսես նէ ալ, չեմ ուզեր իրենց մէջը երթալ, կըսէ, թող Վ. իջէնը հոս դայ, միւսները անկիրթ բառեր կը խօսին կոր, մէկը քեօփեկ օղորւ ըսաւ Մարտիրոսին, մէկն ալ ինծի չափախըն ըսաւ, և այլն, կըսէ: Տես հիմա իրեն դատողութիւնը, և տես քու իրեն հետ ունեցած բարի վարմունքիդ պըտուղը:

Արդիւէ իրենց ոչ միայն տունէ ի տուն լուր բերելը, այլ և դպրատունէն նաև բերածը, կամ վարժապետէն ըրած դանդաւոր. ու մի լսեր զինքը, բայց միայն կուզեմ որ ահանջ դնես թէ արդեօք վարժապետը ինչպէս որդւոյդ հետ կը վարուի կոր. վասն զի կան շատ մը մանկաթիք ասպականող վարժապետներ ազգիս մէջ. տեսանք նաև Բարիզ աշկերտներուն աստտամբութիւն սորվեցունող քրիստոսակրօն վարժապետները:

Նոյնպէս զիրենք մաքրութեան ու քաղաքավարութեան ու քաղբին սովորութեանը համեմատ կերպերով, օտարներուն ներկայացած ատենին, իրենց հետ քաղաքավարութեամբ վարվելնուն վրայ պէտք էս միտ դնել. որոնց խօսելնին, կամ բարև տալնին համարձակ կերպով ընելնուն ջանալէդ վերջը, ամէն կենդանեաց, որ մենք կը համարձակինք մօտիկնալու, զինքն ալ յորդորէ իրենց մօտ քաջասիրտ ըլլալու :

Նաև զգուշանալու է իրենց վրայ արտաքոյ կարգի նախասպառնալ ստողջութեան վերաբերեալ զգուշութիւններ չընելու. զոր օրինակ՝ այսինչ բանը միւս բանէն վերջը ուտել, կամ միայն պաղ կերցունել կամ տաք, կամ անոնց պէս՝ որ այսօր երկինքը ամպոս է կամ վաղն ալ պայծառ է ըսելով չեն թողուր իրենց որդիքը մէկ քաւորդ երկու ըսպէէն աւելի պարտէղը կենալ և այլն, որպէս զի ստողջ սպրին. չեն դիտեր որ այս-

պիսի չափազանց զգուշութիւնով զանի կը տկարացունեն :

Մինչև անգամ տեսեր եմ, որ զաւկին տուած խնճորին կուտը կերակուրէն ետև ուտել չուզելուն համար զինքը կը պատժէին . վասն զի տգէտ ծնողքը՝ իրենց պէս անբաններէն բան մը լսեր են, որ այս կուտը ստամոքսի առողջութիւն կուտայ: Որով այսպէս և ասոր նման շատ մը չափազանց զգուշութիւններ ընելնէն վերջը՝ զինքը 12 տարեկան հասակին հող գրին :

Այս պատմելովս չեմ ալ ըսեր զինքը արթնցնուր իր գիշերային քաղցր քունէն ու քերեկ հերթայեկ աւելցածը բերնէն վար թիսէ . և որ աւելի վատն է զաւակը որ այս միջոցիս աչքը չկրնար բանալ ու ճրագին զօրութիւնը աչուրները կափշեցունէ, ու մէկէն ի մէկ ինքզինքը կը դանայ բաղմութեան մը մէջ՝ որ հերթակ հացի պատառի վրայ դրած կը նեղեն զինքը ուտելու :

Մանկանդ ստացուածքին չըլլայ որ

դպչիս, այլ թնոյ որ զանի վայելէ. վասն զի եթէ վնասակար բան ըլլար իրենն չէիր սար: Նմանապէս իրենն օտարի բանի մը դպչելու, կամ զանի ուղեւուն մի չեխեր. այլ այնպէս մէկ հատ մը առնելդ խոստանալով զինքը եւ քաշելու նայէ: Տայց եթէ բան մըն ալ իրենն խոստացար՝ հող տար զանի առնելու կամ անոր տեսքը ունեցածովը կամքն ընելու, եթէ այսօր չէնէ վաղը՝ որով քեզ լսող և հեղ բնութիւն կատանայ. և իմ կողմանէս իրենց փող տալը, կամ անոր գործողութիւնը, պիտանութիւնը իրենց սովրեցընելը յառաջ քան ժամանակին, անպիտան և մահաւանդ թէ վնասակար կը սեպեմ: Նոյնպէս ալ ժամանակը որ եկաւ, ինչպէս զանի գործածելուն տեղը մասնաւոր զգուշութեամբ սովրեցընելու եւ, որպէս զի ոչ ազահ ըլլան և ոչ ալ թեթեամբութեամբ զանի մտտող:

Վասն զի ազահութիւնը ամէն վատ փորձութեանց պատճառն է, ու զեղ-

խութիւնն ալ դառն պաղով լեցուն
ծառ մըն է : Նոյնպէս ալ սակին շո-
ղոքորթութեան հայր և զանազան պա-
րապանաց որդի ըլլալով զինքը ճանչ-
ցողներուն երջանկութիւն , և չճանչ-
ցողներուն ալ դժբաղդութիւն ըլլալը
իրեն սովբեցունելու է :

Ինչ որ իրեն կը հրամայես որ կա-
տարէ , նայէ որ իր հասակէն իր համ-
բերութենէն կամ բնութենէն և կա-
րողութենէն վեր եղած բան չըլլայ ,
որպէս զի չզղուի . մանաւանդ թէ խո-
հեմութեամբ և չափով եղած ատենը ,
անկից իրեն օգուտ մը ըլլալը ցուցը-
նելով՝ իրեն ժրաջանութեանը պատ-
ճառ ալ կրնաս ըլլալ :

Աս ալ դիտնալու է , թէ ըստ որում
երախայները լալու իրաւունք ունին ,
որն որ ոմանց ծնողաց անհաճելի ըլ-
լալով զանոնք կը չեխեն . աս ալ իրա-
ւանց դէմ է , բայց եղանակաւ մը զա-
նի իրենց արդիւնքը կամ օրէ օր իրենց-
մէ զանի պակսեցունելու ջանալը պի-
տանի է : Երաւ է որ տղայք պէտք են

սլատժուիլ, վասն զի չսլատժուած
ատենին մեծ լրբութեան կըրնան
հասնիլ, բայց չէ ամէն տրտորտուկ
բաներնուն համար. և եթէ պէտք
եղաւ նէ ալ զինքը սլատժել, իր բը-
նութեան և հասակին համեմատ ըլ-
լալէն վերջը, քու ծնողական զթու-
թեանդ և սիրոյդ ներումը՝ կնկանդ
կամ եղբորդ կամ սփ և իցէ անձի մը
ձեռքը շատ ժամանակ չանցած ցու-
ցուր իրեն: Եւ երկրորդ անգամ նոյն
սխալմանց մէջ իյնալուն՝ աչքդ դո-
ցելով վերոյիշեալներուն ձեռքը,
եթէ հայրդ լսէ կամ տեսնէ նէ ինչ
սխալի ըսես և այլն յորդորանքով՝
ջանալու է նոյն յանցանքը ընելուն
սլատժառ եղած առիթներէն զինքը
հեռացընել:

Արպէս զի շատ անգամ ծնողաց ան-
խոհեմութիւնը իրենց զաւակնին բար-
կացող ընելուն կամ երես ելլալուն
սլատժառ է ըսելուս հաւատաս, օրի-
նակ մը ըսեմ. Գուն մանկութեանդ
ատենը դեղ խմելու չէիր հաճեր, գու-

ցէ հիմա ալ, ուրեմն իրեն տուած դեղդ
չխմելուն համար, վիզին բարկու-
թեամբ դարնելդ կամ զինքը ինչ կեր-
պով խելքիդ կը վիչէ նէ, նեղելով բար-
կացընելով զանի իրեն խմել տալդ՝
խոհեմութեան դէմ է. ուստի համբե-
րութեամբ պէտք ես իրեն խմցունելու
ջանալ, որպէս զի քու համարմունքդ
չկորսնցունես: Ասան զի քեօր ամե-
լին մեատիւ վրայ սրացուցած անօրէն
կարծիքով ընելու հաճամարիւ հան-
դարտ և պատրաստ կամօք իրեն ու-
քը ծնօղացը ներկայացնող մանկանց
պատրաստութիւնը հօրկանը խոհեմու-
թենէն քաջալերուած ըլլալը տեսեր
եմ. որն որ դործիքով եղած ըլլալու
ըլլայ, կամ խմցունելու դեղը շաքար
կամ ուրիշ կեղև ունեցող հապ մը
եղած ըլլայ կամ եթէ քաղցրութեամբ
վարուրվի՝ այս դժուարութիւնները
թեթևցած կըլլայ: Մէկ խօսքով ըսեմ,
որ դուն ալ զիտես իրաւ, որ դժուար
է այս զղուշութիւնով դաւակ մեծցը-
նելը, բայց յետոյ իր տուած քաղցրու.

թիւնը, եթէ չունիսնէ, հարցնէր անոր
որ կը վայելէ աս անպատմելի քաղցր
զգացմունքը, մխիթարութիւնը և ու-
րախութիւնը :

Բայց եթէ արթուն և խոհեմ վար-
մունքով զաւելընեցող հողալու կարո-
ղութիւն չունիսնէ, կը խրատեմ քեզ,
որ ետ կենաս դաւախտտանալու վիճա-
կէն. որպէս զի չարութիւնը չշատնայ
աշխարհիս վրայ, մանաւանդ ազգիս
մէջ : Աս կըսեմ վասն զի գիտնալու ես
որ մանկան բնութիւնը, և իր ժամա-
նակուան իրաւունքը յազթող և ոչ թա-
ղաւոր մը եկած է աշխարհիս վրայ,
եթէ ոչ համբերութիւնը և խոհեմու-
թիւնը; որ մայր են ամենայն բարու-
թեանց :

Զգուշութեամբ զգուշացիր արգի-
լելու իրեն ընկերներուն հետ փոփո-
խութիւն ընելը կամ հօրկանը ձեպեկ
ստակառնելը, ուրիշի վրայ ծիծաղիլը,
մէկուն ձեռք վերցնելը, բարկանալով
ձեռքի ունեցածը գետինը զարնելը,
կամ ինչ և իցէ բան սխառելը, սրթո-

ղիլ ու կերակուրի չդալը, դէմ խօսիլը,
և այլն :

Նմանապէս դուն ալ զգուշանալու
ես երբեմն իրեն խօսածները կամ
ըրած պակասութիւնները մնասակար
են նէ ալ՝ տղայական անմեղութեամբ
կամ ձեռով ըլլալուն համար քեզի հա-
ճելի դալով ծիծաղելի կամ այսպիսի
պակասութեան ծիծաղելով իրեն առ-
ջին դանի քու ընկերիդ պատմելի .
նոյնպէս իրենց բարի վարքերնին
չափազանց դովելէն շատ մնասներու
պատճառ կրնաս ըլլալ :

Նաև բան չգայ տղայ են ըսող չա-
փազանց ներողամիտ ծնողքները յե-
տոյ զղջալնին տեսնելով դարձուն կե-
ցիլը, և քու կամացդ դէմ ինչ որ պակ-
սութիւն կընէ՝ նայէ որ անմիջապէս
արդիւես. զոր օրինակ չցատկելը,
կամ չպօռալը, չվաղելը և այլն ար-
դիւլէլ, իմացընելով իրեն անկից դա-
լու մնասը, կամ ինքը որ այս պակա-
սութիւնները չընէր, ուրիշ ընտղի մը
աս կերպով ստացած մնասները իրեն

ցուցընել, որ եթէ դանակը անոր պէս
բռնելու ըլլայ, ինքն ալ ձեռքը պիտի
կըտրէ և այլն :

Եւ ան արդեւմունքները որ տեսնե-
լով իրեն կրնաս ցուցընել, խօսքով
մի ըներ. նոյնպէս ինչ պակասու-
թիւններէն որ զինքը կրնաս խօսքով
եւ քաշել, պատժով ալ մի ըներ. ան-
սար որ ինքը իրեն ըրած պակասու-
թենէն վախնալ, կամ զղջալ մը ունե-
ցաւ, երեսին մի գար, այլ ան մասին
վրայօքը միւս օր աղայ մը այս ինչ
պակասութիւնը ընելով հայրը զինքը
պատժեր է ըսելով զգուշանալուն
պատմութիւն մը իրեն կազմէ :

Մի դժուարիբ սիրելիս երկայն մեկ-
նութեամբ դաւկընեցող հողալու կեր-
պին վրայ խօսելուս. կրնաս շատ դիւ-
րութեամբ զիրենք կրթել, եթէ իրենց
դիւրահակ ժամանակին իրենց հետ
խոհեմութեամբ արթնութեամբ վար-
ւիս նէ. որով նաև շուտով կը վայելես
իրենց անհամեմատելի քաղցրութիւ-
նը : Քանի որ մեծնայ դուակդ՝ այն-

չափ ալ պէտք ես խոհեմութիւնդ արթնութիւնդ փոխել ու մեծցընել . վասն զի իր երախայութեան ատենը, իրեն առջին քու մէկուն բարկանալուդ կամ հայհոյելուդ, ձեռք վերցունելուդ անհող էր նէ, հասակը առած ատենը այս գործողութիւնդ իրեն ուսումը սեպելուն պէս կը սերտէ ու կը փոքձէ :

Շատ խոհեմութիւն ըրած կըլլաս, եթէ տղոց անվտանգ և անվնաս խաղացած ատեննին զիրենք չարգիլես . վասն զի շատ անգամ տղայական խաղալիքէն մեծ մեծ դիւտեր առաջ եկան կամ իրենք մեծ արհեստաւորներ եղան : Ամբ եթէ իրենց խաղացած, խնդացած, դբօսանաց ատեննին իրենցմէ փոքր մի մեծ կրթեալ տղայ մը իրենց ընկեր տալու ըլլաս, շատ լաւ կընես . որն որ կարող է իրենց շունի մը քար նետելը, կատուի մը հետ խաղալը, փոսի վրայէն ցատկելը, լճի մը մօտ երթալը, սպտուհանէն վար կախուիլը և այլն վտանգաւոր ըլլալը սովորեցընել :

Այս ամէնը ընելէդ վերջը իրենց կրթութեանը համեմատ ընկերներու հետ տեսութիւն ընելնուն ալ փոյթ տանելու ես. չէ թէ իմ դաւակա կրթըւեցաւ ըսելով անհոգ պէտք ես ըլլալ, որ հաւնածին հետ տեսութիւն ընէ ուղածին պէս խօսի և վարուի և այլն :

Որուն աս քու թուլութենէդ ստանալու վատ հետեմունքը տեսնելու համար, դարձնւր մէյ մը ծնողական աչքդ եւրօպացիներէն քեզի պէս կարճամիտներու վրայ, որոնց զաւկըներուն տուած հոգեոր և մարմնաւոր կրթութեան զգուշութիւննին և արթնութիւննին՝ մանաւանդ դաղղիացւոցը, որ, որ անբան կամ անզգայ տղէտ մարդը որ ըլլայ կը հաճի, կը նախանձի և կզմայլի :

Բայց կարծելովսին որ ասով բանը լինցաւ, թող կուտան որ տեսնուին խօսին, ընեն ընտոր որ իրենց հաճելի է. կրթուեցան ալ հոգ չէ. որոնք հաղիւ որ իրենց չափահաս ժամանակնին կը հասնին կոր՝ կը նայիս որ ստացած

կրթութիւննին վոխ առածի պէս ետ
տալէն վերջը, ազատութեան գաւա-
զանաւը իրեն դէմ կելլեն ու ան կեր-
պով և վարքով կապրին, որ Աստուած
հեռի ընէ իմ տարարախտ ազգէս :

Ու հիմա դուն կուզես զիս համոզել
որ եւրոպացիք իրենց ազատութեամբը
երջանիկ են, երջանկութիւն կը վա-
յելեն: Գնահ մտիր իրենց սիրտը ու տես
իրեն վրայ եղած վէրքերը, ընտա-
նեացը, ազգականացը նախատինքը,
որ մինչև անդամ զինքը իր որդիու-
թեան ժառանգութենէն հրաժարող-
ներէն շատերը տեսած եմ: Որուն պատ-
ճառը այն անհաշիւ ազատութիւնն է :

Գուն որ հայու այն պարկեշտ, աս-
տուածավախ, մարդասէր, մանաւանդ
ազգասէր արիւնէն ես, ինչպէս զինքը
մէկտեղ մեխաւնայ կը տանիս, իրեն
առջին ականջիդ լսել չուզածները
կը խօսիս, իրեն տեսնել չվայելած-
ները կը ցոցընես, չսովբելու եղած-
ները կը սովբեցունես, որ իրեն մա-
տաղ կրթութեանը անկարելի է մէկէն

զաւկիդ չարութեան դիւրահակ բնութիւններէն ետ քաշել :

Ահա զինքը շէքէր շէրպէրիով սընուցանելու տեղ՝ բարոյական և ազգասիրութեան քաղցր զիտութեամբը սնուցանելու ժամանակը, որոնք իրեն հոգւոյն կեանքն ու շունչն են : Տայց երանի քեզ, եթէ այս հայրական սիրոյդ պարտաւորութիւնները իրեն սովորեցունելէդ և իրեն վրայ արթուն կենալէդ վերջը, Աստուծոյ երկիրն ալ իրեն սիրաւ տնկես նէ . որպէս զի կարողանայ ստել անիրաւութիւնը, թշնամութիւնը, հպարտութիւնը և չարերուն ճամբան :

Ա՛խ, ո՞վ կրնայ տալ ինծի այսպիսի հօր մը քաղցր զգացմունքը : Երանի ան ըսպէին որքու գերդաստանդ իրեն հոգաբարձութեանը յանձնելով ու ան անմեղները զուարթ հոգւով հայրական օրհնութեամբդ օրհնելով պիտի թողուս զինքը ու երթաս հոն, ուր քեզ պիտի ընդունին իբրև ծառ բարի, և ծառայ հաւատարիմ :

Նաև գիտցիր որ զաւկներդ յառաջ քան մարդկային ընկերութեան զիրենք ներկայացընելուն՝ բաւական կրթութեան և խօսակցութեան եղանակը գիտնալու են, ու չպիտի իրենց համբերութենէն վեր զիրենք երկայնատեն ընկերութեանց մէջ ձգես. նոյնպէս չես արհամարհուիր, սիրելիս, տունդ եկող հիւրէն, որն որ քու զակիդ առջին անհոգ կերպով բերնէն ելածը կը խօսի, եթէ դուն աղաչես զինքը որ չխօսի անվայել բաներ:

Սմենուն գիտելի է որ տղայական բուն երջանկութիւնը խաղալն է, և դուն ալ զաւակդ գլխէդ էրթալուն համար զինքը կը ձգես որ երթայ խաղայ: Զգուշացիր յաճախակի այս կերպով քու հանգիստդ գտնալ ուղելէդ. վասն զի իրեն ուսման բաղձանքը կապականէ: Սւ եթէ դուն ալ իրեն հետ խաղալու ըլլաս, նայէ որ այնպիսի պատկերքներով, յեւսիմներով կամ շէնքերով և այլն եղած ըլլայ, որ թէ ինքը ուրախանայ, և թէ բան մը սով-

րի, և միտքն ալ պիտանի բանի մը
զաղափար ունենայ:

Գէշ բան ըրած չես ըլլար եթէ զու-
կընեբուդ նուագարան մը սովորեցընել
տաս . բայց կաղաչեմ մի սովորեցը-
ներ զանի, եթէ կարելի է, (աղջիկ
կամ մանչ զաւակ), զանի լաւ մը ի հո-
գևորս և ի մարմնաւորս կրթելէդ յա-
ռաջ . որպէս զի իրենց չափահաս ժա-
մանակներնուն երիտասարդական ու-
ժով ջիւերուն մէջ շրջադայած անհան-
դարտ արեանց փորձութիւններնուն
ատենը, աս ուսման քաղցրութիւնը
իրեն ունեցած կրթութեան բաժա-
կին մէջ իրենց անմեղ մատուրներնին
գործիքներուն վրայ խաղցընելով քե-
զի բարի զգացմունք մը նուիրած ըլ-
լան: Ուր եթէ անպսակ էս, տեսնելո-
վըդ ասոնց բարի ծնողացը անմեկնե-
լի ուրախութիւննին ու Սատուծոյ
փառք և գոհութիւն տալերնին, չես
կրնար ջորիի պէս կամ ոմանց հնդկաս-
տանցի անխղճմտանքաց պէս ապրիլ:
Իսկ եթէ պսակեալ էս, ու չունիս զա-

ւակ մը , կարտորաս որդեգիր մը առնել , որպէս զի իրմէն գոնէ ստանաս ան քու նախանձած ծնողքներուն ուրախութիւնը , որ թէ և միայն մօտեւորն է :

Ահա ազգիս լուսաւորուելուն եռանդ տուող ու մէկզմէկ քաջալերելու ուժ տուող և մխիթարող (մարդկային վարմանց) զիտութիւնը , որն որ ոչ Առնէլ սորվելու կարօտ ես , ոչ ալ Պէպէկ կամ Մուրատեանին մէջ և այլն , թէ և չեն ալ սովորեցուներ :

Որն որ ոչ դժուարութիւն ունի , և ոչ ալ օտար ուսումն է . այլ ամէն մարդու սրտին մէջ բնակած բնական զգացմունք մըն է մարդուս իր զաւակը բարի և կրթեալ տեսնել ուզելը . վասըն զի աս զգացմունքը ունեցողները լերանց մէջ շէնքերէն հեռու , խուշիպէներուն մէջ բնակող գեղացիներուն մէջն ալ տեսայ :

Ինչ մեծ սխալմունք է ազգերնուս աս մարդկային վարմանց կրթութեանը հոգ չտանելնին . նոյնպէս ինչ ան-

ներելի սխալմունք մըն ալ է զիտնա-
կանաց, ասոր վրայօք մինչև այսօր հա-
մառօտ քերական մը ազգիս չգրելէն
ի զատ, զանազան երկպառակութեան
կռուի, ատելութեան, խրոխրոի, վը-
րէժխնդրութեան քերականութիւն-
ներ գրելնին :

Այնչափ մըն ալ ինչ նախատանաց
նախատինք է զանոնք կարգացողնե-
րուն նոյնպէս ալ անոնց հռչակելու
ընկեր գրուողներուն :



ԳԼՈՒԽ ՎԵՇՏԱՍԱՆԵՐՈՐԴ.

Մասնաւոր կերպիւ աղջիկ զաւա-
կաց կրթութեանը վրայ չգրելուս
պատճառն աս է, վասն զի վերոյի-
շեալ կրթութենէն շատ քիչ բան կայ
որ իրենց չվերարերիր. ապա թէ ոչ,
մնացածովը զիրենք կրթելու ըլլալէն
վերջը՝ իրենց հետ վարուելու կերպը
իրենց տանտիկին խոհեմ մօրկանցը
մայրական խնամներուն յանձնեցի. ին-
չու որ վափկութեամբ հիւսուած մա-
ղը միայն վափուկ մատեր կրնան քա-
կել: Բայց հոս միտքս եկաւ շատ մը
ունայնասէր մայրերու ազիտութիւնը,
որոնք թէ և բարի են վարքով, բայց
վերոյիշեալ ուսումը չունենալովսին
շատ ատեն անմեղ մտօք կը սխալին
իրենց պարտաւորութիւններնուն մէջ
և պատճառ ալ կըլլան զաւկըներնուն
անկրթութեանը և վատութեանը:
Վասն որոյ մայր մը խոհեմութեամբ

իր աղջիկը յիշեալ կրթութիւններով
կրթելէն վերջը՝ սորվեցունէ նաև որ
աղջկան մը հագուստը վարքը իր հոգ-
ւայն հայելին և քերականներն է :

Ու յետոյ եօթը տարուան հասակէն
սկսելու է զինքը տանտիկնութեան
պիտանի սովորութիւններուն հետև-
ցընել. որպէս զի նախ ժիր ըլլայ, երկ-
րորդ ալ իր ներքին հոգւոյն մէջ տը-
պաւորուի տանտիկնութիւն սովրելը
իր պարտքն ըլլալը :

Նոյնպէս իրենց աս սովորութեանը
մեծ ուժ կուտայ, եթէ իրենց հասա-
կակից կամ իրենցմէ մեծ տանտիկնու-
թեամբ զարգացեալ և աղջկանց օրի-
նակ ըլլալու արժանի գովութեան
վարքերնին զաւկըներնուն պատմեն
նէ : Խոհեմ մայր մը պէտք է զիրենք
շուքերեսութեան, մաքրութեան, մար-
դահաճոյ սովորութեանց մէջ սնու-
ցանել, և իր արդէն անցուցած երի-
տասարդական կեանքին մէջ զգացած
զանազան դժուարութիւնները, իրեն
պէս անոնց ալ յաղթելուն ջանք

ընել . նոյնպէս իրեն պարտքն է
այսպիսի պարադաներու մէջ արդէն
իրեն անձնափորձութեամբը զգացած
փորձութեանցը արթուն կենալ , և
հմտութեամբ իրենց հետ վարուիլ :
Վասն զի մարդս աւելի իր գործքովը
կը համոզէ իր ընկերը՝ քան թէ իր գը-
րած տան մը բարձրութեամբ զիրքե-
րովը : Ինչու որ իր ժամանակը հիմակ-
ւանին , իր ատենուան սովորութիւն-
ները հիմակուանին չնմանելով , իր
ժամանակուան յաղթութեանը դեղե-
րը դուցէ իր զակըններուն այսօր չաղ-
ղեր , եթէ ոչ ուրիշ նոր խոհեմ վար-
մունքով մը : Ինչու որ ժամանակին
և առթին պէտք ենք այնպէս կուրա-
կերպ հնազանդիլ , ինչպէս մեզ առող-
ջացնել խոստացող բժշկին կը հնա-
զանդինք նէ :

Նւ ես մեծ խոհեմութիւն և գիւտ
մը կը համարիմ , եթէ զիրենք զանա-
զան հոգևոր , բայց չզղուելու գիր-
քերով , կամ քաջ ուրախալի պատմու-
թեանց , կամ ազգայինի վերաբերեալ

տեղեկութեամբ, իրենց այսպիսի դըժ-
ւար ժամանակինն անցունել տալը .
կամ առիթին համեմատ խօսելու ան
բաներուն վրայ, որ զիրենք կը փո-
խադրէ յիշեալ գիտութեանց :

Ասոր համար իրենց փորձութեանը
գործիք եզոզ քախք մը լիլք մեծ-
ցող աղջկանց հետ ծանօթութիւնին
արգիլելու է: Նոյնպէս զաւկըներնուն
կամ ընտանեացը վրայ անփոյթ եզոզ
շատ մը թեթեամիտ և բերներնուն
խօսածը ականջնին չյսող մարդկանց
տեսութենէն զիրենք հեռացընելու է,
վասն զի ազդերնիս դեռ կրթութիւն
չունի: Կամ չըլլայ որ իրենց զաւկը-
ներնուն գեղեցկութիւնը գովեն, կամ
գովողներուն հաճին. կամ իրենց գե-
ղեցկութիւնը ցուցընող գործիքներ-
նուն առջին երկայն բարակ կենալնուն
ներողամիտ ըլլան, որով զաւկներ-
նուն լրբանալուն պատճառ չըլլան:

Նոյնպէս մայր մը իր օրական տանը
կառավարութեան կանոնները մեծ
աղջկանը սովորեցընելէն ետև, ճիշդ

պահուելուն ալ զգուշութիւն ընելու
ըլլայ նէ, իրեն տունը չեղած կամ
հիւանդ պառկած ատենը թէ տանը
կառավարութիւնը չխանդարիր, և
թէ միւս իրմէն պղտիկներուն հոգա-
բարձութիւնը իրեն յանձնած ըլլալով
այս պատուական տանտիկնութեան
սէրը աս հասակէն մեծցող աղջկանց
սրտին ուրախութիւն մը տալով՝ կա-
մաց կամած իրենց բնութիւն մը եղած
կըլլայ:

Եւ այս կրթութեամբ մեծնալովնին
իրենց չափահաս ժամանակնին սար-
ժանք ծնողաց և պարծանք ալ ազգիս
հայոց կրնան ըլլալ. որոնք իրենց
յարգը դիտցողներուն ձեռքը հասած
ատեննին, ինչ ուրախութիւն, ինչ
անոյշ կեանք, և ազգասիրութեան
աճում ըլլալուն, ևս վկայ եմ, և անձ-
նափորձ, և կը յուսամ որ դուն ալ
չես նէ, ըլլալու կըլլաս:

Մի ականջ դներ զիրենք հոգևորի
մէջ չափաւոր կրթութիւն, ուսում և
հաւատքիդ պարտաւորութեան արթ-

նութեամբը մեծցունելուդ համար՝ աղ-
ջիկներդ մայրապետ մի պիտի ընես
ըսողներուն . վասն զի աս պարտաւո-
րութիւնդ, իրենց և քու թոռանցդ բա-
րի ըլլալնուն անառիկ բերդն է :

Կաւ սովորութիւն մը ըրած կըլլաս
էթէ եկեղեցիի մէջ աղօթագիրքով
մը հոգևոր պարտաւորութիւննին վար-
ժելու ըլլաս, կամ նայէ որ ինչ և իցէ
հոգևոր արարողութիւննին ուսմամբ
եղած ըլլայ. որպէս զի գիտնան ինչ է
ըրածնին, ինչպէս պէտք է զանի կա-
տարել: Չոր օրինակ ինչ է սուրբ հաղոր-
դութեան մատչիլը, կամ ո՞վ է որ դայ
պիտի բնակելու իրենց սիրտը, ինչ է
խոստովանութիւնը, ինտո՞ր պէտք է
կատարել զանի, ո՞վ է քահանան կամ
որո՞ն տեղը զինքը սեպելու է, եկե-
ղեցին որ է Աստուծոյ տունը, ինտո՞ր
հոն կենալու է, ո՞վ է որ զիրենք կու-
զեն որ լսէ, բայց ոչ թէ աւելորդա-
պաշտ և կուսպաշտ համողմամբ :

Կաղաչեմ և կը խրատեմ որ եզ մը
հաւատքիդ կանոնին պահպանութեա՝

Ն ր ծառայելուդ վրայ ծիծաղողներուն
կամ ծառայութեանդ կերպը թեթեցը-
նելով իրենց համողված կերպով ընող-
ներուն միտ մի դներ, և զիրենք ալ
մի ատեր, այլ ճգէ որ ինքը իր գիտ-
ցած հաւատքովը ասլրի, դուն ալ քու
հաւատքովդ ասլրէ և թո՛ղ որ ան ծի-
ծաղի քու Նուսաւորչայ և իր սուրբ եղ-
բարցը հաւատալուդ վրայ կամ հոով-
մայի եկեղեցին գլուխ ամենայն եկե-
ղեցեաց կամ ՆՏմիածնայաթողը ճանչ-
նալուդ վրայ, մի մտնար իրեն հետ
հակաճառութեան, այլ հարցո՛ւր իրեն
որ իր հաւանութքը զինքը պիտի արքա-
յութիւն տանի, չէ նէ իր գործքը, ինչ-
պէս արդէն ալ գրեցի: Նոյնպէս իր
հաւատքէն ըլլալուն համար մի կը սի-
րէ քեզ, չէ նէ առաքինի, կրթեալ,
ճշմարտախօս, ուղիղ մարդ ըլլալուդ
համար միայն:



Մանկանց վարմունքին վրայ գրե-
լէս վերջը կը հետեի նաև աստիճա-
նաւոր կամ կերպով մը մեր վիճակէն
վեր եղող անձինքներուն հետ ինչ
կերպով տեսութիւն ընելուն վրայ ալ
խօսիմ. որ ասոնց հետ տեսութիւն ը-
նելը մասնաւոր զգուշութիւն մը կը
պահանջէ մեզմէ :

Վասն զի նախ և առաջ ասոնցմէ
շատերը իրենց մանկութենէն շողո-
քորթութիւնով կամ այսօր աւելի գե-
ղեցիկ էս քան թէ երեկ ըսողներուն
ընկերութեամբը մեծցած ըլլալովսին
և ունայնասիրութեան մէջ կեանքեր-
նին անցուցած ըլլալովսին բոլորովին
ապականեալ մարդիկ են . ո՞վ գիտէ
որ արեգակը իրենց համար միայն ծա-
ղիլը հաւատացողներ մէջերնին չէ
եղած : Վասն զի իրենց հրամայածը
կը կատարի , իրենց ուզածը կըլլայ

և չունին կարօտութեան պատճառ մը,
երբ դուն կարօտութեան բեռին տակ
ճգմուած ես :

Եւ իրենց հետ տեսութիւն ընողներ-
ըր' որպէս զի ասոնց սիրելի ըլլան
կամ իրենց նպատակին հասնին, չեն
համարձակիր ասոնց պակասութիւններ-
ըր անոյշ և խոհեմ կերպով իրենց հաս-
կըցունել, և որ աւելի չարն է, քանի
մը տարիէ ի վեր սկսան նակլրագիրներ-
բու մէջ և այլն տեսարակներով ազգիս
մէջ այնպիսիները գովել : Որ իրենց
անօրէնութիւննին Փարաօնին փի-
րամխտներուն պէս կանգնած կեցեր
են ազգիս մէջը . կամ գոնէ փոշետե-
սակ նմանութիւն մը ունենան իրենց
վրայ եղած գովասանքին, կամ իրենց
ունեցած կարծուած առաքինութեան
նշոյլ մը ցուցըցած ըլլան, կամ ունե-
ցած կարողութիւննին ազգիս ուղղու-
րիւ կատարելու հակում մը ունենան .
այս համբաւուածներէն մէկուն հայր
մեր մը, ուրիշ կիսակատար գիտցած
լեզուն թարգմանել չգիտնալը քաջ

դիտեմ, ինչպէս իրեն Եկեղեցիք խո-
րեան պատկերքը տարածող քահա-
նան ալ վկայեց: Բայց որովհետեւ հա-
րուստ է և ամիրայ և զրողին ալ բա-
րեկամ, որ կը զրէ ու կը գովէ:

Բայց զրողներուն մէկուն՝ աս կեղ-
ծաւորութեան կամ գայթակղութեան
գործիք ըլլալէն շատ մը վատութիւն
պիտի յառաջ գայ ըսելու՝ քիթին տա-
կէն ծիծաղելով, բան չկայ, խոչըն-
ձիշ ըլլալու է ըսողին՝ իր Փռչրոտախր
դարձընելու համար զիրենք գոված
ըլլալը ահա դու ալ իմացար:

Ուրիշ մէկ առթիւ ալ, դուն երեք
տարի առաջ մի և նոյն այսօրվան
ինծի գոված և իր պատկերը տպել
տուած ամիրադ իր ընկերներովը
Եկեղեցիքի անուանեցիր, ոմանց հո-
գևորականաց ալ պաշարներ քե-
մէրի ըսիր, ու հիմա ալ որ աւելի մե-
ղաւոր և նախատելի գործքերով բեռ-
նաւորեալ են քան թէ երեք տարի
առաջ, զիրենք կը զրկես կոր, այս
ինչ է ըսելու՞ երեսը թմրեցընելով

չղիացաւ ինչ ըսելը: Գոնէ իմ հայրե-
նիքս եղող ազգայիններէն շատերը
զիսեն որ ես աս կուռքերէն մեծ մա-
սին ծանօթ եմ, և անարժանութեամբ
բըսալ մէկ տեղ նստած ելած, կերած
խմած եմ, թէ և ոմանց առջին ֆեւս
վար քաշելով ու կասպա կօճկելով,
ոմանց առջին ալ ազատ վարմունքով
տեսնուած ատենս՝ շատերը դտայ որ
ինքզիինքնին բարերար, մարդասէր,
գիտուն սեպելէն վերջը, իրենցմէ
վար եղող մարդկային ցեղէն իրենց
ամիրայութեան կամ հարստութեան
սարժանքը և դովութիւնը կը սպահան-
ջեն կոր:

Նմանապէս ասոնց ահարկու վար-
մունքէն խաբուողներ ալ տեսայ. ո-
րոնք եթէ քիչ մը համարձակելով ա-
սոնց մօտիկնային, կրնային տեսնել,
որ ասոնք իրենցմէ տկար և սխալող
մարդիկ են, տարբերութիւննին մի-
այն մեծ և հզօր նաև հարուստ և զա-
նազան բարձր երեւակայութեան հոգ-
ւով՝ երկինքը ելլալ ուղող ըլլալնին է:

Ուստի ինչ և իցէ նկատմամբ ասոնց հետ ծանօթութիւն ընելու սկիզբ տրւած ատենդ, պէտք ես դիտնալ, որ մէկէն ի մէկ իրենց կամքը ընելու չը պիտի պատրաստուիս, ու երբեմն ալ պէտք ես իրենց անհաճելի ըսածներուն լուռ կենալ, կամ երբեմն ալ քեզի հաճելի ըլլալուն ցոյց մը տալ, և քու պարզամտութեամբ մտածածդ մէկէն իրենց չըսել, և զիրենք միշտ վըտանդաւոր արարածի մը տեղ պէտք ես բռնել: Վասն զի ասոնց բարեկամութեանը հաւատարմութիւն ընողը զինքը կը խարէ, ո՞վ զիտէ ինչ փորձանքի պատահած պիտի ըլլայ անմեղ դժուշացունող խեղճը որ կըսէ թէ՛ ասոնց հետ քիչսոց չուտուիր. վասն որոյ եթէ կը կամենաս իրենցմէ չվընասուիլ, միշտ արթուն, քեթիք կենալու ես: Եւ եթէ կը կամենաս նաև որ իրենցմէ չնախատուիս, չըլլայ որ զիրենք անհանգիստ ընես աղաչանօք մը, կամ յաճախես իրենց տեսութեանը:

Նայէ որ դուլեա իրենց ծովի նման մեծ հարստութիւննին, բայց պահեա քեզ ցամաքի վրայ ունեցած պամպուէ տնակիդ մէջ. նայէ որ դուն իրենցմէ բնառուիս. չըլլայ որ ցուցընես քեզ թէ իրենց ընկերութեանը արժանի ես, և մի սեպեր ալ թէ քու վրադ մեծ վատահութիւն ունին. ըստ պատահման ասոնցմէ չոր հաց մը ստացած ես նէ, զանի ծունկիդ վրայ եղածի պէս վտանգաւոր սեպելիդ քիչ է :

Մի ալ հպարտանար քու իրենց հեա ունեցած ծանօթութեանդ կամ թըղթակցութեանդ վրայ. և եթէ այսպիսի կապակցութիւն մը՝ քեզի իբրև բաղդ երևնայ, դոնէ աս անհանդիստ և սրտադող բաղդիդ վրայ լռութեամբ ուրախացիր, մինչև անգամ դուռերնին չաղերու եղած ատենդ (խօսքի համար) նախ տես, որ քեզ տեսնող մը չըլլայ: Աւ մի ըլլար ան անմիտներուն պէս, որոնք այսպիսի մեծատանց հեա ծանօթութիւն ունեցած ատեննին՝ իրենք զիրենք պարտքի

կամ զանազան նեղութիւններու տակ
կը դնեն, որպէս զի հաւասարին
անոնց հետ. թէ և մէկ կողմանէ ասոնք
ալ կուրախանան որ առանց զիրենք
նեղելու իրենց տեսքովը իրենց ընկե-
րութեանը կը ներկայանան կոր, թէ
պէտ և միւս կողմանէ ալ վրանին կը
ծիծաղին: Որովհետև գիտէն որ զի-
րենք պարտքի գերի ըրած ըլլալով՝
զինքը իրենց անկարօտ կը ցուցնեն:
Որ աս հարուստները այսպիսիները
երեսէ ձգած ատեննին, իրենց ետեւն
ամէն վատութիւն կը խօսին. կամ թէ
չէ նէ եթէ ժամանակէ մը ետև նեղու-
թեան մէջ իյնալով, կերպով մը ի-
րենց օգնութիւնը խնդրելու ըլլող մը
ըլլայ, իրեն կըսեն, Սղբար ինչո՞ւ
աս չաղբը ըրիր կամ կընես կոր, եթէ
կարողութիւն չունիս նէ:

Կան աս հարուստներուն ծանօթ ըլ-
լալ ուղողներէն անձինքներ, որ իրենց
պատիւ մը կը սեպեն ամիրային որդ-
ւոցը սեղան տալը. և աս սեղանը
ամիրային սեղանէն եթէ աւելի ծախ-

քով չէ նէ, անկից ալ պակաս չէ. և այս պատիւէն իրենց որչափ նեղութիւն հասնիլը, իրենք ու իրենց քեսէն դիտնալէն վերջը, ընտանեաց ևս կը պլլըշկի : Որմէ ինչ բարկութիւններ, ինչ հայհոյութիւններ տեսեր եմ, և ինչ բժըշկի պատճառ եղող յանդդնութիւններնուն պատահեր եմ. ինչ է, ամիրայիս որդւոցը ստամոքսը պարտադուցեր է :

Մի հաւատար ամիրայի մը քեզի հետ անտարբեր եղանակաւ վարուելուն, խնդալուն կամ ծիծաղելուն, մինչև անգամ քեզ խորհուրդ հարցունելուն. վասն զի ահա մօտիկցած է քեզ երեսէն ձգելուն ժամանակը :

Ատոնց աս դժբաղդ ծանօթութեան մէջ, որչափ կարելի է նէ զգուշութիւն պէտք ևս ընել. իրենց առջին սիրտէդ չխնտալ, կամ մօրկանդ և կնկանդ հարազատ ձեռքերէն ելած կերակուրը ախորժակով ուտելուդ պէս իրենց փախաւան չուտելու :

Նմանապէս օրական աշխատութիւ-

նըդ մտռնալու համար գինեւտան կէս քացխամ գինիով գերդաստանիդ ուրախութիւնը վայելածի պէս, եթէ իրենց հառաւմով և աղքատաց արիւնովը ներկուած, երկար ժամանակ հառաւմաշէն մաղազաներնին հինցած խռմանտարեանին խմելու ըլլաս, կանարդեն քեզ: Որ մէկը գրեմ, որ մէկը ըսեմ. գերիութեան կեանք մըն է աս չաստուածներուն հետ ընկերութիւն ընելը. վասն զի ետինին մնաս կաքացեն, առջինին կենաս կը խածնեն:

Աս նեղութիւնները դուն քաշած ատենդ, կը տեսնես որ տաղխաւորի մը սկսեր է յաճախելու իրենց տունը. և որովհետև իրենց վսեմութեանը առջին նորընծայ մըն է և որուն ըրած շողոքորթութեամբը լաւ ալ էյրեւմիշ կըլլան կոր. ատոր համար, այս միջոցիս, թէ և քեզ բոլորովին չեն ձգեր նէ երեսէ, բայց քեզ ալ անոր կարգը կովսին բռնել: Անոր տուած անունին մօտ անուն մըն ալ քեզի կուտան, և

կսկսին, ծօ կամ օղակ անունով քեզի
խօսելու, որ արդեօք մօրկանդ, մա-
նաւանդ կնկանդ ինչ ցաւ է, եթէ լը-
սեն աս քեզի տրուած կոպիտ անունը,
զորոնք դուն կը խարենս, որ ամիրան
քեզ շատ կը սիրէ, հեմեկ տե սեկսիզ
չըլար :

Սւելի լաւ չէ մի սիրելիս, որ դուն
ասեղիդ կամ չեքիճիդ քեզի տուած
օրական հացովը գոհ ըլլալով՝ ուտես
ու խմես և վայելես քու գերդաստա-
նիդ անմեղ վայելումը, քան թէ աս
կուռքերուն գերի ըլլաս :

Գիտեմ որ եթէ այսպիսի անձ մը իր
բարեկամ ամիրային ձեռօքը վերոյի-
շեալ ծունկիդ վրայի հացէն լաւ բաղ-
դաւորութեան մը գալու ալ ըլլայ նէ,
եթէ այս ամեն աշխատանքը և քա-
շած նեղութիւնը հաշիւ ընելու ըլլայ,
կը տեսնէ որ աւելի իր ծախքովը եղած
է, քան թէ ամիրային շնորհօքը : Եւ
արդէն ըսած մէկէն ի մէկ ասոնց հը-
րամանը չկատարելու ըլլալուդ պատ-
ճառը այս է, որ իրենց հրամայած բա-

արդիւլեմ, դուն գուցէ զիս պիտի նախատես, եթէ ճամբորդութիւնս կարգացած չես նէ. բայց զիացիր որ եթէ իրեն տուած ապրանքդ առանց շահելու իրեն ծախեցիր նէ ալ, ինքը զանի քեզմէ առնելովը իբր մեծ բարիք մը քեզի ըրած կը հաշուէ, որ եթէ քեզմէ շահնելու ըլլար ուրիշէ մը պիտի առներ և ո՞ր դիտէ ինչ աւելի ալ թանկ գինով:

Վայ քեզի, եթէ տեսան որ ուրիշ խաթուն մը կամ պարոն մը նոյն բանը քիչ մը աւելի աժան գինով առեր է նէ, (թէ և առածը վատ ապրանք է) տես ան տտենը քու հարդ: Ինչպէս գուցէ գլուխդ եկած ալ ըլլայ, եթէ տուած ապրանքդ իրեն անհոգութենէն ապականեցաւ, իրաւ է քեզ գուցէ չղրկեր իր յօքմայէն ուտելու, բայց վայրդ կը բերէ ամէն օր զրեթէ գլուխդ կը զարնէ այնպիսի բառերով և ծիծաղմամբ, որ քեզի նոյն յօքման տեմիրե լեպրեպի ուտել կըլլայ; մանաւանդ եթէ փողը տուած է նէ. չէ

եթէ վրողը չէ նէ տուած՝ դացիր ինծի
պէս օխխային տակը, պաղ ջուր մը
խմէ առնելիքդ վրան. որն որ եթէ
վճարելու ալ ըլլան նէ, քեզի օգուտ
մը չունենար :

Նոյնպէս լաւ կընես եթէ հասկըցը-
նես իրենն որ մէկուն քեզի ծածուկ բան
մը ըսելը չես հաճիր, և դուն ծածուկ
պահող չես. վասն զի եթէ քեզ այս-
պէս չցուցնես, ի հարկէ իրեն քեզի
ծածուկ ըսածին դադտնի մնալը աղա-
չած ըլլալովը, դուն թէ և դադտնի
պիտի պահես նէ ալ, բայց ուրիշէ մը
բանը իմացուելով, քեզմէ չըլլալը
լաւ դիտէ նէ ալ քեզ կը չարչարէ .
պատճառը, որովհետեւ քեզի յայտնած
էր : Ատոր համար մի ընդունիր իրեն
քեզի ըսելու դադտնիքը, և եթէ ըսե-
լու ալ ըլլայ, ուրիշէ մը յետոյ լսելով
քեզ յանդիմանելու չըլլալը իրեն յա-
ռաջադոյն ըսելու ես. վասն զի ասոնք
այնպէս կը կարծեն թէ իրենցմէ վար
եղողները պարտական են իրենց ա-
մէն յանդիմանութիւնը տանելու, ի-

րենց հետ խոնարհ վարմունք ունե-
նալու :

Եթէ ասոնց մէկը քեզի կամ զաւ-
կիդ կամ կնկանդ սպարդե մը ըրաւ
(որ եթէ չամչցող ամիրային կամ
խաթունին են, կամ զաւլըներնուն
շատ մը դորձածած բանն ալ չէ նէ)
դիտցիր որ եթէ կատարեալ եղանա-
կաւ շնորհակալութիւն մը չըրիր նէ
իրենց, այսինքն իբրև տասանորդ,
զատ կերպիւ սպառիւ մը կամ շնոր-
հակալութիւն մը չցուցըցիր նէ, վայ
կուգայ քեզի, թէ իրմէն և թէ քու
կընկանէդ, որն որ եթէ իմացաւ նէ
իրենցմէ քեզի եղած յանդիմանու-
թիւնը :

Զգուշացիր նաև սպարդե անունով
իրեն տուած բանդ՝ գուցէ աւելի գի-
նով իրեն ծախելու յոյսէն. վասն զի
զանի բողոքովին կորսնցունելէդ վեր-
ջը, այնպիսի բան մը ուրիշ անգամ
ունենալդ ու զանի ուրիշի մը ծախե-
լըդ լսելու ըլլայ, Սղբար ինծի բե-
րէիր, ևս աւելի գինով քեզմէ կառնէի

ըսելով՝ իրեն հետ խմած խախփեց
զեհիր կըլլայ քեզի :

Քու ընտանիքդ իրենին հետ տեսու-
թիւն ընելնուն տուած համարձակու-
թիւնը ամենեին մի ընդունիր, կամ
մի համարիր քեզ պատիւ մը, եթէ չես
ուզեր ամիրադ շուտով կտրանցունել :

Մի խոստանար նաև իրեն խոստ-
մունք մը կատարելու. վասն զի պա-
տահմամբ մը զանի կատարել չկարա-
ցած ատենդ, վայ կուգայ քեզի, վա-
սըն զի անոնց բնութիւն եղած է մէ-
կուն վրայ ծիծաղիլը, իրենց զեֆքը
հանելը, քու խոստամունքիդ կատակո-
վը քու վրագ խնդալը :

Մի վախնար իրենց բաց ճակատով
արդար խօսելու, բայց առանց կրթու-
թեանդ արատ մը տալու. ու թէպէտ
և քեզ մինչև գետինը իրենց առջին
չխոնարհելու ես նէ ալ, երբեմն ալ
աւելի սիրտդ ամուր գոցելու ես քան
թէ տանդ դուռը :

Սա ամենէն վերջը զգուշանալու
է իրենց մէկ շինելու բաներնուն

պահտութիւնը կամ անպիտանութիւնը իրենց չըսելու, եթէ չես ուզեր նէ անմիջապէս իրենցմէ մէկ անպիտան խօսք կամ անուն մը լսելու, որուն համար երկայն ատեն մտածելու կարօտ չեն: Ես թէ և՛ լաւ պիտի ըլլայ ըրածդ, երբէք չգործածեցի նէ ալ, բայց յետոյ վատ ըլլալով՝ ուրիշ իմաստ վորութիւնս չգործածողին յանդիմանելով կըսէին, քու խրատէդ լաւ բան մը յառաջ դալը չտպասուիր ես, պէ հեքիֆ չգիտցած բանիդ մէջ ինչ կը խառնուիս չթողուցիր որ իմ գիտցածիս պէս շինէի:

Բայց եթէ քու խորհուրդովդ ըրած բաներնէն իրենց քեսէիև կամ անձնական ինչ և իցէ օգուտ մը տեսնելնուն պէս, կտկտին ըսելու. պաշկա մարդ է, հեքիֆը բան գիտէ, պօշ մարդ չէ, և այլն, և կերպով մըն ալ աս ըսածնին քու ականջդ դալը կուզեն, և աս քու վրադ ըրած գովեստին համար կուզեն որ դուն ալ իրենցմէ քեզ չըրասի նրածի պէս սեպէս:

Գիցուք որ գիտուն անձ մըն էս, ու
ունիս բարեկամութիւն իրենց հետ ,
բայց կարօտ էս յիշեալ ողորմելի
կերպիւ իրենց հետ վարուելու, և կու-
զէս զիրենք կրթել. գիտցիր որ իրենց
մարդասիրութիւն կամ բարեգործու-
թիւն սովըեցընելը կամ իրենց սիր-
տէն կիրքի և շարութեան արմատը
խլելու մի ևնոյն օրինակին դժուարու-
թիւնը ունիս, որ գրեցի ոմանց հոգե-
ւորականաց կիրքը յաղթելու վրայ:

Եւ աս գիտնալու էս, որ դուն
աշխարհական ըլլալովդ՝ քառասնա-
պատիկ քաջ խօսելդ իրենց այնչափ
չ'ազդեր, որչափ իրենց սիրշիշկը յի-
շեալ հոգևորական շողոքորթի մը
խօսքը. որուն տգէտ նախապաշա-
րեալ ըսուածքը, քու մատով ցուցը-
ցած իրաւունքներուդ դէմ անառիկ
բերդ մը կը սեպեն. վասն զի այսպի-
սի հոգևորականաց շողոքորթութիւնը
ասոնց կուռք արձաններուն առջին
իբրև անուշահոտ խունի տուող բուր-
վառն է:

Արդէն աս ունայնասէր ամիրաներ-
նուս սիրտը միշտ կասկածի մէջ ըլ-
լալով՝ ամէն մարդ իբր թէ զիրենք
ատող կամ իրենց թշնամի կը կար-
ծեն . ասկից առաջ եկած է որ իրենց-
մէ վար եղողները , կամ իրենց վիճա-
կակիցներէն զանոնք որ բանով մը
ատոնց ունեցածը անոնք չունին, ինչ-
պէս արիութիւն , իշկիւզգարուքիւն
և այլն , մարդու տեղ չեն սեպուիր :
Վասն որոյ փոխանակ աս գերիու-
թեան ծանօթութիւնը իրենց հետ ընե-
լուդ , ետ քաշուէ , ու նայէ որ քու աշ-
խատութեանդ տուած պանիր հացը ,
խաղաղ և զուարթ սիրտով ուտես . ին-
չու որ չունին ան քու զգացած կա-
րեկցութեան զգացումդ կամ իրենց-
մէ սպասած մարդասիրութեան օգնու-
թեան հոգին , որուն պատճառը միշտ
հարստութեամբ մեծցած ըլլալնին ,
և թէ արդէն քեզի սպասմամբ առաջին
խեղճ վիճակնին մտոցած և ի մանկու-
թենէ միշտ իրաւունք ունենալով մեծ-
ցած ըլլալնին է :

Վասն որոյ այնպէս վարուէ իրենց հետ, որ թէ և տունդ պահք կուտես կամ ուտիք, քիչ կամ շատ, գոհ ես և իրենցմէ բան մը չես սպասեր. որպէս զի փոքր ժամանակէ վերջը՝ աս շուքի նման բաղդաւորութիւնդ և գոլորշիքին նման սլատիւդ որ պիտի կորանցունես, կարողանաս աս խրատիս համեմատ կեանքդ անտարբեր պահած ըլլալովդ, ուրիշները որ զիտեն քու ամիրայիդ բարեկամը ըլլալըդ, և հիմա զինքը չունենալովդ, տեսնան քու մի և նոյն կացութեան մէջ ապրելիդ ու չծիծաղին վրադ:

Աս ալ պէտք ես զիտնալ որ ասոնց բնութիւն եղած է՝ աւելի չար լուրի հաւատալ՝ քան թէ բարի լուրի մը. ատոր համար կը խրատեմ քեզ որ չըծախես իրենց ան ապրանքը, որ քու կըդ չէ. վասն զի քու ձեռօքդ ծախողը պիտի հաւատայ որ մեծ հարուստ ամիրայի մը զանի ծախելովդ մեծ ալ փող շահեցար իրմէն. մեծ ամիրան ալ զիտնալով որ զանի ուրիշէ մը առած

ես, ի հարկէ անկից շահ մը ունիս կը հաւատայ, որ դուն ոչ մէկէն և ոչ ալ միւսէն փող մը շահեցար : Եւ որ վատն է, քանի մը օր գործածելէն ետեւ սպրանքը քեզի ետ տուողներ շատ կը գտնուին, որ դուն գուցէ ամիրային խօսքին հաւատալով ծախուած կարծեցիր. և սպրանքին տէրը չկըրնալ հաւտացընելով որ դեռ ամիրայէն փողը չես առած, և իրեն աղաչանքը կատարելու համար հանեցիր քու փողէդ. կէսը կամ ամէնը վճարեցիր : Արն որ եթէ մեծ աշխատանօք կը հաւտացընես նէ ալ որ իրեն սպրանքը առանց իւսկուր ուտելու միայն մարդասիրութիւնդ կատարելու համար ծախեցիր, բայց ինքը ուրիշ իրաւունք մը կունենայ քեզմէ իր փողը ուզելու. դուն ալ ամիրայէն, եթէ իսկապէս ծախու առած է նէ ալ՝ փողդ չես կըրնար ուզել. որ ասանկ դէպքեր ազգիս մէջ յաճախակի կը սպատահին :

Հոս յիշելու արժանի կը սեպեմ մէկընելու մեծ զգուշութիւնդ, որ չըլլայ

Թէ իբրև մարդասիրութիւն՝ մարդ մը իրենց ծառայութեանը կամ ինչ և իցէ գործողութեանը յանձնարարութիւնը նեւ . վասն զի իրենց վարմունքովը կամ զինքը կապականեն և կամ յիշեալ վարքերնուն նմանցընելովսին՝ դուն պատճառ եղած կըլլաս իրեն դժբաղդութեանը . և կամ բնութիւննին մէկըզմէկու չհամաձայնելով, խեղճին առջի ունեցած հացը՝ ինչ որ էր նէ՛ կորսընցունելուն պատճառ եղած կըլլաս :

Ամիրայի մը հետ բարեկամացած ատենդ, մի նախատեր իրեն առջին քու ուրիշ փնաս տեսած բարեկամ ամիրայդ . վասն զի իրեն ականջը հասնելով՝ կունենաս մէկ մեծ թշնամի մը . և ան որ բարեկամ եղած ժամանակը քեզի որ չօգնեց, թշնամի եղած ատենը փնաս տալուն ամենեկին մի տարակուսիր : Նոյնպէս չըլլայ որ աստնցմէ աղքատի մը համար ողորմութիւն ժողովես . վասն զի եթէ քեզի համար ժողովելդ չեն կարծեր նէ

ալ, անկէց քեզի օգուտ մը ըլլալը
անպատճառ կը յուսան :

Ստոնց ընկերութեանը մէջն աս
դիտնալու է, որ երբեմն ասոնք կը
պարտաւորեն քեզ գողութիւն ընելու,
և դուն ալ ակամայ կամօք շեւ կրնար
դէմ կենալ. զօր օրինակ: Իրեն միջ-
նորդութեամբը, կամ կերպով մը իր
միւշտեքիին ասորանք մը կը ծախես՝
ուսկից ինքն ալ կառնէ. և որովհետեւ
ինքն է միւշտեքիին փողը տուողը,
վասն որոյ եթէ իմ հաշիւս ալ իրենին
հետ մէկ տեղ հաշուէ չըսաւ նէ, մէ-
կէն հաշիւդ բեր ըսելուն՝ դուն իրե-
նինն ալ զատ գրուած կուտաս իրեն :
Ինքը աս տեսնելուն՝ ծօ՛ աս ինչ է,
հերի՛՛ֆ պօշ մարդ ես, դնա՛ շխտկէ
(այսինքն գողութիւն ըրէ իմ պարտքս
միւշտեքիին հետ մէկ քուստըս մը
ըրէ) ես չըլլայի նէ... կուզես որ քեզի
պատահա՛վա՞ աշխատիմ, կըսէ :

Ձէ եթէ զարի՛՛ֆ գողերէն է կամ տը-
ղաքը լուսաւորող է նէ, սրտէն սրողը
լով հրաշքով մը եթէ փողդ տուաւ նէ՛

գիտցիր որ ալ չպիտի քեզի հետ առուտուր ընէ. կամ թէ առանց քեզ գողութեան յորդորելու ու փողոց տալու քեզ փէք աղեկով մը կը ճամբէ, որ դուն բան չունիս նէ զնայ ու եկուր, վասն զի ան չպիտի տայ մինչև որ իր շահելու Փայրգովը չլրանայ իր տալու սխարտքին դումարը :

Ան շատ մը ուրիշ ասամէն գրածներէս աւելի սատամութիւններ, գիտելիքներ և ընելու զգուշութիւններ, որոնք մէկ մէկ գրելը թէ անկարելի է և թէ քեզի ալ շատ օտար քաներ չըլլալուն համար՝ աս չափս բաւական սեպեցի աս անուամբ ազգատաց հայր եւնսփը քաջալերող սեպուած ժամանակուան սխառուական և ազգասէր ամիրաներնուս վրայ. ու այս վերջին մէկ խօսքս ըսելովս գիտցիր որ ասոնք մեզի հետ ունեցած վարմունքովն կուզեն որ մենք զիրենք տիեզերաց կեդրոն սեպենք և կուզեն ալ որ իրենց կամքը զիւրութեամբ կատարուելու համար, ամէն մարդ իրենց ծառայէ.

կուզեն նաև որ ինչ որ լաւ է կամ մարդու վատք է, իրենց ըլլայ. գուցէ մինչև անգամ միտքերնէն կանցնի, որ աղքատը պէտք էր իրենց առողջութեանը համար մեռնիլ, որպէս զի իրենք անմահ մնան. վասն որոյ եթէ հարուստներուն չմեռնելը կարելի ըլլար, մէկ աղքատ մը չէր ըլլար աշխարհիս վրայ:

Ասոնք կուզեն ամենէն սիրուիլ, մեծ համարուիլ և պատուիլ, ու ամեն իրենց ըրած պակտութիւնը պակտութիւն չսեպուիլ, արեգակը իրենց համար ծնանի իրենց հրամանաւը մտնայ. թէ և այս ամեն բաղձանքներէն վերջը, անիրաւ և բռնաւոր ըլլալնին ևս զիտեմ, դուն ալ զիտես. և ոչ միայն ան ալ որ բաւականութիւն ունեցող մարդը, այլ և զիրենք կրող անբան անասուններն ալ, եթէ խօսելու ըլլային, կրնային վկայել:

Ահա ևս որ տարիներով զիրենք և իրենց աղքատաց սրտի կրակովը եւիամ հառամ սեղաննին օրհնող հողկորա-

կաններնիս մաղէ անցունելնէս վերջը՝
հիւթերնին հանեցի, որոնցմէ թերևս
ներկայ ապրող և զիս ալ լաւ ճանչցող-
ներ կան: Որոնք զիտեմ պիտի ըսեն,
չէինք յուսար Պայեանէն, որ իրեն
մեզի հետ ըրած տեսութեան նկա-
տումը, մեր վարքը և գործողութիւնը
հայելիի մը պէս ազգին ցուցընել է
եղեր: Չտրտմին ասոր, ինչպէս ես
տրտում սրտով զրեցի նէ. վասն զի
միտքս ազգիս աչքը բանալ ու զինքը
իր դժբաղդութենէն երջանկութեան
փոխադրել է: Վասն զի կը յուսամ
որ ազգէս անոնք որ աս Սատուծոյ
շնորհացը կարօտ արարածներուն ինչ
ըլլալը լաւ մը չեն զիտեր, պիտի օրհ-
նեն զՍատուած, որ տուաւ իր սուրբ
ազգեցութիւնը ինծի, որով սա ազգօ-
գուտ աշխատութեանս մէջ համառօ-
տիւ ասոնց յիշողութիւն ըրեր եմ,
որպէս զի իրենք բազմաւոր գանուե-
լով եթէ առիթ չունեցան նէ ասոնց
զերիութեան կամ բարբարոսութեան
դժբաղդութեանը պատահելու, գոնէ

իրենց դաւկրները աս պատուական և պիտանի դիտութիւնը ունենալովն՝ զգոյշ կենան աս կենդանի բարիսեցիներուն խմորէն ուտելու :

Բայց կրնայ ըլլալ որ դուն ապաւինելով քու արթնութեանդ, կուզես այսպիսիներուն հետ վարուիլ, բնտանեկցիլ, ծանօթանալ, առանց փորձառութեան զիրենք ճանչցողին խրատը, զգուշութիւնները լսելու. կամքը քու կէ. բայց ես քեզ նորէն կը խրատեմ, որ եթէ կամենաս իրենց բարեկամանալու, բնաւուէ՛ ասոնց ընկերներէն ան հարուստ ամիրան, որ իրեն հարըստութիւնը կը պատուէ իրրե Սատուծմէ իրեն արուած գործիք մը, որն որ չուրանար իրեն բաղդաւորութեանը վրայ պատասխանատու ըլլալը. գիտէ ալ որ Սատուծոյ իրմէն պահանջելիք համարը, աղքատներէն պահանջելիքէն շատ ճիշդ և շատ տարբեր է. կը խոստովանի նաև որ աղքատները Սատուծմէ իրեն պաշտպանութեանը յանձնուած են :

Այսպիսւոյ մը ոչ միայն բարեկամ եղիր, այլ և դերի ըլլալդ պատիւ մըն է քեզի, որ քու միջնորդութեամբդ *ս* դիտէ *ս*րչ" փ աղքատաց օգնութիւնըդ կրնայ հասնիլ, մանաւանդ զասոնք իրենց ապաստանը սեպող թեհահաւատ աղքատներուն, որոնք զիշեր ցերեկ ձեռքերնին առ Աստուած բարձրացուցած անոնց կենացը համար աղօթեցնին իրենց պարտաւորութիւն սեպած են :

Այսպիսի մեծատուն մը իրեն ձեռօքը իր արքայութեան ժառանգաւորութիւնը վատահացընելէն վերջը, իրեն անխղճմտանք ընկերներն ալ կը պարտաւորէ, կը խրատէ, կը յորդորէ որ գոնէ ազգային աղքատին օգնեն և ողորմին, ու ազգը իր հայու պատուովը պայծառացունելնուն զործակից ըլլան :



ԳԼՈՒԽ ՈՒԹԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

Հսկարտութիւնը թէ Սատուծոյ և թէ մարդկան առջին ատելի բան ըլլալը չենք կրնար ուրանալ, բայց ասոր վերայ գրողի մը կամ խօսողի մը միտքը լաւ իմանալու է. վասն որոյ եթէ ըսեմք զի որ զգուշացուր քեզ հասարակ մարդու մը հետ տեսութիւն ընելէն կամ զինքը յառաջ քաշելէն, մի կարծեր հսկարտ եղիլը ըսել կուզեմ: Այլ գիտցիր որ ան մարդը որն որ պայտազը մարդ է, կամ տաճկին ըսածին սէս ինտիքեալը է, այսպիսին եթէ առաջ քաշել ուզես, կամ աստիճանի մը դնես, ինքը կրթութիւն չունենալով չկրնար քու ուզած վարքիդ դառնալ, և դարձած ալ եղած ըլլայ՝ առժամանակեայ է: Ասան զի իրեն մէջ մը բնութիւն եղած է իրեն ունեցած վարքը, և քաղաքավար վարմունքով ասլիկը իրեն նեղութիւն կուզայ, նաև

քեզի ալ մեծ նեղութիւն է այսպիսին կրթել ուզելդ, որ իրեն համար վատնած ժամանակովդ կամ օգնութիւնովդ՝ կրնաս շատ մը բնութեամբ լաւ, միայն ձեռք տուողի մը կարօտ եղողներուն յառաջ դալերնուն սլատճառ ըլլալ :

Իրաւ է որ բնութիւնը և իր չար սովորութիւնները կը յաղթուն կրթութենէն, աս չենք կրնար ուրանալ . բայց երբոր մէկու մը ունեցած մտլութիւնը իր արմատէն չէ խլուած, այլ արտաքուստ միայն ձեացեալ կերպով մը կրթեալներուն մէջը ըլլալուն համար մեծպարիեքեկ կամ իր ասլրուստին կամ ինչ և իցէ շահին համար չունի առիթ, չկրնար իր բուն չար բնութիւնը կամ սովորութիւնները դորձածել: Վասն որոյ երբոր այսպիսին իրեն արմատացեալ բնութիւն եղած վատութեանը առիթներուն մէջ կիյնայ, կը նայիս որ կը դառնայ ևս առաւել չարագոյն կըլլայ քան զառաջինըն: Ինչու որ վտանդն և իորձառու-

Թիւնն է որ կը փորձէ զմարդ, և մենք
ալ աս ըսածիս սառուցութեան շատ
պայծառ և ականերև շօշափելի օրի-
նակներ ունինք. որոնցմէ ոմանց նաև
հոգևորական ձեռքովն զրուած գործ-
քերն ալ կը կարգաս և կը տեսնես կոր
և ազդիդ կամ օտար ազդերուն մէջն
ալ տարածուելուն կը ջանաս կոր :
Ստոր համար մեծ զգուշութիւն պէտք
է ընել այսպիսի կիսակատար կըր-
թեալներուն վրայ, որն որ օրինակով
մը կուզեմ քեզ համոզել :

Ինչպէս արդէն զիտես որ հրէայք
միշտ կը նսխատուին տղէտ քրիստո-
նեայներէն : Թագաւորին մէկը ունէր
հրէայ և քրիստոնեայ երկու սիրելի
ծառայներ, բայց մէկզմէկու թշնամի
և նախանձող : Օր մը ասոնց կըսէ թէ
նով որ մէջերնէդ մէկ քաջ ինծի հաճե-
լի գործ մը ընելու ըլլայ, այս ինչ
պարգևը իրեն կուտամ : Հրէայն քրիս-
տոնէին կատուի մը թագաւորին ֆիշ-
նանով խախտի տալ սորվեցընելը
խմանալով իրենց որոշեալ օրը թագա-

ւորին ներկայացած ատեննին, հրէայն
կադաչէ որ նախ քրիստոն եայն իրեն
քաջութիւնը ցուցընէ. որն որ հեռը-
ւանց կը խրկէ կատուն ձեռքը ֆիլճաւե
մը խախտելով թագաւորին երթալու :
Թագաւորը մեծ ուրախութեամբ և
ծիծաղմամբ ֆիլճաւեք առնելու եղած
ատենը, հրէայն ծոցէն հանած տոսպ-
րակի մը մէջէն քանի մը մուկեր ար-
ձակելուն պէս, կատուն ֆիլճաւեք կը
ձգէ թագաւորին ծիրանի զգեստին վը-
րայ ու կը վազէ մուկերը սրաւու : Հրէ-
այն՝ թագաւորին զգեստը մտրուուե-
լէն և ձեռքը այրուելէն թագաւորին
զղացած բարկութիւնը մխիթարելու
համար կըսէ . մի այլայլիբ իմ մեծա-
զօր թագաւորս, վասն զի ահա աս է
ակամայ կամ առժամանակեայ կրթու-
թեան օրինակը :

Ս.ս մասադէս կրնաս իմանալ որ
կրթութիւնը մարդու մանկական ժա-
մանակէն սկստք եղած ըլլալուն հա-
մար, սկստք էր երախայութեան ատե-
նէն սկսիլ զինքը կրթութեամբ սնու-

ցանեւ, որ հիմակուան լուսաւորեալ սեպուած ժամանակին ասոր ալ ապաւինեւ չմոռնայ :

Ասոր համար մասնաւոր աղաչանօք գրեցի որ դաւկըներդ կրթելէդ վերջը իր տեսութիւն ըրած ընկերներուն ո՞վ ըլլալնուն զգուշութիւն ընելու ես, և իրեն տալու ազատութիւնդ իրեն բընութեան, կրթութեան, ուսման համեմատ պէտք է ըլլալ : Վասն զի տեսանք, տեսար և կը տեսնեն կոր և ալ պիտի տեսնեն, որ տասն և հինգ տարեկան հասակէն վերջը քսանըվեց տարի հոգևոր քրաշգորտի մէջ կրթութեամբ մեծցած, կրթութեամբ սնած, կրթութիւն սովրեցուցած, ամէն աշխարհային զբաղմունքներէն հեռացած միայն ի հոգևորս պատահած, և հոգևոր դիտութեանց մէջ լողացած ըլլալովը՝ փոքր մի ժամանակ ազատութիւն գտնելով՝ փոքր մըն ալ կրթութեան քողի տակ քնացած իր բուն բնութիւնը արթնցունող ազատութենէն զրգուռելով արթնցաւ, ու

իր չար պտուղները հասցուց, և տօկոսեօք ալ վճարեց, և ձրի ալ բաշխեց և կը բաշխէ կոր, բաշխէ պիտի նէ ալ. ուրեմն ինչ ըսենք, ինչ յուսանք, ինտո՞ր ապաւինինք ան անյազթելի աշխարհային փորձութեանց քրաւզուրի մէջ կեանք անցունելու պարտաւորեալ եղողին :

Ատոր համար կրթութիւնը կը պահանջէ զգուշութիւն . տես ան որ մեղք է, յառաջ քան դուն զանի գործելոք ինքը քու խղճմտանքիդ կը դըրդէ որչափ որ ալ անզգայ ըլլաս: Բայց դուն չես զգաստանար կոր, ինչու որ առջիդ եղող փորձութենէն քեզ ետ չքաշելուդ համար: Ուրեմն եթէ պատմած մասաշիս կատուն մուկը չտեսնէր՝ փէք շնորհօք իր ծառայութիւնը պիտի ընէր, կամ գուցէ իր ձագութեան ատենէն մուկի ձագի հետ ցատկուտելով, խաղալով մեծցած ըլլար (ինչպէս նաև ուրիշ թռչուններու հետ մէկ տեղ ապրողները տեսած եմ միևնոյն խափեսիս մէջ հան.

դարտ ասրելինն.) ան ատենը ոչ
թագաւորին ձեռքը կայրէր, և ոչ ալ
զգեսաւը կաղօ ոտուէր: Նոյնպէս յի-
շելու է, որ կրթութեան ովկիանոսին
մէջ յիշեալ լուսոյուողին էյրէրի
հազաձ կամ փոխ առաձ կրթութիւնը
եթէ փորձութեանց մէջ ինկամ չըլ-
լար, ոչ ազգերնու անուանը արտա
մը կուղար, ոչ ալ ազգիս ազգասէր
և ազգիս սրաուոյն նախանձ եղողնե-
րուն սիրտը կը կոտորէին: Ամ չէ մի
պատահաձ քեզի որ տեսաձ ըլլաւ քա-
նի մը վատ աստիճանի մէջ եղող երի-
տասարդներուն ընկերութեանը մէջ
ուրիշ մէկը, որ թէ և ինքն ալ իր ըն-
կերներուն չար վարքէն վար չմնար,
բայց շարժմունքին կամ գործողու-
թեանը մէջ կայ մէկ օտար երևոյթ
մը, գաղջութեամբ է բոլոր ըրաձ խօ-
սաձ շարութիւնները, որն որ քեզ ալ
կասկաձի մէջ կը ձգէ. ինչու որ անոնք
տղիտութեամբ կընեն, աս դիտու-
թեամբ. անոնք քեզի քեզի կերպով,
աս զարիփ, պայժաւ և բուն շարու-

թեամբ կամ ազան բաղձանօք: Աւերբոր առիթով մը կիմանաս իրեն ով ըլլալը, կը տեսնես որ եթէ ազնուականն ցեղէ մը չէ նէ ալ, ատենօք մանկութեան ատենը կրթութիւն առած է, և յետոյ քաղաքական կամ մէկու մը ձեռօքը իրեն պատահած դժբաղդութենէն յուսահատելով՝ ինքզինքը խարս զարկեր է, ու այսպիսի անկիրթ վատ ընկերներուն մէջ իյնալով, չէ ոնեցեր մէկը որ զինքը հեռացունէ ասոնց ընկերութենէն: Ար եթէ դուն այսպիսի ցաւելու դժբաղդի մը ձեռքէն բռնես եւ քաշես բերես՝ դնես կրթեալներուն մէջ նէ, կը տեսնես որ կամաց կամաց առջի քաղցր կրթութեամբը կեանքը կը վայելէ. ահա աս ըսածիս ինծի պատահած օրինակը քեզի պատմեմ:

Յիզայի երեւելի տօնակնման, որ ամէն երեք տարին անգամ մը կը ըլլայ. հոն դտնուած ատենս պէտք եղաւ որ երեք շաբաթ սպասեմ յիշեալ հանդէսը տեսնելու. ատոր համար գացի մօտ

եղած Փաշիգայ անունով գեղ մը ,
ուր օր մը շաղանակի անտառներուն
քով գեղջուկ սլանդոկի մը մէջ , ուս-
կից արեգական մասնելու ժամանակը
ձիթենեաց սլարտէզներուն վրայէն
մինչև մղոններով հեռու եղած դաշ-
տերուն գեղեցկութիւնը կը տեսնէի :
Աս միջոցիս հոն դանուած քանի մը
անձանց անկիրթ անվայելուչ խօ-
սակցութիւններուն ընկերացած քանի
մը հին հովանոց ունեցողի մը վարքը
կը ցուցնէր , որ իրեն անոնց հետ ըն-
կերանալուն կերպը՝ չէր իր ընկեր-
ներուն սէս , այլ իբր հետևութիւն մը
կերենար : Ու աս մարդս առիթով մը
եկաւ ինձի ու հարցոց , ուր տեղէն
կուգամ կամ ուր կերթամ . ու այսպէս
քանի մը իր ուրիշ խօսքերէն ինձի
վստահութիւն մը կուգար նէ ալ իրեն
հետ խօսելու , բայց չուզեցի հետը
երկայն ընտանեկցիլ :

Քանի մը օրէն վերջը որ կը ստը-
տէի անտառին մէջ , տեսայ աս տեք-
պետեր մարդը միևնոյն կերպով զամ-

բիւղի մը մէջ քանի մը հին հովանոց-
ներով ծառի մը տակ նստած կաշխա-
տէր . երբոր իրեն մօտիկցայ՝ խոնար-
հութեամբ զիս բարեկէն համարձա-
կեցայ իրեն մօտ նստիլ ու խօսիլ . ուր
իմ ճենովա երթալս իմացած ատենը
իրեն վրայ տրտմութիւն մը գալէն
վերջը՝ սրտէն ալ հառաչելու պէս ը-
րաւ : Հարցուցի իրեն ո՞ւր տեղացի ըլ-
լալը . ըսաւ, Թուրին քաղաքէն եմ :
Յէջքէն ելած ծածուկ արցունքը հա-
մաձայնելով իրեն հառաջանքին, եր-
դում ըրի Սասունոյ վրայ, գաղտնի
պահելու եթէ ինձի ըսէ իր տերտը :
Ուր պատմեց իրեն երեկի ընտանի-
քէ մը ըլլալը, ու եօթը տարի առաջ
եղած ապստամբութեան ընկերու-
թենէն ըլլալովը հոս փախած ըլլալը
ու տարաբաղդ պըտըտելը : Եւ առանց
բարբօրքի ըլլալովը չկրնար կենալ
երկու օր մէկ տան մէջ, ու հիմա եր-
կու հողի բարեկամ ունենալով զիշեր
մը մէկուն, զիշեր մը միւսին տունը
պառկելով, կամ երբեմն ալ անտառ .

ներուն մէջ դիշերը անցունելով ասարաբաղդ կեանքի մը մէջ է : Ուստի խօսքնութիւնս կը խնդրէր որ ձենովա եղած ընտանեացը հետ խօսիմ ու իմացունեմ իրեն վիճակին խեղճութիւնը, որովհետեւ չէ կրցեր վերջին ատենները 'լաւ եղանակաւ մը թըղթակցիլ կամ ապահով մէկուն ձեռօքը իրենց իմացունել :

Վիվօրնայի քօնսօրօզնիս զիս արդէն ճանչցած ըլլալով՝ և Պայեր հին բասթօրքիս Պայեան նոր բասթօրքիս սարբերութիւնը չքննելով, ու քանի մը օր առաջ իզմէ ստացած տաճկի րիւրիւնը երկայն հարձափորձութեամբ առջին առած ըլլալով, հին բասթօրքիս ձեռօքը կը դնեմ ասի գաղղիացի շողենաուն մէջ կը հանդիպինք ձենովա, նաև կը խրկեմ իրեն բարեկամները, որ կերթայ Մարտիլեայի վրայօք Մալգա : Բայց աս մարդուն դիտութեանը, քանի որ կեցայ իրեն հետ՝ դմայլեցայ :

Աս սլատահմունքէն համոզուեցայ

սիրելիս , որ մարդս միշտ չարութեան միտում ունենալուն համար , չարութենէն ի բարի վարս բերելու դժուարութիւնը դիւրացընող իր մանկութեան ատենը ստացած լաւ ուսումնու կրթութիւնն է : Ասան որոյ մեծ բարեգործութիւն մը ըրած կըլլաս եթէ այսպիսի դժբաղդի մը օգնելու ըլլաս . բայց ի հարկէ պէտք ես ալ ամէն նեղութիւն , համբերութիւն յանձն առնել . ապա թէ ոչ , չարագոյն կըլլայ քան զառաջինն : Ասոր համար մէկէն այսպիսի մը ատելու չէ . և եթէ առիթ մը եկաւ իրեն հետ տեսութիւն մը ընելու , հանդարտ կերպով և պաղ վարմունքով տեսութիւն ընելու է :

Եւ եթէ հասարակ կամ չար ընկեր ունեցող մարդ մը , որն որ եղանակաւ մը իբրև քու իրեն ըրած օգնութեանդ երախտագիտութեանը համար քեզի պարզև մը բերած ըլլայ , մի ընդունիր ու փոքր ի շատէ իրեն բան մը տալով հեռացիր իրմէն . կամ իրեն հասարակ մարդ ըլլալովը մի կարծեր որ քու

իրեն հետ քաղաքավար խօսելից քեզ
կանարդէ : Բայց իրեն անկարգութիւ-
նը չտեսնելու աւելով, իրեն հետ
համարձակ ընտանեկցութիւն կամ
ապահովութիւն ընելու ըլլաս, իրեն
քեզի դէմ վատ ըլլալուն պատճառ
կրնաս ըլլալ. վասն զի մոռցած է, չու-
նի քու բարութիւնդ ճանաչելու լոյ-
սը. ինչու որ վատասիրտը չընտռեր
իրաւունք, այլ առիթ իրեն վատու-
թիւնը կատարելու :

Եւ չըլլայ որ պարզմտութեամբ այս-
պիսւոյն օգնութիւն մը խոստանաս .
վասն զի ան ատենը կը ձգէ կամ կը
զաղջանայ իրեն օրական աշխատու-
թեամբ դտած հացէն, ու բոլոր յոյսը
քու վրայ դրած ըլլալով, յետոյ քու
խոստմունքէդ դիպուածով մը անպը-
տուղ ելած ատենը, քու բոլոր առջի
իրեն ըրած մարդասիրութիւնդ մոռ-
նալէն վերջը, քեզ իրեն թշուառու-
թեանը պատճառ կը սեպէ, և ասանկ
կամ դուռէդ չպակտիր կամ քէսէիդ
կը դպչի : Ասան որոյ առանց խնայու-

նելու, նախ իրեն ըրամ խոստմունքդ
ձեռքդ անցնուր, յետոյ իրեն հաւանու-
թեամբը տուած խօսքդ կատարէ: Եւ
նայէ որ այսպիսիներուն ստակ փոխ
չտաս. վասն զի արդէն մէկուն տուած
փոխդ եթէ միտքդ զանի ետ եզել է,
զիտցիր որ մուրանալ է. չէ թէ՛ ֆեհի-
ութեամբ տուած ես նէ՛ գողութիւն է:

Ուրեմն եթէ կարող չես առ վտան-
գաւոր ծանօթութիւնը գլուխ հանել,
լաւ ըրամ կըլլաս և մեծ խոհեմութիւն
եթէ ամենեկին չսկսիս իրեն հետ ծա-
նօթանալու. այլ գոհ եղիր քու ապա-
ւինած և զիւրութեամբ օգնած մարդ-
կանցդ օգնութեանը. վասն զի գոհ
որտով ստացածդ աւելի արժողու-
թիւն ունի քան թէ բոլոր աշխարհք
ունենալդ:



ԳԼՈՒԽ ԻՆՆԵՒՏԱՍՏՆԵՐՈՐԳ.

Ազգիս ան խուճրը որ հայրենիքս
կը բնակին՝ առելի առիթ ունին պա-
լատականաց կամ տէրութեան պաշ-
տօնատէրներու հետ ծանօթութիւն
ունենալու, քան թէ ուրիշ երկիրներ
բնակողները. ասոր համար աս վիճա-
կիս մէջ եղող մեծերուն հետ ինչպէս
վարուելուն գիտութիւնը որչափ ես
իրենց ծանօթ եմ, ուղեցի գրելու: Որ-
պէս զի գիւրութիւն մը իրենց տուած
ըլլամ. բայց ամէն տեսածներս չգրե-
լուս պատճառը, վասն զի կան իսկա-
րիովտացիներ, որ իրենց համբուրովը
մարդս կը մատնեն: Երկրորդ ալ կա-
րելի է որ այս չյիշած ասելի գործո-
ղութիւններս հիմա թեթեցած ըլլան. •
ասոր համար, քանի մը խօսքով կու-
ղեմ լմնցունել. որ նախ և առաջ մի
մտնար պալատական առուտուրի մէջ
եթէ չունիս կարողութիւն կամ հարըս-

տութիւն կամ շողոքորթական եղա-
նակաւ խօսել :

Յետոյ պէտք ես գիտնալ, որ եթէ
յառաջացար իրենց հետ ծանօթու-
թեանդ մէջ, և սկսար ընտանի կեր-
պով իրենց հետ վարուելու. ձգէ ուրիշ
օտարները, քու ազգէդ քեզի թշնամի
եղողներուն բազմութիւնը քեզի բա-
ւական է: Այնպէս որ պալատական-
ներուն հետ վարուելու կերպը քեզի
այնչափ դժուարութիւն չտար, որչափ
քեզմէ յառաջ կամ քեզմէ վերջը պա-
լատ մտնողներէն քաշած նեղութիւ-
նըդ, մանաւանդ անոնցմէ՝ որ քու
ազգէդ են: Որ քեզի ըրած թշնամու-
թեան ցաւը, մէկու մը քու վիզդ սղո-
ցով կտրելէն տուած ցաւին պիտի նը-
մանցունէի, ըայց ասկից ալ աւելի է:

Աս ցաւը ես գիտեմ, և մէյ մըն ալ
անոնք՝ որ երկու եղբօր զաւկըներ էին
կամ քայրն և էնիշտէ էին. ան աս-
տիճան նախանձ և թշնամութիւն ու-
նեցան մէկզմէկու վրայ, որ ուժով
զտնուողները միւսները աքսորելէն

վերջը՝ իր եղբայրը հացի կարօտ ընողը վերի յիշուած ևեհիջերին է, միւսն ալ իբր աւետարանական առաքինութեանց մօտեղ սեպուած է :

Եթէ աչքդ առ իր սիրելիս պալատականներուն ծառայել, պէտք էս փոքր ի շատէ կրթութիւն պարկեշտութիւն ունենալ, և մաքուր զգեստով մտնալ ու ելլել իրենց առջին, շուքերէս և խոնարհ ըլլալդ՝ իրենց առջին յարգութիւն ունի, նմանապէս հանդարտ և ուղղախօս և աւատաձեռն պէտք էս ըլլալ :

Զգոյշ եղի՛ր շատախօս, կամ քեզի տուած համարձակութենէն լիբր չըլլալու. մի խօսիր ան բանը որուն ըստոյդ ըլլալը լաւ մը չէս դիտեր, նըմանապէս քու լեզուիդ ոճը իբր թէ իրենց մայրական լեզուն խօսելնուն յարմարցընելու համար սխալ մխալ խօսիլ, չիմացունել իրենց քու կամքիդ, սովորութեանդ, բնութեանդ դէմ ըրած բաներուն քու դժուարդ դալը. որ եթէ աս զգուշութիւնները

ըրիր, կրնաս իրեն հետ համաձայնիլ:
Բայց ասով յառաջ գալդ ամենևին
մի յուսար, վասն զի շատ բաներ կան,
որ քեզ սակն ի վեր կը բերեն. շատ ալ
ճամբաներ կան որ քեզ կրնան յառա-
ջացընել, մանաւանդ իմ հայրենիքիս
պալատին մէջը. բայց ես կը խրա-
տեմ որ մինչև անգամ իմ թշնամիս
չմտնայ, չբաղձայ այս բաղդաւորու-
թիւնը ունենալու, քանի որ ազգիս
մէջ նախանձի, թշնամութեան չար
խղճմտանաց մոլութիւնը կայ:



ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԳ.

Հարկաւոր սեպեցի զիտնականի մը հետ ինչպէս վարուելու կերպը զրելու, որպէս զի ազգիս մէջ գտնուող զիտնականներուն յարգութիւնը զիտցուելով օրէ օր լուսաւորութիւնը շատնալուն ալ առիթ ունենանք: Արովհետեւ իմ տգիտութիւնովս համոզուած եմ որ զիտնականը, բայց անվնաս, խաղաղասէր հոգւով ճշմարիտ լուսաւորիչ զիտնականը պատուելու է. ատոր համար կը յանդգնիմ ըսելու որ մի նախատեր զիտնական մը որ իր անմեղ զրած գործքերը համեմատ չեն գործողութեանը: Զոր օրինակ, քաջ սպայոցցով և համողելի կերպով զրեց մարդասիրութեան վրայ, ու ինքը թէպէտ և քու փոքր ինչ իրեն ըրած աղաչանքդ չընդունեցաւ. կամ զրեց աստղաբաշխութեան վրայ, ու չուզեց քեզի անձամբ անոր վրայօքը

պատմել. կամ զրեց աղգասիրութեան վրայ, ու ինքը իր աղգային մէկուն նեղութեան՝ որ օգնելու կարող էր շօղնեց:

Այս ամէնը տեսնելով զ շունիս իրաւունք այսպիսոց մը դրած գիրքերուն մէջը որ երկպառակութիւն, ստեղծութիւն, թշնամութիւն և այլն չըլլալէն ի դատ՝ կեղծաւորութիւն, պատասիրութիւն, սուտ չկայ, և մանաւանդ թէ՛ ամէն բանիրուն և աստւածավախ և մարդասէր անձինքներէն ալ կը կարդացուին: Գուն զինքը լըրագիրներուն մէջ կամ ժողովուրդին առջին չպիտի անարդես, որոնց մէջը դանազան միաքի մարդիկներ կան. այլ մանաւանդ թէ՛ դո՛հ պիտի ըլլաս և ուրախ սրտով ալ աղգդ յորդորելու ես որ առնեն, կարդան և բան սորվին, և տարածեն. և զիրենք քաջալերելու ալ ջանք ընելու ես, որ այսպիսի գիրքեր դրեն տարաբաղդ աղգիդ:

Կայ սիրելիս գիտնական որ արբեցութեան վատութեանը և անկից յա-

ուաջ եկած չարիքներուն վրայ կը գը-
րէ, ու զինքը իր սենեակին մէջ գինով
տեսած ատենդ մէկէն կը դաւթակղիս.
բայց ես կըսեմ որ սխալ ես, վասն զի
կան երբեմն մէկէն աչքի չերեցած բա-
ներ, որ այնպէս վատ չեն ինչպէս
կերևնան. և կան ալ մարդիկ որ մաս-
նաւոր կը խմէին, որպէս զի գրեւորուն
ուժ կամ միտքերնուն պայծառու-
թիւն մը գայ, կամ իրենց կեանքեր-
նուն զեկը ձեռքերնին չըլլալուն հա-
մար չզիտեն զիրենք կառավարելը:
Կամ անոնք որ իրենք ալ գիտեն ինչ
և իցէ գրածնին սխալ և հակառակ
իրենց վարքերնուն ըլլալը, բայց չեն
կրնար փոխել իրենց ոչ վարքերնին
և ոչ ալ գրածնին. վասն զի այնպիսի
առիթներու մէջ են որ իրենց ըսած-
ներուն, գրածներնուն համեմատ ընե-
լը իրենց դժուար կուգայ կամ անկա-
րելի կերևնայ:

Ձգեմ անոնք որ ըրած գրած չարու-
թիւններուն որդը սրտերնին կուտէ
կոր, բայց ինչ ընեն գայթակղութեան

Նիւր բարձրացաւ, որուն առջին առ-
նելու միջոցը որ մեզի դիւրին կերե-
նայ, իրենց Սրարատ լեռը փոխադրե-
լու դժուարութիւնը կերենայ. ինչու-
որ այս տեսակ կիրք յաղթելը մենք
չենք գիտեր ինչ ըլլալը, որոնք եթէ
խոհեմ ըլլային, մտիկ կընէին ասոնց
մարդարէին տուած խրատին որ « փա-
խիր և թագիր առ ժամանակ մի մինչև
անցցէ բարկութիւն (տեսուն) » աղ-
զին աղգասէրներուն ատ ալ չեն
ըներ, վասն զի ուր երթան նէ ախը,
վախը, օձը իրենց հետ մէկ տեղ պիտի
ըլլայ: Ասով կը գտնուիս ընկերութեան
մը մէջ ուր կը պատահի քեզի անձ մը
որ գիտուն գործքեր գրեց, և շինեց,
ու հոն երկու բառ վրայէ վրայ չգի-
տեր խօսելու, մի դարմանար. վասն
զի գիտցիր որ կան մարդիկներ որոնք
միայնակութեանց մէջ իրենց պատա-
հելու ըլլաս, կըմայլիս իրենց քաջ
խօսքերնուն վրայ, որ բազմութեան
մէջ կըլլան ուրիշ մարդ մը:

Չէ մի պատահած քեզի որ ուրիշնե-

բու սովրեցուցած բանդ, զանազան առիթներու մէջ քեզ բոլորովին նոյն ուսման անձանօթ օտար ցուցրցած ևս, պատճառը մի միայն դուն գիտես. ինչու որ մարդս ունի երբեմն մէկ նրկատում մը կամ յանկարծուստ տեսակ մը մտածողութիւն, որ իրեն ներքին մտածողութիւնը չճանչցողը կսկըսի զինքը դատել: Կան ալ ոմանք որ իրենց նախատած անձինքներուն ինչ և իցէ ունեցածներուն չհասնելնուն համար կամ անոնց դէմ ըրած յանցանքնին ջատագովել ուղելնուն համար, անանց ճշմարտութեան կամ ուղիղ վկայութեան զանազան սուտերով խօսելը իրենց երած սրտերնուն մը խիթարութիւն կը սեպեն, կամ անպիտան գրուածքներով ըրած դատողութիւննին կը նմանի բժշկի մը պատկերհանին գործը կամ պառաւի մը փիլիսոփային գիտութիւնը դատելուն կամ զանի սուտ հանելուն: Սյսպիսի դատողներուն գիրքերը կարդալը, խօսելնին լսելը ու հետեւիլը նախա-

տինք կը սեպեմ. ուր մնաց իրենց հետ ընկերութիւն ընելու ստորագրուիլը :

Բայց հիմայ պիտի ըսես թէ, ուրեմն ինչէն է որ մենք կընենք. վասն զի տղէտ ենք և չունինք հոգի բազդատութեան. վասն զի դնենք որ երկու հոգի հաւատարիմ բարեկամ էին, և մէկզմէկու բարիքը, կամ ըսեմ չարիքը յառաջ տանելու վրայ երդում ընելով մէկզմէկ վստահացուցած էին: Յետոյ մէջերնէն ինչպէս կըլլայ, ան որ վերակացու է, իր ընկերէն պահանջած խնդիրքին օգուտը ինքը միայն պիտե՛ր ըսենք, կամ յետ կատարուելուն իրեն ըսել չուզեր ըսենք. սակայն իրմէն խնդրուած պահանջուած խնդիրքը չկատարեր, ու կը սրդողի, և իր ընկերէն ալ կը դատուի: Հիմա չես կրնար ըսել որ իրաւունք ունի (ընկերէն թողում դատուելուն կամ թէ բնութեան հրամանին շնորհազանդելուն պակասութիւնը Քրիտոսին հրամանին դէմ) ընկերին վրայ չար վստութեամբ և

անիրաւութեամբ խօսելու, աս դուն
ալ գիտես:

Նւ որ ծիծաղելին է, կամ եւ առա-
ւել պիղծ և զգուելին, եթէ խօսելու
ըլլայ ան բաներուն վրայօքը, որն որ
եթէ ինքը ընկերութիւննին հաստա-
տած ատենը չէր սահմանած նէ՛ գոնէ
անոր պայծառանալուն, զարգանա-
լուն աշխատած և ինքն ալ գործած
ու յորդորած է իր աշկերտները ու
հիմա ատած եղբայրները, որ զանի
ևս առաւել զարգացընելու ջանան:
Վասն զի կարելի է որ քարի մը տա-
կէն ելլայ Սրբահամու զաւկըներէն
յանդուդ մը ու ըսէ իրեն որ սա գիհե-
նի հրոյ պատժոյն տակ եղած անուն-
ներով կանչած եղբօրդ, ու իր ըրած
գործածած բաներուն նախատելի ըլ-
լալը հիմա հեռուանց ըսելուդ, ինչո՞ւ
իւր քովը եղած ատենդ չըսիր ու մա-
նաւանդ թէ զիշեր ցերեկ խորհելով,
խորհրդակցելով ու խորհուրդ տալով,
խորհուրդ առնելով, գրելով, սրբադ-
րելով բանին սգին և ծուծը հանելով

Ջանացիք յառաջ երթալուն և այլն,
և հիմա այս ինչ է ըսողին՝ այս է տը-
ւած պատասխանը, որ մենք ինչ որ կը
գրենք ու կը քարոզենք, չհաւատալ-
նուս համար չենք գործքով ընել :

Ուրեմն սիրելիս այսպիսի մէկը ինչ-
պէս վերը յիշուեցաւ, միայն տգէտէ
մը կը գովուի ու կը պաշտպանուի,
բայց Քրիստոսի աւետարանը հասկը-
ցողին առջին կը խայտառակի. վասն
զի գոնէ գիտնալու էինք ան ուսկաց
առակը, մ'ապաւինիր անոր որ մէյ
մը խարեց: Վամ չմոռնալու էինք ան
ձեռք ինկած աւաղակը, որ իր ընկե-
րը ձեռք չտալու համար մեզմէ մար-
դասիրութեան կարեկցութիւնը զըտ-
նելէն ետև՝ ընկերութեան հաւատար-
մութեան վրայ ըրած երդումը պահե-
լուն համար իրեն ներեցինք և զինքը
պատուեցինք :

Բայց ես քեզ կը խրատեմ, որ եթէ
այսպիսի յիշեալ յանցանքներուն մէջ
գտնուեցար կամ զատուեցար ընկե-
րէդ՝ կուզես քեզ արդարացընել և

դանի ալ ամչցընել, կամ յանցանքդ
որ թէ և աններելի է՝ նախատինքդ
թեթեցընել, ամենայն ջանքով առա-
քինի վարքով և քաղաքավար և Քրիս-
տոսի ապտակին օրինակովը ապրելէդ,
եղբօրդ ներելէդ, և եղբայրդ սիրելէդ
և այլն ետե, նոյն Աստուածորդոյն
աւետարանը հոգի առած պըտըտե.
լուն պէս պըտըտէ: Արն որ եթէ ըն-
կերիդ հետ հաշտութեամբ ապրած
ատենդ աս ըսած վարքովս ապրէիր՝
այնչափ յարգութիւն մը չէիր ունե-
նար. նոյնպէս այսպիսի բարի վարքդ
ալ սրտի մը համոզմունք կամ թափան-
ցելու զօրութիւն չէր ազդէր: Ասոր
համար ըսուեցաւ որ եթէ մէկը իր
թշնամիին անօթութեանը հաց կու-
տայ և ծարաւութեանն ալ ջուր, ահա
կայծակունս հրոյ թշնամիին գլուխը
թափած կըլլայ: Ահա թշնամի մը ա-
մըչցընելու եղանակը, ահա աւե-
տարանը կուլ տուող՝ անոր ուտումը
որոճելով ժամանակը անցունողին
վարքը, և մերն ալ իրմէն պահանջե-

լու և մեր որդւոցն ալ իր գործքովը սորվըցունելուն: պարտաւորութիւնը:

Ուստի կը խրատեմ քեզ, որ երկու գիտնականաց մէկզմէկու եւախայէն բռնած փողոցներու մէջ մէկզմէկ տիգմի մէջ թաւալել ուզող անկիրթ թէնչպէրներուն պէս պատուի կամ իրականց պահանջման համար ըրած ատելութիւններնուն մի խառնուիր և մի ալ գայթակղիր, այլ հեռու կեցիր, որոնց երեսը ես հոս թերտէ մը քաշելով, դառնամ բուն իմ նկատմանս:

Գիտես որ աշխարհիս վրայ զանազան վիճակի մէջ մարդիկներ կան, և ասոնց ամենուն հետ որովհետեւ զատ կերպիւ պարտ ենք վարուիլ, ուրեմն զլիսաւորարար պարտքս է բժշկներուն և փաստաբաններուն վրայ ալ քանի մը բան խօսիլ. վասն զի ասոնց հետ ալ յաճախակի տեսութիւն ընելու առիթնիս պակաս չէ:

Որչափ արթուն ըլլաս սիրելիս, և զզոյշ առողջութիւնդ պահելու վրայ, զրեթէ միշտ բժշկի կարօտ ես, չես

կրնար իրենց վարպետութեանցը և վարպետորդութեանցը վրայ դատում մը ընել, այլ քեզ իրենց խղճմտանքին և Աստուծոյ կամացը յանձնելով իրենց պէտք ես հնազանդիլ, չափաւոր և զգուշաւոր կեանքդ պահելով. և այս կանոնով ալ պէտք ես փաստաբաններուն հետ վարուիլ, և ամենեին, եթէ կարելի է, քեզ իրենց ձեռքը չըձգել, կամ իրենց փեկեջներնուն չըգալ: Ասան զի ասոնց քեզի օգնութիւն ընել ուղեւնին, աժան զինով հաստատ լաւ տուն մը քեզի շինել խոստացող խորամանկ ճարտարապետին կը նմանի. ասկից է որ խեղճ իմամին սիրտը երելով Պու զեմպիլ եվիկե կիրսի՞ն ըի ըսած է. և ասկից ալ է որ տաճկին առակը ըսած է. Ան ձեռքը որ չես կրնար կտրել ու նետել, պէտք ես ճակատդ դնել եւ պաքնել: Բայց աս երեքին ձեռքը իյնալէդ վերջը՝ զիրենք փոփոխելէն քեզ զգուշացուր, եթէ կարելի կըլլայ, որուն համար մեծ խոհեմութիւն պէտք ես գործածել:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՒՄԻԵՐՈՐԳ.

Եթէ զինուորներու ծանօթութենէն քեզ կրնաա նէ ետ քաշել՝ լաւ է. վասրն զի ասոնք բռնորովին քու վիճակէդ քու կացութենէդ դուրս մարդիկներ են. բայց որչափ կարճամիտ մարդ ալ ըլլաա՝ դիտնալով իրենց յարգութիւնը պէտք ես զիրենք պատուել. վասրն զի անոնք ալ քեզի պէս մարդ են : Եւ մանաւանդ թէ, որպէս զի դուն քու տանդ վայելմունքը վայելես, կամ կեանքդ մարդու ձեռօք եկող դժբաղդութիւններէն ասպահովցուցած ըլլաա, ինքը քու ազատութեանդ համար իր կեանքը վտանգի դրած է, քու ազատութեանդ համար զինքը գերի ըրած է : Դուն ազատ կամօք զըւարճութեամբ դաշտերը պըտըտած ատենդ՝ ինքը թշնամոյդ դէմ պատերազմելով իր արիւնտովը դաշտերը կը ներկէ :

Գուն հարուստ կամ աղքատ հաւնա-
ծրդ կուտես, ուղածդ կը խմես, կեր-
թաս հոն ուր կուզես, կապրիս ինչպէս
որ կը կամենաս, կերթաս առազաստդ
երբոր որ կամք կընես. բայց անիկա
այս ամէնքը չունենալէն վերջը, և
իր երիտասարդութիւնը այսչափ ծանր
ծառայութեամբ անցունելէն վերջը,
եթէ քեզի համար չմեռաւ, իր ծերու-
թեան ատենը իր արդիւնքը մուրանալ
է, կամ կարօտութեամբ անցունել է :
Որ ան ալ կընար քեզի պէս բազդա-
ւոր ըլլալ, եթէ զինուոր եղած չըլլար.
որ ասոր հակառակը գող քաղաքացին
որն որ գուցէ ալ թագաւորին սեղա-
նէն կամ արկարէն կապրէր, թագա-
ւորին կամ տէրութեան ծառայեց ըսե-
լով, իրեն չըստը իրեն կուտանք, որ
երթայ ծուլութեամբ ապրի, ու դեռ ևս
ինձի կըսեն որ լուսաւորուեցանք :

Սակից և այսպիսի նախապաշարեալ
կոյր մտածմունքնէս կիմանամ հիմա-
կուան մարդիկներուն ինչ անխղճմը-
տանք ըլլալնին, որ խեղճերուն մե-

զի համար քաշած կամ ունեցած դրժ-
բաղդութիւնը տեսնելովքիս առաւ
ան զինուոր է ըսելով զինքը կը նա-
խատենք, և մեր պատիւը, կիրքը,
վրէժխնդրութիւնը ստանալու հա-
մար զինքը մահուան ճարակ կընենք.
ուր եթէ բաղդաւոր դոնուելով ոտքը
ձեռքը կոտրած ետ գայ նէ, զինքը մի-
տալով մը կը խաբենք, որն որ ոչ պա-
խալը կառնէ և ոչ ալ էքսկէսիւն :

Նմանապէս նոյն անտանելի կեան-
քը վարող ու մեր ապրուստին համար
անհանդուրժելի եղանակներուն նե-
ղութեան տակ ապրող ու աշխատող
գեղացիներուն վրայ եղած արհամար-
հանքին չհամբերելովըս կաղաչեմ որ
ասկէց վերջը պատուես զինքը և խոս-
տովանիս իրեն մարդկային սեռին մէջ
ամենապիտանի մարդ ըլլալը, և իր-
մով քու ապրելիդ, ու իրեն առանց
քեզի կարօտ ըլլալն ալ ճանչնաս:
Որ իր պատուական ձեռօքը հասուցած
ոչխարներէն, ցորենէն և ծառերէն
կը հողայ իր ամէն պիտոյքը, որ մենք

չենք ուզեր իրեն երեսը նայիլ, իրեն հետ ընտանեկցիլ, չենք ալ ուզեր զինքը մեզի պէս կառէ ծնած մարդիկնէրուն մօտիկցընել և ոչ ալ արժանի կը սեպենք զինքը որ Սասունոյ խորանին առջին մօտիկնայ, ու կատարես զիս որ քեզի հետ մէկտեղ լուսաւորուեցանք ըսեմ. եթէ ասի ըսեմ նէ ալ, դիւրութեամբ ուզածնուս չափ, ուզածնուս պէս չարութիւններ ընելու լուսաւորուեցանք ըսել կուզեմ, և ոչ թէ կեանքերնուս արուած քաղցրութիւնը վայելելու :

Նմանապէս գանք անոնց հետ սիրելիս, որ արհեստի տէր մարդիկ են, որոնց ինչ է նէ արհեստին, որով քեզի կը ծառայեն կոր, իրենց հետ մարդասիրութեամբ վարուելու ևս. մանաւանդ որ դուն արհեստի մը պիղծգիկ չունիս, որ ունեցած հարատութիւնդ կորսնցուցած ատենդ և ոչ մէկ զամբիւղէն երկու անասնոյ աաման կարող ես բաժնել: Ուրեմն գիտցիր արհեստաւորի մը արժէքը, Զաննա ձեռքէդ

եկածին չափ իր արհեստին մէջ առաջանալուն փորձութիւն մը ըլլալու, վճարէ՞ իրեն վարձքը դաշնադրութեանըդ համեմատ :

Նոյնպէս գիտցիր որ աստուածավախ վաճառականի մը հետ ծանօթանալէդ քեզի վնաս չզաւէն վերջը, օգուտ ալ զալուն մի տարակուսիր. բայց ասոնցմէ, ձգեմ չինացիները, հնդկաստանցի տաճիկները, սպարսիկ և իրեն զրացի այլազգ ազգերը, ու իրենց հպատակ եղող քրիստոնեայ եղբայրներնուս ընկեր եղող Ռուսաստանի ազգայիններնիս կամ քանի մը ունեցած Հնդկաստանի հայերնէս շատերը, որ եթէ իմ Օսմանեան տէրութեան տակ եղող ազգս իմ ատենուան աշի անուայ, խղճմտանքի տէր, շուքերես, աչքը կուշտ վարմունքնին չարատեցին նէ՛ վերոյիշեալներուն ընկերութենէն զիրենք զգուշացնելնէն ետե՛ մասնաւոր կերպիւ զգուշանալու ալ են հրէայներուն հետ ընելու առուաուրին հաղորդակցութեանը

առանց ատելութիւն ունենալու աս
ամենուն հետ: Ասան զի ես, ինչպէս
ճամբորդութեանս մէջ կը կարգաս,
որ 18 ամիս Բեթրօպուրկ իրենց մէջ
իրբև հրէայ ապրեցայ, (առանց հա-
ւատքներնուն գործառութեանը, բայց
միայն պէտք եղած տեղը քառւշեր
ուտելով ապրելուս պատճառ) տեսայ
որ ասոնց արեանը մէջ կայ շահասի-
րութեան հոգի, և եթէ ասոնք տէրու-
թիւն մը կամ զիրենք պաշտպանող մը
ունենալու ըլլան, կարող են աշխար-
հիս բոլոր վաճառականութիւնը ձեռ-
քերնին անցունել:

Ասոնք մեծ լուղ են, բայց հոն ուր
իրենց ստանալու շահ մը ունին, շատ
ալ զգոյշ և արթուն մարդիկ են, բայց
կասկած ունեցած տեղերը շատ վախ-
կոտ են. ուր որ փող շահիլ կայ, հոն
պանդխտելու, գանուելու պատրաստ
են. և ինչպիսի ընկերութիւն որ ըլ-
լայ, առուտորի վրայ խօսելն իրենց
առջի սովորութիւնն է:

Իրենց գործողութեանցը մէջ շատ

սրամիտ են և ծաղրաբան . ու իրենց
ըրած շողոքորթութեան չեմ կարծեր
որ ուրիշ ազգ մը կը հասնի . և ունին
մարդկանց հետ վարուելու զատ ե-
ղանակ մը , որով մեծ անձանց ներ-
կայութեանը կրնան զիրենք արժա-
նացընել : Աւասոնք բանի մը յապա-
գայ գալիքը նախադուշակելու մէջ
շատ տկար ալ չեն սեպուիր , մարդու
մը ապաւինութիւն չունին , բայց եթէ
զիտնան քեզ գաղտնասէր , արդար ,
և ուզութեամբ մանաւանդ պարզմը-
տութեամբ իրենց հետ կը վարուիս
և խօսքիդ վրայ հաստատ ես , հաւա-
տան ինձի որ կարօտութեանդ տասը
քրիստոնեայներուն ընելիք օգնու-
թեանը տեղ , ասոնցմէ մէկունը կը
բաւէ : Բայց եթէ գտաւ քեզ որ դորձքիդ
կացութիւնը վտանգի մէջ է , այն-
պիսի եղանակաւ իր վտղը հաւաստա-
ցընելով քու դորձքիդ կը հաղորդակցի ,
որ ի վախճանին քեզ բոլորովին մերկ
կը ձգէ և բոլոր առուտուրդ իր ձեռքը
կանցունէ . վասն զի շահասիրութիւնը

իրենց էութիւնը ըլլալուն համար, միշտ արթուն և զգոյշ կը կենան իրենց ստացուածքին վրայ: Աը ջանան նաև ոսկիի տեղ քեզի պահարտ տալ, երեք կանգունի տեղ երկուք տալ, հինը նորի տեղ ծախել, նոյնպէս խաշպ վողը լաւի տեղ տալ. մէկուն հետ ընկերութեամբ գողութեան ապրանք մը առած ատեննին, շատ հաւատարիմ են մէկզմէկու, զանի մէջերնին ծածուկ պահելու. և եթէ ինքը տեսաւ որ իրեն ցուցըցած շահաւոր բան մը չկրնայ պիտի ձեռքը անցունել և միայնակ շահաւորուվիլ, ինչ կընէ կընէ կը գտնայ ընկեր մը ան ապրանքը քեզմէ առնելու: Զոր օրինակ հին կամ նոր բան մը ասոնց մէկուն դուն ծախելու եղիք, և իրեն տուած դինը մի ընդունիր. ասիկա իմացաւքու միտքդ որ չպիտի տաս իրեն, կը գտնայ իր ընկերները որ կուզան քեզի մէկզմէկէ վերջը ու մէկը միւսէն ոչինչ գին մը աւելցընելով կամ ծաղրաբանելով ինչ կընեն կընեն,

ապրանքդ քեզմէ կառնեն: Եւ ասոնք
ոսկին և արծաթը և միշտ շահուիլը
շատ սիրելիսին, փոփոխութեամբ
առուտուր ընելը աւելի կը յարգեն.
որոնց վրայօքը հոս կարճառօտիւ գը-
րելուս պատճառը այս է, որ ասոնց
հետ ըրած ընտանեկցութիւնդ արթ-
նութեան կարօտ ըլլալը խմանաս:



ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԳ.



Քանք հիմա, դուն իմ պատուական ազգային սիրելի ընթերցողս, խօսելու վերջին անգամ մէկ ծանր մասին վրայ, որ է մեր հոգևորականներուն հետ վարուելու կերպը քեզի սորվեցունելը. որոնց վրայօքը ճամբորդութեանս մէջ մասնաւոր մանրամասն կերպով գրելէս՝ կիմանաս զուցէ, որ իմ միտքս զիրենք ատել չէ, բայց և ոչ ալ զիրենք ինծի Սատուծոյ արքայութիւնը քաջիւտ ընող ճանաչել է: Բայց որովհետև ես մարդկային վարմանց վրայ քեզի զիտութիւն մը տալ ուզեցի, ուրեմն ասոնց հետ ինչպէս վարուելը զիտնալդ ալ հարկաւոր ըլլալուն համար, իմ տասնըմէկ տարեկան հասակէս մինչև այս օրս իրենց հետ ընկերութիւն ունենալէս՝ իրենց վրայ ունեցած համարմունքս ազգիս

պատմելով, վերջ տամ գրքոյկիս :

Մեծ սխալմունք կընենք կոր, մենք ըստ որում հայ քահանայ անձը (առանց զանազանելու) ամէնը մէկէն նախատանաց, արհամարհանաց անուններով, չորը թացէն չզատելով զիրենք անարգանաց կրակին մէջ երեւնուս: Վասն զի կան և դոտայ ես հոգևոր վարպետներ և վարդապետներ, որոնք Քրիստոսի աշակերտ և առաքելոց յաջորդ ըլլալնուն համաձայն վարքովը՝ առանց անձնական շահ կամ նկատումն փնտռելու՝ չարչարանքը, տառապանքը, վիշտը և նեղութիւնը յանձն առած են, որպէս զի Քրիստոսի սիրոյ աւետարանը իրենց գործքովը քարոզելով, նոյն աստուածային վարդապետութիւնը տարածեն աշխարհիս վրայ:

Ալ հովուէն իրենց ժողովուրդը եղբայրսիրութեամբ, հեղութեամբ ու բարեգործութեամբ. ոչ պատիւ, ոչ շահ, ոչ փառք, կամ պարծանք աշխարհիս վրայ կը խնդրեն: Արոնց

բերանը իրենց սուրբ վարդապետին
պէս ոչ սուտ կայ, և ոչ ալ սիրտերնին
նենդութիւն, որ և իրենց մի միայն ըն-
թացքնին՝ քարոզութիւն է ժողովըր-
դեան: Տեսեր եմ, որ այնպէս խնամք
կը տանէր իրեն յանձնուած բազ-
մութեան վրայ, որ եթէ իրեն ժա-
մերգութեանը ժողովուրդէն մէկը
պակաս գտնուելու ըլլար, գաւազա-
նին կոթնած կելլար, կերթար, կը-
գտնար զինքը և կիմանար պատճառը,
ուր եթէ իր մխիթարութեանը կարօտ
էր, կը մխիթարէր. և թէ որ իր խը-
րատին, կը խրատէր. կամ թէ որ իր
օգնութեանը, կօզնէր. կը ջանար
զիրենք ի հոգևորս և բարոյական ա-
ռաքինութեան վայելմանը մէջ սնու-
ցանելու: Ու Նուսաւորչայ սուրբ եկե-
ղեցւոյն գիտութեամբը զիրենք զար-
գացընելու համար, կը նայիս որ եր-
բեմն հովուի մը պէս կանաչ գաշտե-
րու վրայ զիրենք գառնուկի նման
ժողոված քրիստոնէական վարդա-
պետութեան ուսումը այնպէս քաղցր

կը մեկնէր, որ ժողովուրդը կըսկսէր նոյն սուրբ վարդապետութիւնը որոճելով միաքը սահելու :

Երբեմն ալ առատազնեւրու տակ ծնողաց ծնողական պարտքը՝ որդւոց ալ որդիական պարտաւորութիւնը կը սովրեցընէր, այն սիրտով և այն փափաքով, որ յիրաւի կը տպաւորէր ժողովուրդին սիրտը իրեն հայրախնամ և հոգեշահ վարդապետութիւնը :

Որ այսպիսի մը անձնական փառքը, պատիւը և մխիթարութիւնը իրեն ժողովուրդը հողալ և դիրենք աստուածպաշտութեան և բարոյական պարտաւորութիւններնուն մէջ սնուցանելըն է. այնպէս որ մինչև մերձակայ դիւզերը և բազաքները բնակող ոչ միայն իրեն լուսաւորչեամ ժողովուրդէն, իրեն վարքը, խրատը տեսնելու, լսելու համար կուգան. այլ և օտար ազգերէն ալ քարապաշ տեւեկեիկ և ևճեհի վի քեւտիի շերտնար հազարը լսելով իրեն կը յաճախեն : Որն որ ոչ Բարից տեսած է ոչ Երու-

սաղէմայ վանքը կրթուած է, ոչ Վե-
նետիկի աստուածաբանութիւնը կար-
դացած է, ոչ ալ Վերադարձին... հե-
ղինակէն Քրիստոսի աւետարանին
ուսմանը կամ երդման հաւատարմու-
թեանը փորձառութիւնը սովրած է :
Այլ Հոգւոյն սրբոյ ազդեցութեամբը
զտնուած ժամանակին և ժողովրդ-
եան կացութեանը համեմատ իրեն
կեանքը սիրով և խաղաղութեամբ և
աստուածաշատութեամբ անցունելու
դիշեր ցորեկ կաշխատի որուն պաա-
ւական ընկերութենէն որչափ դաղջ
մարդ մըն ալ ըլլաս, զգացած քաղց-
րութենէդ ոչ հարատութիւն կերենայ
աչքիդ և ոչ ալ մեծութիւն . այլ օրա-
կան աշխատութիւնդ կատարելէ դվեր-
ջը՝ կուղես զինքը տեսնալ, որպէս զի
ինքը խօսի և դուն ալ լսես : Աւ ամե-
նեին չգար քեզի զանազանութիւն
ընել, իրեն հռովմէական, էջմիած-
նական կամ բրօթէստան ըլլալը . վա-
սն զի ինքը լաւ քու սրտիդ սպառ-
րած է, թէ գործքն է որ մարդս պիտի

արդացացընէ, և երանութեանց ալ հասցընէ.

Բոլոր իր պատմածը ուղիղ, խօսածը ստոյգ, գրածը ճշմարիտ, վարքը ընդունելի և քարոզութեանը համաձայն ըլլալէն ետև, նաև կը սորվեցընէ պիտանի կրթութիւն, ուսում, աշխատութիւն, և սովորութիւն. որուն ամէն անգամ նաև միևնոյն լուսաւորութեան վրայ խօսելը՝ դուն զանի առաջին անգամ լսածի պէս կընդունիս : Ինչու որ միշտ նոր հոգևով և նոր ապացոյցներով կամ օրինակներով քեզ իրեն բարի և ազգասէր նկատմանը կը յորդորէ :

Ձյոզնիր, վասն զի Սատուած պատժիբաժ է իր հերշտակներուն, որ պահեն զինքը իրեն ամէն գացած ճամբաներուն. (Սաղ. Գլ. Դ. 11 մինչև 16) : Ձգադրիբ ինչ կընէ կընէ, իրեն վարքովը, գործքովը ժողովուրդին կիրքը կը յաղթէ, գաղջութիւնը կը մարէ, միտքը ի բարին կարթնցընէ, և սիրտն ալ չարէն ազատելով բարոյական սի-

րով կը բորբոքէ: Աը խօսի այն բանե-
րուն վրայ որով աղոց սուր երևակա-
յութիւնը երկիւղով Տեառն և լուսով
ճշմարտութեան կը լեցունէ, և ժողո-
վուրդն ալ յայտնի կը տեսնէ իրեն
արժողութիւնը. կը սիրեն ինքզինք-
նին, կը վայելեն իրենց բարոյական
կեանքը, որն որ Սատուծոյ և մարդուս
մէջ իբրև մակերից մը ըլլալով մարդս
երջանիկ կընէ:

Աուրախանան և ուրախ սրտով ալ
կօրհնեն զՍատուած ու կը գովեն
իրենց այս վայելման ուսումը տու-
ղը, որուն հետեութենէն ցաւելով
իրենց խաւարի մէջ պտըտող եղբար-
ցը վրայ, կաշխատին ու կը յորդորեն
զինքը, որ ան ալ իրենց բարի զգաց-
մանը մասնակցի:

Աիմացընեն մարդուս պատիւը որ-
չավի մեծ ըլլալը Սատուծոյ առջին,
և իրենք ալ Սատուծոյ մարդուս վրայ
ունեցած սէրը հիմա յայտնի տեսնե-
լովսին կը վկայեն իրեն, որ մարդս
զերազանց արժողութեան վիճակի

մէջ ստեղծուած ըլլալէն ետեւ, Աստուած իր անհուն սէրը մարդուս ցուցնելու համար իր մարդարէներուն և Աստուածորդւոյն քարոզութիւնովը իրենց փրկութեան ճամբան դիւրացուցեր է :

Ահա սիրելիս, վարդապետէ և վարպետէ մը պահանջելու վարք և հոգի աշխարհիւնները զատելու ենք ատելիներէն ու պատուելու ենք զիրենք, մեր ճամբորդութեանը իբրև ամպհովանի հետեւելու ենք իրենց մեզի տրուած ուսման և յորդորանքներուն, իբրև մեզի մխիթարութիւն և շաւիղ երթալու յերկիրն Աւետեաց :

Ահա քեզի սիրելիս, ոսկիին արժողութիւնը աւելցընող արհեստաւոր մը վասն զի ժողովուրդ մը որչափ տղէտ ըլլայ կամ հոգևով սրբով զրած զըրբեր ալ ունենայ, զանոնք պտղաբերողը, մեկնողը ու լուսաւորողը վարպետը և վարդապետներն են :

Կայ մինայինք ազգիս առաջանալը պօռացողներուն կամ ուզողներուն

մէջ այսպիսի մը, կան մի ազգիս լուսաւորուիլը խնդրողներուն մէջ այսպիսին բնատու մը, կամ այսպիսիին արժողութիւնը գիտցող մը : Այլ կան մի ըրած ուրացողութիւնները ու ընելու ֆրոնչրտախնդրութիւնները « Ազգասէր հոգեւոյս » անունովը խարերայ շարչարան մը, կան մի զարիֆ իքի տիրեմ պիր շէյրտէք կուվարար, կրամու մը, մանաւանդ իւսիւ վի տեօյիւնիւնիւն ըն տեյիւնիւն մը : Անց մի տղէտ կամ եօնուրմամը ըսայց քիւչաննի պատուասէր և շահասէր մը, և ան որ ամենացաւալին է, շարածիճիկ ուխտադրութի մը, որ մինչև անգամ հոգեւոյս բարբարներուն և արեգական ճակատը ընկնպերոքրեան քրտինքովը ազգասէր և բարեպաշտ ազգատներէն մէկիկ մէկիկ հաւագուած եկեղեցիին ողորմութիւնը կը գողանանք և կուտանք իրենն : Ասան զի ով պիտի դատարիսաղ ըլլայ որ եկեղեցիին հաւատարիմ որդեցը հետ միարանեալ գող բարբարէն

Քրիստոսի դանձանակին հաշիւը պահանջելուն տեղ, անոյշ սիւսպիյեէն պօզու դարձած ազգասէր հողուովը, գողակից ըլլալուն վայելած պատժովը զինքը պատժէ: Այլ կը զրկենք զինքը ու կը բերենք կը կեցունենք մէջերնիս, կուտանք իրեն մեր անմեղ գաւկըները ու առջին ծռելով գլուխնիս յիշեալ գող բարերարին հետ կըսենք իրեն « Գու ես տեսանելի լուսաւորիչ ազգիս հայոց » ան հայ ազգին որուն քաջութեանը անունը օտար երկիր օպէլիս քի վրայ փորված պահուած ըլլալը իրենք չտեսան նէ, ես կարգացի:

Այս կերպ իրենց հետ վարուելնիս սիրելիս, ու գործողութիւննիս արդեօք քաջ և փառահեղ Հայկին հայ ազգը նորէն կանգնելու կամ լուսաւորելու համար է, ոչ երբէք. բայց մեր ան ազգատեացներուն հետեւելովնիս, որ ամէն մէկը իրենց կիրամոլ գործողութեամբը, նոր զանազանութիւններ և երկպառակութիւններ կը հանեն

կամ պարեախներ կը բանան կոր,
իրենց օրը օր ընել տալ է: Ուրեմն աս
կացութիւններնուս հետեւունք ալ
քաջ արիւնով պիտեայ եղած ազգին
քարը քարին վրայ չմնալուն պատճառ
չէ մի:

Ստոր համար յառաջ քան յիշեալ
հոգևորականներուն հետ ունենալու
վարմանց վրայ խօսելու, կը մտածեմ
որ ազգս ինչ խորին տգիտութիւն և
կուրութիւն ունի, որ մինչև այս օր
եղած այս ամէն դայթակղութիւնները
տեսնելնէս և մեզ ալ լուսաւորեալ սե-
պելնէս վերջը, կը յարգենք խօսող
մը քան թէ գործող մը. կը սիրենք
ջերմեռանդ աղօթող մը քան թէ բա-
րոյական կեանք ունեցող մը. աւելի
առատածեռն կըլլանք կարծեօք վա-
յելման տեսանելի մեծ շէնքերուն,
քան թէ շօշափելի բարոյական փոք-
րիկ ընկերութիւն մը հաստատելու:
Եղճեպ կըլլանք կովարար երկպառա-
կիչ մը պաշտպանելու, քան թէ մեզ
սուրբ միութեան սիրոյ յորդորող մը,

որուն յորդորանաց քաղցրութիւնը
խաղաղութիւն կուտայ սրտի, պայծա-
ռութիւն կուտայ բանականութեան,
լոյս կուտայ իմանալու և դիւրութիւն
կուտայ ձեռնարկութեան :

Սակից է որ ցաւած սրտով աւանդ կը-
սեմ իմ ազգիս, այս քաջ անունը կը-
րող հայ ազգիս, ու այն նեղութիւն-
ներէն տառապանքներէն չյաղթուող
յաղթող ազգիս, որ անհանդուրժելի
նեղութեամբ այնքան վտանգաւոր
սուրընթաց ախրերըներէն անցաւ ու
հիմա տա լուսաւորութեան դաշտին
մէջ գտնուող ըրմախիւն մէջ պիտի
խեղդուի: Ասան զի մէկ կողմանէ իր
լուսաւորութեանը արդելք եղող թըշ-
նամին յաղթելու համար պոպիկոտօք
եղունքներուն օգնութեամբը միու-
թեան ժայռին երեսը սլանալը ոմանք
ժաւնարիք և տգէտ հոգևորականները
տեսնելով, իրենց սև հոգիներն կրող
զառաղաններովն ին կը զարնեն կործե-
ռուրնուն, որպէս զի իյնան բարձր ժայ-
ռէն վար ու կոտոր կոտոր բաժնուին :

Միւս կողմանէ ալ ոմանք անխորհմտութեամբ եկօրիւն ամիրաները՝ որ գոնէ սա յետիններուն օգնելնուն և ողորմութեան կամուրջներ և դիւրութեան նաւակներ շինելնուն տեղ՝ եղածներն ալ կապականեն կամ կը դողանան կոր, որպէս զի ժողովուրդը յուսահատութեան մէջ խեղդուի:

Հիմա դուն սա արդէն դիտցածներդ իզմէ նորէն լսելուդ սրթողելով, մի արտորար կաղաչեմ, Պէ նաև ըստ ներս տեսնենք ցուցուր այս ըսած գոված վարպետներդ և վարդապետներդ, « սուրբ ըսածնիս խաչը ծոցէն կելլէ կոր » ըսելու: Որպէս զի նորէն քեզ յանդիմանելով մէկդի ձգէ սա ընկերիդ հետ վիճակի և հաւատքի արնաւեր և աղգակործան ատելութիւնը ու սիրէ զինքը իբրև զանձն քո ըսելս չլսես: Ուր կը տեսնես ան ատենը, որ անձրեկէն վերջը սիրուն արեգակին անուշութենէն դուրս վազող առջակեկօզներու պէս չյուսացուած քարերու տակէն ինչ մարգարէներ և Սբրահա-

մու զաւակներ կելլեն: Աան մէջեր-
նիս սիրելիս, մի տարակուսիր, այսպի-
սի քաջ հովիւներ և ճշմարտութեան
լուսովը լուսաւորեալ աւետարանին
քարոզիչները, բայց ինչպէս ըսի, չը-
կայ զիրենք ու գործքերնին բնառող
ճշմարիտ հայ մը: Աասն զի դարս
խարերայներու ձեռքն անցաւ և ազգս
ալ իրենց հետեցաւ:

Ատոր համար առիթ գտան շատ մը
ոչխարի հանդերձով գայլեր ու մտան,
որ և ոչ անգամ կատարեալ կարգալ
ու գրել զիսցող ազգիս մէջ, ու Քրիս-
տոսի երամակը իրենց ներքին չար
նպատակներուն հասնելու ճամբուն
հակեցընելու համար, դրին առջևնին
հաւատքի կամ ուրիշ ատելութեան
խշոխշոխ և երկպառակութեան գըր-
քերը: Արոնք լուսաւորեալ Եւրոպայի
է ըսելով, զանոնք կարդալու յորդո-
րելնուն պատճառը՝ տարաբաղդ ազ-
գիս միտքը բոլորովին (նորէն կըսեմ)
թմրեցընել է, և ոչ այլ ինչ:

Տես ինչ օգուտ տեսաւ ազգս այս:

պիսիւներէն մինչև հիմա կամ ինչ պը-
տուղ քաղեց իրենց պիղծ գրուածքնե-
րէն, եթէ ոչ ներկայ իր յուսահատ
բաղմարածին . . . վիճակը, որ պատ-
ճառը մենք ենք. վասն զի սիրեցինք
չարչարանը, ու ստորագրուեցանք
խարերայներուն ընկերութեանը :

Ուստի թէ և ես հոս կսկսիմ բուն
իմ նկատմանս վրայ խօսելու նէ ալ,
բայց աղաչանքս այս է, որ սա սուրբ
երգումնին ուրացողներուն վրայ իմ
յապագայ ընելու պատմութեանս կամ
արդէն ճամբորդութեանս մէջ ակա-
նատես վարքերնին քեզի գրելէս՝ չը
կարծես զիս իրենց թշնամի : Վասն
զի միտքս սա չըլլալը քեզի գուցէ
կասկածելի է նէ, քեզ ու զիս ստեղ-
ծողին յայտնի է, որ քեզի հեռ կամ
գուցէ ալ քեզմէ ևս առաւել վատիա-
քով կը յարգեմ քահանայութեան
աստիճան ունեցողները, բայց միայն
քանի մը տող առաջ պատմած քահա-
նայական վարքով ապրողները : Վա-
սըն որոյ անիրտութիւնը բրած կըլլամ

ումանց պէս մէկէն զիրենք ասելու
ու մէջերնին գտնուող առաքինիները
չգովելու ըլլամ նէ, նոյնպէս անիրա-
ւութիւն ալ ըրած կըլլան ասոնցմէ
ումանց իրենց սուրբ վիճակներուն ու
երգումները ոտքի տակ առնողներէն
իրաւունքս խնդրելով՝ զիրենք զըզ-
ման յորդորելու համար զիս նախա-
տողներ գտնուելու ըլլան նէ :

Այս նաև զիտնան որ ազգիս կացու-
թիւնը լաւ ճանչնալովս մինչև անգամ
համոզուած եմ, իրենց ազգիս մէջ
պիտանի ըլլալնուն, բայց այս մտօք
որ իմ ազգս իրենց սլարզ աւետարա-
նական վարդապետութենէն աւելի
գիւրութեամբ կը լուսաւորուի, քան
թէ նոր ելած քախըմ մը գիտնական-
ներուն, փիլիսոփայներուն, տիբրո-
ւնաքներուն կամ Բարիզի փողոցնե-
րուն զարդ եղած ամէն առաքինու-
թեամբ և լուսաւորութեամբ զիրենք
մէյմէկ օպեղիսք սեպողներէն : Նոյն-
պէս ազգիս կացութեանը դատողութե-
նէս այսպէս ալ հաւաստեցած եմ, որ

աւելի շուտով կը գայթակղի ազգս
առջի յիշած սուրբ աւետարանին հա-
յելի եղող առաքինիներուն սխալ-
մամբ կամ մարդկային փորձութեամբ
մթղուկ մը քամելէն, քան թէ յետին
գիտնականներուն ուղտերը կուլ տա-
լերնէն :

Ուրեմն տեսնելով մեր հոգևոր վար-
դապետները իրենց աստիճանին վը-
տանգաւորութիւնը, արթուն կենան
անոնք ալ, որոնց ոմանց վարքերնուն
հետևութիւնը Քրիստոսի եկեղեցւոյն
համարմունքը ազգերնէս բոլորովին
վերցունել չէ նէ ալ, իրենց գործ-
քոյնին ժողովրդեան երջանկութեա-
նը պէտք եղած հոգևոր և մարմնաւոր
ուսումը տալու անփոյթ ըլլալնին,
արդէն ասենօք շատ մը գոցուած և
գետնայատակ, կամ ազգէն ջիր և
ցան եղած լեզունին և ազգութիւննին
կորսնցունողներուն վիջակին ազգը
հասցընելնուն կասկածողին կը հար-
ցընեմ: Ինչո՞ւ գոցուած են կամ կործա-
նուած են տեղ տեղ Հայաստանի մէջ

կամ Ներսիսայ եղած շէնքերը, կամ ուր
են օտար երկիրներ մինչև Ձին շին-
ւածները կամ ժողովածները, ուր է
սլատմութեանց մէջ կարդացուած հա-
յու ժողովուրդը, ուր է հազարներով
տեղ տեղ հաւաքեալ ազգիս բազմու-
թիւնը, որոնց որդիքը մեզմէ կը լսեն
կորիւրենց հայ ըլլալնուն սլատմութիւ-
նը, որ ոչ հայերէն կը խօսին և ոչ
ալ զանի կարդալը զիտեն. կամ ին-
չէն է որ քանի կերթանք կոր նէ բա-
ժին բաժին, ոչ միայն ազգային բա-
ժանմամբ, այլ և մտօք և հաւատով,
սովորութիւնով կը բաժնուինք կոր,
և այլն:

Ո՞ւր են քու և իմ մանկութեանս
ատենուան առաւօտեան ժամակոչին
ձայնին հետևելով եկեղեցիին բաց-
ւելուն սպասող ժողովուրդը, ուր է
մէկզմէկ հրելով եկեղեցիին լայն դու-
ռերէն մտնել չկրցող բազմութիւնը.
կամ ուր է մղձձներով հեռու տեղ
քաջ քարող տուող քահանան լսելու
վազողներուն ընթացքը, ուր է տա-

դաւարներու պատիւ ջերմեռանդութեամբ սուրբ հաղորդութեան փափաքողներուն թիւը . որ մէկն ըսեմ: Իրենց հովուական յորդորանքէն գըր-գըրուեալ Զատիկ և Ծնունդ կամ Աստուածայանդ և այլն եքսմէքնի չեքեղեղ-վը բանտարկեալ աղքատները իրենց զաւկըներուն խրկողները: Ո՞ւր են կիրակի կամ տօնի օրեր գերեզմանատան քարերը կարդալով, հող դարձող եղբորներնուն հողւոյն ողորմեսցի ըսելէն ետե, ասդիս անդին խումբ խումբ նստած հողեր կամ մարմնաւոր ծնողական և որդիական կամ դրացնական պարտաւորութեան վրայ խօսելնէն ետե՛ լսեր եմ որ մէկը կելլար, միս ազգերնուս ինքնագլուխ ըլլալը մէյ մը տեսնէի: Մէկալը՝ թագաւորնիս եթէ հրաման տար սա չատրրի տակ մնացած Երրորդութեան եկեղեցին շինելու, այս ինչ աշխատութիւնը, տուրքը ես յանձն կառնէի: Մէկալը իրեն մեծ պատիւ մը սեպելով քահանայից իրեն տունը յաճախելը, կը

պատմէր որ երեկ գիշեր երկու քահանայ կար իր սեղանին և այլն . որոնց ջերմեռանդ հառաչանօք ան ըրած ատեննին ազ նիշերնին կերենար :

Ասոնց աս բարի վարքերնուն մէջ ունեցած հաւատքի ատելութիւնը եթէ ինծի յիշելու ըլլաս, այս օրուանին նայելով ներելի սեպելուս կարծեմ դուն ալ իրաւունք կուտաս : Վասն զի այս մերունեցած թոյլտուութիւնը կամ առիթը և ազատութիւնն ու լուսաւորութեան զբքերը չունէին ան ատենը . չունէինք ալ այս օրուան ատելութիւննիս և խարերայներնիս : Այլ ամէն մարդու սրտին մէջ թէ և հինտուինման բնական հաւատք մըն էր , բայց մէկզմէկու մարդասէր աչօք կը նայէինք և բարոյական առաքինութեամբ ալ կը պատուէինք մեր ընկերը :

Ինչ ամէնալ ունէինք, և ինչ շուքերես պարկեշտ վարքով ալ ապրիլ մը կար մէջերնիս . ինչ իր հատար իր չափը ճանչնալ կամ մէկզմէկ ի բարի վարս յորդորել կար . ինչ ողոր-

մամ սիրտ ունէինք, մանաւանդ ան
դրացնական առաքինի վարքերնիս
ո՞վ կրնայ մոռնալ և այլն: Ո՞վ զիտէ
դուն ևս առաւել ինչ բարի գործո-
ղութիւննիս, սովորութիւննիս, վար-
քերնիս, ազգասիրութիւննիս զիտես,
և կը պատմես: Ե՛յ հիմա զիրենք լու-
սաւորեալ սեպելով ինչ կընեն կոր-
տեսնենք, կամ ան ատենուան տղի-
տութեամբ գործած ո՞ր բարիքնին լու-
սաւոր կերպով աւելցուցին կամ ո՞ր չա-
րիքնին թողուցին կամ ունեցած ա-
տելութիւններնուն կամ մտլութիւն-
ներնուն ո՞րը ձգեցին: Եւ ոչ մէկը:

Նուսաւորուեցանք՝ իրաւ ես, բայց
մեր եղբօրը վրայ ունեցած ժանդո-
տած կիրքերնիս, ատելութիւննիս
սլայծառ և ազատ կերպով գործածե-
լու, և ոչ ուրիշ բանով: Վասն զի
եթէ ճշմարիտ լուսաւորուած ըլլայինք
նէ, նախ հաւատքի կռիւը չէինք ընել
և կը միանայինք, և միանալով ալ կը-
գօրանայինք և ազգերնիս ալ կարգի
կանոնի մը կը դնէինք, և ան Յաւել-

լած . . . դորձքերէն ալ ժանտամահէ
փախչելու պէս կը փախչէինք :

Իրաւ ես, յառաջ տղէտ էինք, բայց
մարդարէին հետ՝ Աստուած երկիրնքն է
և երկիրը մեր վայելման համար տա-
լը իր աստուածութիւնը գովելնուս
գործիք կը սեպէինք. չէ թէ հիմակ-
ւան լուսաւորեալ Նւրոպացոց հե-
տեւելով, որ իրենց ուրիշ զանազան
հայհոյութենէն ի դատ, մէջերնէն
փոքր ինչ խղճմտանք ունեցողը, ա-
տաւ՛ Աստուած երկիրնքն է և եր-
կիրը մեզի տուաւ, ինչ որ ուզենք կըր-
նանք ընել ըսողներուն կը հետեւէինք:

Չէինք հոգար աստուածավախ և
բարոյական սրտով զրողներուն խօ-
սողներուն ղեկչպէր վարքերնին, այլ
մտադրութեամբ իրենց խրատնին քա-
րողնին լսելէն վերջը, մէկզմէկ ալ
կը յորդորէինք, ծօ՛ կամ ազբար չլը-
սեցիր երէկ ինչ քարողեց Մեսրոպ
վարդապետը բեմին առջին. կամ
համուրճու ճե՞ տեախ, սիրեցէք ըզ-
միմեանս, ձեզ ասողներուն բարի ը-

րէք, ներեցէք ձեր ընկերներուն և
այլն : Ես կերթամ ուրեմն իմ ընկեր-
ներուս հետ կը հաշտուիմ, որ Աստ-
ուած ալ կը տեսնէ իմ խոնարհութիւնս
ու ինձի կը ներէ իմ մեղքս, կամ ինչ
խտար ըլլայ պեօյիւնէ պեօյիւն իդ-
մէ մեծ է, կերթամ իրմէն ներում
կը խնդրեմ, կը հաշտուիմ ու օրհ-
նենքը առնելով պէք պէրէքք կը
տեսնեմ, պիտի մեռնինք և այլն, կը-
սէինք :

Բայց հիմա այս ամէն օրհնեալ սովո-
րութիւնները կորսնցունելէն ետև,
հազիւ թէ սկսանք մեր սուրբ հարցը
սուրբ սրտով և բարի նկատմամբ գը-
րած գրքերնին կարդալու և սէրն ու
խաղաղութիւնը մեր երջանկութեան
սնունդը ըլլալն իմանալու : Քերին
տուին ձեռքերնիս իրենց մեղաւոր
սրտովը և Քրիստոսի սուրբ սիրտը
վիրաւորող և մեր հողին ալ խաւարող
և եղբօրներնուս սիրտը վիրաւորող
զրած գրքերնին :

Անոնք որ գիշեր ու ցորեկ գրելով

կարդալով և անկարօտ կեանքով
չարը բարիէն զատելով իրենց սուրբ
վարպետներուն հետեւելու պարա-
պելով աս չարութիւնները կընեն
կոր նէ, մենք տղէտ և աշխարհային
հողերով պատաղեալքս ինչ կընենք:
Օրինակի համար, եթէ զինքը ծովու
չաստուած սեպող Սմիրալ Նարիէրը
63,000 հողիէ շրջապատեալ՝ իր թա-
ղուհիին որոշակի կերպով խօսք կու-
տայ ըսելով թէ, այսօր ութը օրէն
նախաճաշիկս Քրօնշթաթ պիտի ընեմ
ու կէսօրն ալ կերակուրս Բեթրսպուրկ
պիտի ուտեմ. ու յետոյ և ոչ նոյն քա-
ղաքին տեսքը տեսնելու չափ կրցաւ
նէ մօտիկնալ, ուրեմն ջրունիսոյ մը
իւր օրական հացը դունալու համար քե-
նար քենար պտըտող տղէտ չուջուր
բանողի մը ձեռքը մէկէն ի մէկ քա-
բաք մը տալու ըլլաս, զինքը և քա-
բաքը չըկորսնցուներ մի. և սանդու-
խէ մը վեր անխոհեմութեամբ շուտով
եւլողին, շուտով ալ իյնալը հաւա-
նական չէ մի: Աւրեմն ինչ է աս յի-

մարութիւնն իս . ուր է մեր ազգին դարերէ ի վեր ունեցած տգիտութիւնը ու իր սովորութիւններուն ծառայելը, և ուր է աս մէկէն ի մէկ իրեն տըրւած ազատութիւնը :

Քու որսացած ու ձեռքովդ ալ երած կերած ուրիշի մըն ալ պատմած նապատասկի պատմութիւնը բերնէ ի բերան երթալով յետոյ քեզի ետ դառնալուն իբրև պիղծ կատու մը կերած պատմութիւնը քեզի կասկած կուտայ կորնէ, ինչ վնասակար մեկնութիւններ յառաջ չզար ազգիս մէջ այս պիղծ գրքերէն , գրուածքներէն և վարմունքներէն : Ասկից աւելի ազգիս առաջանալուն և սէր ու խաղաղութիւն ընել ուղեւնուն արգելք կընայ մի ըլլար :

Բայց որովհետև ազգս (թէ և ջրքտրդրնայ) մէյ մը ոտք ելաւ սէր և խաղաղութիւն ընելու և զինքը լուսաւորելու , ուրեմն պէտք է որ բնտուէ , գտնայ , պատուէ ան առաքինի հոգևորականները , որոնց վարքին վրայ ար-

դէն վերը քեզի համառօտ պատմեցի,
չէ թէ իր բարի բաղձանացը արդէլք
եղող շարձարան, ադահ, պատուա-
սէր, անողորմ, շողոքորթող, անձ-
նաշահ, կիրամոլ, փառասէր, հպարտ,
անդուժ, անկիրթ և կոպիտ, մէկզմէկ
քէն և խոր աչօք նայող, իր պատա-
րագին պապը կամ կաթողիկոսը յիշող
բայց սրտէն զինքը չընդունող: Աղ-
քատներուն տարակուսանք, հարուստ-
ներուն էյլեկէն, իր հաւատքը
մաւքի պէս գործածող ու ուրիշ հա-
ւատքէն եղողներուն ալ թշնամի
եղող, չորցած գիտութիւնով քահա-
նայական պաշտօննին իրենց եկա-
մուտին գործողութիւն մը և ոչ թէ Քր-
րիստոսի մարդեղութեանը յիշատակ
սեպող մը: Աղքատի մը հոգեվարու-
թեանը հասնելէն շահ սպասող ժամա-
նակէ ժամանակ տգէտ կերպիւ բեմե-
րուն առջին ամպիօններէն և թուրք-
նէրէն վար սօռալնին եթէ երկպա-
ռակութեան պատճառ չէնէ ալ, ըրած
քարողութիւններնէն անձնական շահ

բնասողներ, որոնց պատուասիրութեան և շահասիրութեան ատելութեան հոտը աշխարհք տարածեցաւ :

Անոնք որոնց յանձնուած ժողովըրդեան վրայ տեսրոթական բռնութեամբ և ոչ թէ աւետարանական սիրով և խաղաղութեամբ իշխելու բաղձանքներնուն, որոնց սահմանը չկայ: Ինչպէս նեւտիչէ մը խալտած խորշիկ մը որ պէտք է բազուկին շխտկեցուցած կողմը երթալ, ասանկալ ասոնց սրտէն եղած կամքը պէտք է իր նպատակին երթալ: Աամ ասոնցմէ անոնք որ եթէ լսեն և դիտնան մէկը, որ իրենց հետ պարզ կերպիւ կը խօսի և զիրենք շշողութեւն վերջը, իրենց սուրբ պաշտօնին համեմատ իրենցմէ վարք կը խնդրէ կամ իրենց ժողովուրդը չլուսաւորուելնուն դանդատը կընէ, դանի ժողովրդեան աչքէն հանելու ջանալէն ետեւ, մինչև ի մահ ալ զինքը կը հալածեն, աւելի դիւրին է երկինքէն ասող մը բրցունել քան ասոնց կիրքը իրենց սիրտէն բրցունել: Նոյն-

սկէս անոնք, որոնց թշնամութիւննին
երբէք չմարիր, ատոր համար անոր դէմ
որ իրենց ցեփտերնուն չխոնարհիր,
զինքը խոնարհեցունելու համար ամէն
ջանք ի գործ կը դնեն:

Անոնք որ ամենազգուելին են, մի
և նոյն սկաւառակէն ուտող եղբօր-
ներնուն երեսը կը շողոքորթեն ու
ետակէն ալ ամէն վատութիւն գրել-
նուն և խօսելնուն օրինակը կարգան
գրքիս վերջը: Ըստ այնմ, Նա որ ու-
տէր զհաց իմ յաճախեաց ընդ իս
թշնամութեամբ. կրնայ մի ուրանալ
իրենց եղբայրն ըլլալը: Անոնք որոնց
ունայն վայելմանց բաղձանքը, ըստ
որում հոգեորականք աւելի են, քան
թէ մէկ սլառաւի մը, անոնք որ իրենց
շահերնուն համար, մէկուն զաւակը
միւս ընտանիքի մը մէջ գովելով ազ-
գականութիւն կապելնին, ու առե-
տրական առիթներու մէջ զիրենք մի-
ջոց ընելով, շահաւորութիւնն և ոքշ-
փար ուտելնին շատերնիս գիտենք:
Եւ անոնք, որոնց անձնական շահեր-

նուն նկատումը արդիւող եթէ բան մը յառաջ գայ, կը վազեն կաշխատին ու միտքէ չանցած միջոցները, գիտաբեր կը հնարեն, մինչև որ իրենց վախճաններնուն հասնին, որոնց երկու միտք ունեցող, այսինքն ամբողջ մամբ մտօք խօսիլը իրենց կենացը քարիքալէ է և բնութիւն եղած սովորութիւննին :

Անոնք՝ որ ոչ Աստուծոյ ըրած երդումներնուն հաւատարիմ կը կենան և ոչ ալ իրենց ամէն ըսած, գրած, ըրած բաներնուն ներքուստ կը հաւատան . թէ և այս ամէնը մեզի սորվեցուցած ատեննին, իրենք մեզի զիրենք հաւտացածի պէս կը ձևացընեն, և մեր հաւատալն ալ կը պարտաւորեն, վերջապէս ինչ կընեն կընեն առեքը ապրիւն չընելով իրենց օրը օր կընեն :

Արօնաւորական կրօնը և հոգևորական պաշտօննին իրենց ունայնութեան գործիք ընելով, սև վերարկուներնուն տակ սև հոգիներն մեզմէ ծածկելով բոլոր տարին թախառա-

կան կեանքով կապրին կամ կիրքերնուն կատարմանը կաշխատին :

Հեթանոսները մկրտելու կը վազեն, բայց հոս իրենց ներկայացուցած հեթանոսը մկրտելու և ոչ կը շարժին կամ հեթանոսացած քրիստոնեայն նորէն Քրիստոսի հաւատքը զրկելուն պէտք եղած աշխատանքին և ոչ ալ քայլ մը կերթան. բայց եթէ տեղէ մը շահի մը հոտ առին՝ խաչքախնին կը նեւեն : Իրենց գացող կարօտելոյնցաւալի պատմութեանը ցրօ ցրօ ցրօ զաշխարհ, Սատուած ողորմած է, ըսելով խեղճին պատմութիւնը կարճաւօտ ընելու համար անմիջապէս իր պաճախն ալ եղ մը մտած ըլլալը կը պատմէ, որով խեղճը զինքը իրեն կարեկցութեանը հակեցունելու համար մարդասէր հողով իրեն դեղ մը կը խրատէ, որ եթէ նոյն դեղը խեղճ աղքատին փողովը չստացաւ, Սատուած ողորմած է տերտ մի ըներ, խասեւիք մի ըներ տղաս, և այլն յորդորանքով խեղճը ճամբայ կը դնէ :

Իսկ ասոր հակառակը, եթէ իրենց կարօտութեանը օգնող գլուխ հանող մը գիտեն, բոլորաթիքը քերականէ դառնալնին չօգնէր նէ, սիրտիւն կըլլան կը բակչին և չեն թողուր զինքը (կուզես սոչը սխմէ) մինչև ուզած արիւնը ջիւերնէն չառնեն: Ար դուն այսպիսիներէն այսպիսի վարքերնին տեսնելովդ (որ իրենք ալ չեն կրնար ուրանար գանուիլը) մի խառներ զիրենք յիշած քարիներուս հետ. այլ զատելով դուրս ըրէ զիրենք ազգիդ մէջէն, եթէ սիրոյ և խաղաղութեան և ազգային լուսաւորութեան ունեցած բաղձանքդ հաստատ կերպիւ պահել կուզես նէ: Նորէն կըսեմ սիրելիս, որ ասոնց վրայ արթուն կենալու ես և ասոնց հետ վարմունք ունեցած ատենդ զգոյշ կենալու ես քահանայի մը ըրած սխալմունքին վրայ, կամ եկեղեցեաց մէջ ըրած դաղջութիւններնուն, կամ քրիստոնէական վարդապետութիւնը չսովրեցունելնուն վրայ չխօսելու: Սյլ զանազան օրա-

կան կամ քաղաքական կամ այս ինչ քահանային պարօնէ մը կամ ամիրայէ մը տրուած պատիւը կամ ուտելու, խըմելու ստացուածքի և ասոր նման խօսակցութիւնները ընելու ես : Ասոնք կը իրեն նահապիւղցը վիւղ տղայական խօսակցութիւնները, մեծ փափաքով ալ կը վազեն համեղ կերակուրներով պօրտերնին յաղեցունելու տեղեր : Բայց իմ դատմունքս այս է որ ասոնք իրենց խաշպագան եղբայրնին աղատելու օգնեցին, ու զրպարտութեամբ պատժեալ աղքատին իրենց անհոգ ըլլալնին տեսանք . կամ քանի մը օր յառաջ Բարիլի մէջ իրենց հաւատոյն մինչև ցմահ հաստատ և հաւատարիմ կենալու պօռալնին դրելնին լսեցինք, կարգացինք ու յետոյ աղզանախատ և աիրադրութ, անմեղ դաւկըներնիս դայթակղեցնող դործքերնուն աչուրնիս դոցելով, այնպիսի կերպով զիրենք զրկեցինք և պատուեցինք, որ իբր թէ, Ամա՛ն չըլլայ որ ձեռքերնէս փախչի ու երթայ և մեզ ալ երեսի վը-

րայ թողու, ըսելով մեր վրայ մեծ նախատինք ժողովեցինք: Ասան զի Տէր ընդ քեզով մը զինքը պատուելնուս տեղ, կամ նախ իր դործքը տեսնելնուս տեղ, փող տուինք, առաջնորդութիւն, եպիսկոպոսութիւն իրենց պատիւ պատուի վրայ աւելցուցինք, չըդիացանք իրենց ինչ ընելնիս, այնպէս որ միայն իրենց առջին մօմ վառելնիս պակսեցաւ. որն որ եթէ ներկայ է է նէ, ժամանակէ ետե եթէ աս նախապաշարման մէջ ևս յառաջանանք, իրենց պատկերներնուն առջին վառելնիս կրնամ նախադուշակել:

Չմտածեցինք և չենք ալ մտածեր կոր որ այս կուրութեամբ այսպիսոյն և իրեններուն հետ այս կերպ վարուելովնիս մեր տգիտութիւննիս իրենց ցուցընելնէս վերջը, իրենք ալ դիթերնուն տակէն մեր վրայ կը խնդանու իրենք մեր իրենց զիտութեանը կարօտ ըլլալնուս վրայ հպարտանալով, եթէ բանը գլուխ չելլելու կամ իրենց Փրոշրտախնին մեր լուսառ-

րութեամբը չդառնալու եղած ատենը ատոնք մեր վրայ ևս առաւել թշնամի և ազգս ալ խայտառակելու սխաի ըլլան: Աւ մէջերնիս գտնուող հաւատարիմ, բանիրուն, խոհեմ, հարազատ, մաքուր հոգևով և մաքուր հայու արիւնով եղողներուն սրդողելնուն ալ սլատճառ սխաի ըլլանք:

Չըսենք որ, ան որ ազատ կամօք և հանդարտ մտածմամբ ընդունած պաշտօնէն ազգօգուտ ստուղ մը կը ցուցընէ, պոչը ճղմուելէն վերջը կամ մէյմը իր եղբայրը խաբող և իր Աստուծոյ ըրած երդումը իր կէջիւնմէիւ համար ոտքի տակ առնողը մի հաւատարիմ կըլլայ, որոնց գոնէ յիշեալ գործքերնին չկարգայինք և չտեսնէինք: Որոնց վրայօքը կարդն իմ ճամբորդութիւնս որ իմանաս ատոնք ինչ են և ինչ կը մտածեն և սիրտերնին ուտող ինչ անօթի պէօճեկ մը ունին և ինչ մահուամբ ալ կը մեռնին:

Ի վերայ այսր ամենայնի իմ խրատըս այս է քեզի, որ քահանայք վատ

են ըսելով ամէնը մէկէն մի անար-
դեր, այլ իրենցմէ բարիներուն խրա-
տը ընդունէ և չարերուն հետ ալ, ան
որ քու հաւատքիդ պահպանութեանը
կը վերաբերի, պարտաւորութիւնդ
կատարելէդ վերջը մնացածը ձգէ, հե-
ռացիր իրենցմէ մինչև որ դառնան
իրենց վարքէն և նմանին քեզ վերը ի-
րենց հայրախնամ պաշտպանութեանը
յանձնած ճշմարիտ քահանաներուս
որ աս իրենց բաւական պատիժ է:
Նւ եթէ ազգս ալ ասոնցմէ պիտանի
եղածները դատէր, ու անպիտաննե-
րըն ալ ձեռնադրելէն վազ դար, կը
տեսնէիր ինչ մեծ դիւրութիւն կըլլար
լուսաւորուելնուս: Չէ նէ քահանայք
վատ են ըսելով հաւատքներնէն և
դանի պահելու գաղջացողներուն վը-
րայ թէ ասոնք կը ծիծաղին և թէ ես
ալ կը ցաւիմ:

Ինչու որ կը նայիս, ան որ առող-
ջութեանը ատենը ղիրենք կատէր
կամ չէր նայէր երեսնին, հիւանդացած
ատենը ամաւ քահանան թող դայ

ըսելով զինքը կանչելէն վերջը՝ առա-
տութեամբ իրեն վող կուտայ . և
կամ՝ աւնա՛ն վարդապետ Սատուձմէ
ինծի համար թողութիւն խընդրէ
ըսելով ձեռքը ձեռքին մէջ կը սխմէ
ու կաղաչէ : Ար աս ալ իրենց հպար-
տանալնուն առիթ մըն է , և որ եթէ
մեզ ալ աս տեսակ ապաշխարութիւնը
զղջումը փրկութեան հասցունէ պիտոր
նէ , ոչ հարուստները կամ անօրէններ-
ը իրենց չարութենէն վազ կուգան
և ոչ ալ մենք մեր բարի նկատումներ-
նուս կը հասնինք : Բայց վերը ըսածիս
պէս իրենց ձեռքովը քու հողևոր պար-
տաւորութիւնդ կատարելէն վերջը ,
ճամբորդութեանս մէջ յիշած կերպով
զիրենք ազգին մէջը պահելու ըլլաս
նէ , թէ կենացդ մէջ առանց իրենց
հետ թշնամութիւն ունենալու ու Քը-
րիստոսի հրամանը կատարելով ապ-
րած կըլլաս , և թէ մահուանդ ժամա-
նակն ալ որչափ մարդկութիւնդ նե-
րեց հաւատքիդ ծառայած ըլլալուդ
մխիթարութեամբը կրնաս գոնէ փոքր

ինչ սրտի հանդարտութիւն մը ունե-
նալ :

Աս ըսած կանոնովս սիրելիս, ար-
թուն կենալովդ և իրենց քարոզու-
թիւննին մանաւանդ գրածնին հան-
դարտ մտօք կարդալովդ կրնաս տես-
նել որ, ան որ սուտ է և մութ կամ
չափազանց ատելի է և զղուելի : Ըսէ
ինձի՝ նայիմ ազգս մինչև հիմա աս
եղած կրկընը հանդարտ սրտով չբըն-
նելէն սա կարդացած պիղծ գրքերէն
ինչ օգուտ տեսաւ . ոչ ինչ . ազգս դեռ
ևս ուր էր նէ հոն է, դուցէ ալ ևս
առաւել դժբաղդ եղաւ . ինչ անցաւ
ձեռքը այսչափ խըռխըռէն ատելու-
թենէն եթէ ոչ . . . : Դրին մի նոր
հաստատ ազգօգուտ կանոն մը, կամ
հաստատեցին մի սիրոյ և խաղաղու-
թեան դաշինքը, զատեցին մի բարին
ի չարէն որ ան ատենը « այսուհետև
եղբարք . . . խաղաղութիւն արարէք »
հրամանին ազգը մտիկ կընէր ու սիր-
տըն ալ թափանցելով գործքովս ալ
այ սուրբ հրամանը կը կատարէր :

Որուն այսպէս կամ այսպիսի խօսքերով հրամաններով պարտքերնին կատարած կարծող և ազգին փողը առնողներէն շատ մը եկան ու դացին, Ստտուած տայ որ նորէն դալիքները նոր լոյսով ճշմարտութեան եկած ըլլան: Ինչու որ աս խրատները արդէն իր փոքն է, այս յոյսերն ալ զինքը խտալացուոց առակին ստուղը վայելէլու հասցունել է:

Սիրելիս, ըսելը ու մարդս ըսածիդ հակեցունելը տարբեր բան ըլլալուն համար տարբեր վարք և տարբեր ալ դործք պէտք է:

Բայց ազգս մեծ օգուտ կունենայ եթէ յիշեալ քահանայք վարքերնին փոխենուն և պարտաւորութիւննին կատարելնուն զիրենք պարտաւորէնէ, ու մէջերնիս եղած խրոխրուր դաղրեցնէ վերցնէ, որն որ մեր ազգատանալնուս, տկարանալնուս և բաժին բաժին ըլլալնուս պատճառ եղաւ: Եւ աս ոսկի դարերնուս՝ յարդութիւնը չզիտնալովիս, ահա օրերը

և բոպէները մեզմէ վրէժխնդրութիւն պիտի առնեն, ու մեզի տուած յաջողութիւններնուն համարը, պտուղը մեզմէ ալ պիտի խնդրեն :

Եթէ ատեն մը սիրելիս, ահիւ և դողով քրիատոնէութիւն ըրած ատեննիս մեր հիմակուան լուսաւորեալ մահմետական տէրութեանց մեզի տուած համարձակութիւննին տալու ըլլային նէ, ո՞ր գիտէ արդեօք ինչ սիրոյ և միութեան դաշինք՝ դաշինքներու վրայ կը դնէինք : Չյիշեմ մեր հօրերուն և պապերուն ժամանակուանը կամ մեր մանկութեան ատենինը, այլ այս ներկայ մեր օրերը եղած անօրէնութիւնները որ Հիսարի եկեղեցին միայն նորոգել ուզելնուս զբացին Շէյխալամը հրաման չտուաւ . կամ Աալաթիայի Փրկիչ եկեղեցիին սանդուխին ձեռն համար այնչափ տուգանք տրուեցաւ . Եզմիրի եկեղեցւոյն սա փոքրիկ զանգակին ձայնին համար այնչափ նեղութիւն քաշուեցաւ . ձգեմ կեամբուր համարմունքնէս ունեցած

խեղճութիւննիս և ան օտար երկիր-
ներ ալ եղբօրներնուս քաշած ցաւե-
րը ու նեղութիւնները: Ն՞նչ շուտով
մոռցանք ասոնք, և ինտո՞ր ալ պիտի
մեզ ջառագողվենք այս օրուան պէ-
յութեան, էֆէնտիութեան, բաշա-
յութեան, առիթներնիս անսխալ և
անօգուտ անցունելնուս նախատին-
քը երեսնիս զարնողներուն առջին:
Որ ես մեր աս ողորմելի կաղութիւն-
ներնէս համոզուելով իրաւունք տուի
ճամբորդութեանս մէջ պատմած ծե-
րունիին իր հովուութենէն բաշայ ըլ-
լող որդւոյն իրեն հօրկանը, տեսնը
մի գուն կըսէիր որ ես մարդ չպիտի ըլ-
լամ, ահա էֆէնտի եղայ, պէյ եղայ ու
հիմայ ալ փաշայ եմ ըսելուն տուած
պատասխանին « ես չըսի որ գուն
փաշայ կամ պէյ չես ըլլար, կըսէ,
այլ մարդ չես ըլլար: »

Սիրելիս, եթէ այս գիտութիւնները,
պատիւները ինքիրեննին մարդս լու-
սաւորող ըլլային, կամ եթէ մեզ եր-
ջանիկ ընէին, աշխարհքիս մէջ տգի-

տութիւն կամ չարութիւն չէր ըլլար: Բայց որովհետև մարդս է որ կը գործէ երկիրը, ուրեմն մարդս է որ զինքը դժբաղդ կամ երջանիկ կընէ:

Ձենք ըսեր որ ամսերուն մթութիւնը փարատեցաւ արեգական լուսաւորութենէն որ աս լերան ետեւէն ծագեց, բարբարոսութեան ալեկոծութիւնը դադրեցաւ. մէկդի ձգենք ուրեմն Պօղոսին և Սպօղոսին նաւապետութեան իրաւունքին խըռխըռը, կըռկըռը, ու դանանք կողմնացոյց մը, որով ուղղենք մեր սա երկայն ատեն դժբաղդութեան մէջ օրօրուող Հայկինքաջ բազուկով շինուած նաւը ու ուղղենք զանի նաւահանդիստ մը, ուր խաղաղացած դիւրութեամբ և հանդարտ մտօք կարողանանք մէկզմէկու տարբերութիւնը հասկնալ, (եթէ հարկը պահանջէ). օրինակ առնենք սիրելիս, դոնէ սա մեր նախատած հրէայ ազգին ազգասիրութեան հոգիէն, որ ինչ ըրին ըրին մէկդի թողլով իրենց մէջը մեզի պէս եղած հաւատոյ տալ-

բերութեան կըռկըռը, յաղթեցին Անդ-
ղիայի փառարիք Բարշաւէերը :

Աս ինչ տգիտութիւն է որ կը վիճենք
կոր բանի մը վրայ որուն մեծութիւնը
խմաստութիւնը մեզի անզննելի է և
անիմանալի, և փոխանակ հաւատա-
րիմ կենալու իր աստուածային սլատ-
ւիրանին, որ սիրենք զինքը և մեր
ընկերը, որ աս երկու սլատուիրանքին
վրայ կեցած են ամէն սլատուիրանք-
ները : Ձենք ըսեր որ եկմու մի փրօ-
թէսթանդ մը անդիլի աշխարհքէն կամ
հռովմէական մը կամ էջմիածնական
մը, որուն ունեցած հաւատոյն տար-
բերութեանը համար իրեն դժոխք
կամ արքայութիւն տրուեցաւ . ոչ եր-
բէք . որովհետեւ ամէն մարդ Աստուծոյ
դաւակ է և իր կոչմանը կոչուած է :
Թէ ոմանց պէս իրենց հիմակուան կոյր
մտածմամբը մեր դործքը, մեզ յաւի-
տենականութեան մէջ արդարացու-
նելուն դուն ալ կը տարակուսիս նէ,
հոս եղբորդ առջին քեզ արդարացու-
նելուն չես կրնար տարակուսիլ : Ու-

րեմն արթնցիր սիրելիս, արթնցիր ուտես ինչ կըսէ կոր. ժամանակս վտխւեցաւ :

Ֆրանչիսկոս կայսրը Նարբոլիի թագաւորին հետ մէկտեղ ատենօք Լիւօրնայ դոնուած ատեննին, կը ներկայանան իրենց մեծ մարդիկ և վաճառական անձինքներ. որոնց մէջը եղող հրէայներուն Նարբոլիի թագաւորը կըսէ, Ինչո՞ւ չէք դար խմ երկիրս վաճառականութիւն ընելու: Աը պատասխանեն հրէայք. Որովհետեւ ձեր հայրերը մեզ չարչարեցին և հալածեցին, մենք ալ ազգային անէծք կարգացինք մեզմէ քու երկիրդ մըտնողին: Աը պատասխանէ թագաւորը, Յի՞՛մ է իմ հայրերս ձեզ չարչարեցին նէ՛ ևս ինչ յանցանք ունիմ: Աը պատասխանեն իրեն հրէայք. Յի՞՛մ է մեր հայրերը չարչարեցին նէ՛ զՔրիստոս՝ մենք ինչ յանցանք ունինք:

Նմանապէս սիրելիս, եթէ մեր հայրերը աս մէջերնիս եղած հաւատքի տարբերութեանը համար ցուրտին

ձմեռին մեզ հալածեցին, չարչարեցին, արքայացին կամ նոյնք կարգալով տուներնիս քարկոծեցին նէ, մենք ինչ յանցանք ունինք. կամ մեր հօրերուն տղէտ ըլլալնին մենք հիմա զիրենք կը նախատենք կոր նէ, այսօր մեզ լուսաւորեալ սեպելնուս նախատինք չէ՞ մի մեզի սա ունեցած ատելի վարմունքնիս: Աամ մէջերնիս կոյր նախապաշարմունքով մէկզմէկ ատողները դուրս նետելու տեղ զիրենք գրկելնիս և իրենց հետեւելնիս մեզի ամօթ չէ՞ մի: Ուրեմն դուրս ընենք այսպիսիները մէջերնէս ու հաստատենք սիրոյ և խաղաղութեան նոր Հայութիւնը, որպէս զի տարբերինք մեր նախատած բարբարոս հօրերնէս և սպապերնէս:

Ամօթ չէ՞ մի նաև իրենցմէ մեզի ժառանգութիւն մնացած շատ մը մոլութիւններէն իզատ, մեռած տանկին սատկեցաւ, հրէին ճաթեցաւ, հաւատքնէս դուրս եղողին դժոխք զնաց ըսելնիս. որ իրենց մեզի միւր-

քառ օլտու կամ չար մաօք Քրիստոսի ծոցը դնաց, հոգին կորսուեցաւ ըսելնուն կը բարկանանք կոր : Որ աս բարոյականի գէմ եղած սովորութիւնը վեղարով և աղցանով կամ բիլօնով ու վիճիչեայով վանքերու մէջ բազկատարած սաղմոս երգողներուն մէջ մինչև այս օրս կը լսեմ կոր :

Ասամենէն վերջը մտածէ աս ըսածներս ու դախր նախատանաց անուն մը որով կարենամ մեզ անուանել :

Լաւ դիտնաս որ ամէնը տեսնելովս եթէ ազգս (գուցէ) լուսաւորուելուն ունեցած յոյսէս և հաւատքէս բոլորովին դաղջացած ըլլայի, կուզէի վախճիլ հոն՝ ուր որ մինչև անգամ հովի մը կատաղութենէն հարկադրեալ ազգէս կամ ազգս ճանչցողներէն մէկը չգար իյնար. վասն զի աս եղածները խօսւածները գրուածքները կամ գրքերը կարդալու, լսելու, տեսնելու չեմ կրնար կոր համբերել -

Այսպիսի պատուական և օրհնեալ դարու մը մէջ որ մեզի Քաղոսի տը-

լաւ որպէս զի հեռու տեղուանք ունե-
ցած եղբօրներնուս հետ ազգօգուտ
լուրերուն առևտուրը ընենք. երկաթի
համբաները շինեց, որ մէկզմէկու այ-
ցելութեանը զիւրութիւն ունենանք.
դիւրութեան գործիքներ առաւ, որ
սիրոյ և խաղաղութեան գրքեր տը-
պենք. բժշկութեան քաջ զիտու-
թիւններ առաւ, որով կեանքերնուս
երկայնութիւնը վայելենք. աղատու-
թիւն առաւ որ քրիստոսնէութիւննիս
քրիստոսեայ վարքով սլայծառայը-
նենք: Բայց մենք ինչ կընենք կոր...
Եթէ աս չքտրդեայ բաղձանօք և
չքտրդեայ ձեռնարկութեամբ զաւ-
կըններնուս քանի մը կրթեալ շարժ-
մունքներէն խօսելնէն և զանազան
ազգերու հետ անտարբեր խօսելնէն
մէկ զատ ուրախութիւն կըզանք կոր
նէ, արդեօք եղբայրսիրութեամբ և
ճշմարիտ զիտութեամբ լուսաւորեալ
առաքինի վարքով ազգութիւննիս
պահելով եղբօրներնուս հետ մէկ տեղ
ձեռք ձեռքի տուած ի համբոյր սրբու-

թեան և սիրոյ՝ մէկզմէկ ողջունելու
ըլլանք նէ, ինչ ուրախութիւն ունե-
նալու ըլլալնիս, քեզի կը ձգեմ մը-
տածել :

Ուստի եթէ ևս դարերնուս մեզի
տուած այս ամէն ճշմարիտ լուսաւո-
րութեանը գործիք եղած բարի ու-
սումներէն, կարգերէն, կանոններէն,
կրթութիւններէն մանաւանդ ազա-
տութիւններէն վերջը, դեռ ևս ազգս
եթէ այսպէս իր անտարբեր կացու-
թեանը մէջ մնացած տեսնելու ըլլամ,
մեռած ատենս պիտի իյնամ այնպէս
արտում մեռնիմ, ինչպէս ուղամ սիր-
տը ծակելու չհասնող նետ մը որ իր
թշնամիին առջին արտումութեամբ կիյ-
նայ ու կը մնայ : Ստոր համար դուն
իմ ուամիկ և եսնաֆ եղբայրս, ինչ-
պէս տեսայքու կարօտութեանդ բաղ-
ձանքը, կարողութեանս համեմատ ալ
մանրամասն կերպով քեզի պէտք եղած
գիտնալու ուսումները, որն որ ես ան-
ձամբ նախ փորձեցի, աչօքս տեսայ,
անա քեզի ալ ձեռօքս գրեցի, յուսա-

լով որ քու յետագայ կենացդ երջանիկ
զգացման գործիք մը եղած կըլլայ :
Բայց մի պարտաւեր կաղաչեմ շարագ-
րութիւնս կամ խօսելուս պարզմտու-
թիւնը , այլ միտ զի՛ր խօսքերուս իրա-
ւանցը . վասն զի գիտես որ , ան որ կը
կատարէ ինչ որ կարող է ընել , իր
պարտքը կատարած կըլլայ :

Ուրեմն նայէ որ հետեիս քեզի տը-
ւած բարոյական գիտութեանս , որն
որ մարդուս բնութեանը արուած
և առջի գիտնալու , կատարելու
պարտքն է , եթէ կուզէ երջանիկ ըլ-
լալ , երջանկութեամբ ապրիլ , երջան-
կութեամբ ալ հասնիլ իր վերջին բո-
սէին , և երջանիկ զգացմամբ ալ տալ
իր հոգին բնութեանը , որն որ զանի
իրեն մաքուր տուաւ , մաքուր կուզէ ,
մաքուր ալ իրեն տալու է : Մի ըսեր ,
էյ ժամանակ ունիմ կամաց կամաց .
վասն զի որչափ կամաց քալես նէ ալ
բաւական կանուխ կը հասնիս քու
մահուանդ , որուն գործողութիւնը գի-
տես որ շատ կարճ է . կուզես զզջայ ,

կուզես պօռայ, կուզես աղաղակէ կամ քֆրէ, պէտք ես հարուստ կամ աղքատ իրեն սուրին գլուխդ ծռել:

Ստոր համար արթուն եղի՛ր վայելէ սա կեանքդ, մի՛ ըլլար պիկոտ մտօք հին քրիստոնեայ, մի՛ ըլլար ալ նոր մտօք (լուսաւորեալ անունով) հօտի-փա հաւատացեալ, այլ արթուն եղի՛ր որ խոհեմութիւն ստանաս, որն որ հանդարտ կեանքին խրաւուզն է:

Հեռեկէ մարդկային վարմանց գիտուրեանը, եթէ կուզես խաղաղութիւն և հանդարտ խղճմտանք ստանալու, որն որ մահուան անկողնոյդ փափուկ բարձն է: Մի՛ տրամիր սա անցած ազդակործան յիշած պատմութիւններու վրայ. վասն զի անցածը անցած է, և ան՝ որ անցածին վրայ մտածելով ժամամակը կը կորսընցունէ խենթ է. այլ անցածէն օրինակ առնելով, նայէ՛ որ ներկայ ժամանակդ պողաբերես և ըլլաս հին ազգիդ պատիւ նոր հայ մը: Նոյնպէս չըլլայ որ ազգիդ ներկայ թունաւո-

րեալ վիճակն ալ տեսնելով յոյսդ
կտրես. կամ ինչո՞ւս պէտք է, ո՞վ իմ
խօսքս կը լսէ, կը սեպէ ըսելով՝ ետ
քաշուիս. վասն զի քանի որ հայ ես,
ազգէս ես ազգին անդամն ես և իր
առողջանալուն contre-poison մը գըտ-
նալու պարտական ես (որ է սէր), որով
մինչև անգամ ազգին համար մեռնե-
լու կը պատրաստուիս, եթէ գիտնաս
ինչ քաղցր զգացմամբ մահ ըլլալը:

Մի ապաւինիր աշխարհքին քեզի
տուած բախտաւոր վիճակին. վասն
զի չկայ մեզի հոս հաստատ վիճակ մը,
որ դուն ալ արդէն աս գիտես, եթէ
ոչ գերեզմաննիս. ատոր համար ան
որ քիչ մը խելք ունի, ամենայն ինչ
իրեն ունայն կը սեպէ, եթէ ոչ սէրն
Աստուծոյ:

Պատուէ հաւատքդ, պատուէ ալ
զանի սորվեցընող Քրիստոսէն՝ քեզի
խրկուած ճշմարիտ առաքեալ քահա-
նայները, որոնց բարի վարքը արդէն
պատմեցի. բայց մոռցայ վերը քեզի
յիշելու որ ասոնցմէ գործքերնին քա-

ըողութեանցը չհամաձայնողներուն հետ առուտուր ընելու զգուշանաս, մանաւանդ քրեախրով. վասն զի կրնան քեզ վնասի մը բերել:

Ինչպէս կարգացիր ճամբորդութեանս մէջ, որ իր պարտքը ուզեց պատարագ ըսելով վճարել, կամ փեք աղէկ ամմա տուած սպրանքի չզործածեցի, պէտք չեղաւ, կեցեր է ախրմանովը և այլն ըսելով աղքատ ես և առօրէն տունը աւրուեցաւ, և յետոյ ալ բանտը ինկաւ և այլն: Որ եթէ դուն աս ըսածիս չես հաւատար նէ, ահա հարցնւր աս լուսաւորեալ օրերնիս լուսաւորեալ քաղաքի մէջ, լուսաւորութիւն պօռացող, լուսաւորեալ սեպուած Խըրիմի և Արընէլի մեզ լուսաւորելու վիճակաւորեալ հոգևորականաց և Պօկաքարք փողոցին մէջ եղած անխղճմտանք տնաւէր առուտուրին պատմութիւնը. որով իրենց եղբօրը տունը աւրելու պատճառ ըլլալու ատեննին՝ օտարազգի մը զանի կանգնելու ձեռքը տուաւ: Որոնք այս-

պիսի և ատոր նման ընդդէմ բնութեան
մեղաց մէջ թաղուած եղած ատեն-
նին՝ մէկը եպիսկոպոս ձեռնադրուելու
կրթութիւնը կընէ, միւսը զրելով և
սյուսլով իր ձեացեալ աղգասիրու-
թեամբը հաշիւէն փող քաշելու կը
պարտալի:

Բայց իր Կսևաֆ եղբօրը տունը
աւրուեր է, բան չկայ, հոգ չէ. ինչու
որ գիտէ և կը տեսնէ կոր որ ատեն մըն
է եղեր, որ պատիւը կորսնցունողը
զինքը կրկնապատիկ մեռած կը սեպէ
եղեր, և ոչ հիմա. ատեն մըն է եղեր
ալ որ մարդիկ գործքը կը բնաւուն
եղեր և ոչ թէ խօսքը: Ասան զի տես
աղգերնիս հիմա կը պատուէ կոր ճիւ-
ճիւլ խօսողը, և ոչ իրօք գործողը,
ինչու որ չունին լոյս քննողութեան,
և իր լուսաւորուելուն յիշեալ Վիճա-
կաւորեալներն ալ չեն հոգար դաւանք
ճշմարիտ լուսով լուսաւորելու. վասն
զի գիտեն որ ժամանակաւ թէ իրենց
խարերայութիւննին մեղտան կելլէ,
և թէ վրոշրտախնիկ չդառնար: Բայց

իմ դարմանքս այս է որ ազգս չկրնար
կոր տեսնել, թէ ասոնց սլօռալնին,
խօսելնին, քարոզելնին և սովրեցու-
ցածնին իրենք ներքուստ հաւտացած
ըլլային, ոչ տարիներով ուսած քա-
րոզած հաւատքներնուն անհաւատա-
րիմ կըլլային (որ սիրոյ վրայ կայա-
ցեալ պարզ գիտութիւն մըն է), և ոչ
ալ ձեռքովնին դրած և բերնովնին ալ
ուսուցած բաներուն հակառակը կը-
նէին: Եւ ոչ ալ նոյն իրենց հաւտա-
ցածնին իրաւ ըլլալը մեզ համոզելէն
ետև՝ իրենք առիթին համեմատ գի-
րենք կը փոփոխէին, կամ ևս առաւել
պայծառ խօսիմ, որուն կառքը կը նըս-
տին նէ՝ անոր տախտակը չէին գործա-
ծեր: Աւրեմն այսպիսիներուն աս
վարմունքը և աս վարքը կարծեմ մե-
զի բաւական ապացոյց մըն է, իրենց
ինչ ըլլալը իմանալնուս:

Եթէ սիրելիս, ծառայ մը տասը մա-
տը ճրագի տեղ տիրոջը առջին վառէ,
բայց քանի որ տիրոջը բուն կամքը
չկատարեր՝ տիրոջը հաճելի չըլլալէն

ետե, դուրս ես կը վազնալի նէ, ինտոր
ըսենք՝ որ այսպիսիները, որ իրենց
Տեառն Աստուծոյ սեղանին և սուրբ
աւետարանին ծառայքն են, իրենց
այս խարերայ կամ երբոյժակի նման
վարքովն ծառայ քարի և հաւա-
տարիմ ըստ կամաց տեառն Աս-
տուծոյ ըլլալնին հաւտանք:

Գործքը չէ մի սիրելիս որ մարդս կը
համոզէ, կը համոզուի. գործքը չէ մի
որ մարդուս ինչ ըլլալը կը յայտնէ.
գործքը չէ մի որ մեզ կարգարացունէ.
գործքը չէ մի որ մեզմէ Աստուած պի-
տի խնդրէ. գործքը չէ մի որ մեր ազգը
պիտի լուսաւորէ. գործքն ալ չէ մի որ
մենք ասոնցմէ խնդրելու ենք. ու-
րեմն ո՛ւր է, ինչո՛ւ չենք գործքը պատ-
ւեր կոր և ասոնցմէ ալ դանի չենք
խնդրեր կոր, չենք բնորուեր կոր,
չենք պահանջեր կոր: Ու կը ձգենք
ազգը որ իր փողովը և ժամանակովը
գերի է եղեր ասոնց, որոնց գործքեր-
նին և վարքերնին տեսնելովս չնը-
մանցունեմ մի զիրենք գրաշարի մը,

որն որ որչափ ալ մեծ և գերազանց
գիտութեանց և պիտանի գործքերու
կամ տան մը բարձրութեամբ գրքերը
մէկիկ մէկիկ տողովը շեշտովը, և
այլն կը կարգա նէ ալ, շարած թեր-
թը դարձունելու պէս՝ ինքը ինչ է նէ
նոյնը կը մնայ. կամ լրագիրի հեղի-
նակի մը պէս ան մարդէն որ վախ ու-
նի դանի կը շողոքորթէ, և անկից ալ
որ շահ ունի կը գովէ, բայց սրտանց
ինքը գիտէ իրենց համարմունքը որն
ըլլալը. նոյնպէս կրնան մի տարակու-
սիլ ըսելու, որ մարդ մը ինչչափ գե-
ղեցիկ թանկագին զգեստ հագնելու
ալ ըլլայ, գերես ինքը ինչ էր նէ նոյ-
նը կը մնայ: Աւրեմն ասոնց զգեստնին
փոխելովնին իրենք սրտանց ալ փո-
խուած ըլլալնին հաւտացող տգէտ
ազգս չնմանցունեմ մի ան անասուն-
ներուն, որոնց մորթովը ծածկուած
ձեռագործը իրենց պէս կենդանի ըլ-
լալուն կը հաւտան: Կամ ազգս այս-
չափ պայծառ ապացոյցներ տեսնե-
լէն ետև, նորէն ասոնցմէ խափովիլը

տեսնելովս, չնմանցունեմ մի զինքը
ան անբան անասուններուն, որոնց
որսորդը իրեն նկատմանը հասնելու
համար, իրենց առջին նետած եւմը
կերած ատեննին թէ և կը տեսնեն
իրենցմէ հետզհետէ մեռնողները,
բայց միշտ նորէն կուգան իրենց
կեանքը կործանող եւմը ուտելու.
ինչու որ մեր ազգին պէս դատողու-
թեան լոյս չունին:

Ո՛հ, ինչ գերազանց տարբերութիւն
ունի մարդս անասունէն, և ինչ նա-
խատելի անտարբերութեամբ ինքը-
զինքը կը գործածէ կոր: Գուն ալ սլ
Սէրն սիրոյ սէրն առաջին Սատուած
իմ սատարաբախդ ազգիս խեղճ և ու-
միկ եւնափն ալ քու աստուածային
պատուական ձեռքերուդ արարածը
չէ՞ մի, կամ նոյն քու ստեղծած մարդ-
կային սեռէն չէ՞ մի, որոնց համար
դուն չարչարուեցար և խաչ ելար.
որ իրեն այսօր այսպէս երեսի վրայ
մնացած քախում մը քու բերնէդ փոխ-
ւած միայն ոչխարի հանգերծով հո-

վիւններու ցեփտերիև տակ թեթև
բեռով և քաղցր լուծով ապրելնուն
տեղ՝ խեղճութեան տակ ճվճըվալնուն
չես ողորմիր կոր . . . :

Գիտեմ սիրելիս, կան ազգիս մէջ աս
իմ յիշածներէս աւելին շատ մը անօ-
րէն անխղճմտանք ընդդէմ մարդկա-
յին սիրոյ և Սասունոյ հրամանին յի-
շեալ քահանայ անձինքներուն գործ-
քերը կարդացողներ, որոնք իմ պատ-
մածներս ալ պիտի կարդան, նոյնպէս
իրենց աչքերնուն առջին եղած և պա-
տահածները շօշափմամբ կը տեսնեն
կոր: Բայց քանի որ արտամ ինչուս
պէտք է կըսեն, և անփոյթ կը կենան
կամ միայն պօռալով իրենց ազ-
գասիրութեան պարքը կատարած կը
կարծեն, ոչ իրենք ազգասէր են, և ոչ
ալ ազգը լուսաւորուելու է. այլ մէկ
խարերային ձեռքը պագնելնուն որ
զանգատ կընէին, եթէ խարերային
տեսքօթական դաւազանին տակ օրեր-
նին անցունելէն ետև՝ օրօրուող ազ-
գիս ալ կործանմանը պատճառ պիտի

ըլլան : Ինչպէս ժամանակաւ նոյն
աւիժած ինչուս պէտքէն մեր հան-
դուցեալ հայրերնիս, պապերնիս գոր-
ծածելովնին, և քննութիւն ալ երբէք
չընելովնին, ազգերնիս՝ ան անթիւ
ազգերնիս, ու մի հօտ և մի հովիւ
ազգերնիս իրենց սուրբ հոգևով զըլ-
լած զըքերովը զինքը սա ազգատու-
թեան, խեղճութեան և բազմաբաժ-
նութեան մէջ ձգեցին : Ատոր համար
ես հոս քեզի վերջին անգամ քանի
մը զիտնալու պիտանի խրատներս
տալով կը լմնցունեմ սա ազգալոյս
զըքոյկս :

Գիտնաս որ ազգասիրութեան սլար-
տաւորութիւննիս՝ աստուածութեանը
ունեցած պարտաւորութիւններնուս
հետ մէկ և անտարբեր սուրբ է : Նոյն-
պէս գիտութեան, առաքինութեան,
արիութեան, աստուածավախութեան
գործքերն ալ մեզ այնպէս պահող և
զօրացունող են, որ որչափ ալ գետինը
ինկած ալ ըլլանք, մեզ նորէն ոտքի
վրայ կեցունել կուտան : Սիրելիս, ար-

Թընցիր ուրեմն սիրելիս, ու տես մինչև հիմա խարճած փողերնէս և ժամանակներնէս ազգս ինչ լուսաւորութեան պտուղ ցըցուց, կամ որ հարբատանալուն արհեստը ստացաւ, ինչ լաւութեան տարբերութիւնը ունեցաւ. ոչ ինչ: Ենչու որ այս ամէն երեւութով եղածները շօշափելի գործք մը չցուցընելնուն համար ազգիս առջին գոլորշիքի և շուքի նման ալ գորութիւն ունեցան: Աւրեմն զիացիր գործքին արժողութիւնը ու ատոր համար հոս կը յիշեմ քեզի ատ հին ըսւած խօսքը, որն որ ազգիս ալ լուսաւորութեանը բուն պէտք եղած բանըն է:

Թագաւորին մէկը իր տէրութիւնը յափշտակել ուզող թշնամուոյն յաղթելու միջոցը սրն ըլլալը իր խելացիներուն հարցուցած ատենը՝ այս երեք ունենալու բանը իրեն ըսած են, փող, փող ու փող: Նմանապէս մեր օրօրուող ազգին կործանմանը արդեւք, և վերստին հաստատ կանդնուելուն

միջոցը՝ գործ, գործ և գործ է: Եւ ոչ թէ աս բարբրաւորները, ոչ աս պիտոր պիտորը և ոչ ալ աս կեօզպաղարհութեամբ վարմունքները, որոնք օգուտ կընեն յիշեալ եւանքսիսներուն՝ որ է իրենց քիւրահնարութեանցը սերմիէն:

Արթնցիր, մէյ մըն ալ ըսեմ սիրելիս, ու տես հաշիւ նայէ սա սուրբ չիֆրիկիդ վրայ խարճած փողիդ ու ժամանակիդ պտուղին, որ է ցանած ազարակիդ ցորենին՝ չը առատ պրտուղ տուած է, պատուատուած ծառերուդ սրը բռնած է, քանի եւսիրուներ ունեցար. ինչ պարարտութիւն գտաւ սա Քրիստոսի արեամբը սուրահմիշ չիֆրիկիդ հողը: Չատէ պիտանին անպիտանէն ու արմատէն խլելով նեւէ պտուղ չտուողը կրակին. վասն զի այսպէս հրամայեց չիֆրիկի կազմողը, և աս է իր բուն անխախտ պահուելուն կանոնը:

Չէ եթէ չունիս նէ սիրելիս, հողի և արիութիւն աս սուրբ պարտաւորու-

Թեանդ, կը խրատեմ քեզ որ փուճ տեղը չծախես գոնէ ցաւով և տառապանքով և զաւկընէրէդ խնայած փողը, կամ ապրուստիդ համար քեզի տրուած անդին ժամանակդ մ'անցուներ ըստ քրիստոսի: Որպէս զի ազգին ևս առաւել խայտառակուելուն պատճառ եղած չըլլաս (ինչպէս քու անփոյթութենէդ Բարիդ և քանի մը ուրիշ տեղեր եղաւ): Բայց ասոր հակառակն ալ եթէ արթնութիւնդ ցուցըցիր հաշիւդ խնդրելու ելար, անպատճառ յիշեալ խարերայներուն ապրուստը կտրելու և օխիսապագոռքեան ջառխերնին կեցունելու պատճառ ըլլալովդ, պատճառ ևս կըլլաս քարը բըրինձէն զատելու, ու յետոյ զանի քու ձեռօքդ կանոնովդ եփած ատենդ ալ համը վայելելու, ու կենացդ ալ օգուտ ըլլալու:

Մի ամէնար մի վախնար, փողդ ուզողին ինչ պիտի ընես ըսէ, ու խօստացած գործքերն ալ ատենին իրմէն խնդրէ, կամ ժամանակդ ուզողին իր

Ժամանակին հասուցած պտուղը պահանջէ, ու խօսելուն կամ անուանը ու համբաւին ապաւինելով մի տար իրեն ազատութիւն : Ասան զի եթէ երկինքին հրեշտակները վար դան՝ ազատութիւն ունենալու ըլլան՝ չար կըլլան կոր նէ, ինչ չըլլան արդէն չարութեան հակեցած, չարաճիճիկութեամբ փորերնին լեցուն եղողներուն ազատութիւն տրուած ատենը :

Եթէ ժամանակաւոր մեկաժրրիիդ օգտին համար իր վրայ դրած հովիւներդ զատ քննողութեամբ մը ընտրած կը գործածես կոր նէ, սրչափ ևս առաւել սուրբ մեկաժրրիիդ վրայ դնելուներուդ ընտրողութիւն արթնութիւն և հոգ ընելու ես : Ուրեմն իրաւունք ունի ազգը քահանայ մանաւանդ եպիսկոպոս ձեռնադրող արքեպիսկոպոսներէն պահանջելու, որ ձեռնադրելնին կամ ձեռնադրածնին լաւ մը քննելէն ետե վրանին ալ միշտ արթուն կենան, եթէ կը յիշեն ու կը տեսնեն կոր նէ սա պակասութիւնէն

(ձգեմանցածները) ներկայ եղած գայթակղութիւնները: Որով ազգին մէջ եղող ճշմարիտ ազգասէրներուն սիրտը վիրաւորուեցաւ, և իմացան ալ որ հոգեորական մը չտար այնչափ օգուտ մեր տարաբախտ ազգին, որչափ վնաս:

Մտածէ հիմա արթնութեան ու դատողութեան պտուղը, որն որ ազգիս շունենալը ասոնք զխանալովն զինքը վերի յիշած անասուններուս պէս կորսան կոր:

Մասխառկուչիւն եղեր է, սիրելիս, ձեռնադրուիլը կամ ձեռնադրելը, չեն բնտրուեր եպիսկոպոս կամ քահանայ վիճակի դնելու, այլ վիճակ կը բընտրուեն քահանայի և եպիսկոպոսի տալու: Ձեն ըսեր որ ազգիս այս օրուան կացութեանը համեմատ կամ ասոնց ունենալու կարօտութենէն աւելին ունի, հեղե զանոնք մէկ կարգի կանոնի մը դնենք, ուսում սովբեցունենք, պարտաւորութիւններնուն զիրենք հակեցընենք: այլ կը ձեռնադրեն ու

կը ձեռնադրեն, չըլլար նէ եկեղեցիին դուռը կղպելով կը ձեռնադրեն, թող ազգն ալ տայ իր փողը աս ծոյլերուն որ ապրին ու մնան :

Հոս կարելի է որ գտնուին ոմանք որ չհաւատան ասոնց ոմանց վրայ ըրած շօշափմամբ փորձառու աս ականատես բայց ցաւալի պատմութեանս, ան ատենը թող դան ինծի որ ես իրենց բան պատմեմ, ու իրենք ալ երթան քննեն ու շօշափելով բան տեսնեն : Բայց ան կերպով, ինչպէս դացի, տեսայ, խօսեցայ և հիմակ ալ կը զրեմ կոր. ներքին սիրտս հայ և նախանձ քրիստոնէութեան, բայց արտաքին երևոյթս ըստ առաքելոյն վիճակին, առիթին պահանջած մարդ մը (ինչպէս մէկ առթին կրնան վկայել Պթաւիացիք) : Ասանկով ան ատենը կըրնան իրենք աչօքնին տեսնել, ու ձեռօքնին շօշափել. Բակկուռն, Չեննէրայ, Թրամբերայ, Արմենիէն, Ըսրրիք, Քրիստոսիքի, Պուքրէշ, Լակտակըն, Բարիզ, Խարարեայ ազգին

եղած նախատինքները , ու ասոնց
զայթակղութեան պտուղներուն կեն-
դանի պըտըտիլը :

Չէ նէ ազգիս մեծամեծ կամ միշտ
իրենց իրաւունք տուողներուն մէջ
մեծցամ , սեղաննին առջևնին պատ-
րաստ եկամ , հարատութեան , պատուի
մէջ անկարօտ կեանք անցունող , թէ
Պապը և թէ Վաթողիկոսը , կամ պի-
շաֆ մը ըլլայ , կամ ազգերնուս մէջ
ոսկի կրող և միշտ շողոքորթուող , ու
միայն իրենց կիրքին հետևող ազգա-
յինները չեն կրնար իմանալ ասոնց
կտորած անվիզները : Չէ եթէ իրենք
չեն ուզեր կամ չեն կրնար նէ ան-
ձամբ այս ազգօգուտ ձեռնարկութեան
րեպտիլ ելլելու , թող հանեն ան
ազգանախանձ րեպտիլի պէս մէկը ,
որն որ կրօնք և լեզու դիտնալով թէ
իր ազգին կացութիւնը և թէ օտար
ազգերուն հետ իրենինը բաղդատելու
համար , կամ օտարներուն ձեռօքը
դիւրութեամբ իրեններուն վրայ տե-
ղեկութիւն ստանալու համար . ինչպէս

մինչև անդամ Երուսաղէմի խախտման պաշիէն մօտ քեֆիօրիէ իբրև Հընդկատտանի լուսաւորեալ հրէայ մը յանձնուեցաւ, և Սելօն Մահմուտ նահապէն իր փեսին իբրև պօլսեցի զիտուն մահմետական մը ներկայացուեցաւ : Զգեմիրեն հաւատացելոց մէջը զանազան ներկայութեանը տեսալը, ուր նաև իբրև վկայարանը կորսնցուցած քահանայ մը ձեանալէն վերջը, ուղած ազգերուն մէջ ապահով մտաւ, ապահով ալ քննեց ու որոնեց, և ապահով ալ դուրս ելաւ ու իր անարատ հայութեան ձեռօքն ալ գրեց մեր և օտարաց մէջը եղած խարերայութիւնները և առաքինութիւնները :

Չէ նէ ես՝ մենք այսպիսի հոգևորականաց վրայ ունեցած կոյր համարմունքնիս պահելով կամ մէկուն մէկալին խօսքին պօտալուն հաւտալով, ու ասոնց պիտի պիտորին վրայ հիմնացեալ բարբրտրները ազգին աչքին ափ մը աւաղ նետելով, իրենց օրերնին օր ընել ուղել կը սեպեմ :

Յառեւ լով կը յիշեմ սիրելիս, և ակամայ կամօք ալ կը գրեմ, մեր տղէտ և անիրաւ բարբարոս վարմունքովը ազգիս մեծ մասէն բաժնուած եղբօրներնուս առանց մեծ ծախքի կարօտ մեծ մեծ ձեռնարկութեանց կամ բարրարտի սուս փուս իրենց կարօտութեանը համեմատ իրենց խումբերնին յառաջ տանելնին և անուննին ալ Եւրոպայի մէջ իմացունելնին ու իրմէն ալ պաշտպանութիւն գտնաւնին: Որոնք եթէ արդէն քեզի քանի մը զլուխ առաջ յիշած անհաճելի գործողութենէն ի դատ, սա հաւատքի կոյր ատելութիւնը և հայութեան նախատինք բերող պարագայները չըլլային, շատ և շատ առաջ դացած պիտի ըլլային, քան թէ այսօրվան թիւերնին և համարմունքնին, որ աս պակասութիւնին իրենք ալ գիտնալու են, որոնք իրենց թիւովը ազգերնուս մեծ մասէն շատ և շատ փոքր կը սեպուին նէ ալ, բայց կարգով կանոնով և գիտութեամբ համեմատե-

լով մեծ մասին հետ, շատ և շատ
մեծ են և օտար ազգերու մէջ ալ
խումբ մը սեպուած են:

Աչ իսազիև մեծ հաւկիթ ածելուն
նախանձելով իրենց պիւզդիւկնիև կը
պատուեն, ոչ անհաշիւ և անօգուտ
իևատով մը զիրենք նեղութեանց
տակ կը հզմեն, և ոչ ալ հեղէ ոտքիս
տեղ մը ընեմ, նայէ ես իրենց ինչ
պիտի ընեմ ըսելով ազգին աչքը ավ-
շեցընելով, եսևափիև և եկեղեցւոյ
փողը կողոպտել ուղտըները մէջեր-
նին կը պահեն: Ար մեր այսպէս վար-
ւողներուն ալ մէջերնէս մէկը արթուն
դանուելով եթէ յանդգնի իրենց ըսե-
լու, Պէ աներձ տարիները կուզան և
կանցնին կոր, ուր է մինչև հիմա եղած
խարձիև և ժամանակին պտուղը...
կը նայիս որ խորամանկ պատասխա-
նով մը զինքը կը պապանձեն. աներձ
պէքլէյէ, պիտի, պիտոր, զահեր,
հապա, հեղպերտէ:

Չկայ սիրելիս, ան միութիւնը, ան
միութեամբ զօրացած հողին, որ մէ-

Ջերնէս արթուն գտնուողին ոչժ տա-
լով ու միանալով իրեն հետ ըսեն,
աս պիտի պիտորս և այլն խօսքերով
ազգը աս հաղթ բերին ու փորն ալ
ասով լեցուցին, ելլենք, բնօրոսնք
իրատ մասրաժ մը բռնենք, տես-
նենք ինչ տարբերութիւն կայ մեծ
խարաներու տակ, փոքր խարանով թե-
ւերնուս տակ և աչքերնուս առջին
եղածներուն տուած պտղին մէջ :

Ահա քեզի սիրելիս, մեր օրէ օր
տկարանալնուս, աղքատանալնուս,
ու յուսահատութեան մէջ իյնալնուս
պատճառ անհոգութիւնը ու հին և նոր
ատենուան ալ տարբերութիւնը, որ
ատեն մը այսպիսի հոգևորականներ-
նիս իրենց կոյր հնազանդութեան
երկաթէ գաւազաննին ազգին երեսը
ցըցունելով զանի ուղած տեղերնին
կը քաշկուտրկէին, հիմակ ալ լուսաւո-
րութեան անունով սիւշիւկ մը եղած
անոր արիւնը կը քաշեն կոր: Ար ժողո-
վուրդն ալ արդէն կարծեմ զՍատուած
բարկացուցած ըլլալովը, տաճկին

առակի՛ն համեմատ նախ իրենց խել-
քը առած պիտի ըլլայ, որ յետոյ իրենց
այսչափ նեղութեամբ ստացած փո-
ղերնին ու ժամանակնին ասոնց կու-
տան կոր: Չէ նէ որ քիչ մը խելք
ունեցող ազգը, այսպիսի վարք ունե-
ցող հոգևորականացը իր փողը, պա-
տիւը, իշխանութիւնը հանեց տուաւ
կամ կուտայ կոր. ոչ մէկը: Ինչու որ
զիտեն որ մտնող ելլող արեգական
դոյնը որչափ ալ գեղեցիկ է նէ ալ,
իրենց տուները չներկեր:

Իրաւ է, սիրելիս, որ ջանալու ենք
զիրութիւն ստանալու, բայց ճշմար-
տութեամբ և առաքինութեամբ ազ-
գերնիս լուսաւորելու և նորոգելու
համար ևս առաւել ջանալու ենք.
Վասն զի մէկը մարդուս լուսաւորու-
թեան անթառամ ծաղիկն է, միւսն
ալ կեանքերնուս և ազգերնուս ան-
սպառելի դանձն է. ուրեմն նախ
ասոր աշխատինք: Չէ նէ ազգս չա՛ր
նախանձի, ամբարտաւանութեան,
փառասիրութեան, կիրք վայելելու

ուսման աչ հաւնտօշիղասն կարօտ չէ ,
որուն համար որ ումանք հողեորական-
նիս զիրենք ազգին աս ուսման մօտեղ
և գործիք ընծայել կուզեն կոր , որոնք
գործքով թոյն են ազգին և անձամբ
ալ բոյն խաշպագանուքեան , և ի-
րենց թեր ելլողներն ալ իրենց սիւ-
րիւնիկի են ըսելու կը տարակուսիս
մի : Վասն զի անս կը սովբեցունեն
մի ազգին առաջագրած ձեռնարկու-
թեան պէտք եղած հաշիւները ընել-
նուն , ոչ երբէք . այլ սկսինք մէյ մը ,
բանը ճամբայ հեղե ելլէ , վերջէն
առաւ Սասուած ողորմած է . ինչ
կայ եղեր , եթէ բանը այսպէս չըլ-
լար նէ , այսպէս կընենք , հիմա պեղ-
քի ան ալ կօզնէ , կամ կը մեռնի , աշ-
րահ աղահ կիբտի կեղտի տե հե-
մեկ մեր ատենը մի այս ճախորդու-
թիւնը պատահի , կեճեղեր կեպե տիր
ինչ օգնութիւններ կրնայ ըստ զալ ,
Սասուած այնպիսի հրաշքներ կընէ
որ մարդս ալ կը զարմանայ և այլն :
Մանաւանդ եթէ այսպիսի հիման

վրայ ժամանակաւ կամ իրենց ներկայութեանը այս կերպ ձեռնարկութիւն մը յաջողութեամբ գլուխ ելած է նէ, զանի օրինակ բերելով իբրև բանը անպատճառ գլուխ ելլալուն զիրենք կը քաջալերեն: Բայց ըսենք որ չելլար, ան ատենը փոխանակ սըխալմունքնին շտկելնուն՝ կըսեն իրաւ է, հախ ունիս, շաքիև չէինք յուսար որ աս բանը պիտոր պատահէր, որուն միտքէն կանցնէր, եյ ինտո՞ր ընենք, մեր միտքը բարի էր և այլն: Որոնց չըսեմ մի խորեբայներ աս պատահած արդեւքը աշխարհքին ստեղծելէն մինչև հիմա եղած և ըլլալուներէն չէ մի, կամ քու քանի մը անգամ տեսածներէդ չէ մի:

Տես բանը կարգով և կանոնով քաջ մտածողութեամբ սկսուած եղած ատենը, եթէ երբէք աշխարհքիս վրայ չպատահածներէն արդեւք մըն ալ պատահելու ըլլայ, անմիջապէս ոչ միայն ցաւակիցներ կը գտնուին, այլ և գալու բարիքը տեսնելովնին պէտք

եղած օգնութիւնը ընողներ ձեռք առ-
ւողներ օրրան կելլեն : Արուն փոք-
րիկ օրինակը նոր քաղաքէն կրնաս
տեսնել . հւր մնաց մեր տարտղնած ,
տղեւ , անմիարան , բարիքի անճար
սաշրանկեօզ , չարիքի առիւծ ազգը
աս կերպ չքողջնայ ձեռնարկու-
թեամբ ու այս ժպիրհներուն ընկե-
րութեամբ օրրան պիտի ելլայ :

Հիմա դուն ինձի , էյ ինչ ընենք
ճակըմ կըսես , կուզէք որ սա կիսա-
մահ ազգը ոտքի տակ երթայ մեռնի
մի , մեղք չէ մի աղբար որ այսչափ
դժբաղդութեանց դէմ կենալուն հա-
մար քրքրչայ քրքրչայ իշտե այս-
չափ մը մնաց ստ ալ բաժին բաժին :
Հա՛ քի սկսանք յաջողութեանց դու-
ռերուն մօտիկնալ՝ եզ մը մարդ ելեր
են զինքը կործանելու գրքերով կոր-
ծանել կուզեն . շատերն ալ սուտ ու
մուտ խօսքերով զինքը անյուսութեան
մի ըսեմ չէ նէ ես առաւել տգիտու-
թեան մէջ ձգելու կաշխատին : Ամանք
ալ ելեր են վայ վայի վրայ կը կար-

դան, պագիկներն ալ պօղ պօղ յոյսեր
կը գրեն, որ մենք ալ շաշրթմիշ ըրինք
ընելիքնիս. դուն ալ եթէ յոյս չունիս
ազգը կենդանանալուն, ուրեմն որուն
համար մինչև հիմա աս զգուշութեան
կանոնները գրեցիր, ըսէ տեսնենք
բուն կարգը որն է. չէ նէ ցնթած դի-
նով մըն ալ դուն ես :

Երաւ ես սիրելիս, որ ցնթած ու դի-
նով մըն եմ, բայց ազգիս սիրովը և
Հոգւոյն սրբոյ շնորքովը ցնթած դի-
նով եմ. ատոր համար ալ գրեցի և հիմա
ալ կըսեմ որ աս բունած ճամբագ ճամ-
բայ չէ, այլ նախ թճղ հայութիւնը
իրեն նախատինք չսեպող եղբօրդ՝ որ
հաւատայ ինչ որ կը կամենայ. երկ-
րորդ ունեցած գրքերէդ և ունենալու-
ներէդ անպիտանը արդիլէ մէկդմէկէ
մէկդմէկու մանաւանդ սա ճարերնին
հատնելով երբքրչանաք ևր բնառող-
ները տէր ընդ քեզով մը անցիր : Ան
անձը որ քունկատմանդ քաջ խորհուրդ
կամ ճշմարիտ լոյս կուտայ, առանց
տարբերութեան պատուէ. լաւ մը

չափէ ու յետոյ ձևէ ու կարողութեանդ
համեմատ ալ լմնցունելու աշխատէ :

Վագ եկուր մեծ մեծ շէնքերուն և
ձեռնարկութիւններուն առանց դը-
րամադլիսի հաստատելու : Հաւատն
մարդուս բաղձանքներէն ամենավը-
տանդաւորը ազատութիւնը ըլլալուն,
ատոր համար ալ զգուշացիր ազատու-
թեան արժողութիւն չդիտցող ազգիդ
աս ազատութիւնները տալու : Ձեռ-
նարկութեանդ դիւրութիւն կարծած
շատ փող վայելող բայց փեք քիչ
խելք ունեցող ամիրաները մի շողո-
քորթեր, այլ ևօմիե եղող տեմիրաբաշ
եւեւաճր պատուէ : Գիտուն քահանայ-
ներէդ եղեռնադորձները դուրս ըրէ ,
ու բանիրուն բարի վարժապետները
յառաջ քաշէ , զաւկըներուդ նախ լե-
զուդ սորվեցնուր , որն որ հայութիւնը
պահելուն անառիկ բերդ մը ունենայ :
Երիտասարդներուդ պիղեզիկ արհեստ-
ներ սորվեցնուր , որ ազգդ աճի և իր
աստուածը նտիր վիճակը վայելէ :

Ահաւասիկ գրքոյկիս 224 երեսին մէջ յիշուած՝ արտաքուստ բարեկամ և ներքուստ թշնամի եղողին ձեռօքը դրուած նամակներուն օրինակները :

Ա.

Ի 18 նոյեմ. 1848

. Տեղեկացեալ իցէ Տէրդ, թէ սրչափ վայրասպար զանգիտեաց ժողովրս վանաց երկիցս յընդունելոյ զհրբաթեշտ քարմատար տեսչիև և որպէս ի վնաս ևս իրաց վարժարանիս, յանձն արար ի նա ընդ տեսչութեան և զմատակարարութիւն զբամոց

Բ.

Ի 17 դեկտ. 1848

. Ո՛ւր էր եթէ կայր ոք տեսուչ արդեամբք և ոչ աւուուանք յուկով որպէս զարդիս Հ. Մարգիսն

հարկ համարեցայ զեկուցանել վեհիդ՝
թէ, որ անուամբ տեսուչն է վար-
ժարանիս, պատճառս խնդրէ անմե-
ղադիր առնելոյ զիւր անգործութիւն
և զանկարողութիւն, զձեօք և զմեօք
արկանելով զամենայն շնաս.
ըստ իւրոյ խեղաց.

Գ.

Ի 19 յունվ. 1849

. Վ. Յ. Յովհաննէս ել ընդ
իս ի սենեկէն Հ. Սարգսին նեղասրբ-
տեալ ընդ մեղմեիս զնացս առն. . .
որ յիտորտայ ի լինել խօսիցն

Դ.

Ի 29 յունվ. 1849

. Զօրինակ թղթոյն Հ. Սարգ-
սին զոր ինձ առաքեցիք, զորոյ իմաս-
տըս՝ գտաք անձնակա՛ն ևւ անար-

Ժան կրիւք անիմանալի խառնա-
խօսուք քեանքք եւ յանդորդն ասա-
ցուածովք իսկ ձեզ զինչ պա-
տասխանի արժան իցէ նմա գրել,
մեր կարծիքն այս են խաչ-
տառակել զգեացս յորա յիրս վար-
ժարանիս, և ոչ միայն յերկուց ա-
մաց հեռէ, այլ և անդասին յամէ
յորում կարգեցաւ լաւ ուղղիչ Ռա-
փայելեան և Պատուայու վարժա-
նին: Այլ քանզի այր է սա անխիղճ
և ԿԱՏԱՂԻ, լաւ էս թուի գրել ձեզ
առ նա պատասխանի զգուշաւոր բա-
նիւք թէ ի մեղմանալ օդոյ փութասցի
դալ այդր ի Վեներտիկ. եթէ յանձն
առնու բարուք է, զի վարժարանս
զերծակի ի տարտամ տեսչութենէ
աստի, զանուն տեսչի եւ եր ունե-
լով, քչևամուքեան աչօք հայելով
ի մեզ. և անդադար հակառակու-
թեամբն ընդ վանացս և քրթմնչե-
լով

Ե.


Ի 19 մարտի 1849

..... Թերևս գուշակելիքն, ոչ անգիտանալով զանհանդարտ և Կոռուսսեք բարս նորա և գրատարկացորտ շատախօսութիւնն վըրիպակ մեծ գործեաց ժողովդ մեր, տալով ի ձեռս Հ. Սարգսի զամենայն իշխանութիւն անսչութեան և գործակալութեան. այսց զիտելով չափ գողորմելի անկարողորքիւն և խրոտիարար բարս անգործ առն..... այս կռիւք և խռովութիւնք ոչ գաղարեացին այսպիսեօք :

Զ.

Ի 28 ապրիլի 1849

Հ. Սարգսի զուարճութիւն մեծ թըւի և գործ կարևոր վիճարանել ընդ մեծի և ընդ փոքու զհնատի խնդրոց




և զանցելոց սուտ և սնտոի վարկա-
ծից . բայց ընդ մեզ գէթ առ երեսս
բարուոք վարի

Հ. Գ. Ս.

Բայց ես ամէն ատեմ ձեզ , ոչ ի վիճ-
շոց խաղող , և ոչ ի տատասկէ թուզ
լինի , այլ զմարդ' որպէս զձառն ի
պաղոյ նորա կամ ի գործոցն ճանաչի :

ՎԵՐՋ .



27E5T00

2013

2001

